A
392

# ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

Ծաղկաքաղ հաւաքեալ

ՏՆ Հ. ՂՈՒԿԱՍՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԻՆՃԻՃԵԱՆ։
ՈՒԽՏԻ ԱԲԲԱՅԻՆ ՄԽԻԹԱՐԱՅ

Ծախիւք ուրումն բարեպաշտի
'ի յիշատակ
հանգուցեալ Պետրոսի
Պատանւոյն Պուլումպաճեան.

Публичная Библиотека
7/XI--1922
имени А. Мясникяна

'Ի ՎԵՆԵՏԻԿ
'Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1832

235-3

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Քրիստոնէութեան առջի տարիները եկեղեցին սաստիկ հալածանքի մէջ էր կռապաշտներու ձեռքէն, ան ատենը քրիստոնեայ ըսելը՝ իբր արիւն թափել ըսել էր քնի համար: Երբոր մէկնալ արիւն կըթափէր մարտիրոս կըլլար, մնացած քրիստոնեայները իբրև մէկ մեծ յաղթութիւն մը ըրած անանկ կուրախանային, նշխարքներուն վրայ ժողվըվելով աղօթք կընէին, շնորհակալ կըլլային Աստուծոյ. շնորհք կըխնդրէին որ իրենց բարեխօսութեամբը Աստուած զիրենքալ արժանի ընէ մարտիրոս ըլլալու: Քանի՛ որ սանկ աչքովնին կըտեսնային անոնց քաշած տանջանքը՝ իրենցալ սէր կուգար Աստուծոյ համար նահատակվիլ կամ նեղութիւն քաշել:

Ետքը երբոր հալածումը դադրեցաւ, քրիստոնէութիւնը ծաւալեցաւ, առջի եղած մարտիրոսներուն վարքը կըկարդային. տարեդարձին նշխարքներուն տեղը ժողվըվելով պատարագ կընէին, իրենց քաշած տանջանքները իրարու պատմելով գովասանք կըզրուցէին: Անանկով թէ որ աչքով չէին տեսնար իրենց առջիններուն պէս, բայց ականջով լսելով մարտիրոսներուն վարքը, տեսածի պէս կըլլային, շատ կըշահէին: Ետևէ ետև անանկ եղաւ որ՝ սրբոց վարք կարդալը սովորութիւն պէս եղաւ. իբր հարկաւոր գիրք մը ժամու մէջ ամմէնուն առջին կըկարդային. ամմէննալ մտիկ դնելով իրենքալ բարի օրինակ կառնէին: Ինչվան անգամ մը

քրիստոնեայ մը Թուղթ գրեց մէկ սբ մարդու մը հարցընելով որ իրեն ցըցընէ ինչ ճամփով կրնայ հոգին շահիլ, սբ ըլլալ․ ան ալ գրեց իրեն որ սբց վարքը կարդայ, կարդալովդ ըսաւ աչքով տեսածի պէս կըլլաս․ կիմանաս որ անոնքալ մեզի պէս մարդ էին, բայց ինչպէս կրցան հոգինին շահիլ․ կըտեսնաս որ անոնքալ աս աշխըրքիս մէջ կեցերէին մէկը մէկ ճամբով, մէկալը ուրիշ ճամփով, բայց անանկ կեցան որ արքայութը շահեցան․ դունալ տեսնալով իրենցմէ օրինակ կառնես ։

Ահա աս օգուտը գիտնալով բարեպաշտ անձը՝ խընդրեց աս գիրքս դուրս հանել տպագրութեամբ, ուր գրված են երևելի սբց վարքերը․ ուզելով բարիք մը ընել մեր ազգին որ կարօտ էր ատանկ գրքի, աշխարհաբառ տպել տըվավ, որ զի ամէննալ հասկընան, կարդալով շահին ։ Ասիկայ է հոգևոր գործք մը ողորմութ, որ շատ աւելի հարկաւոր է և օգտակար քան մարմնաւոր գործք ողորմութե ։ Ուզեց որ աս գիրքս յիշատակ մը ըլլայ Դուլումպաճեան Պետրոս պատանիին, որ իրեն ու ամենուն սիրելի զաւակ ըլլալով, իր ծաղիկ տարիքին մէջը վախճանեցաւ ։ Ամէննալ երբոր կարդան, երբոր շահին հոս գրած սբէրուն վարքը լսելով․ յիշեն աս հոգինալ իրենց աղօթքին մէջը․ խնդրեն սբց բարեխօսունը որ հասնին Թէ անոր հոգիին համար, և Թէ իրեն համար, որ ատանկ բարի գործքի պատճառ եղաւ ։

Հիմա աս չափ սբց վարքը դուրս ելաւ, ետքը ասոր հոգևոր պտուղը տեսնալով մնացած սբէրուն վարքնալ դուրս կըհանենք, Թէ մեր եկեղեցիին տօնածները, և Թէ լատինացւոց ։



Արժան լիցին արքայութ եան .
որք աստ յաւէտ գնա խո կան :

# ԱՌ ՊԱՏԱ՛ՆԻ՛Ն ՊԵՏՐՈՍ

## Պուղումպաճեան

# ԲԱՐԱՌՆՈՒԹԻՒՆ

Դու մանուկ ընտիր, այլ վաղավախճան,
մեկնեալ, այլ թողեալ զայս սրբոց մատեան։
Հոգեակէր ազգիդ յիշատակ ւարձան,
ընկա՛լ փոխարէն արդ նոցին օճան։
Մի՛ այսուհետև, մի՛ 'ի գերեզման
մնար հողացեալ որպէս աննըշան։
Զի գործով բարեաց՝ գութ ծընողական,
կանգնէ քեզ նշան գեր քան ըղտապան։
Քե՛զ են ուղեկից, քե՛զ և օգնական,
աղօթք սիրելեաց, որք զայս ընթերցան։
Քե՛զ արդ բարեխօս, քե՛զ և փաստաբան,
դատք կաճառք սրբոց՝ գրեալք յայս մատեան։
Արի՛ արդ հանգչել՝ յայն սրբոց երամ,
որք զայս գիր առեալ՝ հոգւոյդ են պաշտպան։

# ՎԱՐՔ

# ՍՐԲՈՑ

## ՍՈՒՐԲՆ ԵՒՍՏԱԹԷՈՍ

Պուստաքէոս կամ Եւստաթէոս քրիս-
տոնեայ չեղած պլակիդոս կամ պլակի-
դաս կըսուէր, որ մեր գրոց մէջ պլակի-
դոս կըսուի, քաղաքցի էր Հռոմայ, բայց
ծնած էր ը̅ ոմանց գամիրք կամ կապա-
դովկիա. անոր համար կընայ ըլլալ որ է-
կեղեցիք աս սրբոյն յատուկ ջերմեռանդութի-
ւնին. իրեն անունով ալ վանք ունին. որով
հետև եկին կապադովկայի մէջ կըյնի։
Այս պլակիդոս իրեն քաջութը անուանի
զօրավար էր եղած հռոմկայսեր քով. շատ
հարստութի ունեցող. իրեն սեղանը 300
արծըթէ ամաններով կուգային կերա-
կուրները. որչափ հարուստ այնչափալ ու-
րիշներուն բարերարող. իր ծառաները
չորս չորս տարի ծառայեցընելէն ետև
կազատէր շատ պարգևներ տալով. հայր
էր եղած որբերուն, որբևայրիներուն.
օգնող աղքատներուն, մխիթարութի բան-
տարկեալներուն, հասնող տանջանք քա-

չօղներուն · աս աղէկութիւններուն համար եղաւ որ կուռնեւկօսի պէս արժանի եղաւ կուապաշտուէ խալըսիլ, քրիստոնէութ՛ լուսաւորուիլ աս զարմանալի կերպով

որ հոս պատմենք ։

Օր մը երբոր որսի (աւի) կերթար՝ մէկ եղջերու (կէյիկ) մը տեսաւ ահաւոր, եղջիւրներուն (պոյնուզներուն) մէջը լուսաւոր խաչ մը, որ վազելով անտառի մէջէն, բարձր տեղ մը ելաւ · պլակիտոսնալ ասոր ետեւէն վազելով երբոր հասաւ թուրը վերցուց զարնելու, յանկարծ տեսաւ որ եղջերուն մէկ անելանելի տեղ մը ելած, իր եղջիւրներուն մէջէն ձայն մը կուգար իրեն ահաւոր, ինչ կը հալածես զիս պլակիտէ կըկանչէր · աս ձայնը առնելով վախէն գետինը ինկաւ, քիչ մը անանկ կենալէն ետեւ ոտք ելաւ, կընայէր ով է խօսօղը, մարդ մը չտեսաւ բայց եթէ նոյն լուսաւոր խաչը՝ որ եղջերուին գլուխն էր տնկած ։ Ով ես որ կըխօսիս ըսաւ պլակիտէն յայտնի ըրէ ինձի · մէյմընալ նայելով տեսաւ որ՝ խաչին վրայ մարդու երես մը կերեւնար, անկէց կուգար իրեն ան ձայնը ըսելով, միտքս առ ով պլակիտէ ես եմ առաջին և վերջին, ես եմ ան որ մարդ եղայ աշխարհ եկայ փըրկելու համար · ինծմով եղաւ ամէն բան · և որովհետեւ ամէն մարդու վրայ մէյմէկ բան սահմանուած է քաշելու՝ որպէս զի անցաւոր նեղութի քաշելով անանց հան-

գրաւութիւն գտնայ, քու վերադառնալդ սահ-մանուած է որ ինչվան հիմա մեծութի վայելեցիր, աւելից ետքը զրկուելիս մեծու-թէ, նեղութի քաշես, ետքը նորէն քեզ մեծցընէ պիտոր ան որ քու հետդ կըխօ-սի. և որովհետև բարի վարք ունէիր՝ քե-զի կըթողում ընտրել, մրդեօք հիմա կուզես ան նեղութիւր քաշել թէ ետքը։ Պլակիդէ աս խօսքերէս վախնալով պա-տասխանեց, կաղաչեմ տէր թողուս որ երթամ իմ ընկերոջս պատմեմ, վաղը գամ պատասխան մը տամ. ձայն եկաւ իրեն, թէ որ կուզես վաղը հոս գալ, ա-ռաջ գնա քահանային ձեռքովը մկրտու-վէ քրիստոնէից պէս, ետքը իս հոս կըր-նաս տեսնալ։

Պլակիդէն ահով դողով լեռնէն վար իջնալով, ժողվեց իրեն հետ եկող զի-նուորները գնաց իր տունը, մէկի մը չի-բացաւ բանը միայն իր ընկերոջը՝ որ կըս-վէր տասիանէ ը̃ ոմանց տրայիանէ, որ լսածին պէս աղաղակեց։ Գոհանամ խա-չելեալը տեսար որ քրիստոնէները կը-պաշտեն, ով որդի ա̃յ ողորմէ ինծի և իմ զաւկըներուս, զարմացաւ պլակիդէ թէ ինչպէս գիտցաւ իր կինը, կինն ալ պատ-մեց որ երազ տեսայ ան բանը. ան է քրիս-տոս որ ան կերպարանքով քեզի երևցաւ. անանկէնէ աս գիշեր եկօ գաղտուկ մկըր-տըվինք ըսաւ. վաղը գնա ըսէ իրեն, թէ որ կուզես՝ հիմա իրկէ մեզի նեղութի

Երբոր ուժ կայ վրանիս քաշելու քան թէ մեր ծերունի ատենը ։ Նմանկով գիշեր ատեն գնացին քահանայէն կամ եպիսկոպոսէն մկրտըվեցան իրենք ու իրենց երկու զաւակը, որ մկրտըվելու ատենը ըսվեցան ագապիոս ու թէոպիստոս, պըլակիդոնայ ան ատենը ըսվեցաւ Եւստաքէոս, իր կնկան ըսվեցաւ թէոպիստէ ։ Նըտու եղածին պէս Եւստաքէոս իրեն հետ զինուորներ առնելով իբր թէ որսի հեկերթայ, լեռան մօտիկնալու ատենը անոնք ուրիշ դին խըրկեց, ինքը մինակ մնալով առջի տեսիլքը տեսաւ ․ հոն երեսի վր ըյնելով աղաղակեց, խոստովանիմ Տէր իմ որ դու ես որդի Այ կենդանւոյ, կաղաչեմ ան նեղութին որ ըսիր՝ առաջ հանդիպի մեզի և ոչ ծերունի ատենը, ձայն եկավ իրեն ։ Նորանի է ձեզի որ լուացվելով սրբըվեցաք, իրեք օրվան մէջ պիտոր ըլլայ ան ամէն բան որ ըսի, բայց նայեցէք որ մէկ ճշգոհանք մը ձեր բերնէն չիհանէք, համբերութ քաշեցէք ․ նորէն ձեզ պիտոր մխիթարեմ նաև աս աշխարհիս մէջ ։

Եւստաքէոս դեռ տունը չիհասած մէկ պզտըրկվօղ ցաւով մը մեռան իր ծառայներնալ աղախիններնալ, ու 70 ձի ․ վաղուան օրը օդոյն ավըրվելովը կայծակներով ամէն ոչխարները կովերը հատան ․ Մէկաշնօրը երբոր Եւստաքէոս իր կինը ու երկու զաւկըները պարտէզի մէջի եղած

քեօշքն էին, իրենց բարձր փառաւոր
տունը սէրայի նման մէկէն փլաւ. բազմունի
ներս վազեցին, մէջի եղածները ամէն-
նալ թալլեցին, ատոնք ինչ որ վրանին
հագած էին՝ ան մնաց միայն իրենց. Նն
օրերը թագաւորը յաղթութին ընելուն հա-
մար պալատին վրայ՝ մեծ ուրախութին կըլլար
քաղքին մէջ. կըփնտռէին կըզարմանա-
յին եւստաքէոսին ուշանալուն վրայ, թէ
ինչու չիգար չիգտնուիր ան ուրախութե
մէջ. թէոպիստէ իր կինը խրատ տուաւ
եւստաքէոսի, որովհետեւ ատանկ չքաւ-
որութե մէջ մնացինք ըսաւ, խեղճ ողոր-
մելի եղանք. մեր ճանչվորներուն առջին
աս ամօթը չիքաշելու համար, եկօ ամ-
մէնքս մէկ տեղ փախչինք երթանք հե-
ռու աշխարհ. անանկով գիշեր ատեն ան-
կեց մըսըր երթալ ուզեցին, քանի մը օր
ցամաքը ճամփայ ընելէն ետեւ ծովին քո-
վը համնելով նաւ մը մտան։

Նաւապետը բարբարոս չար մարդ մը ըլ-
լալով, երբոր քիչ մը բացվեցան ցամա-
քէն, տեսնալով որ թէոպիստէ խիստ գե-
ղեցիկ կին էր, եւստաքէոսի վրան չարիք
կըմտածէր ընել որպէս զի իրեն առնէ
կնիկը, երբոր ցամաքը հասան՝ նաւլունի
տեղ իրեն կնիկը ուզեց. երբոր եւստա-
քէոս դէմ կեցաւ՝ քովը կեցողներուն
աչք ըրաւ որ ծովը ձգեն. եւստաքէոս
վախնալէն երկու տղաքը առաւ լալով
նաւէն դուրս ելաւ, ու յանձնեց թէո-

պխտեայ պահպանութ՟իւը · լալով ճամփայ
ելավ, սիրտը փղձկելով տղոցը վրան կը-
նայեր հառաչելով կըսեր.֊ ‖ մխղաւկըներ
ինչ փորձանքի եկանք, ինչ դեշ վիճակի
մէջ ընկանք, մայրերնիդ գաղանի ձեռք
ընկավոր՝ օրմը անխիկայ պխտոր կորսնցընե·
աս ըսելով լալով տրտմութ՟ քալելով հա-
սաւ խդաստխ ըսված մէկ ջուրի մը քով.
ան ջուրին մէջէն մէկէն անցընել երկու
տղաքը վախնալով՝ մեծ տղան ագապխոսը
Թողուց, պզտիկ տղան Թէոպխստոսը կը-
նակը շալկելով ջուրին աս դիս բերավ.
արտորնօք դառնալնինի որ մէկալ տղա-
նալ բերէ, ջուրին մէջ տեղը հասնելուն
պէս, մէկ տղան առիւծը յափշտակեց տա-
րաւ, մէկալ տղան գայլը (խուրտը). եւս-
տաքէոս տղոց ձայնը ճվալը լսեց, տեսաւ
որ աս դիէն ան դիէն զաւկըները ողջ ողջ
կըտանին գազաններըը, հոն ճղակտոր մնաց
մօրուքը մազերը փետտել սկսավ, ինքնալ
ջուրին մէջը ըյնալու պէս եղավ, բայց ա՟յ
նախախնամութ՟իը զինքը պահեց ցամաքը
ելավ։ Լաւ տղաքնալ սանկ պահեց ա-
ռանց իրեն գիտնալու, առիւծն որ տղին
մէկը տարավ, երբոր բերանը առնելով
ողջ անանկ ջուրին մէջը լողալով կեր-
Թար, հովիւներէն ոմանք տեսնալով վը-
րայ հասնելով տղան խալըցուցին, սան-
կալ գետին բանօղներէն (չիֆտճիներէն)
ոմանք գայլը տեսնալով վրայ հասան, մէ-
կալ տղանալ ողջ ազատեցին. աս բանս

մէկ գեղին՝ մէկ երկրին մէջը եղաւ, բայց զատ զատ պահելով ու ծածկելով, տղաքը իրար զիրար չէին ճանչնար թէ եղբայր էին եղած . իսկ Եւստաթէոս ամենէն բանէն, զաւակներէն, ընկերոջմէն, զրկուած մնալով կուլար կոծելով յուսահատածի պէս կերթար ։ Այս ինծի կըսէ, որ երբեմն թագաւորի պէս էի, հիմա ամենէն բանէն թափթըփած մնացի . բայց սիրտը աստուծմէ չիբաժնելով աղօթքի հետ կըլլար, տէր իմ թէ որ քեզ հաճոյ է կըսէր մէկ հոգի մը վրաս մնաց, անալ ան ալ քեզի, ասանկ զուրցելներով հասաւ բանտի-սոն գեղ մը, հոն ասոր անոր կաղաչէր որ զինքը բանվորի մը պէս իրենց ծառայութե մէջը առնեն, անանկով մէկի մը քով մըտնալով այգեպան եղաւ, էգին կըբանէր 15 տարի ։

Կանք որ ան նաւապետն՝ որ Թէոպիստէ կինը իր աշխարհը՝ իր տունը տարաւ, ա͞յ ողորմութը ամենեւին չիդպաւ, որովհետեւ ան օրն որ նաւուն մէջը բռնեց արգելեց Թէոպիստէն՝ հիվընդնալով, իր տունը հասածին պէս մեռաւ . Թէոպիստէն անոր ձեռքէն խալըսելով ան աշխըրհին մէջը անփորձ մնալով շնորհօքն այ, ուրիշներուն ծառայութի ընելով կապրէր։ Եղաւ ատեն որ ան աշխըրհին մարդիկները ուր կըկենար Թէոպիստէ՝ հռոմայեցոց երկիրներուն վրայ վազեցին, շատ տեղվանք առին . երբոր հռոմայեցոց թա-

դաւորը լսեց շատ կընեղէր, հառաչելով կըյիշէր Եւստաքէոսը որ իրեն կորըձուքէ ասանկները շուտ մը կըղօպէր · ո՛ւր արդեօք կըգտնըվի ըսաւ, գնացէք փնտռեցէք ինծի բերէք · ով որ գտնայ բերէ, 15 տարի ուռճիկ (էօլէֆէ) իրեն կապել սըվարձ խոստացաւ, թող տուր ուրիշ պատիւները ։ Աս դին ան դին մարդիկ վազեցին գտնալու, անոնցմէ երկու հոգի ալ կարգաւորութը եկան հասան ան գեղը ուր որ կըկենար Եւստաքէոս, երկուքնալ երբեմն Եւստաքէոսին ծառայութե մէջ եղածներէն էին ։

Եւստաքէոս ասոնք տեսածին պէս հեռըվանց ճանչնալով, իր առջի մեծութիը միտքը ընկաւ, և հիմակվան խեղճութիը· ա՜խ տէր իմ ըսաւ ասոնք հիմա տեսայ, գոնէ ան գիլի աշխարհքնալ ինծի ցըցու գիտցու իմ զաւկըներս իմ ընկերըս ինչ եղան, ան ատենը ձայն եկաւ երկնքէն· Եւստաքէոս զօրացիր սիրտ առ, մօտիկ ատեն պիտոր տեսնաս քուկին ընկերդալ երկու զաւկըներդալ · շատ նեղէանքնէրուն պիտոր օգնական ըլլաս, եսալ քու անունդ ամմէն տեղ պիտոր մեծցընեմ ։ Աս լսելով Եւստաքէոս սիրտ առաւ · Ճանբու մէջ կեցաւ ուսկից պիտոր անցնէին ան երկու փնտռօղները, որոնք բարետալով հարցուցին իրեն, արդեօք կըճանչնաս ըսին աս գիերըս ապլակիդոս անունով մէյմը իր ընկերով երկու տղոցմով

զուրցէ մեզի՝ շատ վարձք կուտանք քեզի, աս խօսքերս լսածինպէս Եւստաքեոսին սիրտը թունտ ելաւ, չիկրցաւ պատասխան տալ, քիչ մը կենալէն ետև ըսաւ. անանկ մարդ հոս չեմ ճանչնար, եսալ հոս օտար եմ դըրսէն եկած եմ, բայց դուք հիմա եկէք ան տունն որ ես կընստիմ, քիչ մը հանգիստ առնէք: Կընաց իր տանուտիրոջը ըսաւ, իմ ճանչւորներս եկած են հեռու ճամբէ երևելի մարդիկ, աղէկ կերակուրներ հանէ իրենց, ինչ որ երթայ՝ վարձք առնելուս ատենը ես կըվճարեմ, անալ աղէկ հարկինք ասոնց ըրաւ. ինքը գինին տալով, իսկ Եւստաքեոս ջուրը կուտար: Կուրս կելլար կուլար, աչվըները սրբելով ներս կըմտնար կըծառայէր. ասանկ դուրս ներս ելլալ մտնալնինի՝ որովհետև մէկ խոց մը ունէր վզին վրայ պատերազմէն մնացած, մէկը աս նոր եկողներէն անտիւքոս անուն ճանչցաւ, լալով վրան վազեց պագաւ, մէկալ իրեն ընկերը ակակիոս զարմանալնինի ինչ կընէ անտիոքոս, անալ արթնցաւ ճանչցաւ նշանը, շուտմը գըրկելով պագաւ, երբոր բանը երևան ելաւ, ան տունեցիքնալ լալով վրայ եկան, անկից ամմէն գեղայիքնալ վրայ թափեցան զարմացան աս գիպուածին վրայ: Ալ հարցընէին ան երկուքը թէ ուր են իր ընկերը իր զաւկըները. Եւստաքեոս առաջ գոցել ուզեց, իբր թէ ինքը չէ,

Ետքը Թագաւորին հրամանը լսելով, պատմեց որ անոնք մեռան. ասանկով աս երկուքը առին Եւստաթէոսը. աղէկ լաթեր հագցընելով Ճամփայ եկան. որուն ետեւէն եկան գեղացիք իմանալով ինչ մեծ մարդ է եղեր, լալով Ճամփայ դրին։ Երբոր Եւստաթէոս Հռոմ հասաւ Թագաւորին առջին եկաւ, հարցուց Թագաւորը՝ ո՛ւր գացիր պլա՛կիդէ ըսաւ. ինչպէս մեզ աներեւոյթ եղար, անալ կարգաւ պատմեց իր գլուխը եկածները, որուն վրայ ամէն մեծները լացին. ետքը մխիթարելով իր զօրագլխութե̄ կամարը նորէն մէջքը կապեցին, վերոյիշեալ թըշնամիներուն վրայ խրկեցին։ Երբոր բանակը (օրտուն) Ճանփայ հանեց, տեսաւ Եւստաթէոս որ զօրքը ան պատերազմին կեօրէ չէր, հրամեց նորէն գիր հանել, նոր ընտրըւած զօրք ժողվել ամէն տեղէն ուսկից որ կանցնէր, ժողվօղներէն երկու հոգի եկան ան գեղը՝ ուր որ Եւստաթէոսին տղաքները կընստէին, գեղացիք լսելով որ՝ ասոնք զօրք կըփնտռեն բարըկով, աս երկու տղաքը որ դուրսէն էին իրենց քովը մեծցած, ասոնց ծախեցին ծանր գին ուզելով. որովհետեւ ուժով աղւոր բարձրահասակ տղաքներ էին. երբոր Եւստաթէոսին առջին բերին՝ իր անչափ զօրաց մէջը ասոնք գտաւ լման իր սրտին կէօրէ ընտրըւած, խիստ սիրեց. մէկը իրեն զինակիր (սիլէհտար) ըրաւ, մէ-

կալը իրենսեղանին ու սենեկին (օտային)
վրայ դրաւ։

Երբոր ամէն գործը ժողվըվեցան՝ դը-
նաց պատերազմեցաւ, ան գաւառն որ
առերէին՝ եւ առաւ ազատեց. զինմացը
եղօղները ջարդելով գետը անցաւ, պար-
պարըշներուն ներսի երկիրները վազեց,
ինչվան կարգաւորութիւն մը եկաւ հա-
սաւ ան գեղը՝ ուր էր իր կինը Թէոդխա-
նէ, հան իրեք օր հանգչիլ ուզեց. իր
վրանը (չատըրը) անկելով մօտիկ ան պար-
տէզին որ կըպահէր Թէոդխանէ։ Երբոր
լսեց Թէոդխանէ որ հռոմայեցւոց բանակ
(օրտու) եկաւ հոն՝ խիստ ուրախացաւ.
մտածելով որ, անոր զօրագլխին հա-
կըցընէ իր հռոմայեցի ըլլալը, անոր ձեռ-
քով կարելի է որ հռոմ դառնայ։ Էկէ
օրը երբոր հայէն եւ բուն էր եղած
եւստաքէոս՝ երկու եղբարքը մօտիկ պար-
տիզին մէջ ժուռ գալով ծառի մը տակ
նստած իրարու պատմել սկսան իրենց
տղայութիւնը. Թէոդխանէ իրենց մարը ան
ատենը պատուհանը նստած գանըլելով՝
իր քաշածները մտածելով յիշելով՝ գաղ-
տուկ մտիկ կըդնէր ինչ որ անոնք կըխօ-
սէին. լսեց որ մեծ աղբարը ադապիոս կը-
սէր պզտիկին։ Իմ միտքս ուրիշ բան չի-
գար իմ տղայութեաս ատենին վրայ, միայն
աչափս կուգայ որ հայրս զօրագլուխ էր
հարուստ, եւ մեր աղքըտցաւ, մայրս խիստ
գեղեցիկ էր, մէկալ պզտիկ աղբարս դե-

զին մաղերով էր․ Հայրս մեզ ամանի մը
մէջ դնելով անանկով նուշը թերով, մայր-
սալ հետերնիս եկաւ․ Երբոր նաւէն
դուրս ելանք, մայրս մեր հետը մէկ տեղ
ելաւ, չեմ գիտեր ինչ եղաւ․ Հայրս մեզ
շալկելով լալով կերթար ինչվան գետ մը
հասանք, իս ու զիս թողուց, մէկուն ալ-
ևարս առաւ ան դին տարաւ․ Երբոր կը-
դառնար՝ առիւծը զիս առաջ տարաւ, Հոն
եղող հովիւները վրայ հասան խալըցու-
ցին, Հոն մեծցուցին որ դունալ գիտես․
բայց մէկուն եղբօրս հանմար հօրս հանմար
չգիտեմ որ ինչ եղան։ Ու լամծին ալես
Թէոպիստոս վազելով Ագապիոսին ձիուն
փաթթըվեցաւ, դուն իմ եղբայրս ալիսար
ըլլաս ըսաւ․ որովհետև իմ Հայրսալ մայր-
սալ եղբայրսալ անոնք են որ դուն Հիմա
ըսիր․ եսալ կյիշեմ որ գետին մէկ դին
մնացի, Հայրսալ ալեարսալ չիտեսայ․ քե-
զի ալես իսալ գայլան մը տարաւ․ իս մեծ-
ցընողներ կըսեին որ քեզ գայլուն բեր-
նէն խալըցուցինք, ծնօղքդ չգիտենք որ
ուր են։ Երբոր Թէոպիստէ իրենց մայրը
աս խօսքերը կըսեր՝ սիրտը կըձմլըվէր
կըկըրտաէր, աղեկոր կըմնար․ Երբոր
կըտեսնար որ երկու աղբար իրար կըգըր-
կեն մարեխք կուգար վրան, չգիտեր որ
ինչ ընէ, ինչվան իրիկուն լալու հետ ե-
ղաւ․ չուզեց ճանչցրնել ինչվան որ զօրա-
պետէն մէկ օգնուէ մը գանայ ան օտա-
րուէն դուրս ելլալու․ աստնկ ինչվան առ-

տու մինչեւիցէ դիմանալով վաղուան օրը Եւստաքէոսին առջին եղավ, եւ Հռոմայեցի եմ ըսավ. տ̃ր իմ կաղաչեմ մխս խալցուսս օտար աշխըրհէս, ուր գերիի պէս թարթարական ընկերեմ, չգիտեմ ինչ ընեմ. իմ երկիրս տար։ Ու ըսելու ատենը սիրտը կեփէր, միտքը նայելով ճանչնալ կուզէր թէ ով է, ետքը չդիմանալով ըսավ. կաղաչեմ տէր իմ, քու վարքդ չիտակ աւաջուցմէ պատմէ ինծի, քրիստոսին զօրութ̃եը վրայ երդվընցընելով, չըլլայ որ դուն ըլլաս կօրընցուցածս։ Եւստաքէոս անանկ թարթարոսի երկիր ք̃ի անունը լսածին պէս, զարմացաւ մնաց. ինչպէս ք̃ին անունը սորվերէ ըսաւ ան կնիկը, սկսաւ քիչ քիչ պատմել, երբոր անիկայ կըպատմէր՝ թէօպիստէնայ ետեւէն եղած գիտուածը կըպատմէր, երբոր հասաւ պատմելու ինչպէս նաւապետը իր կինը յափշտակեց, թէօպիստէն իր բերնէն առնելով պատմեց տղոցը յափշտակվիլը գազաններէն։ Եւստաքէոս ան ատենը խիստ զարմանալով վրան ըսավ. ք̃ի զօրութ̃եը վրայ կերդվընցընեմ, զրուցէ թէ ինչպէս գիտես իմ վրայ եղած գիտուածները։ Ու ատենը վազեց տաքը ընկավ ըսելով, եւ եմ ան նաւապետավ կինը, եւ եմ թէօպիստէ որ մէկ տեղ մկրտըվեցանք. մ̃ինեզիր զօրութ̃ը որդւոյն ո̃յ ան այլազգի նաւապետը չկրցաւ ինծի չարիք մը ընելու. Հիմա

զաւկըներուդ համար կը հարցընեմ, բան մը գիտես անոնց վրայ զուրցէ։ Վ՛ին տրվալ Եւստաթէոս, քեզի ըսի որ գազաններուն բերանը ընկան, քիչ մը առաջ գուճնալ գիտցար պատմեցիր, հիմա ինչու կը հարցընես, ինչ գիտնամ որ ինչ եղան, թէպէտեւ ան ատենը լալով կանչեց. Տէր իմ սա երկու դեղեցիկ կորիճները որ քուկին քովդ են, քու զինակիրդ-ներն եղած՝ մեր զաւկըներն են. Երէկ իրարու կըպատմէին իրենց գլուխը եկածը։ Եւստաթէոս զարմանալէն ոտք ելաւ շուտ մը կանչեց ան երկուքը. երբոր պատմել տըւաւ ինչ որ գիտէին ինչ որ զուրցերէին, ան չորս հոգին իրար ճանչնալով, իրարու պլլըվելով կըպատմէին գըլըխնին եկածը. անչափ տարիէն ետեւ մէկըզմէկ ողջ տեսնալով զմայլելէն չկրնէին որ ինչ ընեն ինչ զուրցեն. ուրախանալէն ձեռքէ ձեռք բռնելով, մէկըզմէկ գրկելով կուլային երկու ժամի չափ, ատոնց ձայնը դուրս ելաւ, ամմէն զօրքը ժողվըվեցան սա նոր բանիս համար, ետքնալ մեծ ուրախութի̃ կատարեցին։

Վաղուան օրը Եւստաթէոս ուժ առնելով՝ շատ մեծ յաղթութիւն ըրաւ այլազգիներուն վրայ, մեծ փառքով համ դարձաւ. բայց իրեն դառնալէն առաջ մեռած էր իր սիրելի թագաւորը, ուրիշ նոր թի̃ր նստեր էր որ հակառակ էր քրիստոնէներուն, լածին պէս որ Եւստա-

քէոս քրիստոնեայ եղերէ, իր ամմէն ար-
դիւնքը բանի տեղ չսեպելով ատեան
կանչեց զինքն ալ ընտանիքն ալ շատ կը-
բռնադատէր որ դառնան կուռքերը
պաշտեն. երբոր տեսաւ որ չեն դառնար ,
ամմէնն ալ առիւծներուն առջին ձգեց .
բայց առիւծները մէկիմըն ալ չդպչելով
իրենց տեղը գացին . Թագաւորը աւե-
լի սրդողելով հրամմեց որ պղնձէ ցուլը
սաստիկ տաքցընեն հոն ձգեն ։ Ասիկայ
պղնձէ շինած աման մըն էր ցուլի (պու-
ղայի) ձեւով, ուր տաքցընելով մարտի-
րոսները կըձգէին կերէին . երբոր երա-
նելիները աս կրակ կտրած ամանին քա-
մը եկան ուր մէջը պիտոր իյնային, ծունկ
չոքած սկսան մէկ տեղ աղօթք ընել, զի-
րենք այնուիրել, որ բաբելոնի փուռնը մէ-
ջը ձգած իրեք մանկունքին պէս զիրենք-
ալ ընդունի ։ Տէ՛ր ա̃ծ ըսին մեր անունը
յիշողներուն խնդիրքները կատարէ՛ . ամ-
մէն բանի առատութի՛ տուր . ջուրի վրայ
ճամփորդներուն յաջողութի՛ տուր . որոնց
զաւկըները որ վտանգի մէջ իյնան՝ օգնութի՛
հասիր . ծանր մեղքերու մէջ եղողնե-
րուն մեղքերնին թեթեւցու . հիւանդնե-
րուն առողջութի՛ տուր . աս կրակը դուն
ցօղ փոխարկէ, մեր հոգին ընդունէ, մեր
մարմինը իրարմէ մի բաժներ ։ Ձան մը
եկաւ երկնքէն, որ ինչպէս ըսիք անանկ
ըլլայ ։ Երբոր ան կրակէ ամանին մէջը
ձգեցին, հանալ անոնք աղօթքի հետ ըն-

ըլալով անանկ հոգինին աւանդեցին յամին իբր 100, ոմանք քիչ մը ետև կըդնեն 120, կամ 124։ Երեք օրէն ետև տեսան որ մարմիննին չէր եղած ամենևին, այլ ձիւնի պէս ճերմակ մնացած գլխընէրնէն ալ մազ մը չէր եղած. քրիստոնեայները ժողվելով մէկ տապանի մը մէջ դրին ամմէննալ, որոնց վրր ետքը ժամալ շինեցին։ Սրբերուն վարքը մեծ քաջալերութի կուտայ անոնց որ նեղութեան մէջ են. դուրսէն կըտեսնաս որ կամ մարդիկ կամ ընական պատճառներն էին՝ որ իրենց վրայ աս նեղութիւնները բերին, բայց ներսէն յայտնի կըտեսնաս որ՝ Աստուած է եղեր. ՚ի յաւիտենից սահմաներէ ինչպէս կռապաշտութենէ դառնալնին ու հաւատքով լուսաւորվիլնին, անանկալ աս կերպ նեղութիւներ քաշելնին. որուն կամքին մէկը չիկրնար խառնըվիլ, իր մտքին մտածմունքինալ խելք մը չիկրնար հասնիլ։ Հիմա քու վրադ դարձիր մտածէ որ կըսես թէ, ինչ փորձանք կայ՝ իմ վրաս կուգայ, ինչ ցաւ կայ՝ իմ տանս մէջ կըլլայ, չիդիմացվիր ըսելով կըսկըսիս դժգոհալ. անանկով տանջանքը կըքաշես, վարձքնալ կըկորսնցընես. մանաւանդ վարձքին տեղը պատիժ կընդունիս։ Բայց թէ որ քեզիալ յայտնէր զուրցէր Աստուած, թէ ՚ի յաւիտենից սահմանված է քու վրադ, ինչպէս քրիստոնէի զաւակ ըլլալդ, անանկալ աս խաչը քաշելդ՝ ոչ մարդիկ են և ոչ դիպուածները

քեզի աս խաչը բերօղները․ այլ ինծ է որ տանիկ վճռերէ քու վրադ․ աս որ գիտնայիր, չէիր անանկ ձշգոհար։ Անանկէնէ աս վարքին կարգածլէն քեզի աս պտուղը հանէ․ իրաւ գիտցիր որ՝ ինչպէս եւստաքէոսի առաջուց զուրցեց ինծ, անալ յայտնի այ ձեռքէն եկած խաչերը սիրով քաշեց, քեզիալ որ հաւատքդ կըզուրցէ, թէ ամմէն բան որ վրադ կըլլայ, այ կարգաւորելովը կըլլայ, և ոչ մարդու ձեռքով․ ինչալ որ այ կարգաւորութը կըլլայ, ամմէն բան աղէկ կըլլայ, և ան է քու շահդ։ Ասոր վրայ հիմա խելքդ չիհասնիր․ բայց ետքը պիտոր իմանաս ինչ աղէկ է եղեր քեզի ան խաչը քաշել, որուն վրայ դուն հիմա կըձշգոհաս, ինչպէս տղայ մը երբոր գլուխը կըլըվանան կըմաքրեն՝ կուլայ, խելքը չի հասնիր, որչափ աղէկ բան է մաքրուիլը որ առանց լուանալուն չըլլար։

---

ԵՕԹՆ ՄԱՆԿՈՒՆՔ ԵՓԵՍՈՍԻ

Եփեսոս քաղաքը հիմա այասլուք կըսվի գուշ ատասի ըսված տեղն է, որ մօտիկ է իզմիրի․ ասոնք օխտը երիտասարդ աս եփեսոս քաղքին մէջ մեծերու զաւկըներ էին․ երբոր դեկոս կայսրը հոն եկաւ, ասոնք օխտնալ ինչպէս իրենց հարերնալ ամմէն օր կայսեր առջին կըկենային․ ոսկի կամար(քէմէր)մէջքերնին կա-

պած, և ուրիշ զինուորական զարդերով հագած։ Դեկոս կայսրը օր մը իր կուռքերուն տօն մը կատարել հրամեց հանդիսով. անոր համար մեծ ու պզտիկ հոն ժողվըւելով զոհ (զուրպան) մատուցին ուրախութի ըրին, հոն գտնուած քրիստոնեայներն ալ կըբռնադատէին իրենց հետ մէկ տեղ զոհ ընելու. անոնց մէջէն վախկոտները խօսքերնին մտիկ դրին, բայց քաջասիրտ քրիստոնեայները մտիկ չը-նելով շատ տանջանքներ քաշեցին, շատնալ նահատակուեցան։ Այս օտար մանկունքը արդէն քրիստոնէից հետ ընտանութի մը ունէին, իրենք բարի ըլլալով քրիստոնէից բարի վարքերնալ շատ հաւնած էին, հիմա ալ տեսնալով անոնց քաշած տանջանքները, համբերութիւնը, սիրտերնին կըցաւէր կըխշխշար վրանին, կըհարցընէին հաւատքը հասկընալու համար. անչափ ետեւէ ընկան որ՝ Ճշմարտութիւնը ճանչնալով եօթնալ մէկ տեղ ծածուկ մկրտըվեցան. միշտ աղօթքի ու պաք պահելու հետ եղան որ Ած հաստատուն պահէ զիրենք Ճշմարիտ հաւատքին մէջ։

Եղաւ օր մը որ կռապաշտները նորէն իրենց կուռքերուն տօնը սխտոր տօնէին, ասոնք ան ատենը մէջերնէն քաշվելով եկեղեցին մտան, քուրձ (չուալ) հագնելով, գետինը ինկալով գլուխնին մոխիր ցանելով անանկ կուլային աղօթք կընէին որ Ած ան մոլորեալները լուսաւորէ։ Բանը

իմացվեցաւ, դեկոս կայսեր ականջը հասաւ ասոնց քրիստոնեայ ըլլալնին, որ շուտ մը բռնել տալով իր առջին բերել տըլաւ. ասոնց հետ սաստկութ՟ խօսեցաւ որ թողուն քս՟, կուռքերուն զոհեն. ասոնք մէկ բերան խոստովանեցան որ պատրաստենք արիւննիս թափել, ճշմարտութե՟ հաւատքը քնի չիթողուլ: Նա ատենը կերպը փոխելով դեկոս՝ անուշութենով շողոքորթելով խօրաթել սկսաւ շատ խոստմունքներ ընելով՝ թէ որ ձգեն քրիստոնէութիւ. տեսնալով որ չիկրնար մտքընին փոխել, զօտինին կտրել տըլաւ որ մեծ անարգանք կըսեպվէր, երեսնին զարնել. սկսաւ գաւազանով ծեծել ինչպէս որ ստահակներուն (եարամազներուն) կընէին: Նաեւ իրենց ծնողացը խնայելով իրենց տուները խրկեց. քանի մը օր հոն նստին որ բաւել կամ ամչնալէն կամ իրենց ծնօղքը ասոնց միտքը փոխեն. որովհետեւ դեկոսայ ան օրերը հարկաւոր գործքի մը համար միտք ունէր քաղքէն դուրս ելլալ ու նորէն դառնալ:

Ասոնք թագաւորին առջեւէն դուրս ելլալնուն պէս՝ մտածեցին մէկ տեղ մը երթալ պահվիլ, որ ծնօղքներուն պատճառովը չըլլայ թէ իրենց վտանգ մը հասնի. ինչ ոսկիարծաթ որ ունէին հայրենական կամ զինուորութէն վաստըկած՝ աղքատներուն բաժնեցին. քիչ մը բան իրենց հարկաւոր ըլլալու չափ հետերնին առնելով

մօտիկ մէկ լեռ մը գացին, հոն մէկ քա-
րայր (մաղարայ) մը գտնալով, անոր ներ-
սիդին պահուեցան. լալով աղօթք ընելով
որ ա͞ծ զիրենք պահէ, աւելի հոգինին
քան թէ մարմիննին ։

Ս տեղս ատեն մը պահուելով, իրենց
մէջի պզտիկը՝ որ ամպիքօս կըսուէր՝ ամէն
օր քաղաքը կըխրկէին պատուկի հագուս-
տով որ իրենց հաց բերէ, հալածումին
բաննալ հասկընալ. ասիկայ օր մը քաղաքը
մտնալնինի, իմացաւ որ դեկոս կայսր
դարձեր եկերէ. աչքովը տեսաւ որ անոր
հրամանէն քրիստոնեայները կը տանջէին.
մէկը կրակը կը ձգէին, մէկը թրով կըզար-
նէին, գլխընին փայտի վրայ տնկած քաղ-
քին դրանը դուրսի դին կը տնկէին, մէկը
կախուած կը քերթէին. լսեցալ որ մարդիկ
ելերէին զիրենք փնտռելու, իրենց ծնողք-
ներէն կուզէին. ան ատենը հազիւ քա-
նի մը հաց առնելով արտորնօք քաղքէն
դուրս փախաւ գաղտուկ, եկաւ լեռը իր
ընկերներուն պատմեց։ Անոնք լալով ան
հացը ուտելով աղօթքի հետ եղան որ ա͞ծ
հալածումը դադրեցընէ. ըսին ամպիքօ-
սի, առտուն նորէն կանուխ գնա քաղա-
քը, իմացիր ինչ որ կըլլայ, հացնալ շատ-
ցէկ բեր, որ քանի մը օր օգտէ. աս ըսե-
լով ա͞յ յանձնեցին զիրենք, սկսան քուն
ըլլալ։

Դեկոս թագաւորը շատ օր ատոնք փըն-
տռելով, սկսաւ իրենց ծնողքը նեղել,

որ ղուրցեն՝ ուր պահվըտերեն ասոնք · անոնքալ գիտնալով լեռան մէջ պահված ըլլալնին, վախերնէն իմացուցին տեղը · շուտ մը մարդ խրկեց դեկոս հրամմեց ան քարայրին (մաղարային) բերանը ուր կեցերէին՝ խոշոր քարերով գոցել որ հոն անօթի շնչարգել մեռնին կորսուին ։ Երկու իշխան վերակացու էին եղած աս գործքին որ ծածուկ քրիստոնեայ էին, ասոնք կապարեայ (ղուրշինէ) տախտակի մը վրայ գրեցին աս օխտը մանկանց անունները, հալածանաց ատենը, և թէ ինչպէս քրիստոնէութեն համար անօթի մնալով հոս մեռան. աս տախտակըներսի դին քարերու մէջ դնելով, դուրսի դիէն գոցեցին. կարելի է որ ըսելով ատենօք ասոնց ոսկորները գտնալու ըլլաննէ՝ ով եղածնին հասկընան ։ Տարիներ անցավ կռապաշտութե ատենը լմնցաւ, հասավ եկավ մեծին թէոդոսկայսեր օրերը, որուն ատենը չորս դին տարածված էր քրիստոնէութը, բայց նոր նորհերետիկոսութիներ ելած էին. մէկ հերետիկոսութի մընալ աս էր ելած որ՝ սադուկեցւոց պէս կուրանար յարութը, որուն վրայ թէոդոս թգւորնալ ուրիշ բարեպաշտներալ շատ կըհոգային չըլլայ որ աս մոլորութը տարածվի։ Բայց այ խնամքը իր եկեղեցւոյ վրայ զարմանալի է, չիկարծած բանով անիկայ կըպաշտպանէ. ան օրերը եփեսոսի իշխաններուն մէկին սիրտը ընկավ

մէկ փարախ (աղլ) մը շինել իր ոչխար-ներուն համար, ըման մօտիկ ան տեղին՝ ուր որ աս օխտը մանկունքը գոցված է-ին. շինելու ատենը բանւորները վար ա-ռին քարայրին բերանը դրած քարերը՝ որ իրենց շէնքին բանեցընեն. քարայրը (մա-ղարան) բացվեցաւ՝ բայց իրենք ներս չմը-տան, ան իրիկունը դարձան բանւորնե-րը իրենց տունը եկան ։

Ամենակարող զօրութիւր առտըվանց աս օխտը մանկունքը յարոյց իբր մէկ խու-րունկ քունէ մը, կարծեցին որ իրիկունը պառկեցան, առտուն քունէն ելան. վը-րայի լաթերնինալ ամենեւին չէին փըթ-թած, դեկոս կայսեր վախը սիրտերնին մնացած ըլլալով, ամղիքոսը խրկեցին որ երթայ եփեսոս քաղքէն հաց բերէ, հա-լածման վրայալ իմանայ տեղեկութիւն բերէ. թէ որ դեկոս մեր ծնողքները բըռ-նադատէ, մեզ անոնցմէ կուզէ ըսին՝ ան ատենը մենքալ կերթանք մեռնելու. մեր պատճառովն չըլլայ որ ուրիշները վտանգի մէջ իյնան ։ Դուրս ելավ ամղիքոս տե-սաւ որ քարեր դիզված կան, վախ ընկաւ վրան, որովհետեւ չէր իմացած ոչ քարե-րով գոցելնին ոչ բանալնին, սակայ մէկ որդայթմընէ ըսավ կռապաշտներուն, երեսը գոցելովսկսաւ ճամփայ ելլալ շատ զգուշանալով չըլլայ որ կռապաշտները ճանչնան. երբոր քաղքին մօտիկցաւ՝ կը-նայէր ամրդեօք թագաւորին ծառայնե-

րէն մէկը կերեւնայ, բայց մէկնալ չիտես-
նալով քաղքին դուռը հասաւ. Հոն տե-
սաւ շէնքերը բոլորովին փոխուած, իրեն
տարակոյս մը եկաւ. ա՛րդեօք Եփեսոս է
թէ չէ, նորէն նայելնինի խաչ տեսաւ
դուռներուն ու պատերուն վրայ. վախ-
նալով երկրպագութի՛ ըրաւ, բայց միտքը
սկսաւ բանիլ, աս ինչ է որ կը տեսնամ
ըսելով. քիչ մը առաջ գնաց կոչնակի ձայն
լսեց, տեսաւ որ մարդիկ երեսնին խաչ
կը հանեն, քրիստոնէի պէս իրարու բարե-
կուտան, յոյն անուան վրայ կերդուըն-
նան։ Ա՜ս ինչ է ըսաւ, երէկ խաչին նշա-
նը յոյն անունը ծածուկ, այսօր յայտնի.
աս ինչպէս կրնայ ըլլալ ըսելով, քաղքին
մէջը սկսաւ ժուռ գալ. բայց ուր որ եր-
թար քրիստոնէի նշաններ կը տեսնար կը-
սէր՝ իրեն խելըռիլ մը եկաւ, ա՛րդեօք ե-
րազ մը կը տեսնամ կըսէր, սիրտը կեփէր,
չէր կրնար մէկ մտքի մը վրայ կենալ. ե-
րէկ հոս լեցուն էին կըսէր կռապաշտներ
որ քրիստոնէները կը չարչարէին, այսօր
համարձակ ք͞ո կըպաշտեն, անհաւատի
շշուրդ մը չկայ ։

Զիդիմացաւ մէկը բռնեց, աս քաղաքս
ա՛րդեօք Եփեսոս ք͞ղքն է մի հարցուց.
անալ հրամմերես ըսաւ, բայց դուն ուր
տեղացի ես ըսաւ որ չես կրնար ճանչնալ
Եփեսոսը. ամղլիքոս պատասխան մը չի-
տալով, պաղած կընայէր կասկած կեր-
թար՝ չըլլայ թէ ասիկայ կռապաշտնե-

բուն մէկ հնարքը ըլլայ պահվըտած քրիս֊
տոնեայները դուրս հանելու համար, կէմ
Թէ ո՛ծ արդեօք դեկոս կայսեր սիրտը
փոխեց որ Թոյլ տըվավ քըրիստոնէութիը
համարձակ պաշտելու ։ Ասանկ մոմոսա֊
լով գնաց հաց ծախողին ըստակ տըվավ
որ հաց առնէ . անիկայ ըստակը ձեռք ա֊
ռավ, բայց կընայէր պըրըտցընէր չէր կըր֊
նար ըստակը ճանչնալ . ուրիշներուն ցը֊
ցուց՝ անոնքալ չիճանչցան . Հարցուցին
ամղիքոսի, ուսկից ձեռքդ ընկաւ աս ըս֊
տակը, հնուցմէ մնացած գանձ մի գտար։
Ամղիքոս ալ աւելի շփոթելով կռապաշտ֊
ներուն ահը յիշելով կաղաչէր , ես կար֊
տորամ իմ բանիս պիտոր երթամ կըսէր,
ըստակը առէք ինչ որ կըբերէ հացը տը֊
վէք, կամ Թէ ըստակը ինծի դարձուցէք
Թող տըվէք որ երթամ։ Աս խօսքերես
անոնք ալ աւելի կասկած առնելով վրան՝
Թող չէին տար, կըստիպէին ըսելու ուս֊
կից ձեռքդ ընկավ աս ըստակը . աստ ձայ֊
նը շատնալով ամմէն անցվոր հօն ժողվը֊
վէլով վրան Թափեցան, առին ամղիքոսը
քաղքին մենծին տարին . իբր մէկ կասկա֊
կածաւոր մարդ մը։ Անիկայ ալ սկսաւ հար֊
ցընել՝ բան մը չիհասկըցաւ , ամղիքոսը
շփոԹելէն զարմանալէն չէր գիտեր որ ինչ
զրուցէ, անկից առին եպիսկոպոսին քովը
տարին, տըված ըստակնալ ցըցուցին . ե֊
պիսկոպոսը ըստըկին վրայ դեկոս կայսեր
անունը կարդալով հարցուց, ուսկից գը֊

տերես աս ըստակը որդեակ ըսավ. Ամ-
ղիքոս պատասխան տըվավ. տեղէ մը չեմ
գտած տէր իմ, ինչ որ երեկ մէկալնօր
աս քաղաքս կըբանեցընէր ան ըստակն է.
որովհետև եսալ աս քաղքիս մէջ ծնած
մեծցած եմ։ Տեսավ որ չէն հաւատար,
իրեն մէկ գիտածումընալ չելավ յայտնի
զուրցեց իրեն ով ըլլալը. հռուփոսի կամ-
ղին զաւակն եմ ըսավ, որ քաղքիս մեծէ-
րէն մէկն է, դեկոս կայսեր իշխաններէն
է. աս լսածնին պէս ամմէնուն մէկ բե-
րան սկսան ծիծաղիլ, խելըռած մարդ
մը սեպելով կիմ մէկ խաբեբայ մը։ Քաղ-
քին մեծնալ որ հոն եկած էր՝ ասոր վախ
տալ սկսաւ, շտկէ չիտակ զուրցէ ըսավ
ուսկից ձեռքըդ ընկերէ աս ըստակս, չէ-
նէ քեզ շատ տանջանքով կըչարչարեմ։
Ամղիքոս միտքը շփոթած սիրտը վախի
մէջ ընկած կաղաչեմ ըսավ պարոններ,
դուքալ ինծի չիտակը զուրցեցէք աս քա-
ղաքը եփեսոսն է մի թէ չէ. դեկոս կայսրը
հոս է մի կիմ չէ, աս ըսելով չորս դին կը-
նայէր անչափ շատվորուն մէջ մէկ ճանչ-
ւոր մը կըտեսնայ արդեօք։ Մէկը չիտե-
սավ. անոնքալ պատասխան տըվին, աս
քաղաքը եփեսոսն է, բայց աշխարհիս
վրայ չիկայ մէկ թագաւոր մը որ դեկոս
անուն ունենայ, ուր մնաց աս քաղքիս
մէջ տեսնալ. հոս իշխան կընստի քրիս-
տոսասէր թէոդոս թագաւորին դիացէն։
Զիտեմ ինչ զուրցեմ ըսավ Ամղիքոս.

Ես երեկ հոս աս քաղքիս մէջը տեսայ դեկոս, անոր իշխանները անոր ծառայ-ները կիշխէին աս քաղքիս վր̃։ Ն̃ ատե-նը ցաթկեց եպիսկոպոսը կանչեց մարդ, դուն կամ խենթ ես ըսաւ, և կամ մեզ խաբել կուզես, ո՞ւր է դեկոս ըսած թա-գաւորը որ դուն կըհարցընես, անիկայ հին ու կռապաշտ թագաւորներէն մէկն էր։ Պատասխանեց ամղիքոս. իրաւ կը-զուրցեմ ըսաւ՝ որ իմ երեկ դեկոս աս քաղքին մէջն էր, քրիստոնեայները կը-չարչարէր. մենքալ քրիստոնեայ ըլլալով անոր ձեռքէն փախանք. թէ որ չէք հա-ւատար, հետս եկէք, ցըցընեմ ձեզի իմ ընկերներս որ լեռան մէջ դեռ պահուած կան։

Ն̃ ատենը դարձաւ եպիսկոպոսը քաղ-քին մեծին ու ամմէնուն ըսաւ. եղբար-ներ հոս մէկ տեսիլք մը կայ, մէկ ցու-ցանք մը կայ, աս զուրցելով ելան ամմէ-նալ մէկ տեղ ամղիքոսին ետևէն գացին. երբոր քարայրին ( մաղարային ) դուռը հասան՝ եպիսկոպոսը դռան առ կապար-եայ (զուրշինէ) տախտակը, կարդալով վրայի գրածը զարմացաւ մնաց. ամմէ-նունալ ցըցուց. Պանք որ ներսը պահ-վօղ մանկունքը ասոնց ոտքին ձայնը առ-նելով՝ կարծեցին որ դեկոսին ծառայներն են որ կուգան իրենք բռնելու, աս մըտ-քին վրայ ըլլալնին ամղիքոսը տեսան որ ամմէնէն առաջ հոն մտաւ, պատմեց ի-

րենց զարմանալի փոփոխութիւնը որ եղերէ աշխարհ, կռապաշտութէ քրիստոնէութի դարձերէ ըսավ. սիրտ տալով իրենց ուրախ կենալու, պատմելով ինչպէս ած այսօր իր մեծութիւնը ցըցուց ։ Նոքը մտան գըլխաւորները տեսան աս մանկունքը որ երեսներէն մէյ մէկ հրեշտակ կըմանէին, իբր լոյս կըցոլանար. ամէն մէկին ողջոյն տալով համբուրեցին ան կենդանի նահատակները. անոնք ալ մէկիկ մէկիկ պատմեցին իրենց գլխընին եկածը, ինչ որ եղան իրենց օրերը ։

Տուտ մը ետքը գրեց մեծին Թէոդոս Թգրին, որ լսածին պէս Ճամփայ ելավ ստանպօլէն Եփեսոս եկավ. իր հետնալ մէկ տեղ բազմութի ժողովրդեան աս նոր սուրբերուն յարութիւը տեսնալու. երբոր հոն մօտիկցաւ թագաւորը՝ օխտը մանկունքնալ թագաւորին դէմը ելան, որոնք տեսածին պէս զարմացաւ մնաց, իրենց լուսերես կերպարանքնին մէյ մէկ երկնային մարդիկ կըցըցընէր զիրենք թագաւորին աչքին. որ ձիէն վար ինջնալով բարևեց ասոնք. մէկիկ մէկիկ գրկելով արցունք թափելով համբուրեց ։ Նոքը ան քարայրին մէջը մտան, իրենց տեղերը նստելով պատմեցին թագաւորին, օրհնեցին իր թագաւորութիւը. ած մեզի անոր համար յարութի առնել տըվավ որ ըսին ձեր տրտմութիը փարատէ, չիհաւատացողներուն խեւքը խօթէ, հասկընան ինչ-

պէս որ մեզի յարութ̃ի առնել տրվավ, նոյն տէրը կրնայ ամմէն մեռնօղները ասանկ գերեզմանին մէջէն յարուցանել. աս ըսե-լով եպիսկոպոսէն օրհնութ̃ի առին, անան-կով գլխընին ծռելով մէկէն ամմէննալ հօգինին ի̃յ աւանդեցին.

Ամմէն քրիստոնեայք մեծ միխթարութ̃ի առին աս դիպուածին վրայ. ան չար ա-ղանդաւորները որ ելած էին եկեղեցնայ մէջ պաղեստինու (բարաշամու) դիէրը, մեռելոց յարութ̃ը սուտ հանել կուզէին, հիմա իմացան որ աս դիպուածով յայտ-նի պապանծեցուց ա̃ծ անոնց սուտ վար-դապետութ̃ը. համբեցին տեսան որ ի-րենց մեռնելէն ետև՝ որ իրենց քուն մը կերևնար, 140 տարի անցած էր. եթը ա̃ծ իբր մէկ օրվան մէջ անանկ արթըն-ցուց յարոյց ասանք յամի տ̃ն 389. մեծին Թէոդոս Թագաւորին ժա̃երորդ. տա-րին. Թագաւորն ու եպիսկոպոսը զարմա-ցած մնացին ի̃յ նախախնամութ̃ը վրայ. ըսկսան ա̃ծ փառաւորել. Թ̃ղը հրամմեց օխտը մնտուկ շինել ոսկիով արծաթով զարդարել. որպէս զի հոն դնել տայ սըր-բոց մարմինը. բայց ան գիշերը սուրբերը երևնալով Թագաւորին ըսին որ ա̃ծ մեզ ոսկիէն արծըթէն հանել չիտրվավ այլ հողէն, անոր համար ան գետնին մէջ ուսկից որ յարութ̃ի առինք մեզ Թա-ղէ, որ յ̃ին երկրորդ անգամ գալուն՝ ան հողէն յարութ̃ի առնենք. Վաղուան օրը

Թագաւորին ապսպրելովը տեղը փորե-
ցին, հոն դրին սուրբերը, ան քարայրնալ
եկեղեցի շինելով փառաւոր տօն կատա-
րեցին․ որոնց վրայ շատ հրաշքներ կը-
պատմըվին․ իրենց մարմիննալ անապա-
կան մնացին հոն։

Ասորըն եղուարդ ինկիլիզի ուղղափառ
Թագաւորը ժմ̃, դարուն մէջ, ղատկին
օրը հաղորդըվելէն ետև երբոր սեղա-
նին վրայ հաց կուտէր իր մեծերուն
հետ, միտքը երկնային բաներու վրայ
պտըտելով շատ այլայլուի կերևցըներ իր
երեսը, երբեմ̃ ուրախ երբեմ̃ տրտում
ցըցըներով․ սեղանէն ելլալէն ետև եր-
բոր առանձնացան՝ աղաչեցին իրեն պատ-
ճառը զուրցելու։ Նինկայ հառաչելով-
մը ըսաւ, երբոր սեղանին վրայ էի միտքս
յափշտակըված տեսայ եփեսոսի օխտը ՚որ
մանկունքը իրենց քարայրին մէջը իրենց
լաթերովը պառկած, երբոր ես ուրա-
խութե̃ անոնց վրայ կընայէի, մէյմընալ
տեսայ որ աջ դիէն դարձուցին զիրենք
ձախ դին․ ասիկայ նշան է ըսավ մեծ փո-
փոխումն որ աշխարհիս վրայ պիտոր ըլ-
լայ, մեղքերուն համար 70 տարի շատ
փորձանքներ պիտոր ըլլան․ վ̃ղ զի սուրբ
մանկունքը անչափ տարի ձախ դինին
պառկած պիտոր մնան։ Ըովլի լօղները
ղարմացած մնացին, որովհետև չէյտէին
ամենևին աս մանկանց պատմուին․ Թա-
գաւորը պատմեց անոնց վարքը յարուի

տանելը, ինչպէս որ վերը գրեցինք։ Նոր վրայ Ինկիլիզին մնծերը եպիսկոպոսները որ ան տանը ուղղափառուն մէջ էին, խիստ ուզելով տոյգը հասկընալ, դեսպաններ խրկեցին սատնպօլ նստող թագաւորին, անխկայալ աս դեսպաններուն հետ մեկտեղ եպիսկոպոսներ.քահանայներ խրկեց եփեսոս, որ ըսածին պէս օխտնալ տեսան որ ձախ թեւերնուն վրայ միակերպ պառկած էին։ Նու ինչպէս որ ըսավ սուրբն եգուարդ ան ժ̄մ, դարուն մէջը մեծ փոփոխութի եկավ աշխարհիս վրայ թէ արեւմուտք թէ արեւելք, ուր արպըները՝ մէնդ սէլճուգեան ըսված թուրքերը շատ ավրեցին, աւելի մեր հայաստանը, տուղրիլայ ու ալփ ասլանայ օրերը։ Ինչպէս որ յոհաննէս կոզեռն վարդապետնալ հայաստանի մէջ գուշակերէր։ Մէկ կրօնաւորմընալ հաւներուս ժ̄ք, դարուն մէջ, երբոր ծանր հիւանդուէ պառկած ըլլալով մօտիկ էր մեռնելու, եղբայրներէն մէկը իրեն միտքը ձգեց օխտը մանկունքը բարեխօս ընել աղօթք ընել. անոնք ըսավ հիվանդներուն համնօղ սուրբեր են, անուշ քուն բերել կուտան, երբոր անանկ ըրավ ներսէն ձայն մը լսեց. [illegible] երկինքնալ տեսաւ բացվածներէրուն մէջը ան օխտը ՚նը մանկունքը նստած. աս տեսիլքէն ետեւ զինքը դտաւ ողջ առողջ կատարեալ։

Րոփիկայ դուստր էր փիլիպպոսի որ Հռոմայու ազնուականներէն մէկն էր Բ․ դարուն վերջերը․ շատ խելացի աղջիկ․ պզտիկուց կարդացող․ վարքնալ պարկեշտ․ եկաւ ատեն որ կոմոդոս բռնած Հռոմայու կայսրը եգիպտոս (մըսըր) խըրկեց իր Հայրը, որ փիլիպպոս կըռվէր փաշայ ընելով զինքը եգիպտոսի վրայ․ որպէս զի խոքէնաէրին երթալով զօպէ եգիպտացոց ապստամբութիւնը, որոնք սորված էին ապստամբելու․ Փիլիպպոս իր ամէն ընտանեօքը թագաւորական զօրքովը Հոն գալով իրեն քաջութիւնը խելքովը ամէն եգիպտոս կայսեր տակը Հնազանդեցուց․ աս ընթցընելէն Հանդարտելէն ետև փիլիպպոս միտքը դրաւ իր աղջիկը եւգինէն Հոն կարդելու․ որովՀետև խոքէնաէրին շատ մեծէրը անդադարուզելու Հետ էին իրենց տղոցը առնել եւգինէն կոյսը իրեն գեղեցկութիւնը ու խելացի վարմունքին Համար․ Բայց շնորՀքն այ լոյն աւետարանական ծագերէր եւգինեայ կուսին սիրտը․ իրեն խելքովը Հասկըցերէր որ կռապաշտներուն Հաւատքը սուտ է, գաղտուկ քրիստոնէից Հետ տեսնըվելով քիչ մը տեղեկութիւն առած էր քրիստոնէական Հաւատքի վրայ․ միշտ Աստուածաշունչը կըկարդար, սրբոց վարքը,

աւելի սրբուհւոյն Թեկղեայ վարքը. ա-
սոնք կարդալով սիրտը կըվառէր ինք-
նալ իրեն հետեւիլ. սաղմոսին ան խօսքը
միշտ բերանը առած կըզրուցէր ։ ‖ Կուռք
հեթանոսաց դեւք են եւ ձեռագործք որդւոց
մարդկան. այլ Տ̃ր զերկինս արար ‖ ։ Միայն
աս բանըս իր ծնողքներուն բանալ իր
միտքը զուրցել կըվախնար, չըլլայ որ իր
պատճառովը չարիք մը հասնի քաղքին
քրիստոնէներուն վրայ ։

Օր մը փիլիպպոս խօսք բացաւ յոր-
դորեց իր աղջիկը Եւգինէն արկուիղոսի
հետ կարգըվելու, որ հռոմայեցի էր ազ-
նուական տոհմէ, փաշայի տղայ. Եւգի-
նէն պատասխան տըվավ հօրը, փեսայ ըլ-
լալու համար տանը մէնծուիը նայելու
չէ ըսավ, այլ իրեն մարդուն աղէկ ըլլա-
լը նայելու է. անոր համար մի՛ արտորար
հայր իմ՝ առանց ընտրելու, այլ սպասէ
ինչվան որ աղէկ ու կատարեալ մարդը
գտնաս ։ Երբոր ուրիշ արժանաւոր մարդ
մը կառաջարկէին իրեն ծնողքը, Եւգի-
նէն ուրիշ պատրուակներ (մահանայներ)
մէջ բերելով կընայէր որ խափանէ. խել-
վընին չի հասաւ որ իրենց աղջիկը քրիս-
տոնէութիւնը ճանչնալով դրեր էր միտքը որ
աշխարհ չիմտնայ, այլ կուսութեան հարս
ըլլայ, սիրտը կեփէր կըմտածէր մէկ ճան-
փայ մը գտնալ իր տունէն դուրս ելլալ,
քրիստոնեայ ըլլալ ։ Նա մօրով օր մը
խնդրեց իր ծնողքներէն որ Թող տան

մէկ ազարակ (չիֆթլիկ) մը երթալու ի-րենց երկու հաւատարիմ ներքինիներով, որ կըռւէին պատոսո ու յաղթութեան ։ Ճըրար Համիդայ եղան՝ եւ գինէ կոյսը խեղա-ցի խօսքերով սկսաւ ցըցընել ներքինինե-րուն, ինչպէս իրենց կռապաշտութէ հա-ւատքը սուտ էր, քրիստոնէից հաւատքը ճշմարիտ ։ Նոյնժամն հիմայ ըսավ եւ ձեռքի խաթուն կըռւէր, ասկեց ետքը եկէք հա-ւատար եղբար ըլլանք, ճշմարտին այ ծա-ռայ ըլլանք. եւ լսերեմ մէկ 'ոբ եպիսկո-պոսի մը համար հեղինոս անուն, անոր ձեռքովը ամ շատ հրաշքներ՝ մեծ մեծ գործքեր կընէ, անոր երթանք մեղի փըր-կուԷ Համիդան անիկայ կըցըցընէ ։

Նայց որովհետե ուր որ կուղէին չէր կրնար կնկան հագուստով երթալ, մա-զերը կտրեց, երիկ մարդու հագուստ մը-տաւ անանկով ներքինիի մը պէս ձեւանա-լով՝ իրեքը մէկ տեղ Համբայ ելլալով՝ եր-բոր քաղքէն դուրս քրիստոնէից կեցած տեղերը հասան, լսեցին անոնց զուրցած սաղմոսը որ բարձր ձայնով կըսէին . ‖ Յե-լանելն Իսրայէլի յեգիպտոսէ ‖ . ան սաղմոսին մէկ տուննալ կըսէ ։ ‖ Ած մեր յերկինս և յերկրի զամենայն զոր ինչ կամեցաւ և արար . կուռք հեթանոսաց ոսկի էն, յեռագործք էն ձե-ռաց մարդկան ‖ ։ Նիչ մը առաջ երթա-լով տեսան հեղինոս եպիսկոպոսը՝ բայց տուանց ճանչնալու, որուն քովէն շատ-վըր մէկ տեղ երթալով կերդէին ան

սաղմոսը որ կըսկըսի ։ ‖ Խոստովան եղերուք Տեառն ‖ . որուն մէկ տունը կըսէ ։ ‖ Առաջնորդեաց նոցա 'ի ճանապարհ ուղիղ, զի երթիցեն 'ի քաղաք բնակութեան իւրեանց ‖ ։ Աս խորհրդաւոր սաղմոսները լսելով Եւգինէ կոյսը՝ ըսաւ իր ներքինիներուն . Եղբարներ չիտակ է Համփանիս սիրտ առէք ինչպէս որ սաղմոսը կըվկայէ . եկէք մենք ալ ասոնց հետ խառնըվելով երթանք ինչվան ուր որ երթան . երբոր մէջերնին մտան հարցուցին՝ ով է ան ծերը որ իշու վրայ հեծած կերթայ . անոնք պատասխանեցին աս է Հեղինոս եպիսկոպոսը սուրբ հրաշագործ, որ կախարդի մը հետ հակառակելով կրակը մտաւ, ողջ դուրս ելաւ ։ Խիստ ուրախացան Եւգինէ կոյսն ու ներքինիները թէ ինչպէս ա̃ծ յաջողեց իրենց ուզածը . իրեն հետ մտան իր գացած վանքը . երբոր հանգչեցաւ մինակ քովը գացին, ոտքը ընկնելով հասկըցուցին որ կռապաշտներէն եկած ենք, Ճշմարիտ հաւատքը կուզենք ընդունիլ, դուն մեզի սորվեցուր քրիստոնէութիւնը ։

Սուրբ եպիսկոպոսը ա̃յ յայտնութեամբը առաջուցմէ իմացած էր ասոնց վրայ, բայց չիգիտցողի պէս հարցընել սկսաւ ուսկից էք, ինչ ազգէ, ինչ է անուննիդ, պատասխան տըվաւ Եւգինէ կոյսը Հռոմայեցի ենք, մէկը աս եղբարներէն Պռոտոս կըսվի, մէկալն Յակինթոս . ես Եւգինէոս կըսվիմ ։ Աղէկ անուն ունիս

ըսավ եպիսկոպոսը . Եւգինէոս քաջ կր-
թարգմանիլ, դուն ալ քաջութ՞ թողուցիր
կուռքերը որպէս զի քո՛ւ ծառայ ըլլաս .
շատ փորձանքներ պիտոր անցնին քու
վրայէդ ինչպէս որ ա̅ծ ինծի ցըցուց . զօ-
րացիր ա̅ծ քեզի հետ է . չիթողուր քեզ
քու երկու ընկերներդ ալ որ առաջ ծա-
ռայի անուն ունէին , հիմա քո՛ւ բարե-
կամը եղան ։ Շատ բաներ խօսելով
հետերնին ասո՛րը մկրտեց ասոնք . ձե-
զի բնակարան աս աղքատ վանքը ըլլայ
ըսավ . ուրիշ եղբարներուն հետ մէկ տեղ
հոս նստէք . ես հոս միայն տեսնըվելու
եկած եմ՝ չեմ նստիր . վանքին մեծա-
ւորին յանձնելով ասոնք ինքը ելավ
գնաց ։

Վանք եւգինեայ ծնօղքը տեսնալով որ
չիդարձաւ, մարդ խրկեցին ետեւէն փնտր-
ռել տըվին ասդին անդին, ո՛ւր որ կր-
կարծէին. բայց տեղ մը չիգտնալով, ու-
րիշ չիկարծած տեղերնալ փնտռել տը-
վին . երբոր տեղ մը չիգտան՝ ան ատենը
լաց ու ողբը առավ զիրենք . ծնօղքը ի-
րենց աննման աղջիկը կուլային, եղբար-
ները իրենց քոյրը, ծառայները իրենց
խաթունը . չէին գիտէր որ քո իրեն էր
առէր անիկայ , աս էր որ աւետարանին
մէջ ըսեր էր ։ || Բաժանեսցի դուստր 'ի մօ-
րէ || . բայց կռապաշտ քուրմերը իրենց
կռապաշտութենէ կեօրէ մտածելով՝ իրեն
ծնօղաց միտքը հանեցուցին, թէ կուռ-

քերը Եւգինեայ գեղեցկութե՞ ու իմաս-
տութե՛ վրայ խիստ հաւնելով՝ իրենց քովը
առերէին, այնչափ որ Փիլիպպոս, անոր
ոսկեղէն արձանը շինելով՝ կուռքերուն
կարգը անցուց ։

Իսկ Եւգինէ կոյսը որ Եւգինէոս ըսուե-
ցաւ՝ զինքը չիմացընելով ան հագուս-
տովը հոն կրօնաւոր եղաւ իրեն երկու
ներքինիներովը, առաքինութե ու ճգնութե
տեւէ ընկաւ, աղօթքի պաքի ուրիշ բա-
րեպաշտական գործքերու խիստ սէր ու-
նեցաւ. խոնարհ հեզ ու կատարեալ համ-
բերող ըլլալով, ամենուն բարի օրինակ
էր եղած, ամենուն մէկ երկնային հրեշ-
տակ մը կերեւնար իր բարի վարքովը ։ Ի-
նանկ որ երբոր իրեք տարիէն վանքին մե-
ծաւորը մեռաւ՝ եղբարները ասիկայ մը-
տածեցին մեծաւոր դնելու. իրեն պզտի-
կութիը մատղաշ տարիքը արգելք մը չէր
ըլլար, նայելով իրեն գերազանց առաքի-
նութիները որ շատ ծերերէն վեր էր ։

Երբոր իրեն բացին բանը, շատ դէմ
կեցաւ կերպ կերպ պատճառներ բերե-
լով. բայց երբոր աւելի ստիպեցին Եւ-
գինէոս աւետարանը բերել տալով ըսաւ,
ո՜յ ծառայներուն ամենուն գործքի մէջ
պէտք է քու առաջնորդ ունենալ. տեսնանք
ինչ կըսէ ձեր ուզած ընտրութեը վրայ ան
րունենք. ասս ըսելով բացաւ աւետարա-
նը, ան խօսքը ելաւ որ կըսէ քո ։ || Որ է-
ֆէթ 'ի յէՆՀ ֆեձ ըՆէլ, էղէյթ յէր պաշտօնեայ.

Եւ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել, եղիցի ձեր ծառայ || ։ Ա՛ն ատենը ըսաւ Եւգինէոս, որովհետեւ Քսին խօսքին կէօրէ ձեր ընտրած մեծաւորութիւնը ծառայութիւնն է, ես ալ չեմ հրաժարիր հնազանդ ըլլալու իբրև ծ՛յ հրամանքին, բայց կուզեմ իս ամմէնէն ետքինը դնել ։ Աս գերագանց Տ՛րուհին ինչպէս որ բերնովը ըսաւ՝ անանկալ գործքով ըրաւ, մեծաւոր ըլլալէն ետև ամմէն եղբայրներէն վար դրաւ զինքը․ կրօնաւորութեան գործքերը ընելու առջինը ինքը կըլլար․ ինչ ցած ծառայութիւներ կան ինքը կընէր․ ինչվան ջուր կրել, փայտ կոտրել, իրեն բնակելու տեղ դռնապանին նստած տեղը ըրաւ, հոն կընստէր․ չուզեց անկէց վեր զինքը դնել․ ամմէն եղբայրներուն հոգնալ հոգևոր ու մարմնաւոր կըլմնցընէր, բան մը զանց չընելով, գիշեր ցորեկալ աղօթքին կարգը կըկատարէր ։ Սանկ սքանչելի մարդ մը ըլլալով՝ աւելի խոնարհութեամբ մէջ գերազանցելով՝ բժշկութեան շնորհք ալ ունեցաւ Ա՛յմէ․ ինչվան սատանաները կըհանէր, կոյրերը կըլուսաւորէր, անանկ որ ամմէն եգիպտոսի մէջ անունը ելաւ, թէ Եւգինէոս աբբան ամմէն ցաւ կըբժշկէ․ անոր համար ամմէն գիւղէն բազմութիւն կուգային իրեն քով ողջութիւն կըգտնային։ Ասեց աս ձայնս մէլանա անունով կըռապաշտ խաթուն մը որ իւրէնտէրին կընստէր, հարուստ կնիկ մեծ դատա-

ւորի աղջիկ, որ շատոնցմընէ դէշ ջերմի (սըթմայի) էր հանդիպած, ճար մը չէր գտած. Եւգինէօսին ոտքը գալով վանքին դուռնէն աղաչեց որ զինքնալ բժըշկէ։ Ան ալ խաչին նշանը վրան հանելով եղով օծելով Քին անունովը՝ բժըշկեց կատարեալ. անալ շատ շնորհակալութի ընելով գնաց իր կալուածները որ խաբէնտերիէն դուրս էին, բայց շատ հեռու չէին Եւգինէօսի վանքէն. Հոնկեց իրեք աման լեցուն բատակ իրեն պարգեւ խրկեց։ Եւգինէօս ետ խրկեց ըսելով, գացէք ըսէք ձեր խաթունին որ՝ հոս նստող մեր ծառաները կարօտ չեն բատըկի. ինչ որ Ած կուտայ հերիք կըլլայ մեզի, թէ որ կուզէ աղէկ բանի մը բերել ան բատակը՝ թող աղքատներուն տայ։ Աս բանիս վրայ մէլանիա տրտմեցաւ, ինքիրմէ եկաւ Ծըին ոտքը ինալով կաղաչէր որ ընդունի, խօսք տըւաւ ալ աւելի խրկելու. բայց սըր բան մը չառաւ, խրատի խօսքեր խօսելով արձըկեց։ Սատանան աս կընկան ձեռքովը ուզեց հալածում հանել Ծըոյն վրայ. որ տեսնալով Եւգինեայ մնդղաշ տարիքը՝ կարծելով թէ էրիկ մարդ էր, ասանկ խօսքերէն շահ հանելուն տեղը, ցանկութի ձգեց վրան, օրէրով կըմտմտար ինչպէս իր ուզածը ընէ. քանի մը օր կենալէն ետեւ իր կալուածներուն տունը՝ սուտմըտընէ հիւանդ ձեւացուց զինքը մահճի

մէջ պառկած. մարդ խրկեց Եւգինէոսի աղաչելով որ քովը գայ. Երբոր սուրբը միամտութ՟ քովը գնաց, Մելանիան իր չար միտքը բացաւ. սուրբը սկսաւ անիկայ յանդիմանել սաստել, բայց անիկայ ալ աւելի սկսաւ համարձակութ՟ ընել, անոր համար մերժելով մը քովէն դուրս ելավ ընելով, իրաւ դուն Մելանիա ըսվեցար, որ սեւ կըթարգմանի, որովհետեւ զաւակ սատանայի ես եղեր դժոխոց որդի ։ Ասոր վրայ Մելանիա խիստ ամօթով մնալով՝ մտածեց դատաւորին մատնելու. որդողելով ելավ եկավ խաքէնտէրին. փիլիպպոսին առջին ելավ որ ան տեղին փաշան էր, չիգիտնալով որ Եւգինեայ հայրն էր. լալով աղաղակելով սկսաւ ամբաստանել, թէ քրիստոնէներէն մէկ աբեղայ մը կերպով մը տունս եկավ չարութ՟ ընելու համար, թէ որ ես աղաղակ չվերցընէի՝ իմ աղախիններս չիկանչէի, ձեռքէն չիկրնայի պիտոր խալըսիլ. ասանկով շատ գեշ զուրցեցորին վրայ ու իր կրօնաւորներուն վրայ ։

Փիլիպպոս լսածինպէս զինուորներ խրըկեց, Եւգինէոսնալ ամմէն կրօնաւորներնալ կապելով իր առջին բերել տըվավ. մեծ շշնկոց ելավ բոլոր քաղքին մէջ, կռապաշտները սկսան ոխորտալ քրիստոնէից վրայ. Երբոր ատեանը ելավ Եւգինէոս կրօնաւորական հագուստով, ըսավ իրեն փիլիպպոս. իրա՛ւ է ինչ

որ կըսէ քու վրադ մելանման, ձեր քո՞ր
աս կըսորվեցընէ ձեզի ամմէն չարութի
ընել ինչվան մէնծի խաթուններէնալ
չամչնալ: Սուրբը զինքը չիճանչցընելու
համար գլուխը վար բռնելով ցած ձա-
նով ըսաւ. տ̃րն մեր յ̃ս ք̃ս որուն ես կը-
ծառայեմ ՚որ է ՚որց, մեզիալ ՚որ ըլլալ
ապսպրեց հոգւով մարմնով, թէ որ մե-
լանման ասոր դէմը զուրցեց ձեզի, շուտ
մը խօսքին մտիկ դնելպէտքը չէր ինչվան
որ երկու գիտցէնալ լսէք, անանկով շի-
տակ դատաստան կտրէք. թէ որ ես յան-
ցաւոր ելլամ, ինչպէս կուզես պատժէ,
ես չեմ վախնար, բայց թէ որ իմ թշնա-
միս պարտաւոր ելլայ, աս կաղաչեմ որ
բան մը չընէք իրեն, վ̃ս զի մեր օրէնքը
մեզի անոխակալ ըլլալ կապսպրէն, չար
ընօղներուն բարի ընել:

Փիլիպպոս զարմացաւ ասանկ խելացի
պատասխան տալուն վրայ որ չէր կար-
ծէր, բայց չիհաւատալով իրեն խօսքին
աւելի մելանային կրհատատը, որ լիրբ
երեսով կըպնդէր իր ըսածը, իր աղախին-
ներուն վրայ յոյսը դնելով, որոնց ապը-
պըրեր սուտ վկայել, անոնքալ իր խրա-
տածին պէս ատեանին մէջ կըկանչէին
կըզուրցէին, հաղիւ կըցանք մեր խաթու-
նը աս չար աբեղային ձեռքէն խալըսը-
նել կըսէին: Աս խօսքէս ալ աւելի բռըն-
կելով փիլիպպոս շատ դէշ զուրցել սկսաւ
եւգինէոսին վրայ, կըսպառնար զինքը

պատմնել, իրեն ընկերներնալ տանջել։ Այն ատենը սուրբը հառաչանք մը հանեց սրտէն ընելով. ատեն կայ լռելու, ատեն կայ խօսելու բառով, թէ որ լուռ կենամ, կըվախնամ քրիստոնէից սուրբ անունը պատճառ ըլլամ, նախատինք հասցընել չտամ։ Սիրտը փղձկելով կանչեց. Ո՛ր իմ, դուն ես իմ հայրս փիլիպպոս. ես քուկին աղջիկդ եմ բառով եւգինէ. որ կորսըված կըսեպէիր, բայց ես քու սիրուն համար և կուսութիս պահելու համար ամմէն բան ձգեցի, աս հրեշտակային զգեստը հագայ. ապիտոն ու սերգիոս որ քովդ նստերեն՝ իմ եղբայրներս են բառով. ո՞ւր է հապա իմ մայրս կղօդիա. աս երկու ներքինիներնալ որ իմ քովս կըտեսնաք, պրոտոսն ու յակինթոս են, որ ինծի հետ ընկեր ըլլալով քրիստոնեայ եղան։

Այս խօսքերս զուրցելնինի իսկոյն ճանչցան երեսէն ու խօսվածքէն, հայրնալ եղբայրներնալ վրան վազեցին, հոն ուրախութէ արցունք թափելով լաց մը փրցուցին իրարու վրայ. շուտ մը մօրերնուն իմացուցին որ երբոր եկաւ տեսաւնէ՝ ուրախանալէն չիտէր թէ ինչ ընէ, լալով վըրան ընկավ գըկեց։ Այն փաշային դուռը որ փիլիպպոսին տունն էր՝ մեծ շընկոց եղավ, մեծ ուրախութի, ամմէն տեղ ձայնը գնաց. քրիստոսի անունը փառաւորեցաւ. հակառակորդները ամօթով մնացին. ոմանք կռապաշտներէն ճշմարիտ է

ըսելով եւգինեայ ա̃ծը, կռդանային,
քրիստոնեայ կըլլային. իսկ քրիստոնեայք
ըսելով գոհութիւն կուտային ա̃յ ըսե-
լով, ծով է որպէս ա̃ր աստուած մեր որ
անյայտ բաները երեւան կըհանէ։ Տուտ
մը ոսկեթել աղվոր հագուստներ բերել
տըլավ փիլիպպոս, բռնադատելով հա-
գուց եւգինեայ իր աղջկանը. երեւե-
լի բարձր տեղ մը նստեցուց, ամենուն
հասկըցընելով որ աս էր իմ սիրական
աղջիկս որ այնչափ ատէն օտարացեր էր
ինծմէն։ Ան օրը մեծ ուրախութեան օր
եղաւ քաղքին մէջ. իսկ մելանիան ամօ-
թէն չիտէր ինչ ղուրցէ, փախաւ մէկ տե-
ղէն մէկալ տեղ պահվեցաւ. բայց ա̃յ ար-
դարութիւնը պատժեց անիկայ կրակ իջե-
ցընելով իր տանը վրայ որ երեց ամէն
ընտանեօք ամէն ապրանքովը. անկից
վախնալով շատ մարդ կռապաշտներէն
դարձան քրիստոնեայ եղան։ Ասանկով
սատանան մելանիան ձեռք առաւ որ հա-
լածէ եւգինէ կոյսը և քրիստոնեայները.
բայց ա̃ծ անոր իր սիրելի աղախինը եւ-
գինէն և ամէն քրիստոնեայները փա-
ռաւորեց։

Անկից ետքը եւգինէն դարձուց քրիս-
տոնեայ ըրաւ իր հայրը մայրը ամէն
տնով, ինքնալ մարապետի հագուստ հա-
գաւ. աս բանիս ետեւէն եղաւ որ իս-
քէնտէրիէի մէջ քրիստոնեայները շատ-
նան. եգիպտոսի գիւղերն ալ շատ համարձա-

կուն եղավ քրիստոնեներուն ։ Փիլիպ-
պոս գրեց կայսեր որ շատ օգուտ կըլլայ
Թէ որ քրիստոնեայները խաղաղութէ մէջ
պահէինք , Թողունք իրենց դաւանանք-
նին համարձակ կատարելու ։ կայսրնալ
որովհետև մեծ համարումներ փիլիպ-
պոսի մը, իրեն կամքին յանձներէր ամմէն
բան ։ Բայց երբոր քրիստոնեայները զօ-
րացան եգիպտոսի մէջ, երբոր աս կայսրը
մեռաւ , հալածչներուն մէջէն երևե-
լինները չկրնալով քաշել, հռոմ գացին
փիլիպպոսի վրայ ամբաստանութի ըրինոր
կայսեր առջին , որ ոմանք կըսեն Թէ
սևերոս ու անտոնինոսն էր , և ոմանք
վրդովխանոս ու գաղէնոս, ան ատենը աս
նոր կայսրը խիստ յանդիմանութի գրեց
իրեն ։ Մենէ առջինը քեզ հաւատարիմ
սեպելով կըսէր , փաշայութեան պատիւ
տրվավ քեզի , մանաւանդ Թէ Թագա-
ւորի մը պէս իշխան ըրավ քեզ եգիպտո-
սի վրայ, անալինչվան քու մահդ պահեց
վրդ., քեզ չփոխեց , մենք ալ նոյն պա-
տուի մէջ քեզ Թողուցինք, մանաւանդ
Թէ եվեցընել մտվընիս դրերէինք ։ բայց
հիմա հասկընալով որ քուկին ունեցած
հաւատքդ Թողուցերես, կուռքերուն ու
Թագաւորներուն դէմ թաներալ կընես ,
սանկ կըհրամենք որ կամ առջի կրօնքդ
բռնես առջի պատիւնալ վայելես , կամ
որ իշխանութէդ վար լնալով ամմէն ապ-
րանքներէնալ զրկըվիս ։

Երբոր փիլիպպոս աս հրամանը առաւ, քանի մը օր զինքը հիւանդ ձեւացընելով գաղտուկ ծախեց իր ամմէն ապրանքը, եգիպտոսի աղքատներուն բաժնեց, ինքնալ իր կամքովը հրաժարելով ունեցած իշխանութէն, իր տնովը քաշվեցաւ նստաւ քաղքէն դուրս տեղ մը ուր շատ կային քրիստոնէներէն, թագաւորինալ գրեց որ ուրիշ մը դնեն իր տեղը։ Փիլիպպոս որովհետեւ շատ խելացի ու առաքինի մարդ էր, քրիստոնեայները եպիսկոպոս դրին զինքը եգիպտոսին վըրայ, այնչափ զօրաւոր եղաւ հաւատքով բարի գործով որ հրաշքներ կընէր հիւանդներու վրայ։ Նսկեց ետքը թագաւորը մէկ զօրագլուխ մը խրկեց իսքէնտէրիէի վրայ ապսպրելով որ սպաննէ փիլիպպոսը մինակ. որպէս զի խռովութի մը չելլայ ժողովրդեան մէջ. ասիկայ քանի մը իր ծառայներէն քրիստոնէի ձեւով խրկեց. ասոնք հասկընալով եկեղեցնայ մէջ գտան փիլիպպոս որ աղօթքի հետ էր, հոն չարաչար զարնելով վիրաւորեցին, որ իրեք օր միայն դիմանալով աւանդեց հոգին, սուրբ կոյսն եւգինէ հօրը մարմինը առաւ թաղեց ան տեղը՝ ուր որ կղոդիա իր մայրը օտարանոց էր շինած։ Փիլիպպոս նահատակվելէն ետեւ իրեն ունեցիքը հանդիստ չի գտան եգիպտոսի մէջ օտար երկիր, քիչ մը կենալէն ետեւ խորհուրդ ըրին ամմէնը մէկ տեղ

Հռոմ դարձան. առջի օրերը անճանաչի
պէս կեցան. բայց որովհետեւ շատ բա-
րեկամներ ունէին հոն քաղքին մեծե-
րէն՝ ասոնք ճանչնալով շատ ընդունելու-
թի ցըցուցին իրենց, առանց քննելոյ ի-
րենց հաւատքը, ինչպէս սերգիոս ու ա-
պիտոոն տղաքը Թգ̃րին իշխանութե մէջ
խօթեցին ։ Իսկ՝ ոք կոյսն Եւգինէ տանը
մէջ միանաւորիկ նստած իր մօրը ու երկու
եղբայրներուն հետ կըփայլէր առաքի-
նութ̃ ու բարեպաշտական գործքերով.
բարի օրինակ էր եղած ամէն Հռոմայու
աղջիկներուն, որոնցմէ շատը քրիստո-
նեայ ըրաւ. ասոնց մէջ երեւելի եղաւ բա-
սիլա Թգ̃րին ազգականը. ասիկայ լսե-
լով Եւգինեայ վրա, գիշերանց քովը եկաւ,
անկէց հասկնալով ճշմարիտ հաւատքը
ուզեց անոր աշկերտիլ, բայց վախնալէն
աղաչեց որ իր երկու ներքինիները իբրեւ
ծառայ խրկէ իրեն, անոնցմէ աղէկ մը
սորվի քրիստոնէութ̃ը. Եւգինէնալ եր-
կուքնալ իբրեւ ընծայ բերող խրկեց իրեն,
բասիլան իր քովը կեցուց ասոնք իբրեւ
իրեն ծառայ. բայց միանաւորիկ եղած ա-
տենը իբրեւ առաքեալ քովի կըպատուէր.
Աւետարանին խօսքերը կըսորվէր իրենց-
մէ, ինչպէս որ եպ̃ս մը գտնալով անկէց
ալ աւելի լուսաւորվելով մկրտվեցաւ.
աշխըրքէ զզուելով ուխտ ըրաւ կուսութ̃
պահելով քովի հետեւիլ. Թէպէտ եւ նշա-
նած էր մէկ մեծի մը որ պոմպէոս կըս-

վեր ։ Մ՚կրտըմլէն եւ երկուքը կու-սանքնալ եւգինէ ու բասխլա իրարու հետ մէկ սէր մը կապեցին երկնային․ յոյն սիրով լեցված, յաճախ կրտեմնըմլէն, ուրիշ բան չէին խօրաթէր, որ յոյն նմանիլ, իրեն համար արինննին թափել ։

Բանկ երբոր իրարու սիրտ կուտային քրիստոնէական կատարելութը վառորկելու, օր մը սրբուհին եւգինէ երազին մէջ տեսաւ բասխլա կուսին նահատակվիլը․ բասխլանալ մէկ լուսաւոր մարդ մը տեսավ, որ իրեք պսակ կրդնէր եւգինեայ գլուխը՝ մէկը վանքին մէջի ըրած իրեն Ճգնութեը համար, մէկալը հոռոմայու մէջ նահատակվելուն համար, մէկալնալ իր մաքուր կուսուեը համար․ իրարու պատմելով ինչ որ տեսան՝ ալ աւելի կուրախանային, յոյն սիրովը կըվառէին ։

Իրենց նահատակվիլը սկսաւ ասանկ․ բասիլային աղախիններէն մէկը գնաց պոմպէոսի հասկըցուց, որ եւգինէն իմխաթունիս միտքը դարձուց․ ալ չուզեր քեզի հետ կարգըմլիլ․ պոմպէոս լածին պէս շփոթելով շատ աշխատեցաւ բասխլային միտքը փոխելու․ տեսաւ որ չըլլար, ամբաստանեց թշըրին եւգինէի համար թէ ան է որ ամմէննալ կըյորդորէ կուսքերը թողուլ իրեն անը ընդունիլ, թող չիտար կնիկներուն կարգըմլիլ․ թըըը բարկանալով հրամման տըվավ պոմպէոսի դատաւորին սպաննել բասխլան թէ որ չի-

դառնայ. պոմպէոսը նորէն փորձեց բա-
իլային միտքը դարձընելու, պատուէր՝
կախարդ կնիկներ խրկելով, երբոր չեղաւ,
գլուխը կտրել տըվաւ: Կայսրը հրամեց
որ՝ եւգինէնալ իրեն գործակիցներովը
տանջէ. դատաւորնալ բռնել տըվաւ եւ-
գինէ կոյսը իրեն երկու ներքինիներովը
կռատունը խրկեց որ զոհեն, սակայն հոն
կուռքերուն երկրպագելուն տեղը ա-
ղօթք ըրին. իսկոյն ամէն կուռքերը ըն-
կան, փշուր փշուր եղան: Ուստ մը երկու
ներքինիներուն գլուխը կտրեցին որ պը-
ռոտոս ու յակինթոս կըսուէին. եւգի-
նէայ կուսին ոտքնալ մեծ քար մը կապե-
լով տիբերիս գետին մէջը ձգեցին, բայց
նոյն ատենը կապերը քակվելով, քարը
գետին մէջը մնաց, իսկ ՚ու կոյսը ջուրին
վրայ ելլալով քալել սկսաւ ինչվան ե-
կավ ելավ ցամաքը. տեսնողներէն ոմանք
զարմանալով իրենց կուռքերը անարգե-
ցին քրիստոնեայ եղան. դատաւորը հրա-
մեց բաղնիքին հնոցը (քիւլհանին) մէջը
ձգելու. երբոր հոն մտաւ եւգինէ անանկ
պաղեցաւ որ ալ չէին կընար տաքցընել.
անկէ յաղ ողջ ելավ եւգինէ. ոմանք կա-
խարդ է կըսէին, ոմանքալ իրեն հաւատ-
քը կըգովէին: Դատաւորին խիստ դը-
ժարը գալով մութ բանտի մը մէջ դնել
տըվաւ որ հոն մնայ անօթի մեռնի. բայց
յն մեծ լոյս ծաղելով երեւցաւ եւգի-
նէայ. հաց մը բռնած ձեռքը ձիւնի պէս

Ճերմակ՝ ըսաւ. Եւգինէ, ան աս կերակուրը իմ ձեռքէս, ես եմ քու կին փրկիչդ. ինչպէս որ դուն բոլոր սրտովդ իս սիրեցիր, եսալ քեզ սիրեցի. շատ օր չանցնիր, քեզ իմ Թագաւորութեանս մէջ երկինքը պիտոր առնեմ, աս ըսելով աներեւոյթ եղաւ։ Եւգինէն բանտին մէջը 10. 15. օր կենալէն ետեւ՝ դատաւորը դահիճ խրկեց հոն գլուխը կտրել տալով. քրիստոնեայները աս անարատ Ճգնաւորնահատակին մարմինը առին հռոմայեցւոց դուրս տեղ մը թաղեցին, որ Եւգինեայ կալուածն էր. շատ սուրբերուն նշխարներնալ ինքը հոն ժողվերեր։

Սանկ զաւկէն բաժնըվելով իրեն մայրը կղոդիա՝ շատ հեղ կուգար գերեզմանին վրայ կուլար չէր կրնար միխիթ առնլու, գիշեր մը երեցաւ իրեն սրբուհին Եւգինէ ըսաւ զարդ կուսանքներով, ինչու կուլաս ըսաւ մայր իմ կղոդիա, ուրախանալուդ տեղը ինչու կուլաս իմ վրայ, որ հոն ես իր սրբերուն մէջը առեր է, հետս են միշտ ինչպէս որ կըտեսնաս, իմ հայրս ալ քահանաներուն դասին մէջը դրեր է։ Ուրախ կեցիր քեզալ պիտոր առնէ կիրակի օրը. ապսպրէ իմ աղքատներուս որ սուրբ խաչին հաւատքը չխտակ պահեն, անոնքալ արժանի ըլլան աս արքայութեր հանելու։ Սա ըսելէն ետեւ աներեւոյթ եղաւ սրբուհին Եւգինէ, բայց կղոդիա հրեշտակներու ձայն մը կըլսէր երկինքէն որ

զա̃ծ կօրհնէին, անանկով ուրախ սրտով արթըննալով փառք տըլլով ա̃յ։ պատմեց աս տեսիլքը իր տղոցը։ Իր ըսածին պէս իրաւ կիրակի օրը պատարագի ատեն երբոր ջերմեռանդութ̃ արցունք թափելով աղօթքի հետ էր կղոզին, աւանդեց իր հոգին, ասանկալ եւգինեայ երկու աղջկընները սերգիոս ու ապիտոն միշտ առաքինութ̃ ա̃ծսիրութ̃ իրենց օրը անցընելով, սրբութ̃ մեռան։ Ասանկով տուն մը ամբողջ՝ հայր մայր իրենց զաւկըներով արքայութիւնը ելան եւգինեայ ^որ կուսին օրինակովը և աշխատելովը, որոնց շնորհը ամենուն տանը արժանի ընէ ա̃ծ, բարի վարքով իրենց տանը մէջ միշտ ա̃յ ծառայեն, որ զի եաքնալ մեռնելու ատենը ասանկ ուրախութ̃ հոգինին աւանդելով արքայութե արժանի ըլլան։

---

## ՍՈՒՐԲՆ ԱԴՐԻԱՆՈՍ ԵՒ ԱՆԱՏՈԼԱ·

Ադրիանոս կռապաշտի զաւակ էր, բայց իր կինը անատոլա քրիստոնեայ էր։ ասոնք Նիկոմիդիա քաղաքէն էին, Մաքսիմիանոս կայսեր օրը, որ մեծ հալածում հանեց քրիստոնէից՝ աւելի Նիկոմիդիացւոց վր̃· շատ հեղ զոհ (զուրպան) ընել կուտար կուռքերուն, յայտնի կանչել կուտար որ ամէնն ալ պան զոհ ընեն, չեկողը մեռցը-

նել կրապաշտար, ամէն տեղալ մարդիկ գրերէր որ իմանան՝ ուր քրիստոնեայ գտնա-լու ըլլան՝ իրեն մատնեն ։ Պաստաւորնե-րուն իմաց տըւլին որ քանի մը հոգի քաղ-քէն դուրս քարերու (մաղարաներու) մէջ պահուած՝ գիշերները ձայնով աղօթք կը-նեն քրիստոնեայ են. շուտ մը զինուոր-ներ խրկելով բռնեցին զանոնք, իշխանիտ ներին ան ատեննն որ կայսրնալ կատու-նը կերթար զոհ ընելու համար. հոն բռնօղները աղաղակելով պատմեցին կայ-սեր, թէ ամէն տեղ պտըտելով ամէն-նալ ձեր հրամանին հնազանդ գտանք. ասոնք մինակ գտանք որ քուկին հրա-մանդ չեն պահեր, կուռքերը կանարգեն։ Կայսրը կանչեց զանոնք իր քովը՝ հարցուց ուսկից ըլլալնին, անոնք ալին տըւլին որ աս տեղացի ենք, բայց հաւատքով քրիս-տոնեայ ։ Կայսրը ըսաւ, դուք չիյտէք որ ինչ պատիժ գրուած է քրիստոնէներուն վրայ, կամ ինչ տանջանքով մեռան ձեռք ընկած քրիստոնէները. ասոնք ալին տը-ւլին, հրամերես իմացանք, ու ծիծա-ղեցանք անանկ հրամայողին անմտութեը վրայ, աւելի սատանային ներգործութեը վրայ, որ կըգործէ անոնց վրայ, որոնց դուն առաջնորդ ես եղեր։ Կայսրը սըր-դելով ըսաւ, ադչափ յանդգնեցաք որ իս անմիտ կանչեցիք, ես ալ ձեզ սաստիկ տանջանքով կորսնցընեմ որ դուք ալ գիտ-նաք. ասոր վրայ երդում ընելով տան-

Ջանքին տեղը խրկել տըվլավ, ան օրը ե-
կավ ատեան (տիվանը) նստաւ, երեսի վր̃
պառկեցընելով ասոնք ծեծել տըվլավ․
Թո՛ղ գայ իրենց քո̃ը իմ ձեռքէս խալըցը-
նէ ըսավ․ առջի ծեծօղնէրը յոգնելէն
ետև՝ ուրիշներուն ծեծել տըվլավ հասար
գաւազաններով․ Ո̃քէրը ծեծին տակը
կըսէին, ինչ չարչարանք որ ունիս եվել-
յուր, քանի որ կեվէլցընես, այնչափ կը-
չարցընես մեր պատկը։ Կայսրը ըսավ, ես
հիմա ձեր գլուխը պիտոր վերցընեմ,
դուք պատկի կըսպասէք, թո՛ղ տըվէք ա-
սանկ խենթումենթ խօսքերը պարապ
տեղը ձեզ մի՛ կորսնցընէք։ Միէրը ըսին,
դուն պիտոր կորսըվիս ո՛վ թշնամի Ճըշ-
մարտուե̃, որ ա̃յ ծ̃այնէրը մէկ չարիք մը
չընօղնէրը ասանկ անողորմ կըտանջես ։
Կայսրը աւելի բռնկելով հրամմեց քա-
րերով զարնել իրենց բերանը։ Միէրը ը-
սին, ո՛վ անօրէն, հրեշտակ ա̃յ քեզ ալ քու-
տունդ ալ զարնէ պիտոր, մեզ չարապ որ-
ծի պէս բռնելով ասանկ կըչարչարես կը-
զարնես, թէ որ քարերուն ասանկ զար-
նելու ըլլային, չէին դիմանար, թո՛ղ
տուր որ մարդու մարմին է, բայց ամմէ-
նուն տ̃ըր կըպահէ մեզ, մենք իրեն վրայ
ենք դրէր յոյսէրնիս ։
Ասոր վրայ աւելի բարկանալով կայսրը
ըսավ, ձեր լեզուն կտրել տամ որ՝ մարդիկ
սովլին իրենց տէրէրուն դէմ չխօսին ։
Միէրը հարցուցին իրաւցընէ կըսորդողլի՞ս

անոնց վրայ որ իրենց տխրվըտոցը դէմ ըրկենան ։ Կայսրը բաւ չէ թէ մինակ ըսորդողիմ, այլ նաև կըպատժեմ։ Սէրը սին, թէ որ դուն չի հնազանդօղները ըպատժես, հապա ինչպէս կըբռնադատես մեզ երկնաւոր թագին հրամանը ստքի տակ առնել, որ է տէր մեր յն քն ։ Ինչպէս կուզես մասնակից ընել ան պատժուն որ պատրաստըված է քեզի ու քուին հօրդ սատանային ։ Ինչ պատրաստըված է զուրցեցէք բաւ կայսրը ։ Սէրը ըսին անանկ կըրակ որ չիմարիր, անանկ որդ որ չիմեռնիր ։ Իրաւ պիտոր ձեր լեզուն կտրել տամ բաւ կայսրը, սուտ վերցընեմ ձեր խենթ ու մենթ խօսքերը։ Սէրը ըսին, անմիտ թէև մեր մարմնեղէն լեզուն կտրես, մեր սիրտը կրնայ խօսիլ ա̃յ հետ. մեր անպարտ արիւննալ կըկանչէ կենդանի ա̃յ առջին ։ Էն ատենը բաւ կայսրը, ասոնց անունները մէկիկ մէկիկ գրեցէք, զինձիլը զարնելով մահապարտներուն բանտը տարէք, ամէն կերպ տանջանքը տըվէք ։

Էս խօսքերս և գործքերս արթնցուցին, հոգւոյն սբյ շնորհքը կաթեցուցին դրիանոսին սիրտը, որ զինուորական արգի մարդ մը ըլլալով, անոնց վերացու էր եղած. հոն էր, կըտեսնար, մէիկ մէկիկ մտիկ կըդնէր. տեսնալով աս քերուն սաստիկ հաստատուն կենալնին՝ ուչափ տանջանքի դիմանալնին՝ կըզար-

մնար · դուրս ելած քովերնին գնաց կամացուկ մը հարցուց, ձեր ա̄յ անունին վրայ երդում ընել կուտամ ըսաւ. իրաւ ը զուրցեցէք ինծի, ինչ վարձ կըյուսաք առնելու որ այսչափ չարչարանքներու կը-համբերէք, ինծի կերեւայ որ շատ մեծ բանէր պիտոր ըլլան, ինչպէս որ կըպատ-մէր ինծի իմ կնիկս որ քրիստոնեայ է, հիմա ալ ձեր գործքէն կըհասկընամ որ մեծ բան պիտոր ըլլայ · Մեծերը ըսին, մեր բերանը չիկրնար ան վարձքին վրայ պատ-մել, որ ա̄ծ պիտոր տայ, քուկին ականջ-դալ չիկրնար հասկընալ · մեր գիրքը ա-սանկ կըգրէ, ան բանն որ աչք չիկրնար տեսնալ, ականջը չիկրնար լսել, մարդու մտքէն չիկրնար անցնիլ, անիկայ ա̄ծ իր սիրելիներուն պատրաստած ունի · Ա՛ս խօսքը լսածին պէս ադրիանոս՝ վազեց գը-րագիրներուն քով ըսաւ · կաղաչեմ իմ անունս ալ ասոնց հետ մէկ տեղ գրեցէք, ես ալ քրիստոնեայ եմ · Երբոր կայսրը տեսաւ ադրիանոսը ասոնց մէջը խառ-նըված, կարծեց որ անոնց վրայ ամբաս տանելուն համար կուգայ, որովհետեւ խիստ աղէկ կըճանչնար թէ ով է · ըսաւ գրագիրներուն՝ ինչ որ պիտոր զուրցէ հա-ւատարիմ ադրիանոսը, անոնքալ գիր ան-ցուցէք · դարձաւ գրագիրներուն գլխա-ւորը ըսաւ, ո̄ր իմ անիկայ եսալ քրիստո-նեայ եմ ըսելով կաղաչէ մեզի որ իր ա-նունն ալ աս մահապարտներուն հետ մէկ

տեղ գրենք․ շատ զարմացաւ կայսրը, շատ բարկացաւ, երեսին գոյնը փոխուեցաւ․ Թողուլ խնդրէ ինծմէն ըսաւ ո՛վ ադրիանոս, հիմա ամմէնուն առջին ըսէ որ՝ խելքիս մէկ բան մը եկաւ ան ատենը, անկից անանկ զուրցեցի, անով եսալ քու անունդ մահապարտներուն մէջէն հանեմ։ Պինէց ադրիանոս ես ասկէց ետքը այմէ պիտոր Թողուի խնդրեմ իմ անարժան վարքիս համար որ պղտիկուց ինչվան հիմա ունեցերեմ։ Կայսրը որդողելով երկաթը զարնել հրամմեց, որ էրուն հետ մէկ տեղ բանտը տանիլ։

Ադրիանոսի ծառայներէն մէկը վազեց իր կնկանը պատմեց աս բաները․ իր կնիկը անատոլա չիգիտնալով պատճառը՝ լալով աղաղակեց․ ինչ եղաւ, ինչ բանի համար բանտը մտաւ․ ծառան ըսաւ․ քանի մը հոգի տեսաւ որ քի համար կըչարչարվէին, չէին ուզեր մեր կուռքերուն զոհելու, ինքիրմէ գնաց մէջերնին խառնըվեցաւ՝ եսալ ասոնց հետ մէկ տեղ կըմեռնիմ ըսելով․ ան ատենը խիստ ուրախանալով անատոլա շուտ մը բանտը գնաց տեսնալու, երբոր ներս մտաւ՝ ընկաւ ադրիանոսին ոտքը երկաթները պագնելով ըսաւ․ երնէկ քեզի տէր իմ ադրիանոս, գտար ան բանը որ քուկին ծնողքդ քեզի չէին Թողուցած ժառանգելու․ երնեկ քեզի որ հիմա անհոգ կերթաս ան վերին աշխարհքը․ քու առջևէդ խրկելով

ան հարստութիւնը որ հարկաւոր ատենը պիտոր գտնաս. զօրացի՛ր ո՜ր իմ սիրտս, հարուստները պիտոր աղքատնան, չքաւորները հարստնան. երբոր ատեն չիմնար մէկէ մը փոխ ըստակ առնելու, երբոր մէկը չիկրնար մէկալը խալըսելու, ո՛չ ծառան իր տէրը, ո՛չ բարեկամ իր բարեկամը, ամմէննալ իրենց բեռը պիտոր շալկեն. դուն ան ատենը տէր իմ քուկինդ քեզի հետ կառնես կերթաս. արդար վաստակորէն վարձքդ կառնես. միայն թէ ամուր կեցի՛ր քու կոչմանդ վրայ, թշնամիին անուշ խօսքերը քեզ չիմոլորցընեն, աս աշխըրհիս ոչինչ բաները քեզ չխաբեն, միշտ աստղերուն վրայ նայէ՛ ո՜ր իմ, որ քեզի հետ կապված կեցերեն քովդ, անոնց արիւնը նմանէ՛ որ քու համար պատրաստ կեցերեն մեռնելու. հողեղէն մարդու սպառնալիքներէն տանջանքներէն մի՛ վախնար, քու ա՛ծդ որ ճանչցար քեզի հետ է, քեզ չիթողուր։

Աս խօսքերս լսելով աղրիանոս անատոլյի բերնէն, ուրախութ՟ լեցվելով ըսավ իրեն. հիմա՛ դուն տունդ գնա՛. երբոր մեզ դատաւորին առջին կանչեն, քեզի կիմացընեմ, ան ատենը կուգաս հոն կըդըտնըվիս։ Նատալա ելավ ամմէն կապվածներուն քովը քալելով մէկիկ մէկիկ կապանքնին երկաթնին կըպագնէր, կաղաչէր որ օգնական ըլլան աղրիանոսի, համբերութ՟ սորվեցընեն, կըվախնար որ

կռապաշտուէ՛ նոր դարձած ըլլալով՝ չըլլայ թէ միտքը դառնայ․ ասիկայ կըսէր ձեր քրտինքին պտուղն է, դուք եղաք հոգևոր ծնօղ, դուք հոգ տարէք որ քնի ըլլայ, քանէն չփճանալի․ նորէն ադրիանոսին քովը կուգար որ բանտին ներսի դին թօմբուլը զարնըւած էր, նորէն սիրտ կուտար կըյիշեցըներ չխնայիլ ինչ որ մարմինը կըքաշէ, հապա ինչ որ պատրաստերէ ա̃ծ հոգւոյն համար ան մտածէ կըսէր․ առանկ քաջալերելով ուրախ սըրտով իր տունը դարձաւ աս քնասեր տիկինը։ Քանի մը օրէն ետև ադրիանոս հասկընալով որ ատեանը պիտոր ելլան, ըսաւ իր ընկերներուն, կաղաչեմ թողտըւէք ինծի որ երթամ ձեր աղախինը մնատեղա կանչեմ որ մեր վկայութե՛ ատեըն ներկայ գտնըւի, ինչպէս որ իրեն խօսք տըւի։ Ա՛ս ըսելով շատ ըստակ տըւաւ բանտապաններուն որոնց ճանչըւորնին էր, ըներնալ իրեն քէֆիլ թողլով գնաց․ ճամփան երթալնին մէկը իր ճանչըւորէն տեսնալով, վազեց անատողայ կնկանը աւետիս տըւաւ որ ադրիանոս խալըսեցաւ, մօտիկ է հիմա հոս կուգայ․ առջի բերանը չի հաւատաց քնասեր կնիկը․ երբոր մէկ ուրիշ մը տնեցիներէն նոյն բանը եկաւ պատմեց, ան ատենը կարծելով որ մարտիրոսութէ՛ փախչելով կուգայ՝ տակնու վրայ եղաւ, սկսաւ լալ՝ երբոր տեսաւ որ կուգայ, վազեց տանը դուռը

գոցեց ներսէն կանչեց, Թո՛ղ մէկ դի երթայ ան մարդն որ ինծ թողուց, սուտ զրուցեց իրեն ինծի, չեմ ուզեր խօսիլ անոր հետ որ ինծ ուրացաւ, չեմ ուզեր լսել անոր խօսքը որ իր արարիչը խաբեց. ո՛վ թշուառական, ո՛վ քեզ խաբեց զատեց աղւոր նուՀնդաստէն. ինչպէս վախցար դեռ թշնամին չիտեսած. վա՛յ ինծի որ արժանի չեղայ մարտիրոսի կին ըլլալու՝ հապա ուրացողի ։ Նա արիական խօսքերը լսելով երանելին ագրիանոս մանկահասականատոլայի բերնէն որ ան ատենը 13 ամիս չիկար իրեն հետ կարգըվելէն, մէկ դիէն կուրախանար, մէկալ դիէն կարտորար իր կեանքը լմնցընելու նահատակութ̃. բայց բաւլ դուռը քուկին կարծածիդ պէս չէ. չէ թէ մարտիրոսու՛ն փախէր եկերեմ, այլ քեզալ տանելու ինչպէս որ խօսք՛դըրերէինք ։ Նանկալ ըսելով անատոլան չէր կրնար հաւատալ ինչպէս կրնայ ըլլալ որ ինքըմէ ելլայ դայ զինքը կանչելու ։ Նորէն ըսաւ ագրիանոս՝ բայց ինծի, չըլլայ որ առանց տեսնըվելու զատվինք. ետքը քեզի ամմէն օր անվերջանալի խոց մը ըլլայ. ես չեմ կրնար հոս ուշանալ. սուրբերը քէֆիլ եմ ձգեր. թէ որ ատենին չի հասնիմ, անոնք պիտոր քաշեն իմ տանջանքս ։

Նա լսածին պէս անատոլա, շուտ մը դուռը բացաւ. ագրիանոս ողջոյն տալէն ետեւ երանելի ես տիկին քոյր իմ ըսաւ որ քու-

կին էրկանդ. տասանկ օգուտ ըրիր. ու՞ծ քեզ պատկէ մարտիրոսներուն պէս առանց տանջանք քաշելու։ Ո՞ս ըսելով իրեն հետը առավ տարավ. Ճամփան հարցուց որ ինչ պէս կարգաւորեցիր տանդ բանը, ինչ կտակ ըրիր. անատոլա ոյնն տրվավ, անցաւոր ժմկուոր բաները մի՛ մտածէր տէր իմ, որ ունայնութի են. քուկին միտքդ չիմթնցը-նէն. միայն մէկ բան մը հոգամ, ինչ որ կըսար ան նայէ որ կ՚ծրես, մոռցիր էրկ-ռաւոր բաները, խնդրէ երկնաւոր անանց բարիքը՝ որ պահված են քեզի ու քեզի պէս եղօղ՚ներէրուն։ Նըրթոր բանտը հա-սան, անատոլա ՚ռը նահատակներուն քո-վը երթալով կըսպագնէր իրենց կապան-քը, բայց տեսնալով իրենց ճմլված մարմինը, որ տեղ տեղ լըրթճըկած հո-տած ըլլալով որդնոտերէին, սիրտը խըշ-խըշաց, շուտ մը խըկեց իր աղախինները ազնիւ կտաւներէն բերել տըվավ, անոնց-մով կըօրրէր իրենց խոցերը. ձեռվընին ոտվընին կըփաթթէր որ կապելէն ճըրդ-րըտըվէր էին. օխտը օր աստնկ բանտի մէջ կենալով ամմէն օրտավը կըծոյերնըրէ-րուն. օխտը օրէն ետև դահիճները եկան ՚ռէրը անդամալոյծ գտնալով մէրկ ձի-րու վրայ դրին, մէկ շըթայով ամմէն-նալ կապելով տարին. իսկ ադրիանոս տքով կերթար ձեռվըները ետին կապ-ված։ Նանաւորը հրամմեց որ ամմէնը մէկէն իր առջին բերեն, որ մէկմէկու

տանջըւելը տեսնալով, վախնան իրենց
հաւատքը ուրանան. բայց բերօղը հաս-
կըցուց որ առջի տանջըւօղները մարմին-
նին փտտած ոսկորնին կերեւայ, հիմա
անկար են տանջըւելու և ոչ ալխն տալու,
շուտ մը կըմեռնին. ուղէքնէ քանի մը
օր կենալէն ետեւ անոնց տանջանք տը-
ւէք, հիմա ադրիանոս մինակ ողջ է անի-
կայ տանջէցէք.

Ասանկով դահիճները ադրիանոսը մեր-
կացուցին, կռնակը փայտ շալկած անանկ
տանը խօթեցին մահապարտի պէս.
իրեն ընկերները տեսնալով ըսին, աղ-
բրանէ հիմա արժանի եղար քու կինխաչ-
կռնակդ շալկելու յիսին ետեւէն երթալու
որ քեզի իրքովը կըկանչէ, նայէ որ չիծռիս.
ինչ որ աչքիդ կերեւնայ մի վախնար անոնց
մէ, ինչ որ կըյուսաս անոնց վրայ նայէ,
աս ատենիս չարչարանքները արժանի չեն
ան փառքին որ մեզի պիտոր տայ քս. Ն
ատալյան ալ քովը գալով ըսաւ, տէր իմ,
մինակ քու վրայ դարձու աչքդ, մի վախ-
նար տանջանքներէն, տանջանքները քիչ
են ու ժամկոտ, վարձքը հանգիստը մըշ-
տնջենաւոր, երբոր աշխարհիս գինուո-
րուն մէջ էիր՝ յիշէ որ ինչ տառապանք
կըքաշէիր մէնծէրէն օրվան մը թոշակի
համար, հիմա որչափ աղէկ կըլլայ աս
չարչարանքները քաշել յաւիտենական
թ̃րուն ժառանգելու համար. Մ̃էր
տեսածին պէս ադրիանոսը ըսաւ, դեռ

խելքդ գլուխդ չեկավ արդեօք, ան խեն-
թութ մէջն ես ։ Ադրիանոս ըսավ, հիմա
թողուցի ամմէն խենթութիւն, աս կըհո-
գամ որ հոգիս չիկորսուի ։ Թ՟րը ըսավ,
ըսէ ինծի, զոհէ մեզի պէս մեր կուռքե-
րուն, թէ չէ՝ անանկ տանջանքներ պի-
տոր քաշես որ լսած չես ։ Ադրիանոս ը-
սավ. դուք թողուցէք ձեր խենթութիւնը,
ինչու մոլորեալ կեցերէք անշունչ կուռ-
քերուն քարերու փայտերու կըզոհէք.
ինչու թողերէք կենդանի ա՟ծը որ աս աշ-
խարհս ստեղծերէ. ես չեմ երկրպագուի
ընէր անոնց, ինչ որ կուզես ըրէ ։
Թ՟րը ծեծել հրամմեց. լսածին պէս
անատոլա, վազեց պատմեց ս՟րբերուն թէ
ադրիանոս սկսաւ տանջանք քաշել. ս՟րբեր-
նալ սկսան աղօթք ընելու. այնչափ եր-
կան ատեն ծեծեցին որ՝ մարմինը կտոր
կտոր գետինը կըյնէր, արիւննալ գետի
պէս կըվազէր ։ Թ՟րը ըսաւ, գիտեմ ան
մոլորեցուցիչներըքեզի սորվեցուցին աղ
խենթութիւը. ադրիանոս ըսավ, անոնց ին-
չու մոլորեցուցիչ կըսես որ յաւիտենական
կեանքը կառաջնորդեն, դուք էք մոլո-
րեցուցիչ որ մարդ կըկորսնցընէք ։ Թա-
գաւորը հրամմեց նորէն զերզեստով
ծեծել. ս՟րը ըսավ, որչափ որ շատցընեն
իմ տանջանքս՝ այնչափալ վարձքը կըշատ-
ցընես ։ Աս խօսքերս ամմէննալ կուգար
կըպատմէր անատոլա ս՟րբերուն ։ Դարձէլ
թ՟րը ըսաւ, ադրիանոս ինայէ քու-

կին ծաղիկ տարիքիդ, պարապ տեղը մի կորսնցըներ, եւ աղւորութեդ վրայ նայելով կըգթամ վրադ. պ̃խն տըվաւ Ադրիանոս եսալ ինծի խնայելով չեմ զոհեր։ Փ̃ըրը ըսաւ, մեր կուռքերը պաշտէ որ քեզի թողու̃ի կուտա̃ն, մէնքալ առջի մենծութե̃դ կըհասցընենք քեզ, որովհետեւ դուն ազնուական եւ հարուստի զաւակ, մէկալ ընկերներուդ մինայիր որ գեղացի մարդիկներ են, աղքատի զաւկըներ։ Ադրիանոս ըսաւ, գիտեմ որ իմ հօրս տանը ազնուութի̃ը կըճանչնաս, բայց թէ որ իմ ընկերներուս մենծութի̃նալ ճանչնալու ըլլայիր, կաղաչէիր անոնց որ՝ քուկին կուռքերուդ գերու̃է քեզ խալըսէին։ Փ̃ըրը աւելի սրդողելով հրամմեց որ չորս հոգի փորին զարնեն, երբոր այնչափ զարկին որ փորը բացվեցաւ, աղիքները գետինը կիյնային՝ դադրեցուց տանջելէն ըսելով, կըտեսնաս ինչպէս կըխղճամ վրադ, դուն չես իմանար իմ սէրս, աղէ՛ հիմա կարդա̃ կուռքերուն, եւ բժիշկներուն քեզ ըռընտցընել տալով իմ պալատիս մէջը առնեմ։ Մէ̃նհաստակը ծիծաղելով պ̃խն տըվաւ, որովհետեւ խօսք տըվիր ինծի բժշկելու, թ̃ող աւաջուցմէ ըսէիր ինծի կուռքերը ինչպիտոր ընեն, անով հասկընայի որ մէկ զօրու̃ի մը կայ անոնց քովը։ Փ̃ըրը ըսաւ կուռքերը չեն խօսիր. երբոր չեն խօսիրնէ ըսաւ ՛ըրը, ինչու անոնց կըզոհես.

մեզալ կըրոնադատես զոհելու ։
Ին առենը ամօթ մը գալով թղթին վ̄ր, ամէնը մէկէն բանտը դնել տըվալ ։ Աբե-րը անչափ ուժ չունելին որ՝ քաշկռտելով տարին դահիճները․ արիասիրտ անատոլյան տեսնալով ազրիանոսին խեղճութիւը, վիզը իր ձեռքովը բռնելով կըրաջալեցեր ճամփան, երանի քեզի ըսելով որ արժանի եղար ս̄րբերուն կարգը անցնիլ, չարչարիլ անոր համար որ՝ խիքնալ քեզի համար չարչարվերէ․ քիչմը առէնէն քովը պիտոր երթաս․ իրեն փառքը պիտոր տեսնաս․ երբոր բանտը հասան՝ ս̄րբերը ամէնը մէկ տեղ բարև կուտային երանելի ազրիանոսին՝ իսկ անատոլյան իր ձեռքովը արիւնը կըսրբեր․ մարմինալ եղով կօծեր, ազրիանոս ըսավ ս̄րբերուն, աղօթք ըրէք ինծի համար որ ած սատանայէն պահէ ըս․ խիստ մարմնուք կուգայ վրաս ։ Աբերը բոլին, զօրացիր եղբայր ազրիանէ, առաջ մեռքալ քէնէ կըվախնայինք տկար մարդ ըլլալով, բայց հիմա որ մարդկեղէն բնութե վրայ ելար, յաղթեցիր, քուկին համբերութեդ վախնալով սատանան՝ մէչ չի համարձակիր քեզի դէմ ելլալու ։ Նանոտին մէջ կուգային անատոլյայի հետ՝ նաև ուրիչ բարեպաշտ կնկտիք ս̄րբերուն ծառայելու, վէրքերնին սրբելու, երբոր լսեց թղ̄ը բարկացաւ ապսպրեց, որ չթողուն կնկտոց մտնալու ։

Նատոլյան իմանալով իրեն մազերը կըտ-
րեց, երիկ մարդու հագուստ մտնալով
անանկ կըմտնար, ուրերուն կըծառայեր.
հասկընալով որ մօտիկ էր մահերնին, ա-
ղաչեց ադրիանոսի՝ գիտեմ ըսաւ որ քու
քուկին խնդիրքդ կըկատարէ, խնդրէ
կաղաչեմ ինչպէս որ աս անցաւոր աշխար-
հիս մէջ մէկ տեղ ապրեցանք, անան-
կալ ան դին մէկ տեղ վայելենք արքայ-
ութիւնը, որ քու մարտիրոսութեդ գործա-
կից եղայ. գիտես տէր իմ աս քաղքիս
անառակութիւնը, թգ̃րին ամբարշտութիւնը,
չըլլայ որ իս սրբասէր ամուսինդ առնէ
մէկ կուապաշտի մը տայ, քեզի կխնայ
իս պահելու. իմին պարկեշտութեանս վարձք
մէկ տեղ մեռնիլս ըլլայ։ Ուրիշ կնիկ-
ներնալ բարի օրինակ առնելով անատո-
լյէն՝ մազերնին կտրեցին, երիկ մարդու
հագուստով կուգային ուրերուն կըծառայե-
լին. երբոր ասալ լսեց կայսրը խիստ զար-
մացաւ, բայց բան մը չըսաւ. հասկը-
նալով որ ուրերը ցաւուն չդիմանալով
մօտիկ են մեռնելու, տանջանքով մեռ-
նելու համար՝ սալ (էօրս) դնել տըվաւ
ոտըններնուն տակը, անանկ երկըթով
կարտել հրամեց իրենց ձիվերը։ Նատո-
լյան աղաչեց դահիճներուն որ առաջ
ադրիանոսէն սկսին, վախնալով չըլլայ որ
ուրիշներուն վրայ տեսնալով ադրիա-
նոս՝ իրեն մէկ վախ մը գայ, երբոր անոնք
էօրսը դրին, անատոլյան անանկ վառված

էր քո՛ւ սիրովը՝ որ ինքիրմէ բռնելով ադ-
րիանոսին ոտվըները եօրսին վրայ դրաւ,
երբոր դահիճները զարնելով ոտքը կըտ-
րեցին, ձիերը կոտրտեցին, անատոլան
դարձաւ ըսաւ ադրիանոսին, կաղաչեմ
ով ծառայ քու, դուն քընէ՛ ձեռվըներդ
երկնցու որ կտրեն. ո՞վ զի աս բանիս մէջ-
նալ նմանող ըլլաս ս՛րբերուն, որովհետև
անոնք քընէ աւելի տանջըվեցան. անանկ
ըրա՛վոր ադրիանոս, բայց կտրածնին պէս-
ալ հոգին աւանդեց։ Մ՝էկալ սրբերուն
վրայ գացին դահիճները, անոնք ինքի-
րէրնին կերկնցընէին ոտվընին ըսելով տ՛ր
յ՛ս. առ մեր հոգին, ասանկ յո՛ւ հետ
խօսելով ամէննալ նահատակվեցան յա-
մին 305. կամ 310. օգոստ. 26։
Ա՛տըը հրամմեց որ ս՛րց մարմինները կրա-
կը ձգեն, չըլլայ որ գալիլէացիք որ ըսել
է քրիստոնեաները անոնք առնեն ի՛յ տեղ
պաշտեն. ան ատենը անատոլան գաղ-
տուկ առաւ ադրիանոսին մէկ ձեռքը
պահեց, երբոր կըտանէին մարմինները,
ետևնին երթալով արեան կաթիլները
կըժողվէր զինքը կօծէր. ուրիշ բարեպաշտ
կանայքալ ազնիւ կտաւներ թաթխե-
լով ս՛րց արեան մէջ ծոցերնին կըպահէ-
ին. դահիճներուն լաթերնալ որ ս՛րբե-
րուն արեան մէջ թաթխըված էին՝ շատ
ոսկի տալով ծախու առին։ Երբոր ս՛րբե-
րուն մարմինները վառած փուռը կը-
ձգէին. ասոնք լալով կաղաչէին աղօթք

կ'ընէին սրբերուն որ զիրենք ալ յիշէն. մա-
նաւանդ անատոլա հօգւոյն սրբոյ շնորհ-
քովը վառված աս գիս անգին կըպտը-
տէր փուռն քովերը, փափագելով որ ինք-
նալ ան փուռը ընելով սրբերուն հետ մէկ
տեղնահատակիլ. ով երանելի ադրիանէ
կըկանչէր իս մի թողուր աս ցաւալի աշ-
խարհիս մէջ: Նորբոր մարմիննին փուռը
ձգեցին, յանկարծ երկինքը անանկ գո-
ռաց որ քիչքին մէջ ամէննալ վախցան,
սաստիկ անձրև մը գալով փուռը մարեց,
դահիճները վախէն փախան. ան ատենը
մօտիկ եղօղ քրիստոնէները՝ անատոլա-
նալ ուրիշ կանայքալ մէկ տեղ վազեցին
մարմիննին գողցան, որ ամէնևին ողջ
մնացերէին չէին էրած և ոչ գլխընին
մազը: Ան ատենը երևցաւ եւսեբիոս
անուն ազնուական մարդ մը ստանպօլէն
եկած իզնիմիտ իր կնկովը. ասքը ընե-
լով անատոլայ և ուրիշ քրիստոնէներուն
ըսաւ. մենք առաջ աս քաղքիս մօտիկ
կըկենայինք, բայց ամբարշտութիւններըտես-
նալով ամէն բանէրնիս թողուցինք ըս-
տանպօլ գացինք. հիմա տըվէք մեզի սրբե-
րուն մարմիննէրը, որ տանինք հոն թա-
ղենք ինչվան թիրին մահը, եաքը կատա-
րեալ պատուով ընենք անոնց փոխադրու-
թիւր, ինչպէս է մեր սովորութիւնը. թէ որ
հոս թաղելու ըլլաք, ան բռնաւորը նո-
րէն հանել էրել կուտայ: Աս խօսքս ամ-
մէնունալ ընդունելի եղաւ. անանկով նաւը

գրին ստանալօլ խրկելու, բայց անատոլա
վախնալով՝ չըլլայ թէ մարմինները մաշ-
նըվելու ըլլայ ագրիանոսին ձեռքնալ մէկ
տեղ մառնըվլի, որ իրեն մէկ հատիկ յոյսն
էր, իր բարձրին տակը պահեց ամենուն
գաղտուկ։

Քանի մը օր անցնելէն ետև՝ իշխիմա-
ցի մէկ հազարապետ մը խնդրեց թ̃գւո-
րէն որ անատոլան իրեն կին առնէ. անոր
գեղեցկութե̃ ու հարստութե̃ աչք տըն-
կելով. ուրիշ կնիկներավ խրկեց աս բա-
նիս համար իրեն հետ խօսելու։ Նա-
տոլան ասոնց խօսքին հաւնիլ ցըցուց.
խաբելով ըսավ, իս ուզողը որովհետև
մեծ մարդ է, իրեք ամիս ինծի ատեն տը-
վէք, որ պատրաստուի տեմնամ, ասանկով
անոնք ձամփեց. ինքը արտօրաց ստան-
պօլ փախչելու ուր որ 'ոբց մարմինները
տարին։ Ուր որ կըպահէր 'ոբյն ագրիա-
նոսին ձեռքը, հոն երեսի վրայ ինալով
աղօթք ըրավ, որ ա̃ծ 'ոբյն ագրիանոսի
բարեխօսութ̃ը զինքը խալցընէ կուսա-
պաշտի ընկերութենէ. աղօթք ընելէն
տրտմութեամբ ու հոգ ընելէն ետևքուն
մը եկավ վրան. ան ատենը 'ոբէրուն մէ-
կը երևնալով, իրեն ըսավ, մի վախնար
անատոլա, մենք չենք մոռցած քու կին
աշխատանքդ որ ըրիր մեր վ̃ր, քու ալ
ջին երանէնիս պէս աղաչեցինք որ դուն ալ
մեր քովը գաս։ Նատոլան ըսավ. ո̃րն
իմ ագրիանոսս անրդեօք քու առջին

երեցաւ ձեզի հետ։ Նինկայ մինէ առաջ երեցաւ ըսաւ. դուն հիմա նաւը մտիր մեր քովը եկօ. ա՜ծ քեզիալ կօղորմի. մեզի հետ հանգչիս պիտոր։ Անատոլյան ուրախութարթննալով ամմէն բան թողուց, միայն ագրիանոսի ձեռքը հետը առնելով նաւակ մը մտաւ. որուն մէջ շատ քրիստոնէներ կային մաքսիմիանոս Թ՜գրին ձեռքէն փախչօղներ։ Մնացաւ հազարապետը, Թ՜գրէն զօրք առնելով ուրիշ նաւ մը մտաւ եւեէն համնելու. բայց քիչ մը բացմէլէն եւե խիստ դէմ հով մը ելլալով ետ դարձուց անոնք. ամենքալ խղդըմեցան ալեկոծուէն։

Հ՜էկորդ սատանան ուզեց խափանել անատոլեայ փախչիլը, մէկ նաւապետի մը կերպարանքովնաւու մը մէջ նստած ուրիշներով՝ անատոլեայ նաւուն հանդիպեցաւ, հարցուց ուսկից կուգաք, ուր կերթաք. անոնք ալին տըվլին որ իշխանիտէն կուգանք ստամպօլ կերթանք, սըխալ կերթաք ըսաւ աս սուտ նաւապետը, ասիկայ ձեր ուզած Հռամիան չէ, ձախ դին դարձուցէք. ասոնքալ շիտակ խօսք կարծելով, ան դին դարձուցին նաւը։ Ան ատէնը որն ագրիանոս երեւնալով իբր աննաւուն մէջը կեցած, ձան հանեց մի հաւատաք ըսավ անոր, աղէկ կերթայիք առաջ, անանկ գացէք. աս ըսածին պէս՝ հալածեցաւ սատանան, անատոլյան ելավ տեսաւ որ որն ագրիանոս

կեցերէ, իրենց առջեւէն կերթայ, ուրախանալէն կանչեց ահա տէրն իմ Ադրիանոս, անկից ետքը չերեւցաւ՝որը։ Ամէնք յաջող հովով առատըվանց հասան Ստամպօլ. երբոր՝որոց նշխարքներուն տեղը հասան, Անատոլան ցամաքը ելան, թափաքով համբուրեց՝որ վկաներուն մարմինները,՝որյն Ադրիանոսի ձեռքնալ հանեց քովէն հոն դրան, երկան ատեն աղօթքի հետ եղան, ետքը Եւսեբիոսի տունը գալով բարեւեց քրիստոնեայ եղբայրները, աղաչելով իրեն համար որ աղօթք ընեն ինքնալ՝որերուն ետեւէն երթայ. անոնք տեսնալով որ խիստ յօժարած էր՝ կաղաչէին իրեն որ քիչմը քուն ըլլայ։ Ան ատենը՝որն Ադրիանոս տեսիլքի մէջ իրեն երեւնալով ըսաւ. խաղաղութին ը քեզ քոյր մարտիրոսաց, եկօ քուկին աշխատանքին վարձքը առ, և իսկոյն իր հոգին աւանդեց հոն. քրիստոնեայները քովը գալով երբոր կուզէին արթնցընել, տեսան որ վախճանած է՝ շատ ցաւեցան. լալով աղօթքով անխկայալ հոն թաղեցին միաբան Եւսեբիոսին տունը, որ արդէն գմբեթաւոր չէնք մըն էր մէկ վկայարանի մը պէս, աղօթքի տուն ըլլին. շատ մարդիկ շատ կնկտիք ամմէն ալտանքնին թողլով հոն եկան բնակեցան, աղօթքով պաքով ու ծառայելով։ Այն Ադրիանոսի վըր շատ հրաշքներ կըպատմըվին, յատուկ բարեխօս է ժանտախտ-

հիւանդուն․ անոր բարեխօսութիւնը շատ մարդ ծանր հիւանդութենէ բուժուեցան․ ջուրը խղդըւողները ողջընցան․ բարձր տեղէ վար իյնողները ողջ պահուեցան․ տղաբերք եղողները վտանգէ խալըսեցան․ անդամալուծները բժշկուեցան։

---

ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍ

Հօփիկայ սանատրուկ ըսուած հայու թագաւորին աղջիկն էր․ երբոր Թադէոս առաքեալ եօթանասունըերկու աշկերտներէն մէկը եկաւ Հայաստան քարոզելու հաւատքը, ան ատենը ինչպէս մեր աբգար թ̃գրը անանկալ սանատրուկ իր քեռորդին քրիստոնեայ եղաւ․ բայց ետքը Հայոց մէջ թ̃գր ըլլալու համար սանատրուկ ուրացաւ, նորէն կռապաշտ եղաւ․ որով հետեւ մեծները ամէնքն ալ կռապաշտ էին, կռապաշտ թ̃գր կուզէին։ Թադէոս առաքեալը նորէն եկաւ արտազ գաւառը՝ սանատրկոյ նստած տեղը քրիստոնէութիւն կը քարոզէր, բորոտները կը սրբէր, կաղերը կը քալցընէր, յ̃սին անունով շատ հրաշքներ կ՚ընէր․ շատ կռապաշտներալ կըդառնային քրիստոնեայ կըլլային իրեն ըրած հրաշքները տեսնալով, իրեն քաղցր քարոզութ̃ը լսելով։ Հօր ձայնը երբոր հասաւ՝ սանդուխտին ականջը որ ըլլ-

տիկ մատղաշ տարիքին մէջն էր. խիստ գեղեցիկ երեսով, խիստ իմաստուն խելքով, հօրմէն գաղտուկ գիշերանց եկաւ Թադէոս առաքելոյն քովը. փափաքով նստաւ իրեն քարոզուիը մտիկ դնելու. ան ատենը աւետարանին լոյսը իրեն սիրտը ծագեցաւ, հոգւոյն ՟սբյ շնորհքով լուսաւորեցաւ, մէկիկ մէկիկ ՟սբ խ՟դ-ները սրբեցաւ. Թադէոս առաքելոյ ոտքը լիզնալով արցունք թափելով կըպագնէր, իրեն հոգւոյն հայր կանչելով անիկայ. ասանկով շատ օր չզատուեցաւ անկից. իր սիրտը անանկ վառուած էր ք՟սի սիրովը՝ որ չէր ուզեր բաժնուիլ ք՟սի աշկերտէն։ Տեսնալով ՟սբ առաքեալը սանդուխտին ասանկ ջերմեռանդութիւնը՝ ք՟սի սիրոյն հետ ասանկ միանալը՝ շուտ մը մկրտեց. մկրտելու ատենը լուսեղէն նշան մը երևցաւ ՟սբուհի սանդուխտին վրայ, լուսոյն մէջէնալ ձայն մը եկաւ. ուրախ լեր ով դուստր և հարսն բարի երկնաւոր փեսային. ան լոյսը տեսնալով, ձայնն ալ լսելով, շատ հոգի դարձան քրիստոնեայ եղան։

Բայց կուապաշտ քուրմերը կատղելով՝ վազեցին իր հօրը սանատրուկ Թ՟գ՟ին պատմեցին. սանատրուկ լածին պէս հրամեց Թադէոս առաքեալը կապել, իսկ նոր հաւատացեալներէն ոմը սպաննել ոմը ծեծելու բանտի մէջ պահել. անոնց հետ իր աղջիկնալ սրբուհին սանդուխտ։

Այն որ կըսպասնէին նորահաւատ քրիս-
տոնեայները, տեսան որ մեծ լոյս մը ին-
ջաւ անոնց վրայ. ան տեսնալով ոմանք
դարձան քրիստոնեայ եղան. միւկալ կռա-
պաշտներուն վը՞ վախ մը ընկաւ, շատ-
նալ կուրցան ճառագայթէն, վախցան
բռնելու ՚որ առաքեալը: Ան ատենը յ՞ր
երեւնալով թագէոս առաքելոյն՝ շատ քա-
ջալերուի տրվավ իրեն. Տեսիլքը տեսնա-
լէն ետեւ ան գիշերը ինքիրմէ գնաց թա-
գէոս բանտը, բանտին դռները ինքիրմէ
բացվեցան. ներս մտնալով ՚որն թագէոս
ողջոյն տրվավ բանտին մէջ բռնըված
քրիստոնեաներուն, ՚որուհի սանդուխտին
քովը եկավ. տեսնալով որ իրեն ոսկի զար-
դերուն տեղը զինձիլով էր կապված,
պագ. ու կապանքները լուավ, երնէկ քեզի
դուստր երկնաւոր թագին. իսկ սրբու-
հին առաքելոյն ոտքը պագնելով կըխըն-
դրէր որ նորէն քարոզէ քոփ վրայ. իրեն
մխիթարութի տայ անարատ պահելու
զինքը ան կռապաշտներուն մէջը. բե-
րանը բացաւ ՚որ առաքեալը ասյորդո-
րանքը զուրցեց. միյմը ըսաւ քուկին սըր-
տիդ մէջը դիր քո մեր տէրը, ալ մի վախ-
նար, բոլոր սրտովըդ անոր ապաւինէ.
անիկայ քեզի օգնուփի կանչէ, իսկոյն կը-
հասնի զօրուփի կուտայ, քու թշնամիներդ
կամչցընէ. քու աչքիդ բան մը չերեւնան
աս անցաւոր աշխարհս որ այսօր կայ վա-
ղը կըկորսըվի. հաւատք, յոյս, սէր, աս

իրեք բանը քեզի զէնք ա՛ռ, ինչ հնարքներ որ բանեցընէ քեզի չար սատանան՝ չիկրընար քեզ զրկել յաւիտենից ուրախութեն, որ՝ որբերուն հետ պիտոր վայելես քուկին կամաւոր նահատակութեդ, որ պիտոր քաշես յոր անուանը համար ։ Աս ըսելով ապսպրեց աղօթքի հետ ըլլալ. ինքնալ թեւերը տարածելով սկսաւ աղօթք ընել. ո՛վ միածին որդի ո՛յ, ըսաւ, որ մարդկային ազգը փրկելու համար ծ եկար, նայէ երկնքէն աս աղախնոյդ վ՛ր սանդուխտին, որ իրեն ծաղիկ տարիքը քեզի կընծուիրէ, դուն պահէ, զօրացուր ասիկայ իր ընկերներովը, ամօթ ըրէ թշնամին սատանայ ։

Երբոր աղօթքը լմնցուց՝ յանկարծ մէկ գոռում մը եղաւ, բանտին տանիքը վեր ելաւ, արեւէն աւելի պայծառ լոյս մը ծաւթեց, լուսոյն մէջէն ալ մէկ ձայն մը եկաւ, որ կըսէր. զօրացիք, սիրտ առէք, ես պիտոր գամ ձեզ առնեմ. իսկ դու ո՛վ սանդուխտ որ իմ ետեւէս եկար, երկրաւոր պատիւը ձգեցիր իս հայր կոչեցիր, քեզի վերնագոյն լոյս պիտոր տամ ուրիշներէն պայծառ ։ Աս երկնաւոր ձայնը սուածնին պէս ամմէնուն կապանքը արձըկվեցան, մարմիննին ողջնցաւ, գոհանալով կըսէին, ուրիշ բան չունինք տէր մեր քու բարերարութեդ փոխարէնը հատուցանելու՝ բայց միայն մեր կեանքը ։

Նահատականները աս հրաշքները ու բան-

տին դուռնալ բացված տեսնալով, Թա-
գէոս առաքելոյն ոտքը ընկան, մէնքալ
քու այդ կըհաւատանք ըսին, մեզալ հա-
ւատացեալներուն մէջ խառնէ, աս ըսե-
լով լալով Թողութի կըխնդրէին. Ձեզ չէ
Թէ մեր կամքովը՝ այլ ակամայ Թ՟գրին
խօսքին համար աս նեղուէը մէջ պահե-
ցինք կըսէին. Հիմա տեսնալով քուկին
այդ փառքը, մէնքալ կըխոստովանինք որ
անէ Ճշմարիտ արարիչ երկնի և երկրի,
ինչ որ ըլլայ չենք բաժնըլլիր անկէց. Ս՟
առաքեալը տեսնալով որ Ճշմարիտ էր ի-
րենց կոչումը, սիրտ տըվալ աղօթք ըրէք
ըսավ, ինքնալ մէկ տեղ աղօթք ընելով
մկրտեց անոնք 33 հոգի բանտապանները
ու իրենց ընտանիքը. Սատանան մարդու
կերպարանքով հոն երևնալով ըսավ բան-
տապաններուն, ինչ պակաս էր ձեզի որ
Թողուցիք կուռքերը, գնացիք մէկ հրէ-
այի մը ետևէն որ ձեզ կըխաբէ, 'նը առա-
քեալը անոր սաստելով մէկ դժոխային
խանձող մը դարձաւ, սկսաւ տանջըվիլ
հրեշտակներէն. աս տեսնալով նորահա-
ւատները աւելի հաստատվեցան 'նը հա-
ւատքին մէջ.

Իսկ սատանան գնաց Թ՟րը գրգռելու,
որ առտըվանց խ՟դ ըրավ իր աղջկանը
համար ինչ ընէ, հայրական սիրտը չէր
դիմանար, անանկ աննման զաւակը ըս-
պաննելու՝ որ խիստ կըսիրէր, յիշելու ա-
տենը կուլար. իր իշխաններէն մէկը խըր-

կեց որ՝ երթայ բանտէն հանէ իր առջին բերէ, ուրիշներնալ խրկեց որ Թադէոս առաքեալը գտնան բռնեն որ իր դուստրը սաանկ մոլորցուց. չիգիտնալով որ անիկայ ինքիրմէ բանտը գացերեր. երբոր իշխանը բազմութ բանտը եկաւ՝ դուռը բաց տեսնալով զարմացաւ. կըտեսնար ներսը իր կարծածէն աւելի բազմութի, անոնց բոլորտիքնալ լոյս սաստիկ, մը առաքեալնալ ոտքի վրայ կեցած կըքարոզեր. աս լուսոյն ահաւորութէ իշխաննալ իրեն հետ եկողներնալ գետինը ընկան, աներևոյթ տանջանօք կըչարչըրկէին, ահռելի ձայներ կըլսէին։ Սուրբն Թադէոս առաքեալ հասկընալով անոնց փորձանքը, դուրս ելաւ տեսաւ որ գետինը ընկած կըթաւալըրկէին, ձեռքը վրանին դնելով՝ այ անուանը տալով ամէննալ բժշկեց։ Աս տեսածին պէս իշխանը հաւատաց, յիսուն մարդալ իր հետը, և որովհետև խիստ մեծ մարդ էր թգրին դրանը մէջ իբրև թգրին փոխանորդը ըլլալով, խիստ սրդողեցաւ սանատրուկ, լաւծինպէս հրամեց սրով սպաննել ամէննալ. ան օրը 200 հոգի նահատակվեցան երիկ մարդ կնիկ մարդ. հոն տեղը ձայներ լսվեցան հրեշտակներու, որ երկընքէն վար իջնալով ողջոյն կուտային սր նահատակներուն, անոնց վախճանալ շատ անհաւատներ կորսըվեցան. գիշեր ատեն ալ լոյս մը երևցաւ նը. վկաներուն վր։

Սբ՟ուհին սանդուխտ հօրմէն գաղտուկ հաւատարիմ ծառայներ խրկեց, իր տուներ բարակ կտաւներ բերել տալով սբ՟ մարմինները կը պատէր արցունքով համբուրելով. Եղնէկ ձեզի կըսէր քուրեր, աղբըներ, դուք արժանի եղաք երկնաւոր ուրախութ՟ե, իսաւ յիշեցէք. աս ըսելով իր տանը մօտիկ թաղել տըւաւ. Նորէն բանտը գնաց. հոն սբ՟ առաքեալը աղօթքի մէջ գտաւ, մէկ սքանչելի լուսոյ մը մէջ կեցած. վազեց ոտքը ընկաւ, շատ արցունք թափելով հառաչելով ըսաւ. իմ տէրս ու հայրս՝ որ իս մոլորեալս գտար, իս օրհնէ ինծի համար ալ աղօթք ըրէ որ եսալ հասնիմ իմ սբ՟ ընկերներուս, եսալ արժանի ըլլամ քու տեսնալու ։ Առաքեալը սբ՟ուհւոյն արցունքը, իրեն սէրը քըի վր՟ տեսնալով ըսաւ. Երանի քեզի դուստր երկնաւոր թ՟րին, քիչ մը համբերէ, շուտ մը կըտեսնաս լոյսն քու, ասանկալ սիրտ կուտար ուրիշ հ՟տցեալներուն. անոնք հաց տըվին իրեն, որ օրհնելով տըվաւ սբ՟ուհի սանդուխտին ու իր ընկերներուն, Խաչակերէն եւս փառք տըվին ամենասբ՟ երրորդութե՟ ու խաչակնքելով քուն եղան ։ Բայց Թադէոս առաքեալը աղօթքի հետ կըլլար, փոհանալով՝ որ իրեն քարոզութը անչափ հոգի վաստըկեցաւ, կաղաչէր որ հաւատքնին ամուր պահելով արժանի ըրէ անոնք արքայութե՟. Մանդ սբ՟ուհի սանդուխտը յա-

տունկ կը յանձնէր այն համբերութեան տալ, որ իրեն ծաղիկ տարիքը՝ իրեն մէկ կուսութիւնը՝ բոլորովին յոխ էր տըված, ո՛չ զի արժանի ըլլայ մարտիրոսական պսակը առնելու, փափնկ անցաւոր պսակին որ իր հօրը տանը մէջ ունէր ։

Նա աղօթքը ընելու ատենը՝ յա երեսնալով խաղաղութիւն ընդ ձեզ ըսաւ, սիրելիք իմ, լսեցի ըսաւ ո՛վ թագաւորէ, քուկին աղօթքդ, դուն սանդուխտին ու մէկալ աշկերտներուդ հետ մէկ տեղ պիտոր նահատակվիս, ըսաւ որ ձեր յիշատակը կատարէ՝ ինչ որ խնդրէ, խնդիրքնին պիտոր կատարեմ ։ Աղեա ըսաւ, տէ՛ր իմ և Աստուած իմ գիտեմ որ իս սիրեցիր, մի թողուր սատանայ՝ որ իմ խօսքովս քեզի հաւատացին. վերցու կռապաշտութեան խաւարը աս աշխրքէս վրայէն . քեզի ժողով ըրէ որ միաբան քուկին աստուածութիւն փառաւորեն ։ Այն տըված քո աս խնդիրքդ կատարեմ, քուկին առաքելութեան տեղդ ինծի ժողով ընեմ, դուն ուրախ կեցիր ըսելով վերացաւ ։ Նա ատենը մէ՛ առաքեալը արթընցուց իր աշկերտները ու մայրուհին սանդուխտը, աս տեսիլքը պատմելով ուրախացուց անոնք. մէկ տեղ աղօթք ընել սկսան, երբը սիրտ տըվաւ հիմա պիտոր առնէք բոլոր յուսեղէն պսակը. տեսնալով որ մէ՛ն սանդուխտ կուլայ՝ կարծելով որ վախէն կուլայ, անոր ալ սիրտ տըվաւ ։ Բայց մայրուհին սանդուխտ յա՛ն սիրովը

վառուած շնորհքովը լեցուած պինն տըվամ. չեմ վախնար տէր իմ և հայր, այլ ուրախ եմ, միշտ կըփափաքիմ քու տեսնալու, երբ պիտոր ըլլայ որ անոր քովը երթամ. երբ պիտոր ըլլայ որ միշտ անոր առջին կենամ. փափաքս աս է, սիրտս խիստ վառված է ան լոյսն երկնային տեսնալու, անոր համար կուլամ: Ոչ խօսքիս մը խիստ ուրախանալով առաքեալը ըսավ, երանի քեզի որ հիմա պիտոր հասնիս անոր՝ որուն որ կըփափաքիս։

Առաւտու եղածին պէս իշխանները սպասաւորները բանտը եկան, Թադէոս առաքեալնալ ուրիշ քրիստոնեայներնալ Թագաւորին սէրայը բերին կապած. միայն որբուհի սանդուխտը չկապած բերին, որ մնալու տանը զարմանալի համարձակութ բարձր ձայնով սկսաւ սիրտ տալ իր ընկերներուն ըսելով, մի վախնաք եղբարներ երկրաւոր Թագըներէն՝ որոնց վախը ոչինչ են, որուն որ հաւատացիք՝ անոր մ̃ր առնուր կեցէք, խելմըներիդ մտքընիդ անոր տըվէք. անիկայ ձեզի զօրութիւն տայ. ան է միայն ա̃ծ, անկեց ուրիշ ա̃ծ չըկայ, անիկայ ձեզ կըպահէ Տիս խաբէութէ։ Թագըրը նէրս կանչեց սրբուհին, երբ որ նէրս մտաւ, քովն եկօ ըսավ դուստըր իմ սանդուխտ. բայց սրբուհին երեսնալ չընայեցաւ քովնալ չըգնաց. Թագըրը ըսավ, իս ուրացիր մըդեակ, ան մոլորցնողը սիրեցիր, իրաւ կըսեմ քեզի, Թէ

որ չիդառնաս քու մօրէդ, քեզ մեռցը-
նելով պիտոր կորսնցընեմ ։ Ո՜վն տը-
լավ որբուհին, ան որ դուն մոլորցընող
կըսես, անիկայ իս չիտակ Ճամփան բե-
րավ. հասկըցուց ընծի Ճշմարիտ ա̅ծ արա-
րիչ երկնի և երկրի, հայր և որդի և հո-
գին ս̅բ. ես հիմա կարտորամ անոր քո-
վը երթալու որ իմ տէրս է, լոյս է և
կեանք ամմէնուն։ Թ̅գրը ըսավ, ո՛վ է ան
որ ա̅ծ կըկոչես ու հայր։ Անդուխտ ը-
սավ, ան է Ճշմարիտ ա̅ծ, որ ոչինչ ամ-
մէն բան ստեղծեց. բայց ձեր միտքը խա-
ւարած է, որ ձեր ստեղծօղը մէկ դի
թօղլով կուռքերը կըպաշտէք, որ չեն
տեսնար չեն լսեր. սատանայները մէջեր-
նին են նստած, ձեր միտքնալ կուրցու-
ցերէն, դժոխքի որդի են ըրեր, ուր պի-
տոր երթաք հետերնին տանջըվիք։ Ն՛ս
խօսքերուս վր̅ կատղելով Թ̅գրը, իր հայ-
րական գութը մոռցաւ, ապտակ (սիլ-
լէ) մը զարնել տըվավ, կապեցէք քեր-
թեցէք ըսավ, քերթած տեղերը կըրակով
երեցէք. դահիճները կապեցին սրբու-
հին, գործիքները պատրաստեցին։ Ն՛է-
կը վազեց փնացաս բաներս պատմեց մէյն
թագէոսի, որ լալով աղօթք ընել սկսաւ,
որպէս զի յո̅ զօրուն տայ անոր ։
Իրբոր սրբուհին կապված քերել պիտոր
սկսէին երկըթէ գործիքներով. երկին-
քը կանչեց ըսելով. տ̅ր իմ յս̅ հասիր ին-
ծի օգնուին, որ ամմէնքնալ իմանան քու-

կին զօրունիդ, դուն ես իմ հայրս արարիչս մի թողուր իս։ Այն ատենը մէկ շարժ մը եղաւ լոյս մը ծաւլեց, ձայն եկաւ վերէն զօրացիր դուստր իմ ես քեզի հետ եմ, խռովն կապանքները մէկէն քակուեցան, լուսէն կայծակը զարնելով դահճապետը սպաննեց, շատ մարդուք իր հետը. Թ̃գրնալ ամմէննալ ահուդողի մէջ ընկան։ Որբուհին սանդուխտ արձըկված ըլլալով եկաւ գտաւ ուր էր Թադէոս առաքեալը, ոտքը ըյնելով ըսաւ. տէր իմ և հայր ահա քո որն իմ իս արձըկեց ամօթ ըրալ սատանան։ Կանք որ սա շարժմունքը անանկ վախցուց կռապաշտոնները՝ որ իշխան մը եկաւ Թ̃գրին գիտցէն մի առաքելոյն ոտքը իյնալով ըսաւ, մեղայ քեզ ու քու ա̃յն, ներէ մեզի համար աղօթք ըրէ սա պատիժը անցնի, ինչ որ դուն կուզես կընենք. Թ̃գրը հրաման տըվաւ որ արձըկվիք։ Թադէոս առաքեալը լալով աղօթք ըրաւ պատիժը վերցընելու. մէյմընալ տեսան որ կապված քրիստոնէներուն ամմէն կապանքը ինքնիրմէ արձըկվեցան, շարժին զարհուրելի ձայննալ դադրեցաւ։ Իշխանը զարհուրեցաւ. առաքեալը իրեն ըսաւ մի վախնար, գնա պատմէ Թ̃գրին ինչ որ տեսար. ասիկայ եկաւ Թ̃գրին ըսաւ որ՝ ես Թադէոսը տեսայ չէ թէ մարդ, այլ մարդէ վեր բան մը չորս դին լուսի մէջ առնըված, աղօթք ըրածին պէս ամմէն շար-

ժումը դադրեցաւ . բայց Թ՚էրը սատա-
նայի հետեւելով ըսաւ, անիկայմ կար-
ծես որ դադրեցուց, մեր կուռքերը դադ-
րեցուցին. իշխանը աս խօսքիս վ՚ր գըժ-
ւարելով վախնալով եկաւ Թադէոս ա-
ռաքելոյն քովը, հաւատքը ընդունելով իր
ամմէն տնովը մկրտըվեցաւ. սամուէլ ա-
նուն առնելով աշկերտ եղաւ սրն , Աս
բանիս վ՚ր խիստ գժարը եկաւ Թ՚էրին ,
խիստ տրտմեցաւ , որովհետեւ խիստ ե-
րեւելի մարդ էր խորհրդական Թ՚էրին ,
որուն նման չէր գտնըվէր հայաստանի
մէջ . սրդողելէն կրակ կտրած գամէր
զարնել տըվաւ ոտվընէրուն անանկ նա-
հատակեց ան իշխանը, անոր հետ ութը
հոգիալ նահատակվեցան. որոնց մարմի-
նը գիշեր ատեն առին սրն Թադէոս եւ
սրուհին սանդուխտ խնկէրով պատելով
թաղեցին . սրբուհին ըսաւ Թադէոսի ,
երանի քեզի տէր իմ եւ հայր որ շատ
մարդ արժանի ըրիր քու պսակին, առա-
քեալնալ իրեն ըսաւ, քեզիալ երանի որ
արժանի եղար անոնք թաղելու. ուրախ
եղիր դունալ շուտով պիտոր հանիս քուի.
Աս սրուհին իբր թէ մէկ առաքելուհի-
մընէր եղած, ինքը քու սիրով վառուած
ըլլալով՝ ուրիշներնալ անոր սիրովը կը-
վառէր, ամմէննալ կըհօգար կըկերակ-
րէր կըհագվեցընէր, էրիկ մարդ կնիկ
մարդ ամմէննալ կըմխիթարվէին սիրտ
կառնէին աւոր խօսքէն, որ յոյն անու-

նով հրաշքներ ընելով շատ կռապաշտ-
ներ դարձուց, անոնցմէ մէկը եղավ զար-
մանդուխտ կնիկը հարուստ ու ազնիւ
տընէ, Թգ՟րին մօտիկը, որ իրեն ամմէն տը-
նովը մկրտեց Թադէոս առաքեալը 200
հոգի․ ասոնցմէ միայն զարմանդուխտը
նահատակեց Թգ՟րը գլուխ ըկտրելով․
որուն վ՟ր հրաշքներ երեւնալով շատ մարդ-
քրիստոնեայ եղան ։ Սանատրուկ աս
բաներս լսելով կըմըմռար սանդուխտին
վ՟ր․ գիտնալով որ ան է աւելի քրիստո-
նէութ՟ը ծաւալօղ ու դարձընօղ․ իր
հայրական գութը մէկ դի թօղլով՝ հրա-
մեց որ վաղուան օրը սրով սպաննեն ։
Լսելով սը՟ն Թադէոս անօրէն հրամանը՝
բոլոր գիշերը աղօթքի հետ եղավ սըր-
բուհի սանդուխտին համար․ առտըվանց
սը՟ուհին եկավ առաքելոյն ոտքը իյնա-
լով պագնելով ըսավ․ տէր իմ իրիկվան
մտածելու հետ էի, ինչ պիտոր ընէ ինծի
լոյսն իմ ք՟ն, երբ պիտոր իս քովը առնէ․
անանկով քուն եղայ․ մէյմընալ գիշերը
յանկարծ քունիս մէջը մէկ սատիկ լոյս
մը ծաթեց վրաս, լուսոյն մէջէնալ մէկ
լուսեղէն մարդ մը կանչեց ինծի, ո՛վ
սանդուխտ ելիր հագվէ իմ լուսեղէն ըզ-
գեստս, ես ալ սկսայ․ ահօվ խնտալով
ըսի, տէր իմ չեմ արժանի, բայց անիկայ
ինծի սաստելով հագվեցուց, լուսեղէն
պսակալ գլուխս դրավ, լուսաւոր զար-
դերով ալ իս զարդարեց․ երբոր ես զարմա-

ցած կեցած էի, յանկարծ մէկ մախնա-
լու շարժումը ըլլալով իս արթնցուց.
ես ալ փառաւորեցի զՔն որ ասանկ տե-
սիլքի արժանի ըրաւ: Նոնք լսելով ա-
ռաքեալը՝ հասկցաւ որ ան օրը պիտոր
նահատակվէր կոյսը, արցունք թափելով
մեկնեց տեսիլքը որ Քն էր իրեն երեւցո-
ղը. երեւնալով հասկցուց որ աս ծանր
մարմինս պիտոր թողուս, մարտիրոսուք
երկնաւոր լոյսը պիտոր հագնիս: Սրբու-
հին լածին պէս սիրտը ուրախութենով
լեցվեցաւ, ուրախուէն կուլար, առաքե-
լոյն ոտքը լիզալով կըսէր. երանի քեզ
հայր իմ, որ իս նորէն ծնար, Ճնդէ փըր-
կուէ դեղ անմահուէ եղար, խնդրէ Քնէ
իս շուտով իր քովը առնէ. առաքեալը ը-
սաւ, շուտով պիտոր հասնիս ան լուսոյն
որուն անչափ կըփափագիս: Սրբուհին
ըսաւ. տէ՛ր իմ երբոր մեռնելու պիտոր ըլ-
լամ, մօտիկ քովս կենաս, իս զօրացը-
նես: Ան Թադէոս ձեռվըները վեր վեր-
ցընելով աղօթքի կեցաւ, սիրտ տալով
օրհնեց սրբուհի սանդուխտը: Ն ատենը
հասան բարբարոս իշխանները զօրքով, մէ
կոյսը բռնելով տարին սպաննելու տեղը.
իսկ մէ առաքեալը անհաւատներուն մէջ
աներեւոյթ ըլլալով անոնց մէջէն կեր-
թար, սանդուխտին քովէն մօտիկ քալե-
լով սիրտ կուտար անոր. դահճապետը
իր մարդիկներով վախ կըձգէին սրբու-
հւոյն սիրտը. որովհետեւ մեր կուռքերը

Թողուցիր քուկին հայրդ մեծ Թ̃ըրքա-մահրեցիր կըօէլին, քուկին խաթունու-թիգալ գետինը ձգեցիր, դացիր քրիս-տոնէներու ծառայ եղար, հայոց Ծխնա-խատինք, անոր համար քեզ չարաչար պի-տոր մեռցընենք։ Սրբուհին երկինքը նայ-ելով կաղաղակեր, տէր յս̃ հասիր ինծի օգնութի̃, ու զիս սբ̃էրուդ մէջը խառնէ։ Երբոր սպաննելու տեղը հասան, թո-ղուցէք քիչ մը ըսավ որ աղօթքի հետ ըլ-լամ, անոնք չիշխեցին դէմ կենալ. հոն աչվըները լեցված երկինքը նայելով ար-ցունք թափելով աղօթք ըրավ, ետքը սբ̃ առաքելոյն օրհնութիը առնելով կեցաւ ըս-պաննելու տեղը, ինքիրմէ վիզը երկնցը-նելով ըսավ, ըրէք հիմա ձեր հօրը սա-տանային կամքը։ Երբոր դահիճը սուրը հանեց սրբուհին զարնելու համար, դահ-ճապետը զարկաւ սպաննեց, մէկալոնք կատղելով սուր առին ամմէննալ մէկէն վազեցին կուսին վր̃, բայց անոր տեղը մէկզմէկ զարնելով ջարդեցին. իսկ սըր-բուհին սանդուխտ աղօթքի հետ կըլլար որ չիզրկըվի մարտիրոսական պսակէն. աղօթքին ատենը զօրաց մէջէն մէկը ե-րանելի կուսին սիրտը խօթեց սուրը, գետի պէս արիւնը վազելով, անուշահո-տութի բուրելով հոգին աւանդեց։ Եղավ պարծանք մեր ազգին, առաջին վկայուհի բոլոր եկեղեցեաց մէջ, որ նահատակեցաւ յամի տն̃ 48. կամ 50. երկինքէն ձայ-

ներ լռեցաւ որ զա՟ծ կօրհնէին. իր մար-մնոյն վրայ, իրեք օր իրեք գիշեր սիւն լուսոյ կերեւնար. ատենալով կռապաշտ-ները, երկու հազար հոգիի չափ դար-ձան քրիստոնեայ եղան, ան տեղէն չէին ուզեր բաժնըվիլ ինչպէս որ սբն թադէոս գիշեր ատեն հոն գալով անոնք մկրտեց, սբյն սանդխտոյ մարմինն ալ թաղեց ան-երեւոյթ ըրաւ, որ անհաւատները անպա-տուուն մը չընեն, ինչպէս որ ա՟ծ ետքը յայտնեց ։

Սա սրբուհիս եղաւ լման պարծանք հայ-աստանեայց եկեղեցւոյ, առաջին ա-ռաքելուհի մեր ազգին. մայր մեր հա-ւատոյ ։ Սբն աբգար եղաւ առաջին թգր քրիստոնեայ, իրեն թոռը սրբուհին սան-դուխտ եղաւ առաջին թագուհի քրիս-տոնեայ, որ իր վարքովը և իր նահատա-կութը զքս կըքարոզէ. կռապաշտի զա-ւակ ըլլալով մէկ անգամմընէր միայն որ լսեց թադէոս առաքելոյն բերնէն քարո-զութը. բայց ինչ լոյս հաւատոյ էր որ ու-նեցաւ, ինչ սէր քսի վրայ, ան սէրնալ պահելու համար ինչ երկիւղածուն էր որ ունեցաւ ինչպէս ետքը, որ թէպէտ շատ հրաշքներ տեսաւ իր վրան, բայց միշտ աղօթքի հետ էր որ ա՟ծ զինքը պահէ ։

Ասոր անունը վարդանուհի կամ վարդուհի էր, բայց խիստ գեղեցիկ լուսերես ըլլալուն համար Շուշան կոչեցավ. իրեն հայրը՝ որն վարդան Մամիկոնեան իշխանն էր որ նահատակվեցաւ, աս գեղեցիկ զաւակը վազգենայ հետ կարգեցին, որ վրաց (կիւրճիներուն) իշխան էր ու թ՟ր մծխիթայ։ Շուշան որչափ որ աղւոր էր մարմնաւոր տեսիլքով, այնչափ ալ աղւոր էր իր մ՟ք վարքովը, ա՟ծ պաշտութ՟ առաքինութ՟ զարդարված. բայց իր էրիկը վազգէն չար մարդ էր. երբոր մ՟ն վարդան նահատակվեցավ՝ վազգէն պարսից թ՟րին աչքին հնայ ուրացաւ քրիստոնէութիւնը, կրակապաշտ եղավ ինչպէս որ էին ան ատենը պարսիկք։ Մ՟ն Շուշան կտ՟րեալ քրիստոնեայ ըլլալով լուսաւոր հաւատքով շատ տրտմեցաւ աս բանիս վ՟ր, սկսաւ խրատ տալ յանդիմանել, բայց չկրնալով դարձընել կտրեց իր ընկերութիւնը, ոչ կուտէր ոչ կընստէր հետը սպասելով որ դարձի գայ. բայց վազգէն աւելի չարանալով կըջանար որ անոր ալ ուրանալ տայ քրիստոնէութիւնը. երբոր մ՟ուհի Շուշան կըմերժէր դէմ կըդնէր, վազգէն սկսաւ չարչարել անհնարին ծեծելով, անօթի պահելով նաև կապելով բանտը դնելով։

Ասանկ վեց տարի չարչարելու հետ եղաւ, անչափ որ՝ իրեն փափուկ մարմինը որդնոտեցաւ ան կապերէն զարնելներէն . չէր գիտեր վազգէն ու անոր սիրտը ք՟ի սիրովը լցուած ըլլալով, սիրով յանձն կառնէր մեռնիլըք՟ թէ ք՟ն ուրանալը, ոչ երբեք կըձէնցոհար՝ այլ միշտ փառք կուտար ա՟յ. ալ չդիմանալով վազգէն կատղելէն սկսաւ նախատել զինքն ալ իրեն հայրն ալ ս՟ն վարդան, Ծաներ մարդու աղջիկ կանչելով զինքը ' Որ մընալ անանկ կատղեցաւ՝ որ միտքը մեռցնել ըլլալով թօփուզով վրան վազելով զարկաւ . վազգէնին եղբայրը վազեց ձեռքէն փրցուց իր հարսը, ապահով տեղ մը դրաւ, բայց որբուհին չդիմանալով ան զարնուածքին՝ մահուան դուռը հասաւ օխտներորդ տարին. գիտնալով իր մեռնիլը պատրաստուէ հետ եղաւ, ս՟ք խ՟հդները առաւ. խելքը ք՟ի տալով որուն համար կըմեռնէր, աչքը երկինքը վերցընելով տէր յ՟ս քու ձեռքդ հոգիս կաւանդեմ ըսաւ. անանկ բարի խոստովանութ՟ մեռաւ յամին 458, իբր 45 տարուան :

---

## ՍՐԲՈՒՀԻ ՓԵԲՐՈՆԷ

Ասիկայ երկու տարուան ըլլալով վանքի մը մէջ առաւ բրխանէ մարապետը որուն սանն էր. և իր եղբօրը աղջիկն էր. տասնը-

ութը տարի ան վանքը կենալով, քանի տարվան եղաւ երբոր նաՀատակվեցաւ. իրեն դ̃ղքը կըուէր Մծբին որ սուրբյալ կըղըվի. գիւղեցիմանոս կայսեր ատենը որ խիստ Հալածող եղեր էր քրիստոնէից։ Կ՛րինանէ որ ան վանքին մեծաւորուՀին էր. ամէն կերպով ջանք ըրաւ որ պըզ-տիկուց աղէկ կրթուէ մէջ մեծցընէ ի-րեն փեբրոնէն. մանաւանդ երբոր իրեն մեծնալու ատենը տեսաւ որ խիստ գե-ղեցիկ բարձրաՀասակ աղջիկ մը եղաւ, որուն նման աղւոր ու երկան չէր գտնը-վեր. անոր Համար փորձութիւներէ պաՀ-վելու Համար մէկի մը և ոչ կնիկ մար-դու չէր ցըցըներ իր երեսը. իրենալ ա-ւելի ճգնութի ընել կուտար. ուրիշ մարա-պետներուն իրիկունէ իրիկուն կերակուր կուտար, փեբրոնէայ ապաքրերէր երկու օրը ժամ մը ուտել։

Փեբրոնէնալնոյն ջանքին վ̃ը ըլլալով՝ ին-քիրմէ ճգնութիր կեվեցըներ, Հացնալ ջուրնալ կուշտ չէր ուտէր. քնոյ ալ Հան-գըստութի չէր իտար. երբեմն ալ գետնիվ̃ը կըպառկէր. իր գործքը եղան աղօթք ու ա̃ծաշունչ գիրքը կարդալ Հասկընալ. եր-որ մէկ փորձութի մը կըբերէր սատանան գիշերը՝ խոկոյն կելլար աղօթքի կըկե-նար, ա̃ծաշունչը կարդալով միխթարուի կըգտնար։

Ն՛անկով իր աղվորուէը կէօրէ աղէկ ալ կարդացող ուսումնասէր խելացի աղջիկ

մը եղաւ. ամճննալ վրան կըզարմանայ-
ին, «աւելի բրիտոնա իր դաստիարակը ու
մեծաւորուհին, ինչպէս իրեն ապսպր-
եց, ա̄ծաշունչ գիրքը կարդալ ուրիշ մա-
նաւկեաններուն առջին աշխարհաբար վը-
րայէն զուրցել ուրբաթ օրերը, ինչպէս որ
չէին սովորութի էր ան վանքին մէջ: Ո-
րովհետեւ մեծերու կնիկներն ալ կըժող-
վէին եկեղեցին ա̄ծաշունչ գիրքը լսելու՝
բրիտոնա վարագոյր քաշել կուտար որ աշ-
խարհական մէկ կնիկ մը չտեսնայ փեր-
րոնէն: Բայց փերրոնեայ աղւորութիւնը՝
իրեն աղէկ կենցաղարութիւնը՝ աղէկ ըն-
թերցմունքը՝ անանկ ձայն հանեց քաղքին
մէջը՝ որ երկա անուն մեծ խաթուն մը
ուզեց անիկայ տեսնալու :

Անիկայ կուսապաշտ էր՝ բայց քրիստոնէ-
ութեան ծանօթ, մէկ մենծ փաշայի մը
հետ կարգըված ըլլալով վեց ամսէ ետեւ
իր էրիկը մեռնելով որբեվարի մնացած
էր. ասիկայ գնաց բրիտոնայ աղաչեց որ
անունին մը երդվընցնելով, որ փերրո-
նեայ հետ զինքը տեսցընէ, իրեն վար-
դապետութիը լսեցնէ, ասանկով ես կընաք
ջահիլ բռալ. կուսապաշտութէ ու ծիս ու-
րայնութէ խալըցընել. որովհետեւ իմ
ծնօղքս ալ նորէն կուզէն եկդ անգամ
կարգել տալ կուսապաշտի հետ, բայց ես
չեմ ուզեր ասկէց ետքը մնալ ան տգի-
տութէ մէջ. աս լսելով բրիտոնեայ ոտքը
կիյնար, կըլլվանար արցունքով կաղաչէր:

Վախնեց բրիտնէ. երկու տարվան էր երբոր ես փերրոնէններս առի, հիմա 19 տարվան է, դեռ մարդու երես չէ տեսած և ոչ Ծական կնկան, և ոչ իր դայեկէն երեսը, թէպէտ դայեկը շատ հեղ լալով ինծմէն խնդրած ունի. հիմա քու հոգեւոր շահուդ համար քեզ հետը տեսըննեմ. բայց պէտք է մեր մարապետի լաթը հագնիս ։

Բրիտնէն ասիկայ տեսընելէն ետև հրամ̃ մեց փերրոնեայ ա̃ծաշունչ գիրքը կարդալու. փերրոնէն ասիկայ ուրիշ վանքէ մը մարապետ կարծելով, երբոր սկսաւ համարձակ կարդալ՝ երիտային սիրտը անանկ զղջումի մը եկաւ, անանկ շնորհքով լեցվեցաւ, որ լսելէն չէր ձանձրանար, արցունքնալ աչքէն չէր կենար, ինչվան լուս երկուքնալ անքուն կեցան կարդալու հետ եղան. առտուն բրիտնէ հաղիւ կրցաւ երիտային հաւանեցընելու անկեց ելլալ իր տունը երթալ. շնորհքն այ անանկ շարժեց երիտային սիրտը, որ լալով ժամէն ելլալով գնաց իր ծնողքներուն միտքը փոխեց քրիստոնեայ ըլլալու ։

Փերրոնէն ասոր արցունքը զղջումը տեսնալով՝ հարցուց թումայիս մարապետին, որ բրիտնայ եկ̃ղն էր, երբոր իմացաւ անոր ծական ըլլալը, իր խաբվիլը՝ խիստ նեղեցաւ, բայց հասկընալով որ իր մեծաւորուհին էր անանկ ընել տըված, լուռ

կեցաւ։ Բոկեց ետքը հիւանդութի՛ մը ե-
կաւ Փեբրոնեայ վի՛, դեռ աղէկ մը չող-
ջընցած ձայն ելաւ քաղքին մէջը, որ կը-
ռապաշտ դատաւորներ պիտոր գան հօս
քրիստոնեայները տանջելու. շատ քրիս-
տոնեայներ խնչվան վանքի մէջ եղող-
ները, նաեւ եպոր փախան պահվեցան։ Այս
վանքին կուսանքներնալ որ 50 մը կային
ուզեցին փախչիլ, բայց Բրիոնէն չիթո-
ղուց. վաղուան օրը մէջերնէն եթերիա
անունով մէյ մը՝ կարծելով որ Փեբրոնէին
հիւանդութեը համար է՝ որ Բրիոնէն չի
թողուր իրենց փախչիլ, երկան խօսեցաւ
հետը՝ պատճառներ բերելով որ մէջեր-
նին շատ նորահաս աղջիկներ կան, կըր-
նան կամ փորձութե մէջ իյնալ զօրացձեռ-
քը իյնալ, կամ տանջանքին չդիմանալով
հաւատքնին ուրանալ. անոր համար ա-
ղէկ է որ ըսաւ՝ Փեբրոնէնալ հետեր-
նիս առնելով փախչինք, ապրեցընենք ան
ալ մեզ ամմէնքնալ։ Փեբրոնէն լսածին
պէս ըսաւ, ես քոյր եմ՝ հարսնացած հո-
գիս իրեն ձեռքը յանձնած, կենդանի է
տէրն իմ, չեմ ելլար աս վանքէս, այլ հոս
կըմեռնիմ հոս կըթաղվիմ։

Բրիոնէն պխն տըվաւ եթերեայ, ամ-
մէնքը թող իրենց բանը նային, իրենց
գլխին ճարը տեսնան. ինչպէս կուզեն
անանկ ընեն. ան խօսքին վը՛ ամմէնք-
նալ լալով ողբով ելան գացին. պրոկղա
կոյսնալ ելաւ երթալու, որ Փեբրոնեայ

հետ մէկ տեղ մեծցած էր, 25 տարւան աղջիկ. երբոր լալով փեբրոնէի քովը եկաւ, ոտքը ընկաւ եաքի բարեւը տալու, փեբրոնէն ձեռքէն բռնեց աղաչեց որ ինքը չերթայ, մէկ տեղ ըլլանք չբաժնըւինք ըսաւ. ես դեռ հիւանդ ըլլալով կրնամ մեռնիլ, հոս մնացիր որ դուն իս գերեզմանը թաղես ըսաւ. գիտեմ որ քրիստոնեայ դժար է, սիրտը չիգիմանար իս թաղելու: Պրոկղան խօսք տըվաւ, բայց իրիկուան դէմ վախը անանկ եկեցաւ ամմէնուն սրտին մէջ, որ անալ

գնաց աներեւոյթ եղաւ:

Ան առտենը բրինէ մեծաւորուհին տեսնալով բոլոր վանքին պարպիլը իրենց մինակ մնալը, գետինը ինկալով կուլար ու աչքին աւելի փեբրոնեայ համար. Թումայիս կոյսնալ սիրտ կուտար անոր ու յանձնելու, որ ամմէն բանի կարող է կրնայ զօրութի տալ ապրեցընել: [illegible] բրինէ փեբրոնեայ քովը հօնալ կուլար. փեբրոնէն լալուն պատճառը թումայիսին կըհարցընէր. երբոր հասկըցաւ, պատասխանեց, դուք աղօթք ըրէք ըսաւ ու. անիկայ կրնայ ինծի շնորհք համբերուէ տալու: Թումայիս ըսաւ, ահա եկամ ով որդեակ նահատակվելուն ատենը, մեր տարիքը անցած ըլլալով անբռնաւորները գիտենք որ մեզ շուտով կըկորսնցընեն. բայց դուն մատղաշ տարիքիդ մէջը ըլլալով քեզ շատ պիտոր տանջեն իրենց

գին քաշելու, նայէ՛ չըլլայ որ միտքդ պըղտորի. կուսուէ̃ն աւելի պատուական բան չիկայ. երկնաւոր փեսայն քու կեցած է մեծ վարձք տալու, անմահութ̃ի պարգեւելու, նայէ՛ որ անոր հաւնիս անիկայ

տեսնաս ։

Փեբրոնէն աս խօսքերէս աւելի սիրտ առնելով ըսինեց, աղէկ կընես որ ինծի սիրտ կուտաս. բայց թէ որ ես նահատակվելէն փախչիլ ուզէի՝ մէկալնոնց հետ մէկ տեղ կընայի մէկ ապահով տեղ մը պահվիլ. մի՛ վախնար ես անոր կըփափաքիմ համնելու որուն որ պզտիկուէս իմ հոգիս յանձներեմ. անիկայ կուզեմ գըտնալ, անոր կարօտովը կեփիմ. միայն թէ ինքը զիս արժանի ընէ իրեն համար արիւնս թափելու ։ Բրինէն ասոր խօսքին վ̃ր ուրախանալով, անանկով սկսաւ խըրատ տալ. տե՛ս որդեակ ըսաւ, յիշէ ինչպէս քեզ պզտիկ տղայ երկու տարվան քովս առեր պահերեմ, հիմա եղավ ատենը որ իմ աշխատանքիս պտուղը պարապ չի հանես. յիշէ՛ առջի նահատակները որոնց քաջութեները վ̃ր դունալ կըզմայլէիր, դունալ կըպատմէիր, ամմէնքնալ արք և կանայք և աղջկունք ինչպէս արիւնք̃ մարտիրոս եղան, յաղթութ̃ե պսակը քէ̃ առին ։ Այսանկ յորդորականներ խօսելով՝ աղօթք ընելով բոլոր ան գիշերը անցուցին ։ Առտուան օրը առտու եղածին պէս՝ խառվութիւնը լեցվեցաւ քաղքին մէջ. սեղինոս և

Լիւսիմաքոս դիոկղետիանոս կայսերմէն խրկըւած՝ սկսան քրիստոնեայները բռ-նել, կապել, բանտը դնել. լսեց սեղի-նոս փեբրոնեայի վանքին համար, հոնալ զօրք խրկեց, որ դուռը կոտրելով ներս մտան, բրիոնան բռնեցին կուզէին սպան-նել։ Փեբրոնէն տեսածին պէս աղաչեց զինուորներուն որ առաջ զինքը սպան-նեն, ետքը բրիոնան, ոչ զի անոր մեռ-
նիլը չտեսնայ ։

Բայց Լիւսիմաքոսին մայրը քրիստոնեայ ըլլալով, խրատուած էր մօրմէն, չչար-չարել քրիստոնեայները, այլ մինչ օգ-նել. անոր համար Լիւսիմաքոս պրիմոս կոմսը վանքը խրկեց՝ որ իրեն քեռորդին ըլլալով՝ իր զօրքին վրայ գլուխ էր դրած, ոչ զի երթայ օգնութի ընէ մարապետնե-րուն. երբոր պրիմոս եկաւ տեսաւ, զի-նուորները դուրս հանեց, բրիոնայի ա-պրսպրեց որ մէկալնոնց պէս իրենքալ փախչին։ Եկաւ պատմեց Լիւսիմաքոսի, ամմէն բան, մէջինները ամմէննալ փա-խերէին բսալ՝ միայն երկու պառաւ մը-նացերէին, մէյմընալ աղջիկ մը, բայց ա-նանկ գեղեցիկ որ՝ անոր նմանը չեմ տե-սած տէր իմ քանի որ ծներեմ. ասիկայ լման քեզի արժան է կին առնելու, թէ որ յանձ չառնէ՝ ան ատենը մեռցու։ Սէն տըւաւ Լիւսիմաքոս, ես մօրմէս ա-պրսպրուած եմ քրիստոնեայները չմեռ-ցընել այլ սէր ցըցընել, անոր համար

կաղաչեմ ըսավ վանքէն դուրս հանէ ա-
նոնք, չըլլայ որ անողորմ Սեղինոսին ձեռ-
քը իյնան, որ իրեն հօրեղբայրն էր։ Աս
բանս զինուորներէն մէկը լսելով Սեղի-
նոսին ականջը հասուց, Սեղինոս բարկա-
նալով զօրք խրկեց վանքը որ չփախչին,
վազուան օրնալ իր առջին բերել տըվավ
Փեբրոնէն, ձեռքը, վիզը շղթայ (զինձիլ)
ձգած։

Արիոնան ու Թումայիս աղաչեցին զի-
նուորներուն որ իրենքալ մէկ տեղ տա-
նին, երբոր չիտարին՝ որովհետեւ հրամա-
նը միայն Փեբրոնեայ համար էր. շատ յոր-
դորեցին խրատ տըվին Փեբրոնեայ որ քա-
ջութ՟ի դիմանայ, ինչ տանջանք որ տան
կռապաշտները սիրով քաշէ։ Փեբրոնէն
հոգին ս՟բով լցված յուսամ՟տյ որ ըսավ,
կըլլեք իմ նահատակութ՟իս կուրախա-
նաք. աս ըսելով իրենց օրհնութ՟իը աղօթ-
քը առնելով դուրս ելավ. բայց Թու-
մայիսին սիրտը չիդիմացաւ. իրեն ե-
տեւէն գնաց ծ՟ական կնկան հագուստ հագ-
նելով։ Վերոյիշեալ Երիայ խաթուննալ
լսելով՝ որ իր սիրական Փեբրոնէն բռնը-
վերէ՝ խելքը գլխէն գնաց. շատ ար-
ցունք թափելով՝ իր ծնողքէն հրաման
առնելով գնաց որ աչքովը տեսնայ։

Երբոր Սեղինոս ու Լիսիմաքոս ատեան
նստան դատաստան կտրելու, շատ բազ-
մութ՟ի ժողվըվեցան, տեսնալով անանկ
ծանր շղթայները շնորհալի աղջկանը վը,

ամմէննալ կուլային : Իրեն հարցնելէն ետև ո՛վ ես, ի՞նչ ես, ետքը սեղինոս ըսավ իրեն, փե՛բրոնէ կըտեսնաս աս լիւսիմաքոսը՝ Թէպէտ պըրոսփորայի աղջկանը նշանած է, բայց դուն խօսք տո՛ւր, քեզ իրեն հետ նշանել կուտամ որ քեզի պէս գեղեցիկ մարդ է. աղքատուիդ մի՛ հոգար, ես զաւակ չունենալէս՝ քեզ զաւակ կընեմ, հայր կըլլամ իմ ամմէն ապրանքս քեզի կուտամ Ճէհէզի տեղ. լօղ կնիկները քեզի պիտոր երնէկ կարդան. դիոկղետիանոս կայսրնալ խիստ պիտոր ուրախանայ շատ պարգևներ կուտայ. արդէն խօսք տըվերեր լիւսիմաքոսի փաշայ ընելու զինքը : Նա խօսքերը կըսէր ան կըռապաշտը, չէր գիտեր որ ուր հոգին մընստերէ, հո՛ն ամմէն երկրաւոր մենծուն

ոչինչ ըսել է :

Պ՟ն տըվավ մը կոյսն փեբրոնէ համարձակ, իմ հարսնիքս երկինքն է, երկնային Թ՟գրուն՟ը իմ Ճէհէզս է. երկնաւոր Թ՟գը իմ փեսաս է, պարապ տեղը մի՛ յոքնիր. ոչ անանկ խոստմունքներով և ոչ վախցընելով կրնաս իմ սիրտս փոխել : Նա խօսքին վ՟ր խիստ բարկանալով սեղինոս՝ պատըռտել տըվավ հագած լաթերը, բըրդտած զգեստ մը վրան ձգել տըվավ. գոնէ ինքիրմէդ ամչնաս ըսավ ասանկ խայտառակվիլդ տեսնալով, որովհետև չուզեցիր ան փառքը որ ես խոստացայ. պ՟ն տըվավ փեբրոնէ, ես չէ Թէ միայն աս-

որ, այլ նաև տանջանքներ քաշելու պատ-
րաստ եմ։ Սեղինոս բարկանալով չորս
դահիճներու հրամմեց չորս դիացէն
չորս ցցի մէջ կապել, տակէն կրակ տալ,
կողերուն ալ վառնել։

Նման ծանր եղաւ աս տանջանքը՝ որ
երկու դիացէն գետի պէս կըվազէր ա-
րիւնը, տեսնողներուն սիրտը չըդիմանա-
լով կըկանչէին որ խղճայ աս աղջկանը
վր. Երբոր տեսաւ սեղինոս որ ոչ կուսին
մարմինը պատառ պատառ արիւնաթա-
թախ գետինը կիյնար, ապսպրեց դա-
հիճներուն դադրիլ, ինքն ալ դահիճներ-
ն ալ մեռած կարծելով կրակին վրայէն
դուրս ձգեցին. հոն թումայիանալ երիա-
նալ բարձր ձայնով կուլային։ Սուհի
փերրոնէն երիային ձայնը առնելով՝ աղա-
չեց զինուորներուն՝ ջուր զարնել երեսին
որ մեռածի պէս ընկած էր, ուզեց հետը
խօսիլ. բայց սեղինոս չիթողուց իր առ-
ջին բերել տալով, տեսնալով որ ամուր
կեցած է իր մտքին վր. հրամմեց կա-
խել, երկըթով կողերը քերթել, կրակով
մօտիկցընել ինչվան որ ոսկորները երին։
Նս անդամուն դահիճները առջինէն ա-
ւելի տանջեցին՝ որն փերրոնէ, որ աչքե-
ները վեր վերցուցած կըսէր. հասիր տէր
իմ հասիր օգնէ ինծի. աս ըսելով կեցաւ
լռեց, շունչ չէր մնացեր վրան տանջան-
քին սաստկուէն կրակին տաքութէ՛ ինքն
ալ կերվէր կըտոչորվէր։ Տեսնողներուն

սիրտը չդիմանալով՝ որը փախան, որն ալ ազատվելով դատաւորը կըրռնադատէին տանջանքը վերջացընելու. դատաւորը կըրակը մէկ դի առնել տըլով, բայց Հանգիստ առնել չէր խօսք. կախված տեղը նորէն կըՀարցընէր։ Տեսնալով որ սրբուՀին ուժ չունի պխնելու, ինջեցուց մէկ ցցի մը կապել տըլով, ատ պինդ թշուառականը բառով, ինծի չուզեց պխնն տալու, լեզուն կտրվի, թող անանկ կրակը ձգվի. ՛որ կոյր ինքիրմէ Հանեց լեզուն, աղաչեց որ շուտով կըտրեն, բայց Հոն եղող ամմէն բազմութիւնը մէկ բերան երգվնցընել սկսան սեղինոս դատաւորը որ կորել չիտայ, անդութ սեղինոսը լեզուին տեղը ազրանէրը Հանել

Հրամեց։

Երբոր 17 ազրայնէրը կըՀանէին, արիւնը գետի պէս կըվազէր բերնէն, մարմբրուք եկա՞ւորյն վրայ. ան ատենը վերջացընել Հրամեց, գեղալ տըլով ակռէնը դարբեցընելու, բայց նորէն կըստիպէր կըրռնադատէր սեղինոս կուռքերը ընդունելու։ ՍրբուՀիին սիրտը այ սիրովլցված ըլլալով, քանի մէկ կուշացընես բառով իս անդին խրկելու, շուտով Հանէ իս աս ողորմելի Տէս ՛որ երթամ իմ սիրելի անեղծօղս տեսնամ, ան որ իս կուզէ։ Ես գիտեմ բառով սեղինոս գեռ մանկուժն ու անամօթուիը վրայ ունիս, կըդիմանաս, բայց ես սրով ու կրակով պի-

տար մաշեմ քու մարմինդ։ Երբոր սրբուհին սաստիկ տանջանքէն չկրցաւ ասկէց ետքը այն տալ. սեղինոս ալ աւելի սրդողելով հրամեց ծիծերը կտրելու. Երբոր սուրը բռնած կուզէին կտրել, հոն եղող ամէն ժողովուրդը սիրտերնին չդիմանալով սկսան աղաչել սեղինոսը՝ որ ասանկ տղայ աղջկան աս տանջանքը չտայ. բայց Թշուառականը մտիկ չըրաւ ։

Երբոր կըկտրէին՝ սրբուհին դէպ 'ի վեր երկինքը նայելով կանչեց, տէր իմ Յս̃, տես նայէ՛ աս բռնուեմս վր̃, Թող տուր որ հոգիս քեզի աւանդեմ, քովդ գամ։ աս ըսելով՝ ալ չկրցաւ բերանը բանալու։ Կտրելէն ետև սեղինոս հրամեց կրակ մօտիկցընել կուրծքին, անանկ որ կըխորովուէր. տեսնօղներէն շատը չկըրնալով դիմանալ՝ մէկ դի գացին նզովեալ ըլլայ ըսելով դիոկղետիանոսնալ իրեն կուռքերն ալ։ Թովմայիս ու երիա որովհետև հոն էին, աղջիկ մը խրկեցին վանքը պատմելու բրինայի, ինչ որ քաշեց սրբուհին Փեբրոնէ իր հոգևոր զաւակը քնի համար, աղաչելով որ բաղկատարած այ̃ աղաչէ շնորհք համբերութե̃ խնդրէ դիմանալու ասանկ սոսկալի տանջանքներու։ Բնիկայ-ալ լսելով մէկ դիէն կուլար, ո՛ւր ես որդեակ իմ Փեբրոնէ կըսէր, մէկալ դիացէնալ ուրախանալով իրեն համբերութեը վր̃, աղօթք կընէր որ հոգինը զօրութի տայ, աչքովը տեսնայ իր հոգևոր

աղջկան նահատակվիլը, Տէրուն մէջ
անցնիլը:

Սեղինոս դատաւորը հրամեց ցցին վրայ
կապվելէն արձըկել. երբոր արձըկեցին՝
Տրուհին Փեբրոնէ անչափ ուժէ ընկած էր
որ ա՛լ չէր կրնար ոտքի վր̃ կենալ. չդի-
մանալէն գետինը ընկաւ: Պօլի իշխան-
ները սկսան մէջերնին փսփսալ Սեղինոսին
անգթութը վր̃. Երիա տկիննալ չդի-
մանալով իր երեսին ղուրցեց, ինչ անգը-
թութի է որ կընես, առջի տանջանքներով
չիկշտացար տանջելու սա մատղաշ աղջիկը,
ետքնալ աւելի չարագործուն ձեռք զար-
կիր, չիխիշեցիր քուկին մայրդ, քուկին
ծնանելդ, կաթով մեծնալդ, ինչպէս օ-
տարացար մարդու բնուէ, ինչպէս չողոր-
մեցար. բայց ինչպէս որ դուն չիխղճացիր
ասոր, անանկալ երկնաւոր Թ̃րը քեզի
չիխղճայ պիտոր: Աս խօսքերուն վր̃ Սեղի-
նոսին սիրտը դութ շարժելուն տեղը՝ ա՛լ
աւելի խստանալով ուզեց որ Երիանալ
բռնել տայ. Երիան ուրախացաւ աղա-
ղակեց. Ա̃ծ Փեբրոնայի, ըսաւ, իս ալ որ
հեթանոս մընեմ՝ Փեբրոնայի հետ մէկ
տեղ ը̃ունէ. բայց Սեղինոսին քովինները
թող չիտըվին, թէ որ Երիանալ խօսեցը-
նել տաս ըսին, շատ մարդ քրիստոնեայ
կըլլան, ք̃ղքը տակնուվրայ կըլլայ: Ա-
նոր համար ըսաւ իրեն Սեղինոս, աւելի
տանջանք տալու պատճառ եղար:

Աս ըսելով կորեւ հրամեց Փեբրոնեայի

երկու ձեռքը ու մէկ ոտքը․ բայց դա-
հիճները չկրնալով իրեն աջ ոտքը մէկ
երկու զարնելով կտրել, մեծ աղաղակ ե-
լաւ տեսնօղներուն մէջ․ երրորդ անգամ
զարնելով կտրեցին ։ Նոր ցաւէն սրբու-
հւոյն մարմինը բոլորովին դողելով, մօ-
տիկ էր հոգին աւանդելու, բայց կըճա-
նար որ մէկալ ոտքնալ երկնցընէ, նշա-
նով կըհասկցընէր դահիճներուն որ ան
ալ կտրեն․ այնչափ էր իրեն սէրը քի
համար տանջանք քաշելու ։

Սեղինոս տեսնալով իրեն սէրը մեռնե-
լու վրայ՝ գլուխը կըշարժէր կատղելէն․
բարկանալով ապսպրեց դահճին մէկալ
ոտքնալ կտրել, անանկով ձեռքէ ոտքէ
կտրըված մնաց երանելի կոյսն, յի սի-
րոյն կենդանի պատարագ եղաւ ։ Լու-
սիմաքոս կըյորդորէր Սեղինոսը հացի
երթալ, ուտելու ատենն է ըսելով․ ան-
գութ Սեղինոսը կըսպասէր՝ որ աչքովը
տեսնայ հոգին աւանդելը․ տեսնալով որ
չիմեռնիր՝ հրամեց գլուխը կտրել․ զի-
նուորները մազերէն բռնելով սուրը վզին
վր̄ դնելով ոչխարի պէս անանկ մորթե-
ցին սուրբ կոյսը փեբրոնէ ։

Երբոր իշխանները գնացին հաց ուտե-
լու, քրիստոնեայները ուզեցին մարմինը
վերցընելու․ բայց զինուորները զգուշու-
թե̄ պահելով՝ թող չտըվին, ինչպէս որ
ապսպրեր էր իրենց Լուսիմաքոս՝ որ տըրտ-
մութենէն հաց չկերաւ, ջուր չխմեց․

մէկ խուցի մը մէջ գոցվելով կուլար փեբրոնեայ մահը։ Նա բանս իմանալով սեղինոս, անալ կերակուր չկերավ, կատղեցն իր պալատին բակը կը քալէր. բայց քալելնին մէկ մեծ նշան մը տեսաւ երկինքը, որուն վըր զարմացած մնալով երկան ատեն խելքը կորսնցուց. խենթի պէս աս դիս ան դին վազելով, գլուխը սեան (տիրէկի) մը զարկաւ պատռեց. գետինը ինկած զարհուրելի ձայն կը հանէր, ինչվան որ թշուառականը հոգին փչեց։

Նա տեսնալով ժղվդեան մէջ մեծ շշնկոց եղավ. լուսիմաքոս լսելով դուրս վազեց, երբոր հասկըցաւ՝ գլուխը շարժելով զարմացած մնալով՝ ըսաւ, մեծ է քրիստոնէից ածը՝ որ փեբրոնեայ անմեղ արեան վրէժը առավ, հրամեց սեղինոսը թաղել, պռիմոս կոմսինալ ապսպրեց անփուտ փայտէ սնտուկ մը շինել, փեբրոնեայ մարմինը հոն դնելով իրեն վանքը տանիլ թաղելու. ամմէնունալ քարոզ կրդալ որ քրիստոնեայնէրը համարձակ դան անոր թաղման, միայն իրեն մարմինէն աղրայմնալ չիվերցընեն։

Նանկ ըրավ պռիմոս կոմսը, բազմութ զօրայց մարմինը վերցընել տըվավ. իսկ կորըված գլուխն ու ձեռվընէրը ոտվընէրը՝ իրեն զգեստին մէջը ժողվելով ինքը տարաւ վանքը. Ճամբան շատ բազմութի իրար զիրար հրելով կուզէին մէկ կտոր

մը նշխարքներէն առնել, բայց զօրքը
թուրքերխաղցընելով վրանին՝ հաղիւ կըր-
ցան մարմինը ամբողջ վանքը խօթել. մարդ-
մը ներս չիթողուցին՝ միայն թումայեան
ու երկու տիկինը։

Երբոր ըրինա տեսաւ իրեն սիրելի սա-
նը ազնիւ փեբրոնէն կտոր կտոր եղած,
սաստիկ ցաւէն անշունչ մնաց. ետքը ի-
րեն քովը գալով՝ ու նշխարքներուն վր̃ խո-
նալով սկսաւ ողբալ, վայ ինծի ըսավ որ-
դեակ իմ փեբրոնէ, իս թողուցիր զատ-
վեցար, հիմա ով պիտոր կարդայ ա̃ծա-
շունչ գիրքը։ Ան ատենը վրայ հասան,
փախած կուսանքնալ եկան, փեբրոնեայ
վր̃ խնալով կուլային. մէկ դիէն իրեն
երանի կուտային, մէկալ դիացէն իրենց
վայ կուտային, անանկ ազնիւ ու̃քէն բաժ-
նըվելնուն համար։

Երիան կաղաղակէր, թող տուր որ պագ-
նեմ ան՝ու ոտըները որ օձին գլուխը կո-
խեցին, պագնեմ ան խոցէրը որ իմ խո-
ցերս բժշկեցին։ Արիմնան կըկանչէր,
որդեակ իմ փեբրոնէ, եկաւ աղօթքի ա-
տեննիս, ելիր դուռնալ մէկ տեղ աղօթք
ըրէ ինչպէս որ միշտ կընէիր. աս ըսելով
կուլային կողքային իրենց սիրական քոյրը՝
կըլըվանային՝ ու մարմինը, որ ք̃ի սիրոյն
համար արեան մէջ էր թաթխըված.
կտորվանքը քովէքով դնելով պատեցին.
ետքը վանքին դուռը բացին։

Ան ատենը հօն լեցվեցան ամէնը. տես-

նալով աս սքանչելի նահատակը կըզար-մանային, միայն իրենց զատիլը կուլա-յին. շատ կրօնաւորներալ հոն եկան, նաև եպ̃սը, գիշերնիլուս հսկում ընելով ա̃ծ կըփառաւորէին: Ան ատենը լիւսիմաքոս իրեն կանչեց պռիմոսը, ու ըսաւ ես կըթո-ղում կռապաշտութ̃ը, ամմէն ապրանք-սալ մենծութիւնալ, քե̃զի միայն կըհաւա-տամ: ասանկալ ըսաւ պռիմոս. անան-կով երկուքնալ վանքը եկան ժղ̃վեան հետ խառնըվեցան:

Երբոր առտու եղաւ, ն̃ոյն տապանը ե-րևելի տեղ բերին դրին, ժղ̃վքը եղ ու խունկ բերելով ն̃ոյն մարմնոյ վը̃ր անչափ կըլեցընէին որ ծածկըվեցաւ: Եպ̃սը աղօթքները ընելէն ետև՝ կաղաչէր ժողո-վուրդը մէկ դին քաշվիլ որ գոցեն սըն-տուկը, աղօթարանին մէջ դնեն. բայց ժղվ̃ը մեծաձայն կըկանչէր որ բաց մնայ տապանը. ինչ որ ըսաւ եպ̃սը ուրիշ ե-կեղեցականները՝ ամենևին մտիկ չըրին. բայց ետքը երբոր բըխօնան բարձր տեղ մը ելլալով ըսաւ, կաղաչեմ թողէք իմ զաւկիս որ ն̃որ տեղը երթայ հանգչի, ան ատենը թողուցին: Կռապաշտներէն շատ մարդ հաւատացին ու մկրտըվեցան. ինչ-պէս որ մկրտըվեցան նաև լիւսիմաքոսը ու պռիմոս կոմսը, ու ծ̃ թողլով գնացին կրօնաւոր եղան. զինուորներէն ալ շատ հոգի մկրտըվեցան. նաև երիա տիկինը իրեն ամմէն ընտանեօքը մկրտըվելով ա-

ղաչեց բրխոնայ որ ՚որյն փերրոնեայ տեղը զինքը Ըունի. անանկով վանքը մտաւ իրեն ոսկի մարգըրտէ զարդերը տըվաւ որ ՚որյն տապանը զարդարեն ։ Երբոր ՚որյն փերրոնեայ յիշատակին օրը կուգար, կես գիշերուն աղօթքի ատենն ամմէն կուսանք կըտեսնային՝ որ ՚որն փերրոնէ իրեն տեղը կեցած եկեղեցնայ մէջ իրենց հետ մէկ տեղ աղօթք կընէր. առջի անգամուն երբ-որ տեսան, բրխոնա չիդիմանալով՝ ահա իմ որդեակս փերրոնէ կանչելով վազեց որ գըկէ, բայց անիկայ նոյն ատենը աներեւոյթ եղաւ, անոր համար ուրիշ անգամներուն երբոր կերեւնար իր յիշատակին օրը՝ մէկը չէր համարձակեր ձայն հանել, այլ ուրախութէն կուլային ։

Ետքը փառաւոր տաճար մը շինեց ՚որյն փերրոնեայ անունով որ վեցտարվան մէջ լմընցաւ. ուրիշ եպ̃սներալ կանչելով օրհնեց. ետեւ գացին իր վանքը աղաչեցին բրխոնա, որ թողու ՚որ մարմինը տանին դնեն ան եկեղեցնայ մէջ. բայց ինչ որ ըսին՝ ամմէն կուսանք դէմ կեցան. իսկ բրխոնան ըսաւ, թէ որ ասանկ է սուրբ նահատակին կամքը՝ ես ո՛վ եմ որ արգիլեմ ։ Երկու տիկինը ասոր վըր խիստ չփոթելով կուլար կողբար կաղաչէր բրխոնայ որ թող չիտայ. բայց բրխոնա ըսաւ անոր՝ շատ մի՛ ցաւիր, թէ որ ինքը ՚որ կուզէ՝ կերթայ, թէ որ չէ՝ չերթար. և իրաւ ըսածին պէս եղաւ. երբոր աղօթք

ընելէն ետեւ եպ՟ները կուզէին տապանը
վերցընել, անանկ սաստիկ որոտման ձայն
մը եկաւ գետնէն՝ որ ամմէնը գետինը
ինկան ։ Նորէն ուզեցին վերցընելու,
նորէն ան ձայները լսեցին, անանկ կերև_
նար որ ամմէն գետինը պիտոր պատ_
ռէր ։ Ան ատենը հասկընալով ՚րյն կամքը՝
աղաչեցին բրիոնայ՝ որ գոնէ իրեն կտըր_
ւած նշխարքներէն մէկը տայ ։ Երբոր
բրիոնա մնտուկը բացաւ, արեւու պէս
ճառագայթ կըցոլանար ՚րյն նշխարքնէ_
րէն, երկնցաւ որ կտըրւած ձեռքը առ_
նէ, իր ձեռքը բռնըւեցաւ. աղաչելով
՚րյն հաղիւ ձեռքը արձըկւեցաւ դուրս
հանեց ։ Նորէն աղաչելով ՚րյն՝ աղըային
մէկը առաւ եպսին տըւաւ. անիկայ մեծ
թափօրով տարին, նոր ժամուն մէջը դը_
րին, ուր շատ բժշկութի՟ տեսան ցաւա_
գարներուն վրայ ։

Աս աղնիւ ՚րյն փերրոնեայ կատարումը
եղաւ չորս կամ հինգ տարի ՚րբ հոփիսի_
մեանցմէ ետեւ. իրեն եկեղեցնայ շինու_
թի՟նալ կերևնայ որ՝ ՚րբ յակոբ մծբնայ
հայրապետին շինւածն էր ։ Բրիոնա մե_
ծաւորուհին եկեղեցին շինելէն երկու
տարի ետեւ մեռաւ. անոր տեղը մեծա_
ւորուհի եղաւ թումայիս, որ տեղնիտե_
ղը գրեց ՚րուհւոյս վարքը, որ բարեխօս
ու պաշտպան է ամմէն քրիստոնէից իրեն
բազմաչարչար նահատակութը համար,
որուն վարքը միայն կարդալը կըբերէ ա_

տեղուն ու գտնելը Յիս մենծուն ու փարթամութեն մը՝ որ են ունայնուն, կր-բերէ սէրջին վրայ՝ որ է նոյն ինքն Ճըշ-մարտութիւն ։

Ինչ շնորհք էր Ծծային՝ որ պզտիկուց անանկ տեղ, անանկ պարագայներու մէջ մեծցաւ՝ որ ամենևին մեղքի մէջ չընկա-առիթ մը չունենալով․ բայց ինքը իր մե-ղաւոր, իբրև ապաշխարող խիստ Ճգնու-ներու հետ եղաւ․ ետքնալ խիստ տան-ջանքով արիւնը թափեց, իր վարքովը ցըցուց ինչ աղէկ բան է եղեր պզտիկուց չփտեսցընել ուրիշներուն հետ ։

---

## ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

Կայսէրին գիերը ծնաւ, բարաշամու-երկիրը մեծցաւ որ է պաղեստին, ու-կից էր իր մայրը․ հոն հառմայեցոց զի-նուոր գրվեցաւ ան գունդին մէջ՝ որ ան-յաղթից գունդ կըսվէր․ իրեն գովելի վարքովը քաջութը առաջ հազարապետ եղաւ, ետքը նաև կոմս, որ մեծ պատիւ էր ։ Բայց ան ատենվան կայսրը դիոկ-ղետիանոս հրաման հանեց ուր որ քրիս-տոնեայք գտնըվին, ամենուն ալ տան-ջանք տան կռապաշտութը ընունին տան, ով որ չդառնայ՝ չարաչար մեռցընեն ։ Սբն գէորգ որ բարեպաշտութ առաքի-նութ մեծցած քրիստոնեայ էր՝ աս հրա-

մանը լսելով խիստ կեփէր սիրտը, կը-
բաղձար կամ կուապաշտնէրը դարձընել,
հալածումը դադրեցընել, կամ մարտի-
րոսանալ, քա՛ն համար իր արիւնը թա-
փել: Ա՛ս մօրով ինքիրմէ կայսեր առջին
ելաւ, իր քրիստոնէութիւնը յայտնեց, կռա-
պաշտութե՜ տգիտութի՜ը հասկըցուց, ու քրիս-
տոնեայները ջատագովելով՝ ըրած հալա-
ծումին անիրաւ ըլլալը ցըցուց: Մագ-
նենտիոս՝ որ Թ՛գրին եկղն էր, զարմանա-
լով մը ասոր երեսը նայեցաւ, հարցուց
իրեն անունը, ինչ մարդ ըլլալը. պ՛ին
տըւաւ՛որ ըսես քրիստոնեայ եմ, իմ անունս
Գէորգ է ըսաւ:

Իսկ Դիոկղետիանոս կայսրը որ աղէկ կը-
ճանչնար՝ ըսաւ, մենք գիտէինք որ խե-
լացի ու քաջ մարդ մըն ես, անոր հա-
մար մենէ փառքպատիւ գտեր ես. անանկ
էնէ հիմա պէտքը չէ որ մեր հրամանը
անարգես, այլ զոհէ մեր կուռքերուն որ
աւելի պատիւ տեսնաս: Պ՛ին տըւաւ
՛որ, Թ՛գր, աղէկը ան կըլլար որ դուն
ինծի լսէիր, Ճշմարիտ Ա՛ծը ճանչնայիր.
քուկին իշխանութի՛դ ժամ մըն է, քուկին
խոստմունքդ չեն կընար իս խաբել.
քեզի ըլլայ քու խոստմունքդ, ես քա՛ ու-
նիմ երկնաւոր Թ՛գրը՝ որ ինծի փառք ու
յաղթութի՛ կուտայ: Դիոկղետիանոս
բարկանալով հրամեց կախել անիկայ,
զարնելով աղիքները թափել. երբոր գե-
ղարդով (մզրախով) զարկին, արիւնը

ցաթկեց, բայց գեղարդը մոմի պէս ծալլըմեցաւ. դիոկղետիանոս աւելի բարկանալով բանտը դնել տըւաւ, ոտքը թօմրուխը զարնել. կուրծքին վրայ ալ անանկ մեծ քար մը դնել տըւաւ՝ որ չորս մարդ հազիւ կրցան վերցընել։

Սբն գէորգ աս տանջանքները քաշելու տենը՝ միշտ գոհանալու հետ կըլլար, փառք կուտար այ։ Դիոկղետիանոս սատանային հնարքովը նոր ջարխ մը՝ կամ թէքերլէք մը շինել տըւաւ ամէն դիացէն սուրեր խօթած. որը տեսաւ, օգնութիւն խնդրեց ածմէ. երբոր մէջը ձգեցին, ամէն մարմինը չարաչար կոտրտվեցաւ. դիոկղետիանոս տեսնալով անանկ սեպեց որ մեռաւ, աղաղակեց, տեսէք ամենքդ ալ՝ որ մեր կուռքերէն ուրիշ ած չիկայ, ուր է գէորգին ածը, ինչու չեկաւ փրկելու իմ ձեռքէս։ Աս ըսելով ինքը գնաց հաց ուտելու, երբոր 10
ժամ եղաւ, որոտման պէս ձայն եկաւ երկնքէն. մի վախնար զօրացիր ով գէորգ. շատ մարդ քու ձեռքովդ պիտոր դառնան, քրիստոնեայ ըլլան։

Աս ձայնը լսելով դահիճները փախան, մեծ է ածն քրիստոնէից ըսելով. հրեշտակ այ իջնալով խալըսցուց գէորգը տանջանքէն, իրեն մարմինը ողջնցուց, սիրտ տըւաւ ըսելով՝ ուրախ կեցիր կատարեալ պսակը խոստովանութեան պիտոր առնես։

Սբն գէորգ ուրախանալով սաղմոսներ ը֊

սելով՝ եկավ գտավ Դիոկղետիանոս կայսրը ու Մագնենտիոսը ան տեղն՝ որ ապողոնի պատկերի առջին զոհ պիտոր մատուցանէին, տես Թ̃գր հասկրցիր ըսավ, դուն ան տանջանքը խօ կորսնցընելու համար պատրաստեցիր, բայց իմ ա̄ծս խօ փրկեց. հասկրցիր որ մոլորեալ ես կուռքերու զոհելով։ Դիոկղետիանոս նայելով ո՛վ ես դուն ըսավ. ես եմ ըսավ գէորգը որ խօ ան տանջանքին մէջ մեռած սեպեցիր. շատ հեղ կըդառնար վրան կընայեր Թագաւորը՝ արդեօք ան է մի ըսելով. Մագնենտիոս չէր հաւատար, կըսէր որ անոր նմանն է։ Ա̄ըր նորէն ըսավ, ես եմ գէորգ ծառայ քո̄ի, հաւատացէք որ քո̄ մեռեալներնալ կըյարուցանէ ո՛վ որ իրեն

կըյուսայ։

Երբոր սաանկ ողջ առողջ տեսան երկու զօրապետները անատոլիոս ու պրոտոլէոն, իրենց ամէն ընտանեօքը դարձան քրիստոնեայ եղան, աղաղակելով մեծ է քրիստոնէից ա̄ծը։ Թագաւորը լածին պէս հրամմեց քաղքէն դուրս տանիլ ամէննալ անապատ տեղվանք, հոն սրով սպաննել։ Բայց աղէքսանդրիէ Թագուհինալ լսելով հաւատաց, համարձակ զքո̄ կըխոստովանէր. Թ̃գրը անոր վր̄ խիստ բարկանալով՝ ողջ ողջ հրամմեց քիրէճի փոսին մէջը ձգել, Թաղել ո̄ր գէորգը, իրեք օրէն ետև հրամմեց անոր ոսկորները հանելան քիրէճին մէջէն կորսնցընել՝ որ

մէկը չիմանայ. բայց երբոր քիրէճը դուրս հանեցին ոսկորներուն տեղը մեր գտան ողջանդամ կեցած. ան ատենը ամմէն տեսնօղները աղաղակեցին՝ մեծ է ա̃ծն քրիստոնէից. թագուհին ալ հոն գալով տեսնալով նոյնպէս կաղաղակեր. ան տեսնալով՝ հանօղ զինուորներն ալ դարձան քրիստոնեայ եղան ։

Ո՛վ Տ̃ր լսածին պէս՝ առջին բերել տըւաւ հարցուց, ըսէ՛ մեզի ով քեզ ողջընցուց. պինեց մ̃ն գէորգ, թէ որ կըլսէք չէք հաւատար, բայց գիտցիր որ յ̃ս ք̃ս որդին ա̃յ իս կըպահէ ամմէն տանջանքէդ որ կուտաս ինծի ։ Ո՛վ Տ̃ր հրամեց երկըթէ կօշիկներ շինել՝ լեցուն սուրերով, տաքցընել. տաք տաք ոտքը հագցընել, անանկ քալցընել. մ̃ը չիկընալով քալել՝ կըսէր ինքիրեն, քալէ ով գէորգ. աս ըսելով, արցունք թափելով աղօթք կընէր. տէր իմ յ̃ս դուն տուր ինծի համբերութի̃ն ինչվան ետքը դիմանալու. ձայն եկաւ երկնքէն. գէորգիէ, զօրացիր ես քեզի հետ եմ. և իսկոյն բժշկըւեցաւ իր մարմինը ։ Ո՛վ Տ̃ր հրամեց ան օրը բանտը տանիլ. վաղուան օրը առջին կանչելով ըսաւ. ինչվան երբ ասանկ կամապաշտ ըլլաս պիտոր, տանջանք քաշես ով գէորգ. սատանաներուն ձեռքով կախարդութի̃ ընելով մեզ խաբել մի կըկարծես. ասկէց ետքը խօսքիս եկօ, զոհէ կուռքերուն ։

Ս՛ըր ըսաւ. ես այ օգնութըր ձեր տըրւած տանջանքները քաշեցի, ողջ առողջ մնացի, ուրիշ տանջանքներալ քաշելու պատրաստ եմ. բայց դուք ինչ յոյս ունիք որ անշունչ կուռքերուն զոհ կըլնէք, որ ոչինչ են. ամչցիք ա՛ծ ըսել անոնք որ անառակութ՛ կեցերեն քիչ մը ատեն ծիս մէջ, հիմաալ յաւիտեան կըտանջըվին անմարելի կրակին մէջը, որ պատրաստըւած է անոնց ու անոնք պաշտօղնէրուն։ Թ՛գըր հրամեց բերնին զարնել, որ սըրլի ըսաւ մեր կուռքերը չինախատել, եւրքնալ մարմինը ծեծել տըւաւ։ Իշրբօր երկան ատեն կըծեծէին, Թ՛գըր կանչեց. ինչվան երբ չես մտիկ դներ ով Թշուառական, չես զոհեր մեր կուռքերուն որ փառք պատիւ ունենաս ողջ մնաս։ Պ՛ոնեց ս՛ըր, ես ամմէն օր կենդանի ա՛յ պատարագ օրհնութ՛ կըմատուցանեմ, որ գիս ձեր ձեռքեն կըփրկէ, ու երկնաւոր փառաց արժանի պիտոր ընէ. երանի թէ դուք ինծի մտիկ դնէիք, Ճշմարտին ա՛յ երկըրպագու ընէիք։

Մէկ անուանի կախարդ մը կար, դիոկղետիանոս անիկայ կանչեց որ գէորգը վաստըկլի, միտքը փոխել տայ. կախարդը եկաւ, երկու գաւաթ դեղ պատրաստեց, թէ որ առջինը խմէ՝ միտքը պիտոր փոխէ ըսաւ, թ՛գրին հնազանդի. իսկ թէ որ ե՛կդը խմէ՝ իսկոյն պիտոր մեռնի։ Ս՛րն գէորգ երկուքնալ խմեց յ՛ին անունը

տալով ու խաչակնքելով. բայց ոչ միտքը փոխեց, ոչալ վնաս մը քաշեց։ Նա բանիս վրայ խիստ զարմանալով կախարդը՝ խօսք տըվավ քրիստոնեայ ըլլալու, թէ որ շատոնցմընէ մեռած մը յարուցանէ. մագնէնտիոսնալ խօսք տըվավ։ Երբոր սրն գէորգ աղօթքով յարուցանել տըվավ, տեսնօղներուն բազմութիւնը ամէնքնալ հաւատացին. բայց թագը բարկանալով կախարդնալ ու յարուցեալ առածնալ մեռցընել տըվավ համարձակ ք̃ քարոզելուն համար, սրն գէորգնալ նորէն բանտը դնել տըվավ. ուր ամէն նոր հաւատացեալք կըմտնային բանտապետին ըստակ տալով. իրմէ քրիստոնէութի կըսորվէին. հիւանդներնալ կուգային իրմէ բժշկուի կըգտնային։

Գեղացի մը տեսնալով աս հրաշքները՝ ոտքը ինկաւ աղաչեց որ իրեն կովը ողջընցընէ, որ ըյնելով մեռեր էր. սրը ըսավ իրեն, գնա՛ ողջ կըգտնաս կովը. երբոր գեղացին գնաց ողջ տեսաւ, նորէն դարձաւ աղաղակելով մեծ է գէորգին ա̃ծը կըսէր, եսալ անոր կըհաւատամ։ Դահիճները շուտ մը բռնելով ան գեղացին՝ թագրին առջին բերին. թագը խօսեցընելալ չկրնալով հրամեց կտոր կտոր ընել անիկայ. գեղացին աղօթք ընել սկսաւ, տէր իմ չի հասայ ըսավ մկրտըվիլ, իմ արիւնս մկրտութ տեղ սեպէ ա̃ծ սրտագէտ ա̃մի. երկինքէն ձայն եկավ իրեն,

անանկ կըսպասեմ ուրախութ՟ եկօ ինծի ։ Թ՟րին հասկըցուցին որ բազմունքը բան-ալ երթալով քրիստոնէութ՟ի կըսորվին գէ-որգէն, որ հիւանդները բժշկելով ամմէնը իրեն քովը բերել կուտայ ։ Թ՟րը հրամեց իր առջին բերել տանջելու մտքով, բայց Մագնէնտիոս քովէն ըսաւ, քրիստոնեանե-րը դժուար կըմեռնին, շատ կըհակա-ճառին ։ անոնց հետ խստութ՟ երթալ չըլ-լար, այլ աւելի անուշ խօսելով պատիւ խոստանալով ։ Ս՟ն գէորգ Ճամփան սաղ-մոս ըսելով կերթար, Տ՟ր յօգնական ինձ նայեաց, և ոչ երկնչեցից ինչ մարդ ։ Երբոր հասաւ՝ Թ՟րը իրեն ըսաւ ։ Թէ որ ինծի լսելու ըլլաս, ով գէորգ կուռքերուն զոհես, շատ գանձ կուտամ քեզի, շատ պատիւ, իմին եկդս կընեմ քեզ ։ քեզ մեծընալես կըզուրցեմ, որ ապրիս ողջ մնաս, չէթէ ինծի մտիկ չըդնելով չարաչար մեռնիս ։ Ս՟ն գէորգ հեգնելով ըսաւ, հիմա աղէկ կըխօսիս, ինչու առաջ չըսիր ։ այսչափ չարչըրելէն ետև կըզուրցես ։ Թ՟րը ը-սաւ, ինծի շնորհէ, կուռքերուն զոհէ, պատիւ կըգտնաս ինծմէ ։ Ս՟ն գէորգ ը-սաւ, որովհետև ինծի համար զըզջացար, քուկին կամքդ կըկատարեմ, ո՞ւր են կուռ-քերը հօն երթանք ։ Թ՟րը խաբվելով ասոր խօսքէն խիստ ուրախացաւ ։ ամմէն մեծերուն հրամեց տաճարը երթալ ։ Թէլլալ կանչել տըվավ թէ գալիլիացւոց խորհրդակիցը՝ գէորգը ապողոնի կուռ-

քին զոհ սիրտը մատուցանել . ամէն
կուսպաշտները սկսան ուրախանալ , Ա-
պողոն կուռքը գովել, Թագաւորին բա-
րի մաղթել ։

Երբոր ամէնքը տաճարը մտան , հրա-
մեց Թգըը ամէնունալ լռել . Սբն Գէորգ
մէջ տեղը կենալով Ապողոնին պատկերին
մ՞ն նայելով՝ ըսաւ . քեզի կըսեմ զուրցէ
դուն ա՛ծ ես Թէ չէ , պէտք է զքեզ պաշ-
տել Թէ չէ ։ Նս ատենը մէջի եղած սատա-
նան ձչալով ըսաւ . ես ա՛ծ չեմ , ինծի հետ
եղողներնալ ա՛ծ չեն . մի է ճշմարիտ ա՛ծ
որ ամէն բան ստեղծեց . որդի նր յս քն,
և սբ հոգին , մենք անոր հրեշտակներն
էինք , ետքը ա՛յ դէմ ապստամբելով սա-
տանայ եղանք ։ Սբն Գէորգ ըսաւ , Թէ որ
ա՛ծ չէք՝ հապա ինչու մարդիկ կըխաբէք
ձեզ պաշտել կուտաք . հիմայ ինչպէս
կըհամարձակիք հոս կըկենաք . որովհետև
ես ա՛յ ծառայ ըլլալով՝ հոս կեցած եմ .
իմ վրաս քի՛ի անունը կայ որ է ճշմարիտ
որդին ա՛յ ։ Նս ըսելնինի , ձեռքովալ վրա-
նին խաչ կըհանէր . ան խաչին զօրութեն
մեծ գոռում գոչում մը ելաւ սատանա-
ներու մէջ , լալու ձչալու ձայներ . տա-
ճարին մէջի եղած ամէն կուռքերը գե-
տինը ընկան , ջարդ ու բուրդ եղան ։
Նս տեսածնին պէս քուրմերը՝ ամէնը
մէկէն վրան վազեցին . սբյն երկու ձեռ-
քէն բռնելով մէկ բերան կըկանչէին ,
Մերյուր Թգր աս կախարդս , որ իր կա-

խարդու̃քը ամմէննալ մոլորցուց, ա̃ծնէ-րը կործանեց։ Թ̃գրը կատղելով ըսաւ· ո՛վ չար անօրէն. դուն չէիր որ խօսք տը-վիր ապօղոնին զոհելու, աս ինչ ըրիր։ Ս̃րը ըսաւ· ո՛վ անմիտ, ես իմ զոհս ու-պատարագս մատուցի Ճշմարտին ա̃յ յ̃ի ք̃ի, դուն գոնէ հիմա միտք առ իմացիր, որ քուկին կուռքերդ ոչինչ են, ո՛չ իրենց՝ և ո՛չ ուրիշներուն կրնար հասնիլ կամ օգնութ̃ի ընել. սատանայ են. ինծմէննալ կըդողան կըկործանին, ք̃ի ծառայ ըլլա-լուս համար։ Թ̃գրին միտքը չբացվե-ցաւ, բայց Թագուհւոյն սիրտը շնորհք ա̃յ ինջաւ, աս բանս լսածինպէս վազեց Թ̃գրին քովը եկաւ ըսելով, ո՛վ ա̃ծ գէ-որգայ քաւէ զիս մեղաւորս. մի յիշեր իմ անգիտութե̃ գործքս, այլ տե̃ս իմ կա-տարեալ դարձս. ինծալ մասն և բաժին տուր քրիստոնէից հետ. ասանկալ շատ բազմութ̃ի դարձան քրիստոնեայ եղան ան ատենը։ Աս բաները տեսնալով դիոկղե-տիանոս Թ̃գրը՝ տակնուվրայ եղաւ· հրամմեց աղէքսանդրէ Թագուհինալը գէորգնալ մէկէն գլխընին կտրել. երբ-որ զինուորները ասոնք բռնելով քաղ-քէն դուրս կըտանէին, աղէքսանդրէ Թագուհին աչքովը երկինքը նայելով՝ բերնովը աղօթք ընելով՝ կերթար, բայց տեղմընալ նստելով՝ հոն խաղաղութ̃ հո-գին աւանդեց։

Երբոր զինուորները ս̃բ գէորգը տարին

նաՀատակելու տեղը՝ ձեռվըները վեր վերցընելով կեցաւ աղօթքի․ Տ̄ր ո̄մ ըսաւ․ պզտիկունէս վեր քեզի եմ ապաւիներ, քէնէ կըխնդրեմ․ քու որդերուդ մէջը առ իմ հոգիս․ իսկ աս կռապաշտներուն թողութի տուր ինչ որ ինծի ըրին, անոնց Ճանչցուր քու կլին անունդ ու լուսաւորէ․ իսկ քեզ Ճանչցողներուն քու կլին որ երկինքդ տպաւորէ․ որդերուն յիշատակը ընողներուն, բարեխօս բանողներուն՝ քու կլին սերդ վառէ սրտերնուն մէջը, որ իրենքալ հաւատքով, վարքով որդերուն նմանելով, անոնց հետ մէկ տեղ արքայութե արժանի ըլլան ։ Սա աղօթքը ընննալէն ետեւ ծունկ չոքելով վիզը երկընցուց, թ̄րին հրամանը կատարեցէք ըսաւ․ անանկով գլուխը կտրեցին յամին 303․ ապրիլի 24․ զատկին ուրբաթ օրը ։ Ասյն գէորգայ հրաշքները խիստ շատ են, բայց անոնցմէ երկուքը միայն պատմենք որ խիստ երեւելի են ։ Բ̄նի թուականին իբր 800․ մորայ դիերը գեղի մը մէջ՝ որ գէորգայ մեծ ժամ մը կար հնուցմէ շինած․ այլազգիներուն ամիրան հան իրկեց իր եղբօրորդին բանի մը համար․ սարկաւագ իր բաները ու տասներկու ուղտ (տեվէ) ան ժամը իջեցուց իբր մէկ խան մը ։ Քահանները շատ աղաչեցին որ աս բանը չընէ, մտիկ չըրաւ․ բայց երբոր ուղտերը ժամը խօթեցին՝ մէկէնիմէկ ամէննալ սատկեցան ։ Սոր մ̄ը խիստ վախ ընկաւ

սիրտը․ սատկածները դուրս հանել տը-
ւաւ, ինքը ժամը մօտաւ տեսնալու քրիս-
տոնէից պաշտամունքը․ երբոր պատա-
րագին ատենը կեցած էր, որին հրաշքո-
վը իր հոգւոյն աչքը լուսաւորեցաւ, տե-
սաւ որ քահանան պզտիկ տղայ մը ձեռքը
բռնած գառի պէս մորթեց, արիւնը
սկիհին մէջը թափեց․ հաղորդուէ ա-
տեննալ տեսաւ որ՝ ան մորթըւած տղին
մսէն ու արիւնէն կըբաժնէր հաղորդ-
ւողներուն, բերընին կըդնէր․ պատա-
րագը լմննալէն ետև մաս բաժնել սկսան
ժողովրդեան, աս իշխանինալ տըւին․
Իշխանը բարկանալով մը ըսաւ քահա-
նային․ դուն ուրիշներուն տղին մսէն
կուտաս որ մորթեցիր․ դունալ ժղվ̃դնալ
անոր միսն ու արիւնը ճաշակեցիք․ արիւ-
նը դեռ կերևնայ շրթունքիդ վր̃․ Քա-
հանան ահով դողով ըսաւ․ ես մեղաւոր
մարդմընեմ, չեմ արժանի անանկ յայտ-
նի տեսնալ աս ս̃բ խորհուրդս ինչպէս որ
դուն տեսեր ես․ անանկէնէ դուն մեծ
մարդ մը եղած պիտոր ըլլաս ըսաւ․ Աս
տեսիլքէն խօսակցուէն այլազգի իշխա-
նը քրիստոնեայ եղաւ, սինայ լեռան
եպ̃սէն մկրտըւեցաւ․ հոն կրօնաւոր ե-
ղաւ իրեք տարի կեցաւ․ ետքը ամիրային
քովը գալով, իրեն ս̃բ հաւատքը յայտնե-
լով՝ նահատակըւեցաւ․

Մ՝էկալ հրաշքը պատմենք․ Սև ծովին
քով ամաստրիս քաղքին քովը ս̃բ գէոր-

դայ մեծաշէն ժամ մը կար , ուր շատ կերթար լեոն անունով մէկ բարեպաշտ մը իրեն կնիկովը որ Թէոփանէ կըսուէր . Երբոր ասոնց մինչ զաւակ եղած անե֊կեղեցին մկրտել տալով տղին անունը Գէ֊որգ դրին ։ Նշղամ ատեն որ՝ պուլղարնե֊րը ծեծ բացին կայսեր վ̈ր . լեոն զինուո֊րական կարգէ ըլլալով՝ պէտք էր ծեծի երթալ . բայց ինքը ծերացած ըլլալով՝ իրեն տեղը աս մէկ հատիկ զաւակը գէ֊որգ հարկ եղաւ խրկելու . շատ աղաչանք ըրին ծնողքը ս̃բ գէորգայ ժամու մէջ որ ս̃բը ողջ առողջ իրենց զաւակը դար֊ձընէ ։ Ա̃գմը եղաւ յամին 917 . ուր ասոնց գէորգ տղան գերի ընկաւ պուլ֊ղարներուն իշխանի մը ձեռք , որ իրեն կորիճընութը խիստ սիրելի ծառայ եղաւ. Հետեւեալ տարին ս̃բ գէորգայ նախատօ֊նակին օրը՝ ծնողքը որ միշտ կուլային . ան օրը ալ աւելի լացին իրենց ազգականաց հետ մէկ տեղ , կըգանկատէին ս̃բյն Թէ ինչու խնդիրքնին չկատարեց , իրենց ձեռքը չիգարձուց զաւկընին ։ Նոնք հաս կուլային , գէորգ տղանինալ իր տեղը կուլար կողքար ս̃բ գէորգայ առջին , միտ֊քը բերելով որ՝ ան օրը ծնողքը իր տօնը կըտօնէին , իսկ ինքը անհաւատներուն ձեռքը հեռու երկիր անանկ մնացած էր . ասանկ լալով ձեռքը երկնցուց որ՝ կըրա֊կին վրայէն վերցընէ տիրոջը խմելիքը , տաք տաք իրեն տանի , մէյմնալ տեսաւ որ

յանկարծ վեր երկինքը ելաւ. ամանը ձեռքը բռնած իր հօրը տունը գտնըվեցաւ ։ Նըրբոր ծնօղքը սաստիկ մէկէն տեսան իրենց տանը մէջ կորսըված զաւակնին՝ ուրախանալէն գետինը ընկան, չկըտէին ինչ ընեն. գրկելով պագնելով կըհարցընէին ինչպէս հոս եկար, մենք քեզ մեռած կըկարծէինք ։ Տղանալ սկսաւ պատմել. աս ամանը ձեռքս բռնած կըտանէի ըսաւ որ տիրոջս հասցընեմ, մէյմընալ զինուորի պէս մարդ մը տեսայ ձի հեծած արեւէն աւելի լուսաւոր. առաւ զիս յափշտակեց լուսոյ մէջ, չիյտեմ ուր կերթայի. միայն ձիու քալուածքի ձայն մը կառնէի. մէյմընալ տեսնամ որ հոս եմ ։ Ասոնք ամմէննալ դուրս ելան, ետեւէն վազեցին որ ան ձիաւոր մարդը գտնան, մէկը հոն չիգտնալով՝ աղէկ հասկըցան որ՝ ան ձիաւոր մարդը Սբ. Գէորգն է եղեր, երագահաս նահատակը, որ ամմէնուն կըհասնի, ամէն տեղ իր զօրութիւը կըցըցընէ, ուր տեղ որ զինքը բարեխօս կըկանչեն ։ Նորէն տունը դարձան, տղին ձեռքի բռնած խմելիքը տեսան անանկ տաք էր՝ որ կրակին վրայէն նոր հանած կերեւնար. աս նշաննալ տեսնալով՝ ալ աւելի հասկըցան Սբյն զօրութիը. ան քիչ բանը ամմէնուննալ բաժնեցին. որչափ բազմութի որ հոն եկերեւին, դրացիներ, ազգականներ ամմէննալ խմեցին անկից. ետքը Սբ. Գէորգայ ե-

կեղեցին երթալով, շնորհակալութեան աղօթք ընէին ։

## ՍՈՒՐԲՆ ԿՂԵՄԷՍ ՀՌՈՄԱՑ ՀԱՅՐԱՊԵՏ

Անիկայ հռոմայեցի էր կուապաշտի զաւակ, թգրական տունէ ինչպէս որ կըկարծըւի ․ ոմանք կըսեն որ արեւելք գնաց բառնաբասը տեսաւ ․ երբը պետրոս առաքելոյն քովը երթալով անոր աշկերտը եղաւ, անոր հետ մէկ տեղ հռոմ եկաւ ։ Իսկ ուրիշները կըսեն թէ երբոր պետրոս առաքեալը հռոմ եկաւ, կղեմէս ծովուն ալեկոծումէ խալըսած ըլլալով, ու պետրոս առաքեալը գտաւ, քրիստոնէութիւը ճանչնալով աշակերտ եղաւ պետրոսի, ու զօրաւոր քարոզիչ աւետարանի ։ Խօսքով ու գրով յաջող մարդ ըլլալով գրագիր եղաւ ․ առաքեալներուն կանոնները գրեց, և ուրիշ գրուածներ ․ մանաւանդ պետրոս ու պօղոս առաքեալներուն շատ մեծ օգնական եղաւ ․ Նոյն պետրոսի ձեռքովը քահանայ ու եպս ձեռնադրըվեցաւ ․ երբը հռոմայ աթոռը քհնյապետ նստաւ ․ շատ շինուէի ըրաւ հռոմ ու ամմէն արեւմուտք ։ Այն ատենը սաստիկ հալածում ըլլալով շատ քրիստոնեայ կընահատակվէին հռոմայու մէջ ․ ասոր համար հռոմայու օխտը տեղը օխտը գրա-

գիր դրաւ , ապսպրեց որ ամմէն մէկը իր գին եղած մարտիրոսներուն վարքը չարչարանքը գրէ ․ ինքնալ շատ հրէայներ ու կռապաշտներ կըդարձըներ , ինչվան որ ինքնալ բռնըվեցաւ կռապաշտներէն ։ Ասոնք առաջ ծեծեցին զինքը , ետքը կախելով անանկ քերեցին մարմինը երկըթներով որ ինչվան ոսկորները հասուցին ․ տեսնալով որ ամուր կեցած էր քրիստոնէութեան մէջ , դոմետիանոս կայսեր հրամմանովը նաւ մը դնելով ինչվան քերսոն քշեցին ։ Հոն հինգ տարի ը՟ ոմանց՝ քշված կենալէն ետև , նաւուն երկաթը վիզը կապելով ծովը ձգեցին ․ բայց ա՟յ կարգաւորութը մարմինը անանկ տեղ ընկաւ ծովու մէջ՝ ուր քար մը կամարաձև կեցած ըլլալով մարմինին վ՟ր ամբողջ մընաց , ամմէն գաղան ձկներէն պահվեցաւ ։ Սրբը եպսին երևնալով հրամմեց որ իր մարմնոյն վ՟ր տապան չինէ ․ երբոր եպսը հասկըցըներ ուզեց տեղին դժվարութը ծովու տակ ըլլալուն համար , դուն ըսաւ ամմէն քահանայներդ ա՟ռ , ծովին քովը գնա , կըտեսնաս հոն ա՟յ փառքը ։ Անանկ ըրաւ եպսը ․ երբոր ծովին քովը եկաւ , ծովին ջուրը ինքիրմէ քաշվեցաւ ․ ինչվան ան քարը ցամաք եղաւ ․ եպսը իրեն քհնյներովը համարձակ քալելով քովը եկաւ ․ տեսաւ որ մարմինը անարատ մնացեր է՝ յատուկ տապանի մը մէջ դրաւ նոյն ըսածին կեօրէ ։

Երբոր իրենք ետ դարձան , ջուրնալ իրենց ետեւէն իր տեղը կը դառնար . բայց ծովէն դուրս ելլալէն ետեւ ան ատենը ցաւեցան ամէննալ որ ինչպէս իր նշխարքներէն բան մը չառին հետերնին . բայց Որն կղեմէս գիշերը երեւնալով ամենուց ըսաւ . չեմ ուզեր որ մարմինս անկէց վերցընէք , բայց աս շնորհքը կընեմ ձեզի որ ամեն տարի իմ նահատակուենս օրը՝ օխտը օր ծովը քաշված մնայ . հոն եկէք տեսէք քալելով . Ասածին պէս եղաւ , ամեն տարի ան մեծ ծովը հոն տեղս կըքաշուէր . քերստոնացիք խրնճաղընճ հոն կըվազէին , որ՚ն տապանին քովը՝ ցամքած ծովին մէջը ուխտերնին կըկատարէին , շատ հրաշքներ կըտեսնային .

Տարիմընալ բարեպաշտ մարդ մը իր կնիկովը աս ուխտս ընելով իրենց մէկ տըղովը եկան տապանին քովը , հրաշքները տեսան . իրենց աղօթքներին լմնցընելէն ետեւ ետ դարձան ցամաքը ելան . Ջուրնալ ուրիշ տարվան պէս նորէն դարձաւ գոցեց , բայց գոցելէն ետեւ նայեցան որ տղան հետերնին չէ , փնտռել սկսան անչափ բազմութէ մէջ խառնըված կարծելով . երբոր չիգտան՝ ձարերնին հատաւ , հասկըցան որ ծովուն մէջը մնացեր էր . սկսան լալ ողբալ , ուրիշներնալ իրենց հետ կուլացընէին , անկից ետքը ամեն շաբաթ օրերը նշխար , գինի ու եղ կուտային եկեղեցին , իրեն հոգին պատա-

րագի մէջ յիշելու համար, ինչպէս որ տարեգարձը եկաւ։ Տարեգարձին՝ երբոր ծովը սովորուեր կեօրէ բացվեցաւ, իրենք առաջ վազեցին որ կարելի է մեռեալ մարմինը գտնան․ մէյմընալ նոյն տապանին քովը եկածնին պէս՝ տեսան որ իրենց ղուտիը ողջ առողջ կեցեր է, աշխարհ իրենց եղաւ։ Արհարցընելին իրեն թէ ինչպէս ողջ մնացիր․ տղան մէկ ձեռքով տապանը կըբռնէր կըցըցընէր կըսէր որ՝ անիկայ իս պահեց ու կերակրեց․ աս կամարին մէջը ջուր չմտաւ կըսէր․ չորս դիս լոյս էր․ ամմէն շաբաթ օրերը մէկ մարդ մը քովս կուգար, նշխար գինի ու եղ կուտար ինծի․ անոնք ուտելով ինչպէս մէկալ շաբաթ ոչ կանօթենայի ոչ կըծարվէի։

Աս լսելով տեսնալով ամմէննալ հասկըցան որ՝ նոյն կղեմէս պահեր է․ ծնողաց տուած բաները՝ իրենց ղուկին է տըվեր․ ամմէննալ փառք տըվին Այ․ իսկ հերձուածողները պապանձեցան, որ անատենը եկեր կըքարոզէին, թէ մեռնելէն ետեւ տըված պատարագն ու ողորմութիւնը օգուտ մը չընէր։ Նոյնը աս բաները տեսնելով ան օրէն սկսաւ նոյն տապանին մէջ կանթեղ վառել, անկից ետեւ ծովուն մէջէն դուրս ելլալ․ բայց ինչ հրաշք․ որ երբոր տարեգարձին համ կուգային, ան կանթեղը վառած կըգտնային։ Թող տուր իրեն ըրած ուրիշ հրաշքները։

# ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

Հայրը կըսուէր սեկունդոս, որ զօրավարութե̃ պատիւ ունէր կայսեր դուռը. մայրը անթուսա կըսուէր, որ ծաղիկ ըսել է. երկուքն ալ ազնուական էին անտիոք քաղքին մէջ, որ հիմա անթաքեա կըսուի. ան ատենը խիստ մեծ քաղաք էր, մէջը 600 հազար մարդ կար։ Ս̃ն յոհան դեռ պզտիկ եղած ատենը՝ հայրը մեռաւ. բայց մայրը թէպէտ և որբեվարի՝ աղէկ հոգաց իր զաւկըները. յոհաննէս բնական խելացի ըլլալով՝ կարդալու մէջ շատ առաջ գնաց. Ճարտասանութիւնը լիբանոսի քով անանկ աղէկ սորվեցաւ որ՝ լիբանոս անիկայ որոշեց դասատու ըլլալ իր մեռնելէն ետև, երբոր ուսումնալ լմնցաւ՝ իրեն շինած գովասանքի Ճառը դուրս հանեց կայսերներուն վր̃. անանկ գերազանց Ճարտասանութիւն մը որ՝ լիբանոս վրան զարմացաւ։ Իսկ փիլիսոփայութիւնը սորվեցաւ անդրագաթայ փիլիսոփային քով։

Իրեն խիստ բարեկամ ունեցաւ բարսեղ մէյմը՝ նաև եւագրիոս պոնտացին. ասոնց մէ օրինակ առնելով յոհաննէս՝ իրեն սէր մը եկաւ անոնց պէս կրօնաւոր ըլլալու. մանաւանդ երբոր հասկցաւ որ աշխըրհիս զբաղմունքը արգելք կըլլան թէ մարմնաւոր և թէ հոգևոր ուսման՝ որուն

վր՟ խիստ սէր ունէր ։ Նարսէղ խիստ կը-յորդորէր զինքը կրօնաւոր ըլլալու, իրեն հետ մէկ տեղ վանքի մը մէջ կենալու ․ բայց իրեն մայրը թող չէր տար, աղա-չելով որ իր որբեւայրութե՟ մէջ մինակ չը-թողու զինքը ․ անոր համար յոհաննէս տունը կեցաւ ․ բայց ինչ կրթութի՟ որ վանքի մէջ պիտոր ընէր՝ հոն սկսաւ ը-նել ․ ամենեւին սուտ չխօսիլ ․ անէծք մը բերնէն չհանել ․ ոչ ինքը երդմըն-նալ, և ոչ ուրիշի երդում ընել տալ ․ ոչ երբեք ծաղրաբանութե՟ խօսք մը բերնէն հանել, այլ մանաւանդ լռութ՟ կըկենար ․ թէ որ մէկի մը հետ խօսիլ պէտք ըլլար՝ հոգեւոր բան կըխօսէր, աշխարհային խօս-քերը գոցել կընայէր ․ աշխարհ ու աշ-խարհային մեծութի՟ը իր աչքին իբրեւ ե-րազ մը ոչինչ մնէր սեպված ․ ինքը ա-սանկ էր միտքը դրած, ուրիշներուն ալ սանկ կըքարոզէր ․ աղօթքի ու կարդա-լու հետ կըլլար, պաք կըպահէր, ար-թուն կենալու համար գետնի վր՟ կը-պառկէր ։ Իրեն մայրը թող կուտար սա ամէն բանը ընելու, վախնալէն՝ որ չըլլայ թէ զինքը թողու վանքը երթայ ։

Ետքը երբոր բոլորովին թողուց աշխարհ յոհաննէս վանքը գնաց, աւելի կրթեց զինքը կատարելութե՟ հասնելու ․ օր մը ա-նանկ ձայն մը լսեց որ՝ կամ զինքը կամ բասիլիոս իր սիրականը ու հոգեւոր ըն-կերը՝ եպս՟ պիտոր ընտրէին ․ սա ձայնս

բասիլիոս լսելով՝ եկաւ յոհաննու պատմեց, խորհուրդ տըվաւ, թէ որ փախչիլ ուզենաս ըսաւ՝ երկուքնիս մէկ տեղ փախչինք, իսկ թէ որ եպս ընելու ըլլան՝ երկուքնիս ալ մէկ տեղ յանձն առնենք, միայն թէ իրարմէ չի զատվինք: Բայց յոհաննէս զինքը անարժան սեպելով եպս ըլլալու՝ միտքը դրաւ բասիլիոսը եպս ընել տալ. անոր համար խօսքը գոցել տըվաւ. հիմակու հիմա մեզ փնտռօղ չիկայ ըսաւ, ասոր վը՞ր չիմտածենք: Աս ըսելէն ետեւ ինքը փախաւ պահվեցաւ. փնտռօղները տեսնալով որ յոհաննէսը չիկայ՝ բասիլիոսը կամ բարսեղը բռնեցին եպս ձեռնադրեցին. ետքը երբոր իմացաւ բասիլիոս իրեն ըրածը՝ դժվարիլ մը ցըցուց. բայց յոհաննէս անանկ շահեցաւ անոր սիրտը, որ առջինէն շատ աւելի սիրով կապվեցաւ հետը:

Ան ատենները մայրը վախճանած ըլլալով՝ յոհաննէս անտիոքայ անապատը քաշվեցաւ. չորս տարի իսիքիոս ճգնաւորին հետեւելով շատ ճգնուիններ ըրաւ. մէկ քարայրի (մաղարայի) մը մէջ երկու տարի քաշված կեցաւ. պառկիլը ամենեւին վերջացուց, իսկ քնանալը խիստ քիչցուց. անով մարմինը կէս մէջքէն վար մեռածի մը պէս էր եղած. ինքը միայն հոգեւոր ածային բաները մտածելով կըզմայլէր: Տեսիլք կըտեսնար որ պետրոս առաքեալը բալլիքներ կուտար իրեն ձեռքը, նը-

շան իրեն քահանայ ու եպս ըլլալուն . յոհաննէս աւետարանիչնալ գիրք մը կուտար ձեռքը, նշան սբ գրոց մեկնիչ ըլլալու . հրաշքներ կընէր, հիւանդներ կըբժշկէր ։ Երբոր վաղէս արիոսեան կայսրը նստաւ, հրաման հանեց որ՝ ամէն կրօնաւորներ իրենց տեղէն դուրս ելլան, զինուոր ըլլան . ան ատենը յոհաննէս ասոր ըրածին վր ամենեւին չիհաւնելով՝ մէկի մը խորհրդով կրօնաւորուէ վր գովասանք գրեց զարմանալի ։

Բայց իր խիստ ճգնութէն հիւընտնալով յոհաննէս՝ պէտք եղաւ քաղաքը իջնալու . հոն տեսնալով զինքը սբն մելիտոս անտիոքայ եպսը՝ ող ջըմնալէն ետեւ սարկաւագ ձեռնադրեց . իսկ մելիտոս վախճանելէն ետեւ որովհետեւ անտիոքայ աթոռը շատ խռովուէ քաշեց, ոմանք պաւլինոսը նստեցընել ուզելով անոր տեղը՝ ոմանք փլաբիանոսը . յոհաննէս նորէն քաշվեցաւ՝ ինչվան որ փլաբիանոսը նըստուցին աթոռը, որուն յարեցաւ յոհաննէս ։ Փլաբիանոսն ալ խիստ սիրելով յոհաննէսը՝ քահանայ ձեռնադրեց . մանաւանդ որ հրեշտակ մյ երեւնալով ապըսպրերէր իրեն որ քահանայ ձեռնադրէ . յոհաննուն ալ երեւնալով՝ պատուիրէրէր որ դէմ չիդնէ ։ Ձեռնադրվելու ատենը հոգին սբ աղաւնակերպ երեւցաւ անոր գլխուն վր . քահանայ ըլլալէն ետեւ անանկ մէկ քարոզուէ մը սկսաւ հոգւոր

Ճարտասանութ՝ որ ամենայն Սոկրերան անուն դրին . ամենուն անաչառ կըքարոզէր ապաշխարութի, եղբայրսիրութի, մանաւանդ ողորմածութի . ամենեւին չկըտէր երեսպաշտութի ընել . ինչ որ բերնով կըքարոզէր՝ վարքովն ալ նոյնը կըսորվեցընէր . որը կըխրատէր , որը կըյանդիմանէր , որը կըմխիթարէր , աղքատներուն կըհասնէր . հերետիկոսներուն դէմ

կըհակաճառէր ։

Ասանկ տասներկու տարի բարի պտուղ ընելէն ետեւ անտիոք քաղքին մէջ , ստանպօլու պատրիարգ ուզեցին ընել , թէ ժողովուրդը եւ թէ արկադէոս կայսրը , որ հրաման խրկեց ան տեղի մեծին աստերիոս կոմսին՝ շուտ մը ստանպօլ խրկել յոհաննէսը . անալ բանը չիմացընելով յոհաննէսին , վարպետութ մը քաղքեն դուրս տեղ մը կանչեց զինքը , իբր թէ գաղտուկ բան մը ունի իրեն հարցընելու . հոն եկածին պէս յոհաննէս՝ թագաւորական մարդիկներուն յանձնեց , որ առին ստանպօլ տարին ինչպէս որ ապըսպըրէրէր իրեն արկադէոս կայսրը ։

Երբոր եպսներուն ժողովը զինքը եպս ձեռնադրեցին , պատրիարգ դրին ստանպօլու վր , ալ աւելի եռանդեամբ սկսաւ քարոզել , ստանպօլի մէջ եղած անկարգութինները , հերետիկոսութիը վերցընել ։ Սուջի տարին հիվանդութի քաշեց , ըռընտնալէն ետեւ աւելի ջանք ունեցաւ աշ-

խաստելու, ուզելով առաջ եկեղեցականքը շտկելու՝ բարի օրինակ տալու համար իրեն վ՞ր սկսաւ կանոններ դնել. Մէկի մը սեղան չէր երթար, Մէկնալ իր սեղանը չէր առներ, այլ մինակ կուտէր. ամէն օրվան իր կերակուրը իբրև ողորմութի կառնէր ողոմպիադա ըսված որբեվարի կնիկէմը, որ խիստ աղքատասէր ՚ու կընիկմընէր. շատ հեղալ կըմոռնար ինչվան իրիկուն բան մը բերանը չէր դնէր: Ինչ որ եկեղեցիէն իրեն բաժին պիտոր գար՝ ամենևին բան մը չէր առնէր. այլ ամմէննալ եկեղեցնայ ու աղքատաց կըբաժնէր, իր առաջնորդարանին խարձնալ կտրելով՝ աղքատներուն ու հիւանդներուն կըբաժնէր. և ան ըստըկով հիւանդանոց շինել տըվավ:

Եկեղեցնայ մէջ հոգևոր երգերը կարգաւորեց. և որովհետև արիոսեանք մօլար բաներով տեղէ տեղ քալելով երգեր կընէին, ոսկեբերան սահմանեց անոնց դէմ արծըթէ խաչերով, մոմերով թափօրի պէս քալելով երգ ընել. պատարագամատոյցնալ կարգաւորեց: Մէկ արիոսեան մը դարձաւ, իր կնիկնալ դարձուց. բայց աս կնիկը ակամայ դարձած ըլլալով՝ իր էրիկը խաբելու համար, երբոր ժամդնաց հաղորդուի առնելու՝ չիճաշակեց, այլ բերնէն հանելով պահեց. տուն դառնալէն ետև փորձելու համար ծամել ուզեց. բայց ան ատենը շուտ մը բեր-

նին մէջը քար կտրեցաւ . ասկից խիստ վախնալով կնիկը , եկաւ ոսկեբերանին ոտքը իյնալով պատմեց . անոր խրատելովը Ճշմարիտ ուղղափառ եղաւ . ան քարն ալ յիշատակի համար պահվեցաւ ։

Ինդեղջ մեղուորները անաչառ կըյանդիմանէր թէ և զինքը բամբասէին . իսկ զղջացօղ մեղուորները ամէնն ալ սիրով կընդունէր . նեղեալները կըմխիթարէր , կարօտները կըհոգար , ամէնուն վըր անանկ մէկ հոգ մը կըտանէր՝ որ ամէնուն սիրտը կըվաստըկէր , մօտիկինալ հեռուինալ ։ Ուր որ հերետիկոս կային գաւղերին մէջ՝ կամ դուրս տեղ , հոն քահանայնէր , եպսնէր խրկելով կըդարձընէր . նաև օտար ազգաց մէջ լեզուագէտ քահանայնէր խրկեց դարձընելու . անտիոքայ մէջ եղած հին խռովութինալ չոկեց . եփեսոսի եպսին վըր ամբաստանութ լսելով՝ անձամբ գնաց հոն , ան տեղին և ուրիշ տեղերուն անկարգութիները ուսկից որ կանոններ՝ ամէնն ալ ջոկեց ։ Այսչափ ծանր գործքերու հետ ըլլալով ատենալ կըգտնար քարոզներ կըգրէր . ծաշունքին վրայ մեկնուի կըշինէր . կըպատմէն որ երբոր պօղոսի թղթոց մեկնութիը կըգրէր , տեսնըլեցաւ որ նոյն պօղոս առաքեալը քովը կեցած ականջնիվար տուն կուտար իրեն , ոսկեբերաննալ կըգրէր ։

Կանք որ սատանան որովհետև ամէն

նորերուն դէմ հակառակութիւն մը կը հանէ .
աս տիեզերական վըդիմիս վրայով մեծ
հակառակութիւն հանեց . ամենէն գէշը
ան եղաւ որ՝ Եւդոքսիա թագուհին ալ
աւրուեցաւ Ոսկեբերանին հետ, որ Ար-
կադէոս կայսեր կնիկն էր . որուն առջի
գլխաւոր պատճառն աս եղաւ : Թագու-
հին մէկ որբեւայրի կնկան մը էգին բըռ-
նուք առեր էր . կնիկը Ոսկեբերանին ըս-
նելով՝ անոր առաջ խրատեց թագուհին ,
ետքը յանդիմանեց . ուրիշ կուլիտրապէ
անուն մէկ կնկան վրայով ատանկ բան մը
անցեր էր թագուհւոյն հետ : Ինչ հա-
կառակութիւնը փըթաւ Աղեքսանդրիոյ
պատրիարքէն որ կըսուէր Թէոփիլոս . ա-
սիկայ թէպէտ մեծ անուն ունեցող մարդ
մըն էր , բայց առաջուցմէ վեր չէր ուզեր
որ Ոսկեբերան Ստամպոլու պատրիարք ըլ-
լայ , այլ իրեն սիրելի քահանան Իսիդո-
րոսը կուզեր պատրիարք նստեցընել . հի-
մայ անանկ բան մը հանդիպեցաւ որ՝
իրեն ներսի հակառակութիւնը գործքով
ցըցուց . հանդիպածը աս է ,
Աս Թէոփիլոսը հակառակութիւն մը ունե-
ցաւ ըսկիտացի կրօնաւորներուն հետ .
անոնք եկան Ոսկեբերանին ընկան . Ոս-
կեբերան ուզեցինի որ ասոնք Թէոփի-
լոսին հետ հաշտեցընէ , Թէոփիլոս ալ
ուսելի աւրուեցաւ Ոսկեբերանին հետ .
ան ատենը քանի՛ թշնամի որ կային Ոս-
կեբերանին դէմ՝ ամէնն ալ Թէոփիլոսին

հետ մէկ եղան . գրեցին իրեն՝ ուրիշնե-
րունալ որ ստանալու գան, մոլընին ան
էր որ՝ ժողով ընել տան, ժողովով ձգեն
ոսկեբերանը իր աթոռէն՝ որ զօրաւոր
կըլլայ . աս պատճառով Թէոփիլոսը՝ ու-
րիշ եպսնէր՝ նաև ՚որն եպիփան ստանալու
եկան ,

Եւդոքսիա Թագուհին անոնց առջին կը-
գանկատէր ոսկեբերանին վը՞ր, թէ չփգա-
դրիր քարոզին մէջը միշտ իս վար կըզար-
նէ . ը՞հանրապէս կնկտոց ըրած անկար-
գութը վրայ կըխօսի, բայց միտքը իս նա-
խատել է . այնչափ ըրավ Թագուհին որ՝
իր էրիկնալ արկադէոս կայսրը իրեն դար-
ձուց . անալ սկսաւ ետևէ իյնալ որ ոս-
կեբերան աթոռէն հանեն : Սըն եպի-
փան չուզելով աս բանիս մէջ խառնըվիլ,
արտորցաւ խըպըրս իր աթոռը դառնա-
լու . ոսկեբերանին որովհետև անանկ
հասկըցուցերէին որ ՚որն եպիփաննալ մէ-
կայնոնց պէս քեզ ձգելու քշել վճռեց,
գրեց իրեն . || Ո՛վ սքանչելիդ եպիփան,
աթոռդ չի հասնիս պիտոր || : Եպիփան-
նալ ոսկեբերանին գրեց : || Ո՛վ երանեալ
Ճգնաւոր քու, ինչպէս որ ես չի հասնիմ
պիտոր իմ աթոռս, դունալ չի հասնիս պի-
տոր քըշվելու տեղդ || : Աս երկուքին խօսք-
նալ մարգարէութի էին չէթէ անէծք .
երկուքնալ ՚ածմէ իմանալով մէկմէկու
գրեցին . անոր համար երկուքին խօսքն-
ալ իրաւ ելաւ :

Ոսկեբերան չդժուարելով իր ձգուելուն մը · կըսէր իր բարեկամ եղօղ եպսներուն · աղօթք ըրէք եղբարք իմ վրայ · ատենս հասած է · կարծեմ որ թողում պիտոր աս ողորմելի կեանքս · ես գիտեմ սատանային որոգայթն է ասիկայ · իրեն դէմ շատ բան զուրցելուս չկրցաւ դիմանալ ։ Եպսները արցունք թափելով կըպագնէին իրեն ՚նք գլուխը · կուլային , ինչպէս պիտոր զրկըվինք կըսէին իրեն գեղեցիկ քարոզուէ ։ Ան կուտար ոսկեբերան , ոչ ինծմէն սկսաւ քարոզութիւնը , և ոչ իմ վրայ պիտոր դադրի · մովսէսին տեղը յեսու յաջորդեց , պօղոսին տեղը տիմոթէոս · ես մարգարէներէն առաքեալներէն աւելի լաւ չեմ · ձեզի չէ՞ մի ըսէր որ աս աշխարհս մէկ առուտուրմընէ · կըգնենք , կըծախենք , ետքը կելանք կերթանք ։

Սանկ երբոր աթոռէն ձգեցին քշեցին ՚նքը՝ ժողովուրդը շատ աղաղակ վերցուց · շարժմընալ եղաւ որ թագուհւոյն վրայ վախ ընկաւ · սիրտնալ փոխվեցաւ · շատ աղաչեց արկադէոս կայսեր , որ երկրորդ օրը դարձընել հրամմեց ոսկեբերանը ։ Դառնալէն ետև չորրորդ օրը իր ժամը մտածին պէս ոսկեբերան՝ սկսաւ անանկ սքանչելի քարոզուի ընել , որ ամմէննալ կըզարմացընէր իր անյիշաչարութիւնը մը · իր սիրոյն մը , որ ժողովքդեան հետ ունէր , իր համակերպութիւնը մը , որ ամմէն բանի

մէջ գոհութի՛ն կուտար այ։ Բայց երկու ամիս անցնելէն ետեւ՝ նորէն հակառակութի մը սկսաւ ալ աւելի մեծ. պատճառը եղաւ թագուհւոյն արձանը՝ որ այս սոփեային գիւղը տնկեր էր. ուր նաեւ կռապաշտական խաղեր կըլլային։ Ոսկեբերան կը խրատէր որ ան արձանը անկէց վերցընէ, անկէց խիստ տակնուվրայ կըլլար թագուհին. եւ որովհետեւ իր քարոզներուն մէջը անդադար կը խօսէր անկարգութեանց դէմ, Եւդոքսիա թագուհին անանկ կարծեր որ՝ ան խօսքերով զինքը կանարգէ. ինչպէս իրաւ՝ յունաց լեզուով մէկ քարոզ մը կը գտնուի. որուն սկսուածքը չիտակ թագուհւոյն վրէ՛ կընայի, ըսելով. ‖Ուրեմն հերովդիադա կըխռովի. նորէն կուզէ յոհաննու գլուխը‖։ Երկրորդ Արկադեոս կայսրը մարդիկ խրկեց որ Ոսկեբերանը ժամէն դուրս ելլայ. անիկայ ըսաւ, ‖Ես այս տաճարէն, չեմ կրնար թողուլ. հապա թէ որ կուզէս. իս բռնութեամբ դուրս հանէ. ան ատենը ես չեմ կրնար մեղադրել‖։ Ասոր քանի մը հոգի եկան, զգուշութ̃ ժամէն հանելով առաջնորդարանը տարին։

Զատկին ճրագալուցին օրը ժղվ̃րը խիստ աղաչեց՝ որ ժամը գայ, երբոր մըտնալու եղաւ, թշ̃րին զօրքը եկան, ժողովուրդը ցրուեցան ըրին, մէկն ալ բռնեցին հոն՝ որ դիւահար ձեւանալով պահած սուր ունէր՝ զբը սպաննելու համար. աս բանս երբոր լսեց Ոսկեբերան՝ եպս մը

խրկելով աղաչեց որ ազատէն ան մարդը · ասանկալ Ելպիդիոս քահանային ծառան բռնեցին, որ Թուրք ձեռքը բռնած երբոր կըվազէր ոսկերերանը զարնելու՝ անիկայ չիկրնալով՝ քանի մը հոգի ժողովրդէն սպաններեր ։

Հոգեգալստեան եւս Թըրին գիացեն գրագիր մը եկավ ըսավ ոսկերերանին, չորս եմպներ ըսին որ՝ հիմա աս քաղքես ելլաս գուրս երթաս, թէ որ մեղք մը կայ աս բանիս մէջը՝ մեր վրայ ըլլայ ան մեղքը · աս ըսելով իսկոյն նաւակի մը մէջ դրին, չինիգլիկ տարին'որը ։ Ճամփան ջերմ (սըթմայ) քաշելուն համար՝ քանի մը օր ղայսերի նստաւ, ետքը աւազակներեն վախ քաշեց · ասանկ եօթանասուն օր ճամփայ ընելով կոկիսոն քաղաքը հասաւ որ փոքր հայոց մէջն էր, ուր որ ապրսպրված էր քշելու ։ Բայց զարմանալին ան եղավ որ՝ իրեն ստանպօլէն ելած օրը՝ յանկարծ'մը հայրապետին նստած աթոռէն կրակ ելավ ժամը երեց · անկեց սինղիտոսին սէրայը անցնելով կրակը՝ իրեք ժամու մէջ մոխիր դարձուց · ան տարինալ սեպտեմբերին վերջի օրը խիստ խոշոր կարկուտ իջաւ ստանպօլ · չորրորդ օրը եւդոքսիա թագուհին մեռաւ ։

Ոսկերերանս տեսնալով ստանպօլցիք՝ վրանին մէկ սարսափ մը եկավ · ասոր դէմ ոսկերերան իր հալածեալ տեղը շատ փա-

ռաւորուն գտաւ կոկխանի մէջ եղօղնե-
րէն. Երբոր ձմեռը վրայ եկաւ՝ հիվընտ-
ցաւ. բայց գարնան ատենը ողջընցածին
պէս՝ իրեն թշնամիները ո՞չ գի հանգիստ
չիթողուն, անկից հանել տըվին. արաբի-
ան բռնած բերդը քշել տըվին. տանիլ-
նինի՝ չիտակ չէին տանէր, այլ աս գիս ան
գլին լեռներու մը՝, անտառներու մէջ
քալցընելով կըտանէին. անոր համար նա-
րէն դարձաւ իր հիւանդութիւնը. Թշնամի-
ները լսելով որ՝ հոնալ շատ քարոզուի ու
հրաշքներ ընելով՝ շատ փառք պատիւ
կըգտնար ՚որը՝ անկեցալ հանել տըվին.
ու ծովին բովը քշել հրամեցին. տանող
զինուորները անդադար կարտորցընէին
Ճամփայ ընելու. իր երեսինալ յայտնի
կըսէին, թէ որ Ճամփան մեռնելու ըլ-
լայ՝ մեզի շատ բատակ առնելու պատՃառ
կըլլայ. որովհետև գանէն մեզի անանկ
խաստացած է. աս ընելով աս գիս ան
գլին անկոխ տեղվանք կըքալցընէին կը-
պտըտցընէին իրեք ամիս ո՞չ գի մեռնի.
Երբոր խեղՃ հայրապետը կոմանա քաղ-
քէն գուրս քիչ մը հեռըցաւ՝ տեղ մը ի-
ջաւ ուր որ ՚որ բասիլիսկոսի եկեղեցի
կար. ան գիշերը ՚որ բասիլիսկոսը երե-
նալով ոսկեբերանին ըսաւ. զօրացիր եղ-
բայր յոհաննէս, վաղը մէկ տեղ պիտոր
ըլլանք. Նա տեսիլքէն զօրանալով վա-
ղուան օրը աղաչեց ոսկեբերանը զինուոր-
ներուն՝ որ ինչվան հինգերորդ ժամը հան

կենան. բայց անոնք մօտիկ չիջնելով ա-ռին տարին՛որը. քիչ մը առաջ երթալէն ետև տեսան որ կըմեռնին, նորէն նոյն բասիլիսկոսի ժամը դարձուցին ինչպէս որ ինքը ուզէրէր. Ա՛ն ոսկեբերան այնչափ էր միացեալ ա̃յ հետ, այնչափ համարձակութ̃ի ունէր ա̃յ հետ. անանկալ խղճմտանի մաքրութ̃ի, որ ան մեռնելու օրը՝ իրեն մեծ ուրախութ̃ն օր սեպեց. հանեց վրայէն իրեն հագած հին լաթերը՝ հոն եղողներուն տըլալ, ինքը նոր լաթեր հագաւ, ինչվան ոտքի ամանը փոխեց. անանկով՚ոք հաղորդութ̃իը առաւ. վերջին աղօթքը ընելով. իր սովորական խօսքնալ ըուրցելով. ‖ Փառք քեզ ած, փառք քեզ, յաղագս ամ փառք քեզ ‖. ուրախութ̃ հոգին աւանդեց յամին 407.

Արդ որ իրեն մեռնիլը լսեց կոկիսոն քաղաքին եպ̃ոը, կըփափագէր որ տեսնայ ինչ փառքի է հասեր արքայութ̃ մէջ. օր մը տեսիլք տեսաւ որ՝ շատ հայրապետներ, վդ̃պտներ արքայութ̃ մէջ մէկ տեղ նստեր են, աչվըները կըպտըտցընէր կըփնտըռէր որ մէջերնին ոսկեբերանը գտնայ, մէյ մըն ալ ձայն մը լսեց հրեշտակէն. թէ որ ՚որն յոհաննէս կըփնտըռես ըսաւ ապաշխարութ̃ վդ̃պը, անիկայ մէկը չիկըրնար տեսնալ. անիկայ հոն է՝ ուր ա̃յ աթոռն է.

Կանք որ ոսկեբերանին մարմինը փոքրն թէոդոս որ արկադեայ կայսեր տղան է՝

կոմանայէն ստանպօլ թերթէն տըրված յամին
438 . անչափ բազմուէն ժողովրդեան առ-
ջեւը ելավ, որ խուքխուտարէն ինչվան սե-
րայ պուռնին՝ ծովը ցամաք էր դարձած
նաւակներու շատվորութէն ։ Երբոր քա-
ղաքը բերին, Թէոդոս գլուխը տապանա-
կին վը՞ր դնելով ուր էր նոյն մարմինը,
շատ աղաչանք ըրավ Թողութ՞ի տալ իր
ծնողացը մեղքին՝ որ իրեն դէմ ըրէր է-
ին ։ Հիմա իր մարմինը Փրէնկիստան
տարված է, երկու մասը որով կըգրէր՝
վէնէտիկ է . ուր անանկ ամբողջ անապա-
կան պահված կըտեսնանք, որ գիտես թէ
ողջ է, գիր կըգրէ ։

Այս հրաշքները թէ քանի՛ շատ են,
աղէկ գիտեն ստանպօլցիք, որ միշտ կը-
տեսնան, միշտ բարեխօս է, քաղքինալ
պաշտպան ըն է ։

---

ՍՐԲՈՒՀԻՆ ՎԱՐՎԱՐԷ

Այս փառաւոր կոյսը Հեղիոպօլիս քաղ-
քէն էր, որ պամփիղագոնիա գաւառին
մէջն էր . մէկ հատիկ դուստր աղնուա-
կան ու հարուստ մարդու՝ որուն անունն
էր դիոսկորոս . ինքը կռապաշտ, բայց իր
զաւակը վառվառէ ծածուկ քրիստո-
նեայ, խելացի աղջիկ, գեղեցիկ երե-
սով ։ Որուն հայրը խիստ ըլլալով՝ բարձր

աշտարակի մը մէջ նստեցուցեր էր, որ մարդ մը չիտեսնայ ինչվան որ կարգըվելու տարիքը գայ․ պատճառն որ՝ իրեն աղւորուէ ձայնը ամմէն տեղ դուրս ելած ըլլալով, շատ մենծեր կուզէին իրենց հարս առնել․ բայց կոյսը իր հաւատքին հետ քսի սէրը վառած ունենալով իր սրտին մէջը, քսի կըցանկար հարս ըլլալ, պարկեշտ վարքով իր հաւատքը ու կուսութիը պահել։

Երբոր մաքսիմիանոս կայսրը հալածում հանեց ամմէն տեղ դատաւորներ խրկելով որ քրիստոնեայները տանջեն, ջնջեն, աս քաղաքը եկավ մարկիանոս դատաւորը խիստ չար մարդ․ որուն գործակից եղավ դիոսկորոս վառվառեայ հայրը՝ խիստ չար կռապաշտ։ Անիկայ օր մը աշտարակը եկավ իր աղջիկը տեսնալու, ըսավ իրեն, դուստր իմ, քեզի համար հարսնիքի պատրաստուի կըտեսնամ․ մէկ մենծի մը քեզ հարս պիտոր տամ․ դուն ինչ կըմտածես, ըսէ համարձակ։ Կոյսը լսածին պէս՝ չփոթեցաւ, հառաչելով ըսավ․ իս մի զրկէր հայր իմ աս առանձնութէ։ Հայրը զարմանալով մը դուրս ելավ, գնաց բաղնիքին շէնքը տեսնալու, որ շինել կուտար մօտիկ ան աշտարակին․ բանվորներուն ապսպրեց որ արտորնօք բանին, ինքը ելաւ հեռու տեղ մը գնաց։ Օր մը վառվառէն աշտարակէն վար իջնալով գնաց բաղնիքին շէնքը տեսնա-

լու. տեսաւ որ երկու պատուհան բացե-
րէին մէկ դիէն, հրամմեց որ մէկ երրորդ
պատուհան մըն ալ բանան. ան աւազանին
(խուռնային) վրայ որ արևելք կը նայ-
էր՝ իրեն ձեռքովը խաչի նշան ըրաւ.
ետքը մտաւ իր հօրը սէրայը՝ կուռքե-
րուն երեսին թքաւ. ասոնց նման պիտոր
ըլլան բոլոր շինողներն ալ, պաշտողներն ալ:
Ատեն անցաւ հայրը դրսէն եկաւ. երբոր
տեսաւ որ իր աղջիկը իրեք շինել տը-
վերեր պատուհանները՝ հարցուց իրեն
պատճառը. վառվառէն պինեց, իրաւէ,
ես հրամմեցի շինել. պատճառը աս է որ՝
ամմէն մարդ որ աշխարհ կուգայ՝ իրեք
լուսով կըլուսաւորուի. իսկ երկուքը կա-
տարեալ երրորդութիւնը մէջ չի բերեր. անոր
համար իրեք պատուհան շինել տըւի յա-
նուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ:
Պ՜ինեց հայրը. խենթեցա՞ր որդեակ, ինչ
եղար. չեմ հասկընար ինչ կըխօսիս. յայտ-
նի զրուցէ որ հասկընամ: Ան ատենը
վառվառէն յայտնեց իրեն քրիստոնեայ
ըլլալը. խաչին նշանն ալ որ աւազանին
վրան ըրերեր զօրութիւնն ալ՝ իրեն ցըցուց:
Երբոր ասոնք լսեց հայրը՝ խենթի պէս
կատղեցաւ, թուրը քաշեց վրան վազեց
որ սպաննէ, բայց վառվառէն ալ աղաղա-
կելով՝ բաղնիքին դիմացի լեռը երկու
բացվելով՝ անփնաս լեռան մէկալ դին ան-
ցաւ: Հայրը հրաշքին զօրութիւնը չի հասկը-
նալով՝ սովորական շարժ մը սեպելով՝ լե-

ռանս մը ելամ. հոն երկու հովիւ տեսնալով հարցուց իր աղջկանը համար. հովուին մէկը ձեռքովը ցըցուց ուր տեղ որ էր. հայրը գնաց գտաւ, զարնելով՝ մազերէն բռնելով՝ քաշկռտելով տունը բերաւ. մութ խուցի մը մէջ խօթելով՝ դուռը գոցեց, անօթի անանկ թողուց. ետքը գնաց մարկիանոս դատաւորին հակըցուց. քանի մը օրէն ան խուցէն հանելով՝ դատաւորին առջին բերաւ. երդմընցընելով որ անողորմ տանջանքով ըսպաննէ ։

Դատաւորը տեսնալով վառվռեայ գեղեցկութիւնը ու պարկեշտութիւնը՝ ըսաւ. ո՛վ ազնուական դուստր իմ, դուն իմաստուն խելացի աղջիկ մը կերեւնաս. շատ խօսիլ քեզի պէտքը չէ. կըհարցընեմ որը կուզես, Թգ̃րին կամքը ընել՝ կուռքերուն զոհել՝ անանկով աշխրհիս փառքը վայելել կուզես, թէ չարաչար տանջանքով մահապարտի պէս մեռնիլ, գեղեցկութիդ մաշել. ես քեզի ամօթ կըսեպեմ որ կենդանի ա̃ծնէրը թողերես, մէկ գալիլիացիի մը ետեւէ կերթաս, որ հրէայնէրը բռնեցին սպաննեցին. ան քո̃ն որ զինքը չիկըրցաւ խալսցընել, քեզ ինչպէս պիտոր ապրեցընէ ։

Դինե̃ց քո̃ի աղախինը. ես պատրաստ եմ ինքիր զինքս պատարագ մատուցանել փրկչին մերոյ քո̃ի, որ երկինք և երկիր ըրաւ. մարդ եղաւ, իր կամքովը մեռաւ,

ող զի խորտակէ մահուան իշխանին զօրութիւն իրեն զօրքովը, որ դուք ազատութ̃ ա̃ծ կըդաւանիք. իսկ ան որ իրեն յարութ̃ըր յաւիտենական կեանք մեզի շնորհեց՝ դուք անիկայ կըհայհոյէք. եւ ան կեանքին ան աղբայութ̃է կըցանկամ որ զանցնիր. դուք կուռքերը պաշտելով որ մարդու ձեռագործ են՝ կորսուիք պիտոր դժոխքին մէջը երէք.

Այս խօսքերուն վրայ դատաւորը բարկանալով՝ հրամմեց կապել, անխնայ ծեծել, ետքը մազեղէն կտաւով շփել իրեն խոցերը, ասով իրեն մարմինը վերէնիվար արիւնլըվայ եղաւ. ետքը հրամմեց բանտը ինջեցընել, ոտվըները թօմրուխը զարնել. Այն գիշերը Ք̃ս պայծառ լուսով իրեն երեւնալով՝ սիրտ տըվաւ. մի վախնար ով պարախին իմ ըսաւ դատաւորին խօսքերէն. քուկին վկայութ̃իդ ուրախութ̃ի է հրեշտակաց ու մարդկան. եսալ քեզի հետ եմ փրկելու ամմէն տանջանքէն. աս ըսելով՝ իրեն խոցերնալ ողջընցընելով՝ երկինքը վերացաւ. վառվառէնալ սիրտ առնելով խիստ ուրախ մնաց.

Մէկ ա̃ծպաշտ կնիկ մը կարյուղիա անունով. ասիկայ տեսնալով վառվառեայ քաշածները՝ ու ետքը անանկ բոլորովին ողջըննալը՝ փառաւորել սկսաւ զա̃ծ. ինքնալ ետեւէ ընկաւ որ՝ անոր հետ մէկ տեղ նահատակվի. անոր համար վաղուան օրը երբոր դատաւորը վառվառէնաջերբե-

բել տրված՝ աս յուղիանալ մէկ տեղ ե-
կալ. Երբոր տեսավ դատաւորը վառ-
վառուէն բոլորովին ողջրնցած՝ ինքնալ ու-
րախ զուարթ աղջին կեցած՝ տեսար մի
բաւ մեր ամձնէրը ինչպես քու վրադ հոգ
ունին. ինչպես քեզ շուտ մը բժշկեցին ․
Աղին տրված կոյսը, ով դատաւոր քուկին
կուռքերդ կոյր են ու համր. մարդու-
ցաւ չեն տեսնար, չեն իմանար. մէկիմը-
նալ չեն կրնար դեղ ընել. թէ որ դուն
Ճշմարտուն հետեւէիր՝ ես քեզի ցըցընէի
ով է իս ողջրնցընողը. ես քու ունիմ ինծի
Ճշմարիտ բժիշկ որ է Ած, Տր և փրկիչ
աշխարհի. դուն անիկայ չես կրնար տես-
նալ, ինչու որ՝ աչվըներդ խաւարած են ․
Աս խօսքիս վր դատաւորը անանկ կատ-
ղեցաւ որ՝ հրամմեց որուհին կախել,
կուշտերը երկըթով քերթել, ներքեւը
կրակ դնել, գլուխնալ ղուրշինէ գնտակ-
ներով ծեծել: Երբոր աս տեսաւ յուղիա՝
ողորմուկ ձանով կուլար. դատաւորը հաս-
կընալով որ՝ ադ կնիկնալ քրիստոնեայ է՝
անոր համար կուլայ վառուէին վրայ,
աւելի սկսաւ տանջել. փորուն տակնալ
հրամմեց կրակ վառել. վառուէն ա-
նանկ տանջանքի մէջ աղօթք կընէր որ՝
Ած իրեն օգնական ըլլայ. չըլլայ թէ
տանջանքէն վախնայ. այլ գինքը զօրացը-
նէ որ՝ համարձակ քարոզէ Ճշմարիտ հա-
ւատքը ․

Տեսնալով դատաւորը որ՝ երանելի կոյսը

աս տանջանքինալ կըդիմանայ, հրամմեց ծիծերը կտրելու. երբոր դահիճները կըկտրէին՝ կոյսը երկինքը նայելով աղաչելով կըսէր ։ ‖ Տէր Յս, մի դարձուցաներ զերեսս քո յինէն. զհոգիդ քո սբ մի հաներ յինէն. տուր ինձ ցնծութիւն փրկութեան, և հոգւովդ իշխանաւ քո հաստատեա զիս ։ ‖ Աս զուրցելնին մէկ ուժ մը կիմանար հոգւոյն սրբոյ շնորհքովը, կտրճութեամբ կըտանէր անտանելի ցաւը ։

Աս տանջանքը տըվլին նաև յուլիայի ։ Երբոր չիկըցաւ դատաւորը երկուքին միտքնալ դարձընել՝ զատել տըվավ մէկ մէկէ. յուլիան հրամմեց բանտը դնել. իսկ վասլաւէն քաղքին մէջը դուրսը մերկ ժուռ ածցընել. բայց կոյսը ջերմեռանդ աղօթք ընելով խնդրեց այ զինքը ծածկել. ան ատենը քրս երևցաւ իրեն փառօք, հրեշտակներնալ լուսեղէն լաթէրով անիկայ ծածկեցին ։ Սանկ քալցընելով բերին ինչվան գելասիս գեղը. ուր դատաւորը եկած ըլլալով նորէն կըհարցընէր. տեսաւ որ միտքը չփոխեր, հրամմեց սրով գլուխը կտրել, անոր հետ մէկ տեղ նաև յուլիան ։ Դիոսկորոս վառվառեայ հայրը՝ որ հօն նստած խորհըրդակից էր եղած դատաւորին, ուզեց որ ինքը ըլլայ իր աղջըկանը դահիճ, անոր համար ինքը հանեց լեռը զինուորներով ։ Հոն սրբուհի կոյսը յօժարութեամբ երթալով աղօթք կընէր, կըխնդրէր որ ած իրեն զօրութիւն տայ նահատակվելու. իր նշխարք-

նէրուն շնորհք տայ . ա՛լ որ հաւատքով իրենց յիշատակը կատարեն՝ խնդիրքներին կա-տարէ . ամմէննեղուէ փրկէ , մանաւանդ ծաղկի հիւանդութենէ , տարաժամ մա-հուանէ . մեղքերնունալ թողութիւն տայ ։ Զայն մը եկավ երկնքէն . Եկօ ա՛լ վկայդ , ա՛լ Ճգնազգեացնահատակ . Եկօ՛, հանգ-չէ իմին արքայութեան մէջ դասնալ , յուլիա կոյսնալ մէկ տեղ ։

Այսկէց ետև էր որ՝ ցաթկեց իր ան-գութ հայրը՝ թուրը ձեռքը առաւ , իր ձեռքովը իր զաւկին գլուխը կտրեց . մէկ զինուորմընալ յուլիային գլուխը կտրեց յամին իբր 300 . դեկտեմ . 4 . բայց երբ-որ ժողովուրդը լեռնէն կինջնար մէկ կրակ մը ընկավ , երեց դատաւորնալ դի-ոսկորոսնալ , որ էր վառվառեալ հայրը ։ Այղէնտխանոս մէյմը աս սբերուն նըշ-խարքները առաւ , խիստ պատուով թա-ղեց դելասիս գեղին մէջը ։ Այս վաւուեալ գերեզմանը , նաև հայրենի տունը մեծ ուխտատեղի եղաւ . ուր սբյն ձեռք գործ-ած տեղը աւազանին մը կերևնային , և շատ հրաշքներ կըլլային ։

Նոր համար սբն յոհան դամասկացին կըսէ , թէ սբուհւոյն վաւուեալ նըշ-խարքներէն՝ իրրև մէկ աղբիւրէ մը բժըշ-կուէ կըբխան . ա՛լ որ վրան մէկ խոց մը մէկ ուռէցք մը ունենայ՝ հոն երթալով կըբժշկըվի . նաև հեռու տեղ եղողները թէ որ հաւատքով աղօթք ընեն աս սբուհ-

ւոյս՝ իրեն տօնը կատարեն , ժանտախ-
տէ ալ կըր ժշկըվին , ամէն փորձանքներէ
կըխալըսին . ամէն ձախորդութե մէջ
դեղ և օգնութի կըդտնան . սատանային
փորձութիներէ կաղատին ։ Շատ հրաշք-
ներ ալ կըպատմըվին երբոր իրեն նշխարք-
ները աս դիս ան դին սփռըվեցան , եկե-
ղեցիներ շինվեցան . յատկապես բարե-
խօս բռնըվեցաւ ծաղկի հիւանդուե հա-
մարնաև խղամուխի . պաշտպան կրակէ ,
կայծակէ ու ժանտախտէ պահվելու .
մանաւանդ յանկարծակի մահուանէ ։
Մէկը ըսելով թէ ով որ ջերմեռանդ կըէ
լայ՚րբուհւոյն վառվառեայ՝ առանց խօս-
տովանութե և հաղորդութե չիմեռնիր,
ամէն օր յատուկ աղօթք կընէր աս բա-
նիս համար . ատեն անցնելէն ետև ե-
ղավ որ՝ ասոր տունը կրակ ընկավ յամին
1448 . ինքնալ երվիլ սկսաւ . ան ատենը
ամէն սրտովը աղօթք ըրավ՚րբուհւոյն
վառվառեայ , որ չիթողու զինքը մեռնիլ
հոն առանց՚րբ խորհուրդները առնելու .
մէ յմընալ տեսավ որ՚րբուհին վառվառէ
հան երևնալով՝ կրակը մէկդի ըրավ , զին-
քը խալըցուց կիսամեռ , ըսելով իրեն ,
ինչվան առտու ատեն առի քեզի համար
որ՚րբ խորհուրդները առնես ։ Նս մար-
դուն թէպէտ ամէն դին սևցած մրկած
էին կրակէն , բայց աչվըները ու լեզուն
ողջ մնացերէին . անանկով կըցաւ կրկին
ըէ հանրական խոստովանուի ընել՚րբ խոր-

հուրդները փափագով կատարել. առտու եղածին պէս անանկ հոգին աւանդեց Տրունւոյն ըսածին պէս։ Ուրիշ երկու հոգիալ վառվառեայ հրաշքովը մեռնելէն խալըսեցան ոչ զի որ խորհուրդները առնելու արժանի ըլլան, ինչպէս որ հաւատքով խնդրերէին։

## ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆՆԷՍ

չամաւոր աղքատասիրեալ։

Մօր հայրը եւտրոպիոս կըսվէր, որ ստամպօլ արկադէոս կայսեր քով ստրատելատ էր, այսինքն սէրասքէր փաշայ. իր մայրը կըսվէր Թէոդորա. երկուքնալ բարեպաշտ երկիւղած յայ։ Երեք զաւակ ունէին, երկուքը Թրին քով զինուորական կարգի մէջ գրված էին, սինկլիտոս եղերէին. իսկ պզտիկը որ էր Յոհաննէսը՝ քովերնին պահելով կարդալու տըվերէին. առաջ ճծաշունչը սորվելու, ետքը Հարտասանուէի ու փիլիսոփայուէի. աղէկ խրատներով բարի օրինակով խիստ կըհոգային որ բարի զաւակ ըլլայ։ Ինչպէս որ իրաւ յոհաննէսնալ խելացի ու բարի ըլլալով՝ մէկ ընտիր զաւակ մը եղաւ. անչափ ծնողաց սէրը շահեցաւ զինքը, չիհպարտացաւ, շփացած չիմեծցաւ, այլ որչափ որ ծնօղքը զինքը աւելի

կըսխրէին , անչափաւ ինքը բոլոր ըլլալու-
նէր ձգերէր . անանկով եղաւ ընթերցա-
նէր ու ջերմեռանդ աղօթաւոր . գիշեր
ցորեկ չէր դադրէր աղօթելէն ։

Երբոր տասնութը տարւան էր՝ օր մը
դպրատունը երթալնին՝ Ջամիան տե-
սաւ մէկ կրօնաւոր մը անհանգստից վան-
քէն . ասիկայ իրեն մէկ հրեշտակի մը
պէս երեւցաւ . հոգւով սրտով լեցուելով
գնաց քովը հարցուց ո՛վ և ուսկից ըլլա-
լը . ան ալ պատմեց իրենց վանքին կար-
գը . ինչպէս դաս դաս բաժնըւած գիշեր
ցորեկ սրբութեն առջին փոխնիփոխը ա-
ղօթքի հետ կըլլային անդադար , անոր
համար անհանգստից վանք կըսուէին .
Հիմա ես ուխտ եմ ըրեր ըսաւ, Եգիպ-
տոս երթամ . ետքը դառնալու ըլլամնէ՝
նորէն ան վանքը կերթամ ։

Այս խօսքերուն վրայ Յոհաննէսին սիրտը
լեցուելով՝ երդուընցուց ան կրօնաւորը որ
երբոր Եմէն դառնալու ըլլայ՝ զինքն ալ
մէկ տեղ ան վանքը տանի ։ Մենք իրեք
եղբայրք ենք ըսաւ, բայց հայրս մայրս իս
ամմէնէն աւելի կըսիրեն . հիմա եղբայր-
ներուս պէս խոկուզեն թ՚ իրին քով սինկ-
լիտոս ընել , ետքնալ աշխարհ խօթել
կարգել . բայց ես միշտ ժամը երթալով,
ծաշա՞ն լը լսելով՝ հասկըցերեմ, որ աշ-
խարհիս ամմէն բանը ոչինչ է , ունայնութի
է . միայն աշխարհս քամահրելն ու ձե-
րի նման կենալն է՝ որ յաւիտենական

կեանք կըվաստըկցընէ ։ Կրօնաւորը ա-
սոր զուրցըլածին վրայ զարմանալով՝ աղէկ
ճանչցերես ճշմարտութիւնը, որդեակ ըսաւ.
աս մտքին վրայ ամուր կեցի՛ր. ես խօսք
կուտամ՝ որ դառնալէս ետև քեզ գամ՝
առնեմ ։

Յովհաննէսին սիրտը հանգչելով՝ գնաց
իր ծնօղքներէն աւետարան մը խնդրեց,
որ ազնիւ գիրերով, ոսկի զարդերով՝ գը-
րել տըվին . կազմնալ մարգրտէ բանվածք-
ներով՝ ազնիւ քարերով կապել տըվին .
մէջնալ իրենց ու յովհաննէսին պատկերը
քաշել տըվին . յովհաննէս աս աւետա-
րանը միշտ քովը կըպահէր, անդադար
կըկարդար, կարդալով կըլուսաւորվէր,
իրեն զուրցածները գործքով ընել կըջա-
նար . աչքնալ միշտ ճամփան էր, կըսպա-
սէր որ երբ կուգայ ան կրօնաւորը ։
Երբոր կրօնաւորը դարձաւ ու գտաւ յո-
հաննէսը, աշխարհ իրեն եղաւ . բայց
գիտնալով որ՝ ծնօղքը լսելու ըլլան՝
թող պիտոր չտան, աղաչեց կրօնաւորին
որ մարդ մը չիմացած գաղտուկ ճամփայ
ելլանք ըսաւ . չըլլայ որ մէկը իմանալով
երթայ ծնօղացս իմացընէ . անանկով
երկուքը մէկէն ծովեզրը եկան նաւ մը
բռնելու որ անհանգստից վանքը տանի
զիրենք . բայց նաւը որովհետև բեռ առ-
նելու նաւ էր՝ սպասէր պիտոր ինչվան որ
բեռովլեցընէ, հարցուց յովհաննէսնաւ-
լունը՝ հասկըցաւ որ հարիւր ղրուշ կուզէ,

գնաց իր ծնօղքէն մէկ պատճառով մը հարիւր ղուշը առաւ. իբր թէ իր աշակերտակիցներուն հարկինք մը պիտոր ըսէ, ինչպէս որ մէկալներնիս միշտ ըրած էին իրեն ։ Հայրը ըստակը տըվավ, բայց հետոյալ ծառայներ դրավ, չըլլայ որ տըղայ ըլլալով պարապ տեղը խարձէ ։ Յոհաննէս ճամբան մէյմէկ պատճառ գըտնալով՝ ծառայները մէկիկ մէկիկ հեռըցուց իրմէ. անանկով եկավ նաւլունը տըվավ. նաւը իսկոյն ճամփայ ելավ. յաջող հովավ գտնալով շուտով մը հասան ։

Կրօնաւորը գնաց մեծաւորին քով տեղնիտեղը պատմեց ինչ որ հանդիպեցաւ. մեծաւորը ասոր ջերմեռանդութենը վր̃ ուրախացաւ, բայց վրանհայելով տեսավ որ մէկ փափուկ մեծցած տղայ մըն է, դուն դեռ տղայ ես ըսավ որդեակ, իսկ վանքին ճգնութիւնը խիստ. ով որ հոս կուգէ կրօնաւորիլ, քառասուն օր վանքը պիտոր կենայ մեր ճգնութիւնը իմանալու համար, ետքը կըհագնի մեր հագուստը, որ մազէ հիւսված կապայմըն է. մէջքը կաշիէ գօտի, ոտքը չարըխ ։ Կաղաչեմ ըսավ յոհաննէս, հիմա ինծի հագցըներ, հայր՛մը, աս հագուստը՝ որ հրեշտակի ձև ունի. մազերսալ կտրես ։

Մեծաւորը տեսնալով ասոր սէրը յօժարութիւնը, ժողվեց ամմէն կրօնաւորները, մազերը կտրեց, ու ան հաստ հագուստը հագուց իրեն. վրան օրհնութի

կարդալով՝ յանձնեց այ̃ շնորհացը։ Յո-
հաննէս ան կարգին մէջ մտածին պէս՝
եղելոց Ճգնութե̃ տըւաւ զինքը. գիշերնե-
րուս հսկում ընելով, լալով, սաղմոս ըսե-
լով կանցընէր. գետնի վր̃ կըպառկէր.
անօթի կըկենար. հնազանդութե̃ եղբայր-
սիրութե̃ գործքերնալ անպակաս կընէր
ամէն սիրով. մտքովնալ միշտ ա̃ծային
բաները մտածելու հետ կըլլար. անան-
կով աշխըրքիս ամէն մէնծուի̃ը պա-
տիւը քամահրելով ոչինչ կըսեպէր։ Մե-
ծաւորը վրան նայելով կըզարմանար. կը-
րօնաւորներնալ օրինակ առնելով իրմէ
բարի նախանձ կըշարժէին։
Քանի անցուց հոն վեց տարի. վանքին
ամէն կերպը կանոնը սորվեցաւ, թէ
ինչպէս պէտք է այ̃ ծառայել Ճգնութ̃բ.
բայց մեծաւորը օր մը իրեն խրատ տը-
ւաւ քիչցընել իր Ճգնուի̃ը. չափէն աւե-
լի ըրած բանը տկարուի̃ կըբերէ որդեակ
ըսաւ. ամէն օրվան աղօթքնալ կըխա-
փանէ անկար ըլլալով ընելու. շատ լա-
նալ աչքիդ լոյսը կըխաւարցընէ։ Բայց
երանելին անանկ վառուած էր յա̃ին սի-
րովը՝ որ ետեւէ ետեւ կաւելցընէր իր Ճըգ-
նուի̃ը, խիստ պաք բռնելով. միայն շա-
բաթ օրն ու կիրակի ուտելով. անալ
քիչ մը աղ ու հաց, քիչմընալ ջուր. ի-
րեն յատուկ կերակուրը եղած էր նը
մարմինն ու արիւն յոփ։
Սատանան ասոր վր̃ խիստ նախանձելով

սկսաւ պզտիկին փորձուն ձգելով, մանա-
ւանդ ծնօղքը տեսնալու մէկ գութ մը
մէկ կարօտուն մը ձգեց սիրտը՝ որ գիշեր
ցորեկ կըհալէր կըմաշէր. ինչվան անանկ
եղաւ որ անշունչ պատկեր մը դարձա-
ւ երանելին։ Մեծաւորը նորէն խրատ
տալ սկսաւ, որդեակ ըսավ՝ ա̃ծ անչափ
ճգնութի̃ կըպահանջէ մարդէն, որչափ որ
կրնայ տանիլ։ Յոհաննէս պ̃ն տըվավ,
հայր՝ որ ճգնութ̃ինները չէն որ իս կըմա-
շէն, այլ իմ մեղքերս որ խիստ շատ են.
սատանան իմ սիրտս անանկ կարօտութի̃
կըբերէ ծնօղքս ու ընտանիքս տեսնալու,
որ չեմ կրնար դիմանալ. բայց կըյուսամ
ա̃ծ որ ձեր աղօթքովը հանալ երթալուս
իր գլուխը կըճզմեմ։ Ըսավ իրեն մեծա-
ւորը, ես քեզի չէի ըսէր որդեակ, որ
մեր ճգնութի̃ը ծանր է, չես կրնար դուն
անիկայ քաշել, հիմա ինչ կուզես որ ը-
նենք։ Յոհաննէս ըսավ, աղօթք ըրէք
ձեր միաբաններովդ, իս խրկեցէք. երբ-
որ կրօնաւորները լսեցին յոհաննէսին
երթալը՝ ամմէնքնալ լալ սկսան, անանկ
լալով աղօթքով ճամփայ դրին։

Յոհաննէս քիչ մը առաջ երթալով՝ ետ
դարձաւ, վանքին վրայ նայելով սիրտը
ելավ, լալ սկսաւ իր բաժնըվելուն վրայ.
ծունկ չոքելով ըսավ. ողջոյն ձեզ ո՛վ ժո-
ղով կրօնաւորաց. բնակարան հրեշտա-
կաց, որ իս աղէկ կըթեցիք. յուսամ որ
ձեր աղօթքովը իմ հօրս տանը մէջնալ

կըկոխեմ սատանային գլուխը․ սաանկ լա-
լով սաղմոսելով երթալնին՝ աղքատ մը
տեսաւ քրքրտած լաթերով․ յոհաննէս
իր լաթերը անոր հագուց․ անոր պա-
տըռտած լաթերը ինքը հագաւ ։ Երբոր
իր քաղաքը իր տունը հասաւ՝ լալով ա-
ղաչեց ո̃վ չիթողուլ զինքը․ շնորհք տալ
որ կատարեալ յաղթէ սատանային․ իր
ողջունէ ատեննալ զինքը յայտնել չիտայ ։
Ասանկ աղօթք ընելով՝ պառկեցաւ իր
տանը դրանը առջին ։

Երբոր լուսցաւ առտու եղաւ , դուռը
բացվեցաւ , դռնապանը ասանկ աղքատ
մը տեսնալով պառկած , քշպեց ըսելով․
ել գնա ասկից․ տէրս քեզ հոս չիտես-
նայ , խիստ պիտոր սրդողի․ յոհաննէս
ըսաւ․ մէյմը վեր ո̃վ նայէ , ինծի ողոր-
մէ , ես մէկ օտար մարդմընեմ տնանկ
աղքատ․ թող տուր որ աս ճամփուն մէկ
ծայրը նստիմ․ երբոր քու տէրդ ելլալու
մտնալու ըլլայ՝ առաջ եկօ իմացու որ
ասկից հեռընամ․ ես մէկիմը ծանրուի՝
քեզիալ ձանձրութի չեմ ըլլար․ դռնալ
ա̃ծմէ վարձքդ կառնես ։ Դռնապանը
ասոր խօսքին վրան խղճալով թող տը-
վաւ ։

Երբոր ծնողքը դռնէն դուրս ելան՝ ե-
րանելույն աչվըները լեցվեցան․ իր կարօ-
տը առնելով շատ լացաւ․ լալով նորէն
աղօթք ըրաւ որ ա̃ծ զինքը չիթողու․ զօ-
րուհի տայ ինչվան իր մահը համբե-

ըելու ։ Քանի տարի մը համբերելէն ետեւ՝ Եւտրոպիոս տրատելատը իր հայրը տեսնալով՝ կըզարմանայ ըսավ ․ աս աղքատը ինչպէս կըհամբերէ ձմռվան ցըրտուն, մեր տուննալ չիմոնար ամենևին ․ հրամմեց իր ծառայներուն, մէկ խուց մը շինել տըվավ ․ թող հոն նստի ըսավ, կարող է ա̃ծ ասոր համար մեղի ողորմիլ ․ իր սեղանէնալ կերակուրներ կըխրկեր ․ բայց Յոհաննէս ան ամէն կերակուրը աղքատներուն կըբաժնէր ծածուկ ․ ինքը չորցած հաց ջուրը թրջելով կուտէր իրիկուընէ իրիկուն ։

Որմընալ մայրը դուրս ելավ ․ ասիկայ տեսածին պէս՝ մէկ վայրենի շնչաւոր մը երևցաւ իրեն ․ այնչափ փոխված էր երեսը անօթութէն ու ձգնութէն՝ որ զարմանք եկավ վրան ․ առէք ըսավ ծառայներուն, քաշեցէք տարէք ուրիկայ ․ աչքս չիտեսնայ ․ թէ որ ասիկայ հոս կենայ՝ ես չեմկըրնար անցնիլ ։ Տուտ մը քաշեցին տարին, հեռու տեղ մը ձգեցին ․ բայց անիկայ նորէն կըդառնար հոն կուգար ․ դռնապանները կըսէին իրեն ․ մարդ գնա̃ ասկից հեռըցիր, մեր խաթունը քեզ չիկըրնար աչքովը տեսնալ ․ բայց Յոհաննէս շատ աղաչեց իրենց որ ողորմին, առջինին պէս պզտիկ խուց մը շինեն ․ ա̃ծ ալ ձեզ կօրհնէ ըսավ ․ անոր համար իրենք ալ անանկ ըրին ։

Քանի Յոհաննէս իրեք տարի ձնշելով

իր մարմինը սաստիկ ճգնութեամբ, դարձաւ
եղաւ մէկ անշունչ պատկեր մը. իրեք
տարիէն ետև տեսնալով քի իր ծառային
մեծ ճգնութիւնը՝ հրեշտակ խրկեց, որ ըսավ
իրեն տեսիլքի մէջ. Բարի հաւատարիմ
ծառայ յոհաննէս, ողջոյն քեզի. Աստուած որ
սիրեցիր բոլոր սրտովդ, իրեք օրէն պիտոր
ըմննայ քուկին քաշածներդ. դաս վարձ_
քըդ պիտոր առնես, ճգնաւորներուն
դասը պիտոր նստիս: Ան ատենը յոհան_
նէս ձեռվըները վեր վերցընելով գոհութի
տըլավ Այ. աղաչեց որ իր ծնօղացնալ
ողորմի, անոնց մեղքին թողութի տայ:
Աղօթքէն ետև իր հօրը վեքիլխարճը
կանչեց աղըսպըեց խաթունին ըսելու.
ան խեղճ աղքատն որ քու դռնէդ կըհա_
լածէիր, մէկ դի քաշել կըհրամմէիր, հի_
մա կաղաչէ որ՝ ինծմէն չիդանիս, հապա
արժանի սեպես քովս գալու. հարկաւոր
բան մը ունիմ՝ քեզի զուրցելու:
Երբոր այս խօսքէրս լսեց մայրը ըսավ,
ինչ պիտոր ըլլայ ան աղքատին ըսելիքը
ինծի. ես չեմ կրնար դիմմանալ անոր դար_
շահոտութեր. չեմ կրնար տեսնալ անոր
աղտոտութիը, գնաց իր աղային պատմեց.
աղան զուրցեց. գնա մի գանիր աղքատ_
ներէն. Աստուած աղքատները ընտրերէ իրեն
համար: Աս խօսքս լսելով չուզեց քովը
երթալ. ան ատենը հասկընալով յոհան_
նէս որ՝ չուզեր մայրը իրեն գալու, նո_
րէն ուրիշ ծառայ մը խրկեց իրեն ըսե_

լու ։ Ես իրեք օրէն պիտոր մեռնիմ· թէ որ չիգաս իս չիտեսնաս, ետքը շատ ցաւ պիտոր քաշես, շատ մեղքընալէդ դուն քեզի վայ պիտոր տաս, բայց չիկրնաս պիտոր քեզ մխիթարել· յաւիտեան սրտեդ պիտոր չելլայ ան խոցը ։

Աս խօսքերես վախճանալով մայրը՝ դնաց ինչվան ան տեղը ուր որ կըկենար յոհաննէս· դրանը քով կենալով հրամմեց իր ծառայներուն որ քովը բերեն· միշտ սրտին մէջը պտրտըցնելով ան խօսքը՝ թէ որ չիգաս՝ յաւիտեան պիտոր խոցվիս չիմխիթարվիս, ի՞նչ պիտոր ըլլայ աղ խօսքդ ըսելով կըմտմտար ։ Յոհաննէս տեսնալով իր մայրը ըսաւ· ո՜վ ամենաբարին հարիւրապատիկ քեզ հատուցում ընէ· հոսալ ան գիի աշխարքնալ, որովհետեւ աղէկ ը̃ունելուն ըրիք· իմ վրայ կատարեցիք աւետարանին խօսքը՝ թէ ի՞նչ որ կընէք մէկ պզտիկի մը՝ ինծի ըրած կըլլաք· բայց ես աղքատս մէկ օրհնութե̃ նշան մը չունիմ որ ձեզի տամ· միայն խաթուն երդվընցիր դուն ինծի որ՝ ի՞նչ որ քեզի՝ պիտոր ըսեմ ընես ։ Նաւ երդվընցաւ, ի՞նչ որ ըսես՝ ամմէննալ ընեմ այ համար, ու մեր զաւկին համար, որ գընաց՝ բայց ի՞նչ եղավ չիգիտենք· աս յիշելնինի կուլար կըհեկեկար ։ Նաւ յոհաննէս· խաթուն մտիկ դիր ինծի ինչ որ ես կըսեմ քեզի· աս մազեղէն կապայովս որ հագերեմ, իս թաղես· ուրիշ ազնիւ

կապայ մը լինծի չի հագցըներ . ուրիշ տե-
ղալ չի թաղեր , հապա աս պզտիկ խուցին
մէջը՝ ուր որ կընստէի ։

Աս խօսքերուն մէջ շատ զարմանք կու-
գար խաթունին . ինչ պիտոր ըլլայ կը-
սէր որ՝ աս աղքատը իբր տընէն մէկը ա-
նանկ կըխօրաթէ հետս չէթէ օտարի
պէս . աս մտմտալնինի՝ յոհաննէս իրեն
աւետարանը հանեց ձեռքը տըվավ ըսե-
լով , աս ըլլայ քեզի ու քու տիրոջդ բա-
ժին հօս՝ ու ան գիրի աշխարհը . մայրը
ձեռքը առնելով աւետարանը՝ աս գիս ան
գին կըպտըտցըներ , զարմանալով կըսէր ,
ինչպէս կըըմանի ան աւետարանին որ մեր
զաւկին համար չինել տըվինք . աս ըսե-
լով՝ ներս վազեց իր ընկերոջը ցըցուց .
անիալ տեսածին պէս ըսաւ . ստոյգ մեր
զաւկին աւետարանն է . երթանք հար-
ցընենք ուսկից ձեռքը ընկած է , անան-
կէնէ գիտէ ուր ըլլալը . ուրախանալէն
երկուքը մէկ տեղ վազեցին , աղքատ
կարծըվածին քովը եկան , արցունքը թա-
փելովըսին , ով ահաւոր անուանը մէջ քեզ
կերգըվընցընենք իրաւը զուրցէ . աս աւե-
տարանը ուսկից ընկաւ քու ձեռքդ ։

Ան ատենը յոհաննէսին սիրտը ճըմլտե-
լով՝ ծնողաց մէջ գութը շարժելով՝ ալ
չիկըցաւ դիմանալ . հառաչանք հանելով
ըսաւ . ասիկայ ան աւետարանն է՝ ուս-
կից որ Յոհաննէս Ճամփան սորվեցայ .
ամէն բան թողուցի , քանի խաչը շալկե-

րով իր ետեւէն գայի, ո՛չ զի արժանի ըլ-լամ իրեն. աս կրօնաւորական զգեստս հագայ իմ ու ձեր փրկութեան համար, Անչափ հոս մտիկ կընէին ծնողքը, կը-նայէին ու՛ր պիտոր լմնցընէր խօսքը. ետ-քը ըսաւ յոհաննէսը. երբոր ա̃ծ կատա-րեց իմ սրտիս խնդիրքը ինչպէս որ ես կը-տեսնաք եղքի աղքատութեան մէջ. վախ-ճանսալ հասած ըլլալով՝ հիմա յայտնեմ ձեզի ինչ ըլլալս ։ Ես եմ յոհաննէս ձեր զաւակը. աստ այն աւետարանն է որ դուք ինծի տուեր էիք ։ Այս խօսքին վը՛ր ծնողքը զարմանքէն պաղած կեցան, փնտռել սկսան այն նշանները որ ունէր իրենց զաւակը. մէյմընալ տեսածնին պէս ճանչցան. մէկէն լաց փրցընելով ձայն ձգելով ձիտը փաթթըլեցան. ողոր-մուկ խօսքերով իրենց կսկիծը պատմե-լով կուլային կողբային առտըվընէ ինչ-վան կէս օր ։

Այս բանս լսելով բոլոր ստամպօլ քաղաքը թունդ ելաւ. ամմէն ժողովուրդ հոն վազեց տեսնալու, բայց յոհաննէս ան տենը հոգեվարքութեան մէջն էր, որ պայ-ծառ երեսով՝ երկինքը նայելով՝ իրեն հետ կը խօսրաթէր. մէյմընալ Տէր Յ̃ս ընկալ հոգի իմ ըսելով՝ իր հոգին աւանդեց քսանութը տարւան ։

Ո՛վ կրնայ պատմել այն ողբն որ ծնողքն ու իրենց եղբայրները, ազգականները բոլոր քաղաքն ալ ըրին. մայրը կսկըծէն խելը-

ռածի պէս ըլլալով, մնացաւ իր շուկին
պատուէրքը· համեց մաղեղէն լաթերը,
ոսկեթել ծանր զգեստ հագուց, բայց
մէկէն ձեռվընները քաշվեցան· ան ատե-
նը հայրը յիշելով ըսաւ, մեր շուկին ու-
զածը կատարենք ինչպէս որ ինքը ըսաւ·
բայց մի բարկանար որդ ոյ։ Աս ըսելով՝
համեցին վրայէն աղնիւ զգեստները՝ ի-
րենն պատռտած հին լաթերը հագուցին·
մէկէն հոն անուշահոտութի մը բուրեց
իրեն՚որ մարմինէն· որ իրեն խուցնալ բո-
լոր ստամպօլ քաղաքնալ անուշ հոտով
լեցուց· սաստիկ լոյս ծագեց որ մար-
մնոյն վրայ· մայրնալ բժշկըվեցաւ։
Աս բաները լսելով Թիրը ու պատրիար-
քը՝ Թաղելու եկան· տեսնալով վրայի
լոյսը փառք տըվին այ, հոն իր խուցին
մէջը Թաղեցին։ Թաղելէն ետև որյն
ծնօղքը ժամ շինեցին գերեզմանին վրայ·
ուր որյն բարեխօսութիը շատ բժշկութի
ըրաւ ած· իրենց ունեցածնալ ան ժա-
մուն տալով, մնացածնալ աղքատաց բաժ-
նելով, կրօնաւոր եղան· ինչվան իրենց
մահը ան տեղը կենալով, որ նշխարքնե-
րուն ծառայելով, բարի ճգնութ վախ-
ճանեցան։ Ասանկով առաջ իրենք բարի
կրթութի տըվին յոհաննէսին, ետքը ի-
րենց զաւակնալ իրեն օրինակովը, բարի
վարքովը աւելի աղէկ կրթութի տըվավ·
բոլորովին քռի նմանիլ տըվեցուց։

Սուրբ Հայրապետին վարքը բոլոր հրաշք է. որ ծնաւ Միւռա քաղաքը Լիկիոյ մօտիկ, հօրը անունը Եպիփան էր, մօրը անունը Նոննա. որ իրենց ծերութեան ատենը ունեցան աս օրհնեալ զաւակը. երբոր օխտն օրուան եղաւ՝ տեսան որ իր օրորոցին մէջը ոտքի վրայ կեցաւ աս տղան երկու ժամի չափ. դշնի և ուրբաթ օրերը՝ մէկ անգամ միայն մօրմէն կաթ ծծել սկսաւ։ Սոնք լսելով իր քեռին Նիկողայոս անունն՝ որ Միւռայոյ եպս էր, որ ընտրեալ մարդ, փառք կուտար այ. որով հետև իրեն ցըցուցեր էր թէ ինչ երևելի մարդ պիտոր ըլլար աս տղան. երանի կըսէր ան ժողովրդեան՝ որ աստանկ հովիւ պիտոր ունենայ։ Երբոր հինգ տարուան եղաւ՝ աղէկ վարպետի մը տուին. օր մը վարպետ երթալնին մէկ խեղճ՝ կնիկ մը տեսաւ ոտվըները բանըլած. աս տղին սիրտը չդիմացաւ, վրան խաչ մը հանելով բըժշկեց։

Երբոր մեծցաւ՝ տեմնալով ծնողքը ասոր վրայէ ընորհքը՝ այ նուիրեցին. եկեղեցնայ տուին իր քեռիին խորհրդովը. ուր սրբութը հրեշտակի մը պէս մեծնալով աստիճանը տարուան քահանայ ձեռնադրըլեցաւ այն սխնի եկեղեցին որ իրեն քեռին շինել տուեր էր։ Ձեռնադրըլելէն ետև աս նորընծայ քահանան նիկո-

ղայոս՝ ալ աւելի առաքինութե՜ ետեւէ ըն-
կաւ. ծնողքը վախճանելէն ետեւ շատ
ժառանգութ՜ի ընկաւ իրեն. բայց ամ-
մէն ունեցածը աղքատներուն կըբաժնէր
գաղտուկ. մէկ մարդու մընալ բաժնեց՝
որ շատ արդիւնաւոր եղաւ։ Նիկայ հա-
րուստ մարդ մընէր՝ ետքը տնանկ աղքատ
երեղած. իրեք աղջիկ ունէր չքաւորու-
թէն չէր կրնար կարգել. աս բանս իմա-
նալով տէր Նիկողայոս, գիշերանց գնաց
ծածուկ պատուհանէն անչափ ոսկի ձը-
գեց, որչափ որ պէտք էր իր առջինեկ
աղջիկը կարգելու. առտուն մարդը տես-
նալով անչափ ոսկին իր տանը մէջ ձգած,
շատ զարմացաւ. Ա̃յ պարգեւն է ըսելով
առջինեկ աղջիկը կարգեց։ Սրբ̃ն Նիկողայ-
ոս լսելով որ՝ իր տըված ողորմութիւնը իր
մտքին համար՝ գիշերանց մէյմընալ ձգեց
այնչափ ոսկի. մարդը անով երկրորդ աղ-
ջիկնալ կարգեց. երրորդ տէր Նիկողայոս
երրորդ անգամնալ ձգեց անչափ ոսկի եր-
րորդ աղջկանը համար, մարդը իմացաւ.
արտորնօք ետեւէն վազելով հասաւ ոտքը
ինկաւ. հոգւոյնալ մարմնոյնալ դուն է-
ղար փրկիչ ըսելով շնորհակալ եղաւ. բայց
տէր աղաչեց որ մէկի մը չիզրուցէ ինչ-
վան իր մահը։

Տեղ մը նոճի (սէլվի) ծառ մը կար քառ-
սուն կանգուն երկան, իրեք կանգուն
լան. սատանայները մէջը բնակած. քովի
գեղացիները կըվախցընէին, կռապաշ-

տունի ընել կուտային . սա ծառը կտրել տըվա՛ծը . տախտակ կտրել տալո՛վ սանի ժամը տանել տըվավ ։ Եւան մը վրայ աղբիւր բղխեցուց . մէկ զարհուրելի գիւահար մը բռընացուց , որ շղթանե-

րով կապված էր ։

Տեսնալով որ ասանկ հրաշքներէն փառք կուգայ իրեն , փախչելու համար եէմ ուխտի գնաց . Նաւուն մէջը յայտնի տե-սաւ որ՝ սատանան ձեռքը թուր բռնած՝ նաւուն չորս դին պտըտելով կըվախցը-նէր . գուշակելով բավ Ճամբորդներուն որ փոթորիկ պիտոր ելլայ՝ աղօթք ընել ապսպրեց ։ Երբոր իրիկվան աղօթքը ը-րին , յանկարծ անանկ փոթորիկ մը ա-լեկոծում մը եղա՛վ որ տիրէկին գլուխը անկած խաչը վար ձգեց . Նաւը ընկղմե-լու մօտիկ եղավ . ամմէննալ լալո՛վ Սբ Նի-կողայոսին ոտքը ընկան . Սբը աղօթքի կենալով փոթորիկը դադրեցուց . բայց սատանան չի դադրեցաւ նեղութ տալէն . Երբոր մէկը վեր կելլար խաչը իր տեղը անկելու՝ ինչպէս որ ապսպրեր էր Սբը՝ վար ձգեց ան մարդը մեռաւ . բայց երբոր Սբը քովը եկավ , աղօթք ըրածին պէս՝ մար-

դը ոտքի վեր կեցաւ ։

Երբոր Նաւը Իսքէնտէրիէ հասաւ՝ նա-ւավարները սա հրաշքները պատմեցին ամմէնուն . անկից ետ որ ինչ հիվանդ որ ունէր Սբին առջին կըբերէր . Սբն ալ ամ-մէնը կըբժշկէր . մէջէրնէն մէկ կոյըմ-

նալ բժշկեց ժամուն կանթեղին եղովը օծելով ։ Քանի մը օր եգիպտոսին գիւղերը քալելէն ետեւ՝ եէմ գնաց ՚նը տեղերը տեսաւ. երբոր կըմտամտար հոն անապատը քաշվիլ՝ հրեշտակ մը իրեն երեւնալով՝ հրամմեց իր քաղաքը դառնալ, եկեղեցին չթողուլ. անոր համար նորէն նաւմտաւ. նորէն խալըցուց նաւը ալէկոծուէ. անանկով դարձաւ միւռխա իր քաղաքը, աղօթարան մը շինեց. ալըսպըեց որ բանվորներուն կերակուր տան. երբոր իրեն ըսին որ՝ մէկ հաց մը միայն ունինք, ձեռքը առաւ ան հացը, օրհնելով մանւբեց. ութսունվիրեք հոգի կերան ան հացէն, ամմէննալ կշտացան. իրեք զէմպիլալ հաց ավելցաւ՝ ինը սեղանի վրայէն ։ Երբոր միւռխա քաղաքը ժամատախտ եղավ եօքը սով (խըթլըխ,) ան ատենը ՚ըն նիկողայոս ամմէնուն կըհասնէր կըհոգար ինչ կարօտուէ որ ունենային ։ Ինկաւ ատեն որ՝ իրեն քեռին նիկողայոս եպ̃ը մեռաւ, ասիկայ նստուցին իր տեղը որ առաջ տեսիլքով յայտնըված էր իրեն սաանկ. ք̃ն ու ա̃ծածին երեւցան իրեն. մէկը աւետարան տըվավ, մէկալը շուրջառ. քիչ մը անցաւ՝ եպ̃սներուն ժողովը զինքը եպ̃ս ձեռնադրեցին միւռխա քաղքին վրայ, որ զմիւռխինալ կըսվի ։ Ին ատենը սկսաւ ՚րը իր հօտը հովուել, լուսաւոր վդ̃պութ̃ քարոզել. դիոկղետիանոսին հալածման ատենը համարձակ կը-

քարոզէր քրիստոնէութիւնը. անոր համար շատ վիշտ ու հալածանք քաշեց. բանտը մտաւ, քշվեցաւ, ինչվան որ կոստանդիանոս թագը նստելով իր տեղը դարձաւ անոր հրամանովը՝ կուապաշտութեան բանտերը վերցուց. արտեմիս կուռքին կռատունը որ կար միւռիա՝ հիմանց քակեց, ինչվան սատանայներուն ձայներ լսվեցան, որ կուլային կողբային իրենց քշվելուն վրայ: Արիոսեան ու սաբէլեան հերետիկոսութեց դէմ Ճշմարտութիւնը սորվեցուց, որ ան տեղը սկըսերէին ծաւալիլ:

Երբոր նիկիոյ ժողովը եղաւ արիոսին դէմ՝ հոն ժողվող հայրապետներէն մէկնալ աս՛ Ս. Նիկողայոսն էր, ժողովէն դառնալէն ետև արթուն կեցաւ իր ժողվին պահելու ան հերետիկոսութենէ. միանգամայն իր Ճգնութիւներնալ չէր ձգեր. աղօթքի պաքի հետ կըլլար. մէկ անգամ միայն կըճաշակէր օրը. իր ամմէն հօգը աղքատներուն վրայ էր: Տարի մը սաստիկ սով (խըթլըխ) եղաւ. աս սրբս զօրութեն ոչ մէկ նաւապետի մը երևցաւ որ՝ սիջիլիա կղզիէն ցորեն առած սպանիա կերթար. ձեռքը իրեք ոսկի դնելով, ան աս փէյս ըսավ. ցորենը բեր միւռիա քաղաքը. նաւապետը առաջ երազ կարծեց, ետքը զուռուշները ձեռքը տեսնալով՝ զարմացաւ նաւը դարձուց. երբոր միւռիա հասաւ, հոն ծախելով ցորենը շատ աւելի շահեցաւ, քաղաքնալ սովէն խալըսեցաւ:

Օր մը երբոր տ՟ր Նիկողայոս հեռու քաղաք մը գացեր էր, մարդ եկաւ իրեն հակըցուց որ՝ միւռիս քաղքին մեծը կաշառք առնելով՝ իրեք անմեղ մարդիկ մեռնիլ վճռեց. տ՟րը հրաշքով հոն հասաւ ան ատենը՝ որ գետինը չոքեցուցած գլխընին պիտոր կտրէին. դահիճին ձեռքէն թուրը քաշեց առաւ. իրեք հոգինալ խալըսցուց. մեծին քովալ գնաց վախ ձգեց թգ՟րին ամբաստանելու։ Աս դիպուածս լսեցին իրեք մեծեր միւռային մօտիկ ըլլալով, որոնց վ՟ր նախանձողները վէզիրին կաշառք կերուցին պիտոր սպաննէին. ասոնք լալով տ՟ր Նիկողայոս կըկանչէին. հասիր տ՟րդ ա՟յ կըսէին ինչպէս որ ան իրեքին հասար։ Ան գիշերը Նիկողայոս երեւցաւ թգ՟րին որ մեծն կոստանդիանոս էր, հրամեց ազատելու անոնք որ զրպարտըված էին. դուն ո՞վ ես ըսաւ թգ՟րը որ ասանկ իս կըվախցընես. կամ ինչպէս աս ատեն մըտար իմ խուցս. ես եմ ըսաւ Նիկողայոս, անկէց աներեւոյթ ըլլալով՝ վէզիրին քովը գնաց վախցուց կաշառք առնելուն ու զրպարտելուն համար։ Առտուն թգ՟րը իր տեսիլքը վէզիրին պատմեց. վէզիրնալ թգ՟րին պատմեց. իր առջին բերել տըվաւ թգ՟րը ան իրեքը, արդեօք կախարդութ՟ քովս բերել տըվիք ըսաւ Նիկողայոսը. անոնք պինեցին նոր կախարդութ՟ չգիտենք, հայր բարեխօս կանչեցինք

մեղ․ Թ՛գըր անոնք ազատեց․ շատ սպար-գենէր տըվավ որ Նիկողայոսին եկեղեց-նայ ընծայեն․ իրենալ ըսեն՝ ինչ որ ա-պըսպըրեցիր ըրի, իս յիշէ աղօթքիդ մէջը ։

Ասանկ բարեգործուք ու հրաշքներով անցընելով միշտ իր կեանքը՝ որն Նիկողայ-ոս հիվընտցաւ․ մեռնելու մօտիկ դի-ւահար կնիկմընալ բժշկեց․ տեսաւ որ հրեշտակ մը եկերէր հոգին տանելու՝ խաչակնքելով իրեն մարմինը ‖ [illegible] ‖ սաղմոսը ըսաւ․ անանկով հո-գին աւանդեց գրեթէ կոստանդիանոսի վերջի տարին ։ Իր մեռնելէն ետեւ ան-համնում են հրաշքները որ կընէ ամ-ենուն մէջ, ով որ հաւատքով բարեխօս կըկանչէ ։

## ՍՐԲՈՒՀԻ ԹԵԿՂԻ

Աս կոյսը իկոնիոն կամ ղօնեա քաղքէն էր․ իրեն մայրը որբեւարի էր մնացած․ որ շատ հարուստ կնիկ էր, բայց կռա-պաշտ․ Թեկղինալ նշանած էր մէկ իշ-խանի մը՝ որ Թեմերիոս կըսվէր ։ Սըրբ Պօղոս առաքեալ ան քաղաքը գալով Ո-նեսիփորայ տունը իջաւ, շատ բազմուն Թափեցան հոն իրեն քարոզունը լսելու․ Թեկղեայ տուննալ մօտիկ ըլլալով պա-

տուհանը եկաւ լսելու առաքելոյն խօսքերը, որ իբրև մէկ երկնային կրակ մը հոգւոյն սրբոյ՝ անանկ կելլէր բերնէն, լսողներուն սիրտը կըվառէր։

Լսեցէք ինծի ժողովուրդ կըսէր, որ եկերէք նոր բան լսելու ինծի պէս օտար մարդէ․ իրաւ նոր բան ունիմ ձեզի ըսելու, բայց Աստուածային բան, որ սորվեցայ Աստուծմէ, ան որ մարդու կերպարանք առնելով՝ եկաւ երկնային քաղաքավարութիւն մեզի սորվեցուց։ Երանի անոնց որ սուրբ է սրտերնին, անոնք Աստուած պիտոր տեսնան։ Երանի անոնց որ իրենց մարմինը սրբութեամբ պահեցին, անոնք Աստուծոյ տաճար պիտոր ըլլին։ Երանի անոնց որ իրենք զիրենք ճնշեցին Աստուծոյ համար, և քամահրեցին, անոնց հետ Աստուած պիտոր խօսի։ Երանի անոնց որ՝ սրտերնին մէջը Աստուծոյ վախը ունին․ անանկները հրեշտակ Աստուծոյ պիտոր ըլլին։ Երանի անոնց որ մկրտութեան մաքրութիւնը կըպահեն, անոնք հօր Աստուծոյ և որդւոյ և հոգւոյն սրբոյ քովը պիտոր նստին։ Երանի կուսանաց հոգիներուն ու մարմիններուն, անոնք հաճոյ պիտոր ըլլան Աստուծոյ, իրենց սրբութեան վարձքնալ պիտոր առնեն։

Այս Աստուածային խօսքերն որ պօղոս առաքեալ կըխօսէր, եղան լման մէկ երկնային կրակ մը որ ընկաւ թեկղեայ սրտին մէջը, բոլորով սրտով վառվեցաւ, իբրև բարի երկիր մը աւետարանական սերմը

ըունեցաւ․ իրեք օր ան պատուհանէն չիզատուեցաւ․ որովհետև առաքեալը դիշեր ցորեկ հոն քարոզելու հետ էր ։ Թեկղեայ մայրը շատ հեղ ուզեց անկեց հեռըցընել որ չիլսէ՝ բայց չիկրցաւ․ ան ատենը ճարը հատնելով իրեն նշանածը Թեմերոսը կանչել տուաւ, ըսաւ, գիտցիր որ աս նորեկ մարդը պօղոս ամբողջ Իկոնիոն քաղաքնիս կաւրէ կըպղտորէ․ շատ էրիկ մարդ կնիկ մարդ անոր աշկերտեցան․ ամմէնուն կըսորվեցընէ կուռքերը թողուլ, մէկ ա̃ծ մը պաշտել, կուսութ կենալ․ ինչվան մեր Թեկղին ալ անոր խօսքին է մայլած․ քանի՜ օր է որ աչքը չիդարձըներ ան տունին վրայէն՝ ուր որ կըխօսի աս մարդս ։

Թեմերոս խրատ տալ սկսաւ Թեկղեայ աս դիս գալ պատուհանէն որ մտիկ չընէ անոր խօսքերը․ բայց Թեկղին և ոչ պ̃խն տալու արժանի սեպեց․ որովհետև հոգին ս̃բ արթնցուցերէր իր միտքը, առաքելոյն ըսածներուն ուժը կըմտմտար ։ Նոր վ̃ը Թեմերոս կատղելով դուրս ելաւ․ պօղոս առաքելոյն տունը մտնողներուն ըստակ խօստացաւ, իրեն հասկըցընեն, զուրցեն ինչ մարդ է ասիկայ․ ինչ կըսորվեցընէ ։ Դեմաս ու հերմոգինէս որ դարբին (չիլինկիր) էին, պօղոս առաքելէն օտարանալով թշնամի էին եղած, մատնեցին Թեմերոսի, թէ աս մարդը քրիստոնէից գլխաւորներուն մէկն է ․

կտրիճները աղջիկներէն կըզատէ. աղջիկներնալ կտրիճներէն. կըսէ որ յարութ̃ չէք կրնար առնել՝ ինչվան որ դուք ձեզ 'որ չփսպահէք: Թեմերոս շատ մարդ գլուխը ժողվելով՝ առտըվանց կանուխ մտաւ բազմութ̃ ոնեսիփորայ տունը, բըռնեց պօղոս առաքեալը դատաւորին առջին բերաւ ըսելով. աս մարդը չիթողուր աղջիկներուն կարգըվիլ. դատաւորը ըսաւ պօղոսի, ինչ է որ կըսորվեցընես. առաքեալը ըսաւ. ես կըսորվեցընեմ մէկ ա̃ծ ճշմարիտ, որ ուրիշ բան չուզեր, բայց միայն սրբութ̃ ու փրկութ̃ մարդկան. անիկայ խրկեց իր աշխարհէն քարոզելու՝ ո̃պ զի մարդիկ փրկըվին. մեղաց ցանկութ̃ ազատվին. ճշմարտութ̃ սէր ունենան՝ որ կըսորվեցընէ երիկ մարդու, կնիկ մարդու՝ ինչ որ արժան է ընել պարկեշտութ̃ ու հնազանդութ̃:

Դատաւորը հրամմեց կապել բանտը դընել՝ ինչվան որ աղէկ մը լսէ իմանայ: Թեկղին անչափ էր վառուած պօղոս առաքելոյն խօսքերը լսելու՝ որ իր պիլեզիկները իրենց տանը դռնապանին տըվավ, անանկ դուրս ելավ, բանտապետինալ ուրիշ ոսկի զարդերը տալով՝ բանտը մտաւ, առաքելոյն քովը նստելով՝ անոր խօսքերը լսել սկսաւ. զմայլելէն անոր կապանքները, երկաթները կըպագնէր: Լսեցին աս բանս Թեկղեայ ու Թեմերոսին ընտանիքը՝ պատմեցին դատաւորին,

նորէն պօղոսը առջին տարին . իսկ Թէկ-
ղին բանտին մէջ մնալով կուլար, արցուն-
քովը կը Թրջէր առաքելոյն նստած տե-
ղը ։ Պատաւորը Թէկղինայ բերել տա-
լով ըսաւ . ինչու համար նշանածիդ հետ
չես կարգըւիր . Թէկղին ամենեւին ալին
մը չխօսալով միշտ առաքելոյն վը՛ր կը նայ-
էր ։ Հոն եղօղ բազմուիը մէկ բերան
աղաղակ վերուցին առաքելոյն ու Թէկ-
ղեայ համար . կորսնցուցէ՛ք աս կախարդ-
ները . Թէկղեայ մայրնալ կը կանչէր իր
աղջըկանը համար, կորսնցուցէ՛ք աս խեն-
Թըս, որ ամմէն կնիկտիք տեսնալով վախ-
նան, ալ չար վդ̃ուիը չխօսրվին ։
Պատաւորը ծեծել հրամմեց պօղոս ա-
ռաքեալը, քաղքէն դուրս հանել . իսկ
Թէկղին խրատել սկսաւ որ Թողուքը ու
պօղոսը . մօրն ու իր նշանածին մտիկ դնէ .
քանի մը օրէն ետև երբոր չիկրցաւ միտքը
դարձընել ոչ յորդորելով, ոչ սպառնա-
լով, վճիռ հանեց որ կրակը ձգեն երեն ։
Երբոր բազմուի ժողովրդեան ժողվըւեր-
էին ան տեսիլքը տեսնալու՝ Թէկղին
կը նայէր կը փնտրըէր որ պօղոս առա-
քեալը տեսնայ . բայց անոր տեղը տեսաւ
յ̃ն ք̃ն իրեն դիմացը նստած լուսեղէն
փառօք . ան տեսնալով սիրտը լեցվեցաւ
ուրախուի, ուժ առաւ . երբոր զմայլե-
լով վրան կը նայէր՝ մէյմընալ տեսաւ որ
երկինքը ելաւ . բայց ինքը մէկ զօրուԹի
մը իմացաւ, մէկ սէր մը եկաւ քնի հա-

մօր մեռնելու ։ Կռապաշտները ամէննալ ինչվան կնիկներ, աղջիկներ փայտ բերելու հետ եղան որ Թեկղին երեն ․ երբոր զինուորները ուզեցին բռնել որ կրակին տեղը տանին, ինքնիրմէ գնաց Թեկղին ուրախ երեսով փայտերուն մէջ ելաւ ։ Կրակը տալու ատենը՝ գատաւորին սիրտը չիդիմանալով սկսաւ լալ ու զարմանալ Թեկղեայ զօրութեր վրայ ․ բայց կոյսը կրակին մէջը ձեռվըները խաչանման բացած աղօթքի հետ եղավ ․ մէյմընալ տեսան որ ամպ մը հովանի եղավ վրան, երկինք գետին սկսան դողալ, կարկուտ ու անձրև գալ ․ ամէն ժողովուրդ վախի մէջ ընկաւ, կրակը մարեցաւ, Թեկղեայ մէկ մազնալ չերեցաւ ․ ողջ անարատ դուրս ելլալով պօղոս առաքեալը փընտըռել սկսաւ ։

Պօղոս առաքեալը ան ատենը ոնեսիփորայ ընտանեացը հետ քաղքէն դուրս քարայրի մը մէջ պահված կեցերեր ․ ուր բան մը չունենալով ոչ հաց և ոչ ըստակ, իր վերարկուն հանեց տըվավ տղի մը ․ որ անոր գնովը իրենց ուտելու հաց բերէ ․ Թեկղեայ վրայյալ իմանայ որ ինչ եղաւ ։ Տղան երբոր ետ կըդառնար՝ գտաւ Թեկղին, զարմանալով մը հարցուց, ուր կերթաս, ինչպէս կրակէն խալըսեցար ․ Թեկղին ըսավ պօղոս առաքեալը գտնալու կերթամ ․ տղան հետն առաւ Թեկղին, վեց օխտը օր է որ ըսավ, քեզի հա-

մար կուլայ, պաք կըպահէ, աղօթք կը-
նէ ոչ ։ Երբոր մօտիկցաւ Թեկղին, կը-
լսէր պօղոս առաքելոյն ձայնը՝ որ ծունկ
չոքած անանկ աղօթք կընէր, ոչ զի
կրակը մարի, Թեկղին այրի ․ աս լսելով
Թեկղին գոհունի տրվավ ոչ ․ հետը տես-
նըլէլէն ետև պօղոս՝ ոնեսիփորոսը իրեն
տունը խրկեց ․ իսկ Թեկղին առավ ան-
տիոք գնաց ։

Հոն տեղը աղեքսանդրոս մէյմը որ Թա-
գաւորի պես մարդ էր, տեսնալով Թեկ-
ղի կոյսը, խիստ հաւնելով աղաչեց պօ-
ղոսն իրրև իրեն հօրը որ իրեն կին տա-
նէ ․ աս լսելով երբոր իրեն մօտիկնալ
ուզեց, Թեկղին հրելով աղեքսանդրոսի
կապան պատռեց ․ գլխին պսակակերպ
գլխարկնալ գետինը ձգեց, սանկ անար-
գըվելով աղեքսանդրոս՝ սէրը ատելութի
փոխեց ․ գնաց դատաւորէն հրաման հա-
նել տրվավ որ գազաններուն առջին ձը-
գեն կոյսը ․ ան օրը քանտի տեղ հարուստ
խաթունի մը տուն դնել տրվավ որ տրի-
փոնա կըսվէր ․ աս կուսպաշտ խաթունը
սիրով իր տունը առավ Թեկղին իր աղ-
ջըկանը յիշատակ որ մեռերէր ։

Երբոր առտուն Թեկղին կըտանէին գա-
զաններուն առջին կերակուր ձգելու,
տրիփոնա խաթուննալ մէկ տեղ կերթար
լալով կըսէր ․ իմ աղջիկս գերեզմանը խըր-
կեցի, հիմակ քեզ գազաններուն կերա-
կուր կըխրկեմ, քու ա՟ծդ քեզի օգնա-

կան ըլլայ. Թեկղինան աղօթք ըրաւ Տրի-
փոնեայ համար, բարի հատուցում մաղ-
թեց իրմէ, որ իրեն վր անանկ գութ
ցըցուց, ու որքո՞ւ պահեց իր տանը մէջ։
Հոն տեղը առիւծ մը թողուցին Թեկ-
ղեայ վրայ՝ որ բազկատարած աղօթքի էր
կեցած. առիւծը տեսածին պէս՝ ոտքը
ընկաւ լզել սկսաւ. Ետքը արջ մը թո-
ղուցին. աս առիւծը իբրեւ Թեկղեայ պա-
հապան՝ արջը բռնեց պատռեց. ինձ (զափ-
լան) թողուցին և ուրիշ առիւծներ. բայց
առջի առիւծը մէկի մը թող չտալով
մօտիկնալ։ Ինկեց առին մէկ լիճ (կէօլ)
մը ձգեցին որ լեցուն էր թիւնաւոր (զե-
հիրլի) գազաններով. Թեկղին կարծելով
որ իր վերջը հասած է՝ ըսաւ. Տր իմ Յս.
ահա այսօր աս ջուրին մէջը իմ արիւնովս
մկրտուիմ։ Ասոր ամէնը կըկարծէին
որ՝ պիտոր մեռնի, մէկ ահաւոր լոյս մը
տեսան որ ո՞ր կոյսը մէջ առաւ. Լճին գա-
զանները սատկեցան, Թեկղին դուրս ե-
լաւ բոլորովին լոյս կտրած. Հոն եղող
կնապաշտ կիները ասիկայ երկնային
մարդ մը կարծելով իրենց կուրքերէն
մէկը, սկսան անուշ խնկերով պաշտել։
Բայց քիչ մը անցնելէն ետև Աղէքսանդ-
րոս իր սիրտը աւելի խստացընելով՝ ու-
րիշ տանջանք տալ հրամմեց. բայց Ած
հոնալ ողջ պահեց. միայն թէ Տրիփոնայ
սիրտը չըդիմանալով՝ յանկարծ կանչե-
լով մը ընկաւ մեռելի մը պէս. աս Տրի-

փոնայ խաթունը կայսեր տունէն ըլլալով՝ աղէքսանդրոս խիստ վախցաւ որ՚իրեն փորձանք մը չհասնի կայսերմէն, դատաւորին աղաչեց որ ազատ թողու Թեկղին ։

Դատաւորը կանչեց Թեկղին, հարցուց ով ես դուն. ինչպէս եղաւ որ գազանները քեզի չդպան. Թեկղին ըսաւ. ես քու աղախինն եմ. ով որ քու կըհաւատայ՝ կապըրի չիմեռնիր. ով որ չհաւատայ՝ անիկայ կըմեռնի յաւիտեան ։ Ընտենը դատաւորը քարոզ կարդալ տըւաւ ժողովրդեան՝ որ Թեկղեայ ծ̃ծը զինքը արձըկեց, ձեզի տըւաւ. հոն եղող ամմէն կնիկները սկսան աղաղակ վերցընել. մեծ է Թեկղեայ ծ̃ծը մէկհատիկ է, որ գազաններէն խալըսցուց։ Տըն տրիփոնան ուրախութ̃ գրկելով ըսաւ Թեկղեայ. հիմա կըհաւատամ որ ողջ է իմ աղջիկս. եկո՛ իմ տունս. իմ ամմէն ունեցածս քեզի կըթողում. Տըն Թեկղի ասոր տունը երթալով, ութը օր սորվեցուց ա̃յ պատուիրանքները. տրիփոնան ու աղախիններէն շատը հաւատքի բերաւ ։

Ետքը Թեկղին ելաւ գնաց իր վդ̃ը պօղոս առաքեալը գտնալու, որ դտաւ մեռոք կամ միւռիս քաղաքը. պատմեց ինչ բաներ որ անցան ։ Երբոր լսեց Թեկղին իր նշանածը Թեմերոս մեռեր է, պօղոս առաքելոյն հարցընելով դարձաւ եկաւ

Իկոնիոն իր քաղաքը, որ աւետարանը քարոզէ խօսքով ու օրինակով. առաջ եկաւ ոնեսիփորայ տունը, ուր որ ինքը հաւատքը սորվերեր. շնորհակալուե աղօթք ըրաւ այ. Ետքը իր տունը գալով ողջ գտաւ իր մայրը: Շատ յորդորեց ճշմարիտ հաւատքի բերելու. Թէ որ հաւատա՞ս ըսաւ մէկ է ած որ երկինքը կընստի՝ ան ամէնը կապրիս. իսկ թէ որ ոսկի ու արծաթ ուզես որ կըհալին կըմաշին, ահա տըված է քեզի. ասանկաւ իր ընտանեացը կըքարոզէր:

Բայց պտուղ մը չիտեսնալով՝ թողուց իր տունն ու քաղաքը, սելեւկիա գնաց որ իսավրիա գաւառին մէջն է, հոն շատ պտուղ ըրաւ, շատ մարդ դարձուց քարոզութ ու հրաշքներով. առաջ միւսի լեռը քարայրի մը մէջ կեցաւ, ուր աղբիւր կըբխէր. կիրակիէ կիրակի միայն դուրս կելլար խօսք կըժողվէր ուտելու համար. իսկ բոլոր շաբաթ ըանօթի կանցընէր. հոն եկող կռապաշտները ածային խօսքերով կըդարձընէր: Անկեց անցաւ գնաց կաղամիոն լեռը, հոնալ շատ մարդ քրիստոնէ այ ըրաւ, շատ հիւանդներ բժըշկեց, սատանայներ հալածեց քնի անունով. սելեւկիայի բժիշկները տեսնալով որ՝ իրենց վաստակը կըդադրի, քանի մը անառակ մարդեր գինովցընելով՝ թեկղեայ քովը խրկեցին: Ան ատենը աղօթքի վազեց սբ. կոյսն թեկղի, որ ած փրկէ աս

անօրէնութեան ձեռքէն. շուտ մը երկինքէն ձայն եկաւ, ես քեզի հետ եմ մի՛ վախնար. ձայնը լսածին պէս՝ առջեւի կեցած քարը երկու ճեղքուեցաւ բացուեցաւ, զինքը մէջը առաւ. անանկ որ՝ անյայտ եղաւ՚նքուհին. միայն վերարկուին մէկ փէշը դուրս մնաց: Աս տեսածնին պէս վախ մը առաւ սրտերնին. եկան քաղաքը պատմեցին:

Ասանկով եղաւ ՚նքուհւոյն Թեկղեայ վախճանը իննսուն տարվան. տասնութը տարվան էր երբոր աշկերտեցաւ պօղոս առաքելոյն. եօթանասունվերկու տարի ալ հալածանքի ու ճգնութե̃ մէջ անցուց: Մեր սանդուխտ կուսէն ետե կնկտոց մէջ ասիկայ եղաւ առջի նախավկայուհի, որ տանջանք քաշեց քի̃ վկայութեր համար. առաքելուհի եղաւ հեթանոսաց: Իր վախճանած տեղը եկեղեցի շինուեցաւ, ուսկից շատ հրաշքներ եղած են մանաւանդ աչքի ցաւի, դողցած բաներ գտնալու. անոր համար յակոբ ը. Թ̃ր արագոնայի որ սպանիայի մէջն է՝ մեր օշին Թ̃րէն ուզեց ՚նքուհւոյն Թեկղեայ մասունքը. որովհետեւ ան ատենը մեր հայու Թ̃րները կիլիկեին իսավրիայի վր̃. օշին հայու Թ̃րնալ՚նքյն Թեկղեայ աջ թեւը խրկեց:

Երբոր սպանիա հասաւ աս մասունքը՝ անանկ մեծ թափորով առին տարին, որ միայն եղեղեցականք՝ 7354 հոգի էին

թափօրին մէջը․ մասունքին մէկ դիէն սպանիայի Թգ͞րը կերթար, մէկալ դիէն Թգ͞րին տղան։ Ետանկուլ բերին յամին 1323, արագոնայ քաղքին մայր եկեղեցին դրին, որ Թեկղեայ անունով շինված էր․ հոնալ շատ հրաշքներ տեսան աս ՙսրբուհւոյն բարեխօսութ͞ը։

---

ՍՈՒՐԲՆ ՅԱԿՈԲ

## Մծբնայ հայրապետ․

Իրեն հայրը կըսուէր տիրան․ որ հեփթաղ ազգին Թգ͞րն էր կըսեն․ մայրը կըսուէր խոսրովուհի․ որ անակայ քոյրն էր․ աստանկով մեր գրիգոր լուսաւորչին հօրքրոջը տղան կըլլայ ՙՍրբն յակոբ․ անոր պէսալ ղայսերի փախած, ուր քրիստոնէութեան ու բարեպաշտութեան մէջ մեծցաւ․ իրեն հետ սակգէն անունով քոյր մը ունէր խիմէ մեծ։ Երբոր յակոբ քիչ մը մեծցաւ՝ քոյրը բռնադատեց զինքը պարսից երկիրը տանիլ տըվավ հոն կարգըվեցավ․ բայց յակոբ չուզելով մնալ հոն իրեն ազգականներուն մէջ, քիչ մը կենալէն ետև՝ ելավ անկից միջագետք եկավ․ մծբին քաղքին դիէրը գալով՝ անապատի մէջ նստաւ բարձր լեռներու վր․ մարուգէ ձգնաւորին քով կրօնաւոր եղավ։

Ամառը գիշեր ցորեկ բաց տեղ կըկենար միշտ. ձմեռը միայն քարայրի (մաղարայի) մէջ կըմտնար. հագածը մազեղէն էր. կերածը ինչ որ կըգտնար ան լեռներուն վր̃ ինքիրեն բուսած խոտեր, անալ կուշտ չէր ուտեր. իսկ եփած կերակուր բնաւ չէր առներ բերանը. բոպիկ ոտքով կը-քալէր: Մարմինը ասանկ կըճնշէր, իսկ իր հոգին՝ իբր մէկ հայլի մէջ ա̃յ փառ-քը տեսնալով պօղոս առաքելոյն ըսածին պէս՝ կընայէր որ ան պատկերին նմանցը-նէ զինքը. անոր համար իր կեանքը իբր թէ մէկ հանապազորդեան աղօթքմընէր առ ա̃ծ. գիշեր ցորեկ չէր դադրեր սաղ-մոս ըսելէն. ասանկով ա̃ծ միշտ իր աչ-քին առջին ունենալով, աղօթքով շարու-նակ ա̃յ հետ խօրա՛թելով, մէկ յատուկ ընտանութի̃ մը ունեցաւ Ա̃յ հետ զարմա-նալի, անոր համար ինչ որ ուզէր՝ ա̃ծ ալ շուտ մը կըկատարէր իր խնդիրքը:

Իսկ սատանաները բազմութե̃ պատրաս-տըված զինքը փորձելու, բայց մէկ վայր-կեանմընալ պարապ չէին գտնար աղօ-թելէն, որ ա̃յմէ հեռու մնալով իրենք քովը գային փորձութի̃ բերէին. որով-հետեւ աս բանս մէկ մասնաւոր կերպով մը յատուկ էր եղած աս սբ̃իս՝ որ երկ-րիս վրայ ըլլալով իբր թէ չէր, այլ եր-կինքը սերոբէից հետ մէկ տեղ եղած՝ միտքը ամենեւին մէկ վայրկեանմընալ չէր բաժներ ա̃յ տեսութե̃:

Ծաղ տեսնալով իրեն սաստիկ ձգնութիւնը, որ իրեն անձնակին չէր խնայեր, ոչ ցուրտը կը նայէր, ոչ տաքը, ամպով մը հովանի կըլլար, ներքին մխիթարութեամբ սիրտը կը մխիթարեր: Բայց որովհետեւ ՞րն յակոբ իր միտքը այ էր տրված, հոգւոյն աչքը սրատես ընելով՝ միշտ աս կըսեր իր աղօթքին մէջը: Ինչ զարմանալի է որ՝ ա̃ծ անանկ ամենակարող, ոչինչէ ամմէն բան առաջ բերող, մեր մեղաւորաց սիրոյն համար մարմնանայ, չարչարվի, նախատվի. ամմէն աշխարհ կերակրողը՝ անօթի մնայ. ովկիանոս ծովը ստեղծողը՝ լեղի քացախ խմէ. երքնաւ մեռնի. ես ինչպէս հանգիստ կընամ նստիլ, ինչպէս չիչարչարվիմ. անանկէնէ տէր իմ, կըսեր, մի խնայեր ինծի, ամպով հովանի մըլլար. թող տուր որ եսալ չարչարվիմ. ես չիխնայեմ պիտոր ինծի ինվան որ մեռնիմ. հացով ջրով չիկշտանամ:

Սանկ երկան աղօթք ընելնին՝ երեւցաւ իրեն ա̃ծ հրեշտակներով, մխիթարեց ըսելով որ՝ քու ամմէն խնդիրքներդ կատարեմ պիտոր, սիրելի որդեակ իմ. աս ըսելով՝ վերանալու ատենը երկու հրեշտակ իրեն քովը թողուց մխիթարող պահապան. որոնք ետքը աչքով տեսաւ մեծն կոստանդիանոս: Վերանալէն ետեւ ՞րն յակոբ լաւ սկսաւ իր կարօտէն թէ ինչպէս բաժնըվեցաւ. տէր իմ ջա օգնէ ինծի,

կըսէր · սատանան լսեց քուկին տըրված մխիթարութիւդ՝ ետևէս պիտոր իյնայ · ես կըզարհուրիմ անոր որոգայթներէն, ով պիտոր օգնէ ինծի · ես կընայիմ որ իս տաճար ընեմ այ · անիկայ աւազակի պէս իս կուզէ կողոպտել, ինչպէս որ ըրավ ադամը · քու սուրբ հոգիդ մի՛ հաներ ինծմէն տէր իմ, ինչվան որ քեզի գամ · տուր ինծի զօրութի քու անուանդ համար ։

Պահապան կեցած հրեշտակը կըզօրացընէր զինքը չիվախնալ սատանայէն, որ ըսելով տէրն յակոբ՝ գոհութի կուտար այ · բայց քանի որ վարքը կըշտկէր , և այ ճամփուն մէջ առաջ կերթար , այնչափալ սրտին մէջը երկիւղն այ կեղելցընէր · գիտէր որ՝ յանձնապաստան ըլլալը կորուստ է հոգւոյ , անոր համար միշտ այ օգնութը կըսպասէր · քանիալ որ երկիւղած եղավ՝ տէրն յակոբ , այնչափալ ած շնորհքներով զինքը զարդարեց · հոգի մարգարէութէ ունեցաւ , պատգամատու եղավ ազգաց , կռապաշտները դարձուց · երբոր նահատակելու կըտանէին քրիստոնեայները՝ համարձակութ հետերնին կերթար կըքաջալերէր · քանի հեղ որ կռապաշտները ուզեցին անիկայ բռնել մեռցընել, ած անանկ պահեց որ՝ չէին կընար մօտիկնալ ։

Օր մը լեռնէն վար ինջնալով՝ ուզեց որ տէր մարուգէին հետ տեսնըվի, որ մծբնայ վանքը մէկ քարայրի մը մէջ կըճգնէր ·

սաթիթմայ գետը հասնելով հարցուց այգեգործներուն, աս Ջուրին անցնելու տեղը ո՞ւր է. անոնք տեսնալով իր խեղճ աղքատ հագուստը՝ ծաղր ընելով մը ըսին, դուն մէկ ճգնաւոր մարդմընես. Ջուրին վրայէն քալելով անցիր. ան ատենընոր յակորնալ իր վերարկուն Ջուրին վրայ բռնելով՝ իբր մէկ նաւակով մը աս դին անցաւ. բայց վերարկուն թոթվելնինի ցամաքին վը՞ը՝ շուտ մը տասվերկու արմաւենի ծառեր բուսան. քովերնին երթալով բարև տըվաւ, ինչ է ձեռվընիդ եղածը հարցուց. անոնք նորէն ծաղր ընելու համար փուշ է ըսին. անանկէնէ ըսավ՝ որը՝ թող անանկ փուշ մնայ. աս ըսածին պէս՝ ամմէն որթ (սամանէրը) փուշ դարձան, միայն տերև կուտային։

Համիրայ ընելով՝ որը՝ առաջ մէկ ճգնաւորի մը քով եկավ որ իրեն պէս յակոբ կըսվէր. քառասուն օր անոր քովը կեցաւ, ետքը եկավ՝ որյն մարուգէի քով. անիկայ պատմեց իրեն որ՝ ան երկիրներուն ժողովուրդը թէպէտ քրիստոնեայ եղած էին՝ բայց մէջերնին դեռ անհաւատութ շորրդ կար. ոմանք ալ գիրքը ծաղր կընէին, մանաւանդ Ջրհեղեղին նոյայ տապանին պատմութիւը սուտ կըհանէին, որ խաչին օրինակն էր. ուր տեղ ըլլալնալ չիգիտցըվէր կըսէին։ Ս՝ս լսելով՝ որն յակոբ յանձն առավ աս բանիս համար ճամ-

բայ ընել, նոյայ տապանին մէկ կտորը բերել ցըցընել. բայց որովհետեւ իր ամմէն բանը հրեշտակաց առաջնորդութ̃ կըլլար, քուն եղած ատենը հրեշտակ մ̃յ ան տապանին մէկ կտոր տախտակը բերաւ քովը դրաւ։ Երբ գոհունի ալով մ̃յ առաւ ան կտորը Ճամփայ ելաւ. երբոր արտաւետ գեղը մօտեցաւ՝ ջուրի մը վ̃ր տեսաւ որ լաթ լուացող աղջիկները իրմէ ամչնալ մը չըցըցուցին, ամնքալ ծաղր ըրին, որը անէծք տըվաւ. շուտ մը աղբիւրը ցամքեցաւ. իրենց մազերնին ալ ձերմըկցաւ. աս տեսնալով հոն եղողները ամէնքը ոտքը ընկան թողութ̃ ուզեցին. որը խաչակնքելով աղբիւրը նորէն վազցուց. բայց մազերնին անանկ ձերմըկցած թողուց։

Ինկաւ մծբին նոյն մարուգէին ձեռքը տըվաւ տապանին տախտակը՝ որուն վ̃ր շատ ուրախացաւ. շատալ հրաշքներ եղան ան տախտըկով՝ որ խաչի ձեւով շինված էր. հրաշքներէն մէկնալ աս եղաւ որ՝ շապուհ պարսից թ̃ր մծբին քաղքին վ̃ր եկաւ, շատ զօրքով պաշարեց, մօտիկ էր առնելու. մէջինները Ճարը հատաւ, եկան բազմութ̃ նոյն ոտքը ընկան աղաչելով։ Երբ ան խաչաձեւ տապանին կտորը ձեռքը առնելով՝ քաղքին պատին վ̃ր ելաւ, անանկ աղօթքի կեցաւ. հեռըվանց շապուհ թ̃րին անանկ երեւցաւ որ՝ թ̃ր մը պատին վ̃ր կեցեր

է , քօ՛ննալ տասմերկու հազար ձիւոր զօրք շարժերէն , ան ատենը սրդողելով ուզեց սպաննել ան մարդն որ իրեն ըսեր էր թէ մծբնայ մէջ զօրք չկայ . աս տեսիլքէն զատ ՚նոյն աղօթքովը ա՜ծ պարսից բանակին վ՟ր խրկեց շանաճանճ ու ւիծակ , որ անչափ բազմութ՟ թափեցան՝ որ ձիերնին կատղելով փախան , զօրքնալ թ՟ղնալ հազիւ իրենց երկիրը կրցան հասնիլ ։

Ինչ հրաշք որ կընէր ՚որն յակոբ՝ խրատի համար կընէր , չէ թէ փառս տալու . տէն մը պարսից երկիրը քալելով դատաւոր մը տեսաւ որ անիրաւ դատաստան կըկտրէր . աստիկայ խրատել ուզելով՝ զինքը չխրատուեցաւ . այլ իր դիմացը քար մը կար՝ ան քարը մէկ խօսքով փըշուր փշուր ըրաւ . անկէց վախնալով դատաւորը՝ չիտակ դատաստան կտրել սկըսաւ ։

Ն՟ս ատէններս մծբնայ եպիս վախճանած ըլլալով՝ քահանայից մէջ վէճ էր ընկած որ ով ընտրեն անոր տեղը . ՚նոյն մարուգէի գացին հարցընելու . մարուգէն անոնց ՚որն յակոբ ցըցուց . յակոբնալ երբոր մարուգէին քովը եկաւ , իրեք օր առաջ մարգարէանալով իրեն զուրցեց . հրեշտակ ՚՟յալ անտիոքայ պատրիարգին երևնալով՝ ապսպրեց անիկայ ընտրելու ։

Յանկով օխտը տարի սարկաւագութե մէջ՝ քանի մը տարիալ քահանայուե մէջ

կենալէն ետեւ՝ ակամայ յանձն առաւ
սբն յակոբ, մծբնայ վր եպս ձեռնադրը-
վեցաւ. որովհետեւ հոգին սբ իրեն յայտ-
ներէր, դէմ դնել կըվախնար ։ Եպս ըլ-
լալէն ետեւ՝ իր առջի հրաշքը եղաւ մա-
րուգէի հետ մէկ տեղ հինկ տարվան ան-
դամալոյծ մը ոտքի վր հանել ։ Բայց
անկէց ետեւ իր ըրածները գրեթէ ամ-
մէննալ մէյմէկ հրաշք էին, որոնց-
մէ քանի մը երեւելիներէն հոս պատ-
մենք ։

Սբն յակոբ երբոր օր մը ճամբէն կանց-
նէր, երկու աղքատ խօսք դրին զինքը խա-
բելու որ ողորմուի առնեն. մէկը սուտ
մեռել ձեւացաւ, մէկնալ ողորմուի խըն-
դրեց իրմէ՝ ան մեռելը թաղելու համար՝
որ իր ընկերն էր կըսէր. սբն յակոբ սուտ
մեռելին վր ձեռքը դնելով անցաւ գնաց
իր ճամբան. երթալէն ետեւ ընկերը
կարթընցընէր աս սուտ մեռելը ըսելով,
աղէկ ձեւացուցիր, աղէկ խաբեցինք ողոր-
մուի առինք, հերիք է, ելիր. բայց մէյ-
մընալ տեսաւ որ ան սուտ մեռելը իրաւ
մեռեր է. ան ատենը վազեց սբյն ետ-
եւէն, լալով իր ըրածը խոստովանելով
աղաչեց որ չիպատժէ. սբն յակոբ ետ
դարձաւ, աղօթք ընելով նորեն մեռելը
ողջընցուց ։

Երբոր սբն յակոբ նիկիոյ ժողովը եկաւ
արիոսը դատապարտելու համար, կոս-
տանդիանոս թգըը իրեն արգենի կեր-

պարանքը տեսնալով վախ մը եկաւ իրեն. երկու գլխէդ ըսաւ երկու լուսաւոր հրեշտակ կըտեսնամ որ քեզի կըսպասաւորեն. որն յակոբաւ իրեն պլնեց. եսաւ մէկ արեգակնակերպ մարդ մը կըտեսնամ ըսաւ քովդ, որ ամմէն առտու թագը գլուխդ կըդնէ։ Որովհետեւ արխոս տասը տարի մը անցնելէն ետեւ՝ նորէն ան ատենը սուտանպօլ էր եկեր, նորէն կուզէր եկեղեցին մտնալ, անկից մեծ տրտմուն մը պատած էր ամմէն ուղղափառներուն վր. աս բանիս համար որն յակոբ խրատ տըվաւ աղեքսանդրոսի՝ որ սուտանպօլու հայրապետ էր, օխտն օր պաք պահել, աղօթքի կենալ, խնքնալ մէկ տեղ աղօթք կընէր. մէյմընալ այ ղօրութին յայտնի երեւցաւ, ուղղափառները խալըսցուց ան հոգէն։ Երբոր ան կիրակին արխոսը եկեղեցին կուգար իրեններովը մէկ տեղ՝ Ճամիփան դուրս ելլալը ըռնեց. այս սօֆիային գիերը տեղ մը մտաւ որ ինչվան հիմա կըցըցընեն. բայց այ պատուհասը վրան հասնելով, կարիքը հոգանինի իրեն դարշուն հետ փորնալ պատռեցաւ, իրեն աղիքներնալ դուրս թափեցան. անանկով գարշելի մարդը գարշելի տեղը սատկեցաւ։

Մէկ հարուստ մարդ մը կար մծբին քաղաքը, որ մարկիոնեան էր, չէր ուզեր դառնալ. թէպէտ իրեն եղբայրը քրիստոնեայ էր, ան քաղքին վրայնալ փաշայ

էր եղած ։ Աս մարդս լսելով որ Սրբն յակոբ վերոյիշեալ անդամալոյծը ողջընցուցերեր , եկաւ իր տղին համար աղաչեց որ անոր պէս անդամալոյծ էր ․ խոստանալով որ՝ ըռընտցածին պէս մարկիոնեան աղանդը ձգէ ․ Սրբն յակոբ և Սրբն մարուգէ երկան աղօթք ընելէն ետև՝ անդամալոյծ տղան որ ութը տարւան էր՝ մկրտեցին , մկրտըւածին պէսալ ըռընտցաւ ․ ան ատենը հայրը մայրը որ մարկիոնեան էին՝ իրենց հետալ 3100 հոգի դարձան մկրտըւեցան ։

Ասանկ անպակաս բժշկութի կընէր Սրբն յակոբ աւելի ժանտախտով բռնըւածներուն մէջ ․ բժշկըւօղները անչափ շատ եղան՝ որ ժանտախտին անունը ։ Յակոբեան ցաւ ըսին ան ատենը ։ Ժանտախտէն բժըշկեց նաև վերոգրեալ անդամալոյծ տըղան , որ ժանտախտէն պառկեցաւ ան ատենը՝ որ ատեն որ նոր դարձած ծնօղքը մարուգէին վանքը կուզէին երթալ ․ հայրը երթալէն ետ չիկեցաւ ․ հիւանդ տղան ձիու մէջ դնելով հետը առաւ տարաւ , բայց վանքին մօտիկնալընինի՝ տղան մեռաւ ․ Սրբն մարուգէ տեսաւ՝ կանչեց Սրբն յակոբ իրեն յանձնեց մեռած տղան ․ Սրբն յակոբ առաւ մեռելը խորանին առջին տարածելով երկան աղօթք ըրաւ վըրան , ինչվան արցունք եկաւ աչքէն , ան արցունքովը հողը թրջելով՝ տղին վզին մէջ, դրաւ , Յսին անունը տալով ․ ան ա-

տեղը մեռած տղան յարութն առաւ։

Աս հրաշքները տեսնալով օրէօր անհաւատները կըդառնային քրիստոնեայ կըլային. անչափ շատցան որ՝ եկեղեցնայ մէջ չէին սղմէր, անոր համար նոր եկեղեցի մը շինեց սբն յակոբ հրեշտակին առաջնորդութ̃ան տեղը՝ ուր որ առաջ կռատուն էր եղած։

Մանաձիհր իշխան մը կար Հայաստան, ասիկայ հայու թ̃րը խրկեց բակուր իշխանին վ̃ր, որ երթայ անոր ապստամբութ̃ը զսպէ. աս պատճառով մանաձիհրը մծբնայ գիները գալով շատ մարդ գերի տարաւ, որոնց մէջն էին նաև ութը սարկաւագ սբյն յակոբայ։ Աս լսելով սբը՝ եկաւ իրեն աղաչեց որ գերիները թողու. երբոր մտիկ չըրաւ՝ հայոց թագաւորին գնաց աղաչելու. մանաձիհրը ասկէց ալ աւելի սրդողելով՝ ութը սարկաւագնալ ծովը ձգել տըվաւ. ան ատենը սբն յակոբ գարձաւ մէկ լեռան մը վրայ ելալ՝ ուսկից կերևար մանաձիհրին երկիրը՝ որ ուշտունեաց երկիր կըսվէր վանայ ծովուն քովը. անէծք տըվաւ իրենալ իրեն երկրինալ։ Անոր վ̃ր մանաձիհրը չարաչար ցաւով սատկեցաւ. երկիրը անբեր եղաւ. անձրևը կտրեցաւ. ծովը դուրս պոռթքալով կոխեց աւրեց։

Աս բանիս վ̃ր տարի մը անցնելէն ետև՝ սբն յակոբ տեսաւ որ հրեշտակ մ̃յ զինքը երկինքը կըհրաւիրէր. ան գիշերը ամ-

մէնուն հակումը ընել տըւաւ. արև եղա-
լու ատենը պատարագ զուրցեց . Հոգին
ս̃բ տեսնալով՝ աղաչեց որ խաղաղութ̃ անց-
նի սատանայներուն մէջէն ։ Ժողովուր-
դը տեսան որ երեսները լուսաւորվերեն՝
իմացան իրեն մեռնիլը, լալով ոտքը ին-
կան օրհնութ̃ը կըխնդրէին . անիկայ ա-
ղէկ խրատներ տալով իրենց՝ ծունկ չոքե-
ցաւ ամենասուր̃ երրորդութ̃ը խոստովանե-
լով՝ հոգին աւանդեց յամին 347 ։ Մար-
մինոյն վր̃ լոյս մը ինջաւ, անուշահոտու-
Թիւն մը բուրեց . իրեն նշխարքենալ
շատ հրաշքներ եղան ։ Մանաձիհրին
ժառանգը տեսնալով որ՝ իրեք տարի ան-
ցաւ իր երկիրը անանկ ավըրված կեցեր-
էր, ս̃բյն անէծքին համար բան մը չէր
բերեր, ինչվան մարդ, անասունալ չէին
ծնաներ, ս̃բյն գերեզմանը եկաւ . երե-
սը ծնկվըները գետինը քսելով քառասուն
օր անանկ կաղաչէր . ետքը իրեն նշխար-
քէն առնելով երբոր տարաւ իր երկիրը,
վրան եկեղեցի շինեց , ամմէն բան շտկը-
վեցաւ ։ Բայց իրեն ս̃բ մարմինը ետքը
մծբին քաղքէն հանելով տիարպեքիր
տարին ։

Ուրիշ շատ հրաշքներալ եղան ու ս̃բյն
բարեխօսութ̃ը . որովհետև մեծ համար-
ձակութ̃ ունի ա̃յ առջին, ով որ ինչ ուզէ
հաւատքով՝ խնդիրքը կըկատարվի ։ Մէկ
գիրք մընալ շինած ունի քարոզներու ,
որ Զգօն կըսվի ։

## ՍՈՒՐԲՆ ԹԷՈԴՈՐՈՍ
## Կամ
## ԴՈՐՈՍ ԿՈՉԵՑԵԱԼ ՏԻՒՌՈՍ

Ամասիա քաղքին մօտ ծնաւ, որ մօտիկ էր երկրորդ Հայոց վերիս քաղքին. դեռ տղայ էր կաթնկեր՝ երբոր մայրը մեռաւ. իր հայրը որ բարեպաշտ քրիստոնեայ էր՝ խաշած ցորեն կերցընելով մեծցուց ասիկայ. անոր համար երբոր ինքն ալ մեծցաւ՝ նոյն ցորենի հատիկ ուտելու սովորութիւնը պահեց. ուրիշ բան չուզեց ուտելու. եղաւ բարի առաքինի կրտրիճ մը, որուն շնորհալի տեսիլքը տեսնալով հոն եղած կայսեր զօրքը իրենց գունդին մէջը առին. որ մարմարական ստնտացւոց գունդ կըսուէր. իրեն տիւռօն (Տիւռօ) անուն դրին. իբր նորեկ զինուոր։ Քիչ մը ատենէն իրեն կտրըճութիւնը տեսնալով՝ մեծցընել ուզեցին զինքը. բայց Թէոդորոս որ աստուածապարգեւ կըթարգմանի՝ յանձն չառաւ ըսելով՝ ես երկնաւոր Թագաւորին Քրիստոսի Աստուծոյ իմոյ զինուոր եմ որդւոյն Աստուծոյ։ Ասանկ յայտնի խոստովանելովը իր քրիստոնէութիւնը՝ անոնց աչքէն ընկաւ որ կռապաշտ էին. բայց իրեն կամքին թողուցին, յուսալով որ ետքը դառնայ. ոմանք ալ փխտնալով իրեն հաստատուն միտքը՝ չարիք ընել կընայէին. իսկ ծածուկ քրիստոնեայները սն զօրաց

մէջը՝ խիստ սէր կապեցին իր վրան ։ Օր մը Թէոդորոս ձի հեծած Ճամփայ ելաւ․ տաք ատեն ըլլալով՝ եւքայխտա գեղինքով լինջաւ, հոն կանանչներուն վր̃ հանգչեցաւ․ աս տեղս մէկ որբեւարի կնկան մընէր, եւսեբիա անունով հարուստ ու քրիստոնեայ․ տեսածին պէս կանչեց որ հոն չինստի․ մօտիկ տեղ մեծ վիշապ մը կայ ըսաւ, որ աս ատեններս հոս կուգայ․ իմ տունս եկօ հանգչէ, ինչվան որ տաքը իջնայ ։ Թէոդորոս պխին տըւաւ․ ես աներկոյթ վիշապէնալ չեմ վախնար ըսաւ, ո՞ւր մնաց երեւելի վիշապէն․ Թո՛ղ տուր գայ՝ ես անիկայ ջ̃ին անունովը կըսպաննեմ ։ Եւսեբիա լաւծին պէս ջ̃ին անունը՝ Ճանչցաւ իրեն քրիստոնեայ ըլլալը, ուրախութենէն քովը գնաց, աղաչել սկսաւ ան տեղէն ելլալ իր տունը գալ ։ Բայց աս ըսելու ատենը վիշապնալ եկաւ․ եւսեբիա իր փշալուն ձայնը առածինպէս վախէն փախաւ․ վիշապնալ եկաւ ձիուն վր̃ յարձըկեցաւ ։ Նոյն ատենը ՚որն Թէոդորոս զինքը խաչակնքելով զարկաւ մըրախով վիշապին գլուխը սպաննեց, ետքը գնաց պատմեց իր հաւատակից զինուորներուն, իրտ տալով իրենց որ ամուր կենան քրիստոնէութենը վրայ․ յայտնի ցըցընեն քրիստոնէութիւնը ինչպէս որ ինքը խօսքով, վարքով ու ջերմեռանդ աղօթքով միշտ կըցըցընէր ։

Այն ատենները մեծ հալածում հանեց Մաքսիմիանոս գաղերոս Թգրը՝ որ Թգր նստեր էր յամին 304. ամէն տեղի դատաւորներուն հրաման խրկեց որ՝ քրիստոնեայները զոհեալ ուտեն. ով որ չուտէ՝ անողորմ դատաստան ընեն վրան։ Ամասիայի դին եկաւ մէկ իշխան մը Բրինկաս անուն. լսելով որ՝ Թէոդորոս յայտնի քրիստոնեայ է, իր առջին բերելով կըռանգատեր որ զոհէ կուռքերուն. անիկայ համարձակ խօսելով՝ ձեր կուռքերը ած չեն՝ սատանայ են ըսաւ. անոր համար ես զինուորական զարդս ալ հանեցի, որ ձեր անհաւատներուն մասնակից չըլլամ. Ճշմարիտ ած մեր քն է, որդին այ որ իմ տրս է, իմ Թգրս է. ես ալ անոր զօրականն եմ. չեմ դադրիր աս դաւանանքէն ինչվան որ լեզուս ալ կտրես։

Բրինկաս ու ամէնն ալ զարմացան ասանկ համարձակ խօսելուն վր. մէջերնէն մէկ մեծ մը պոսիդոնիոս ծաղր ընելով ըսաւ. անանկէնէ քուկին ածդ որդի ունի։ Հրամերես ըսաւ Թէոդորոս, որդի ածային, որդի Ճշմարտութեանը. բայց դուք ինչպէս չէք ամչնար, որ մէկ բազմածին կնիկ մը ած կըխոստովանիք, տասներկու ածներու մայր եղաւ կըսէք, մէկէն ծնանելով խոզի ձագերու նման։ Ան լսելով կռապաշտները կամչնային. Բրինկասն ալ տեսնալով որ չեն

կրնար իրեն վրայ ելլալ, քանի մը օր Թո-
ղուլ հրամմէց որ ինքիրմէ խրատուելով
շտկըվի · միտքը դրաւ ուրիշ քրիստոնէ-
ները չարչարելու ։

Երանելին Թէոդորոս արձըկվեցաւ, բայց
ուրիշ քրիստոնէներուն վ̄ր հոգ կըտա-
ներ չըլլայ Թէ չկրնալով դիմանալ դառ-
նան · անոր համար միշտ սիրտ տալու
հետ էր անոնց · և որովհետև շատ հոգի
կուգային քովը իր խրատները լսելու,
ամմէննալ բռնեցին բանտը դրին ։ Թէո-
դորոս տեսնալով որ ուրիշ քրիստոնեայ-
ները բանտի մէջ են, ինքը ազատ, ուրիշ
բան մը մտածեց · Ամասիա քաղքին մէջ
մէկ մեծ կռատուն մը կար Ռէայի կուռ-
քին որ և Կիւբեղէ կըսվէր · ա̄ծներու
մայր · աս կռատունը բռընկցուց մէկ
հոլոտ գիշեր մը · ինքնալ քովը կեցաւ
յայտնի ։ Ամմէննալ հոն վազելով բռնե-
ցին Թէոդորոսը, որ համարձակ կըխօս-
տովանէր, կըծիծաղէր իրենց սուտ ա̄ծին
վրայ, պոռըլով դատաւորին առջին բե-
րին ։ Երբոր դատաւորը հարցուց ինչու
ըրիր · Թէոդորոս աս երկիրը ախԹ առ-
նելով քարոզեց իրենց ա̄յն սուտիլը, ու
իրենց երկիրը յաւիտենական կրակին մէջ ։
Դատաւորը ծեծել հրամմէց · Թէոդորոս
պ̄խին տըվաւ · ի՛նչ տանջանք տաս՝ ժամկա-
ւոր են, ես չեմ վախնար, իմ Թ̄գըրս յ̄ս ք̄ս
աչքիս առջին է իս կըփրկէ · դուն կոյր ես
հոգւոյդ աչքովը, չես կրնար տեսնալ ։

Ասը լսածին պէս դատաւորը՝ բարկանալէն
հրամմեց աչքին առջեւէն դուրս հանել,
մութ խաւար բանտի մը մէջ դնել, ու
մարդ չիմացընել, որ հա՛ն անօթի ծարաւ
մեռնի։ Բայց ՚որ մխիթարել կե՛նը-
տէր, հրեշտակ ՚ոյ կըկերակրէր․ ան դի-
չերնալ յՌ երեւնալով ըսաւ․ Ես քեզի
հետ եմ ա՛լ թէ զօրէ․ մարդէ վերակուր
մանէր․ քեզի հոյց հրեշտակաց պատ-
րաստըված է երկինքը։ Մեր գոհանալ
սկսաւ ՚ոյ, սուրբս ըսելով օրհնել․ հան
եկան հրեշտակներու բազմութի, իրենք-
ալ մէկ տեղ ձայնակից եղան սուրբսեր-
գութէ․ աս ձայները լսելով բանտապա-
նը վազեց տեսաւ որ դռները գոց են,
բայց ներսը լուսաւորված, ձեռմակ հա-
գած մարդիկ բազմութ՚ք լցված՝ թէօդո-
րոսի հետ մէկ տեղ սուրբս կըսեն․ վախ-
նալէն վազեց դատաւորին պատմեց։ Դըր-
որ դատաւորնալ եկալ լսածին պէս
տեսավ, կարծեց որ քրիստոնեայները
գաղտուկ եկեր մտերեն, չորս դին զի-
նուորներ կեցուց, անանկ բանալ տըլավ
բանտին դուռը, որ դուրս եղածինի
բռնէ անոնք։ Մէյմընալ մտան տեսան
որ մարդ չկայ․ միայն ծառայն ՚ոյ թօմ-
բուխը զարկած․ ասկէց շատ վախ մտաւ
սրտերնին, դատաւորը հրամմեց հայց ու-
ջուր տալ անոր․ բայց ՚որն թէօդորէ բան
մը չառավ․ իմ ողորմած ՚ծս խս կըկե-
րակէ ըսաւ։

Քիչ մը անցնելէն ետեւ նորէն իր առ-
ջին բերել տըված դատաւորը. շատ բան
խոստացաւ ինչվան քըմապետ ընելու
զինքը, թէ որ կուռքերուն զոհէ. Մեր
աղվըները վեր վերցընելով խաչ հա-
նեց երեսը բռան, քանի որ կեանք ու-
նիմ՝ գիտցիր որ ես չեմ ուրանար յի՛ն
անունը. ձեր քըմապետին ու ձեր թա-
գաւորին վ՛ր կուլամ, որ մեծ բան կը-
սեպեն պիղծ տեղերը երթալ, հաւ մոր-
թել, անասուններուն աղիքները բանալ,
արիւնլըվայ ձեռվըներով նստիլ, զոհե-
րուն եղերովը պըշտըկվիլ. Մերոր ա
խոսքերս կըլսէին կռապաշտները, ակռա-
նին կըկըճտէին. դատաւորնալ հրամմեց
գլխիվար կախել, փուշերով ծեծել. եղը-
նալ երկըթներով անանկ քերեցին որ՝
մսերը կտոր կտոր վար կիյնային. իսկ
քաջնահատակը իր թէ ուրիշի մարմին
ըլլար՝ անանկ զուարթ կեցեր էր, միշտ
յի՛ն անունը կուտար. Դատաւորը կը-
սէր, չէ՞ս ամչնար որ յոյդ գըրերս քեզի
մեռած մարդու մը վ՛ր. Ս՛բը ըսաւ. ա
գեղեցիկ ամօթը ինծի ըլլայ, ու ամէն-
նուն որ քեզի անունը կուտան. ես իրեն
հետ եմ, ու յաւիտեան հետը պիտոր
ըլլամ.

Ան ատենը դատաւորը յուսահատելով
իրմէ, կըտակը ձգել հրամմեց իրենց կռա-
տունը երեւուն համար. Ս՛բը իր երեսը ու
բովանդակ մարմինը խաչակնքելով աղօթ-

քի կեցաւ ․ զինքը ողջակէզ մատուցանելով իր արարչին, խնդրեց զօրութ իրեն ու մէկալ բանդրլօզներուն համար ։ Աղէոնիկոս անունով մէկ սիրելի ընկեր մը ունէր, անալ իրեն կանչեց, ու աշխըրքիս մէջ իրար չիթողուցինք ըսաւ, անդինալ իրար չիթողունք ։ Երբոր կրակին մէջ ձգեցին զինքը՝ փառք տալով Այ իր հոգին աւանդեց յամին 305 ․ փետրվ․ 17 ․ Հանեղօղ քրիստոնեայները տեսան որ լուսոյ մը պէս վեր կելլար երկինքը ։ Ջան եկալ եւքայխտայի բարեպաշտ կնիկը ․ շատ ըստակ տալով մարմինը առաւ, եւքայխտա գեղը իր տունը տարաւ ․ ան տունը եղաւ երեւելի ուխտատեղի ․ ինչվան եկեղեցի շինվեցաւ հանորյն հրաշներուն համար ․ ուր ամմէն ցաւագար կըբժշկըվէր ․ ով որ ինչ նեղութ ունենար՝ երբոր հաւատքով նորյն թէոդորոսի կապաւինէր, օգնութ կըգտնար իրմէ ։ Ասանի մը տարիէն ետեւ հան բերին նաեւ մէկալ թէոդորոսին մարմինը, որ սորատելատ կըսաւլի ․ որուն վը վարը գրենք ։ Երբոր չմշկիկ կայսրը յամին 971, սկիթացւոց դէմ պտրզմէր, ան օրը նոյն թէոդորոսի տօնը ըլլալով՝ իրեն օգնութ կանչեց նորը ․ տեսաւ մէկը ձերմակ ձի հեծած որ թշնամիներուն վը վազելով տակնուվրայ ըրաւ ․ անկէց կայսրնալ սիրտ առնելով՝ մեծ յաղթութ ըրաւ ։ Այս յաղթութիւը բարեպաշտ կինմընալ ըս-

տանպօլու մէջ օր մը առաջ զուրցերէր. Թէ նա՝ ամածին կըսէր զօրականի մը. ով Թէոդորէ, կայսրը վտանգի մէջ է, շուտով հասիր օգնէ իրեն ։ Կայսրը աս յաղթութիւնը ընելէն ետև՝ եւքայիտա ե-ղած եկեղեցին քակեց, նոր մեծաշէն ե-կեղեցի մը շինել տըւաւ. ան քղքին որին անունովը Թէոդորուպօլիս կոչեց ։

---

ՍՈՒՐԲՆ ԹԷՈԴՈՐՈՍ

Ստրատելատ.

Նօփկայալ մեկալ Թէոդորոսին պէս եւ-քայիտայ գեղէն էր, անոր քեռորդին. քրիստոնեայ բարեպաշտ ծնողաց զաւակ. ածպաշտութ՟ը, իմաստութ՟ը կրթըւելով կորիճ՝ շնորհալի տեսիլքով ունենալով՝ խիստ երևելի եղաւ զինուորութե մէջ. ի-րեն ըրած քաջագործութեացը համար՝ մեծ պատիւ զօրավարութե առաւ, որ Ստրա-տելատ կըսուի ։ Իրեն բնակութիւնը եղաւ կապադովկիայի մէջ հերակլեա քղքը. որ և պոնտոսի արակլեա կըսուի. անկէց ետքն Թէոդորոսանալ Նռակլոցի ըռվեցաւ. հոն տեղս իրեն աղէկ վարմունքովը ամ-մէնուն սիրելի էր եղած, կռապաշտներէն ալ շատ հոգի քրիստոնեայ ըրած, մա-նաւանդ իր տակի եղած զինուորներէն ։ Նս ատեններս յամին իբրև 310. գաղե-

բնոս մաքսիմիանոս կայսրը՝ իրեն հին բարեկամը որ Լիկինէս կըսէր՝ կեսար ըրաւ. աս Լիկինէս Իզնիմիտ կընստէր. անկեց ամմէն տեղ հրաման խրկեց որ քրիստոնէութիւնը վերցընեն, կուռքերուն զոհեր տան։ Ան ատենը ոմանք մատնեցին իրեն Թէոդորոսը. Թէ ինքը քրիստոնեայ է, ուրիշներն ալ քրիստոնեայ կընէ. Լիկինէս վարպետութիւն մը ուզելով աս մարդս ձեռք ձգել՝ որ խիստ երևելի էր, թուղթ մը գրեց իրեն, կամ դուն քովս գաս ըսաւ, որ փառաւորութիւն կուռքերուն տօնը կատարենք, կամ ես քեզի գամ, որ խիստ կըփափաքիմ քեզ տեսնալու։ Թէոդորոս խելօքն իմացաւ Լիկինէսին չար միտքը, գոհանալ սկսաւ այ. որովհետև միշտ կըբաղձար Քրիստոսի համար արիւն թափել. Թուղթը բերողներուն պատիւ ընելով ըսաւ որ՝ ինքը Լիկինէսը թող հոս գայ կուռքերը մէկ տեղ բերելով, հոս ընենք կուռքերուն տօնը։

Երբոր Լիկինէս եկաւ Արակլիա քաղաքը իրեն զօրաց բազմութիւնը, ան գիշերը տեսաւ Թէոդորոս որ՝ իր տանը տանիքը բացուեցաւ, կրակ կըթափէր վրան, ձայն կուգար երկինքէն. զօրացիր ով Թէոդորէ, ես քեզի հետ եմ։ Երբ արթնցաւ ըսաւ քովիններուն. Աստուծոյ կամքը աս է որ՝ ես հոս արիւնս թափեմ Քրիստոսի համար. աս ըսելով գոհանալով Աստուծոյ աղէկ լաթերը

հագաւ · Լիկիանէսին առջին ելլալով իր փառաւոր տունը բերաւ ։ Լիկիանէս սիրով տեսնըվելով՝ աչհա ըսաւ ինչպէս որ գրեբէիր, եկայ քեզ տեսնալու, կուռքերուս մէջէն ազնիւներնալ հետս բերի որ զոհ մատուցանենք ։ Թէոդորոս խընդրեց որ իրեն տայ անոնք, առաջ ես ըսավ առանձին զոհ մատուցանեմ · ետքը դուրըր ժղվ՞ըր զոհէ · երբոր Լիկիանէս հաւատալով տըվավ իրեն, անիկայ ամէն կուռանալ ոսկեղէն քրծըլթէղէն կտոր կըտոր փշրելով աղքատաց բաժնեց ։

Ոս բանս երրորդ օրը լսեց Լիկիանէս, կարմանալէն հաւատալը չէրիգար, հարցուց Թէոդորոսի · անիկայ իրաւը ըսավ, ինչ որ ըրի՝ արդար ըրի, Թէ որ աս կուռքերը իրենց չիկրցան օգնել, քեզի ինչպէս պիտոր օգնեն · աս ըսելով յանդիմանեց իրեն կուրութիւնը, իր ա̅ծնէրուն սուտութիւնը, Ճշմարիտ ա̅յ փառքը, արքայութիւնը՝ որ քրիստոնէայ եղօղներուն պատրաստեր է ։ Լիկիանէս խիստ բարկանալէն հրամմեց մերկացընել · ստվընէրը ձեռվընէրը կապել անանկ ծեծել · անչափ անողորմ ծեծեցին որ մարմինը բզիկ բզիկ եղավ · արիւնը գետի մը պէս կըվազէր · անկէց ետքը հրամմեց կախել, երկըթով քերել, կրակով իրեն խոցերը երել · ա̅քը իր Թէ բան չէր իմանար՝ անանկ կըհամբերէր աս տանջանքներուն ։

Լիկիանէս կատղելով՝ իր աչքէն հեռը-

ցընելու համար բանտը դնել հրամմեց․ քանի մը օրէն առջին բերել տալով՝ երբ- որ չիկրցաւ միտքը դարձընել, խաչ հա- նել հրամմեց, նետ (օխ)նետելով սպան- նել․ բայց երանելւոյն սիրտը անանկ վառ- ված էր քու սիրովը՝ որ ուրախութ՜ կը- քաշէր ։ Ամէն տեսնօղները կուլային․ ողջն գրագիրնալ որ հոն կեցած ամէն բանը կըգրէր, չիդիմանալէն թուղթը ձգեց, գնաց իրեն ոտքը ինկալ լալով․ ողը կամաց ձանով ըսաւ իրեն․ մի լար, մի ձգեր թուղթդ․ քիչմընալ կեցիր որ՝ իմ վախճանս ալ գրես․ աս զուրցելով աչ- վըները երկինքը վերցուց․ ինչու համար իս թողուցիր տէր իմ ըսաւ․ քու անուանդ համար է որ նետ զարնելէն աչվըներս դուրս ընկան, մարմինս կրակէն հալե- ցաւ, ոստվըներս կտոր կտոր ընկան․ բո- լոր դէմքս փոխված, մարդու կերպա- րանքէն դուրս ելած քու սիրոյդ համար կըհամբերեմ․ դու ինչու համար իս կը- թողուս․ ա՛ռ հոգիս կաղաչեմ քու քովդ հանգչեցու ։ Այսչափ ըսելով լռեց․ ա՛լ չիկրցաւ խօսիլ մարմինը տկարացած ըլ- լալով, կուրծքը ճըմլըված ։

Միկիանէս մեռած սեպելով զինքը՝ հրամ մեց պահապան դնել քովը, որ գիշեր ցորեկ նային, չըլլայ թէ քրիստոնեայնե- րը խաչին վրայէն հանեն տանին մարմի- նը ։ Բայց հրեշտակ մը առջի գիշերը ե- կաւ խաչէն վար ինջեցուց, իրեն մար-

միննալ ողջընցուց. զօրայնը ըսավ քո
քեզ չխթողուր. ուրախ կեցիր, հիմա
կերթաս յիսին քով՝ արքայութեն պսակը
կառնես: Էտու եղածին պես՝ լիկիա-
նես իր մենծերեն երկու հոգի խրկեց
որ, մարմինը հանեն իր առջին բերեն,
ինքը առնէ զուրչինէ սնտուկի մեջ դնե-
լով անանկ ծովը ձգէ որ՝ քրիստոնեայք
չառնեն չիպստուեն. ասոնք հեռըվանց
գալով տեսնալով որ խաչին վր բան մը
չիկայ, վազելով քովը եկան տեսան որ՝
սբն թէոդորոս խաչին տակը նստած ողջ
առողջ զուարթ երեսով կըպատմեր հոն
եղօղ ժողովրդեան այ ըրած հրաշքները
իր վրայ:

Էն ատենը երկուքնալ որ կըռվեին ան-
տիօքոս ու պատրիկիոս՝ կանչելով ըսին.
մեծ է քրիստոնեից ածը, անկեց ուրիշ
ած չիկայ. իրենց զինուորներովը գացին
սբյն ոտքը ինկան. մենքալ քրիստոնեայ
ենք ըսին, աղաչէ ած որ մեզալ իր ողոր-
մութեը արժանի ընէ: Լիկիանես աս բա-
ները լսելով՝ կեսատն իշխանին հրամմեց
որ՝ 300 զինուորներով երթայ ամմէննալ
կոտրէ. ասոնք հոն գալով այ ըրած
հրաշքները տեսնալով՝ իրենքալ քրիստո-
նեայ եղան: Էն ատենը ամմէն բազմու-
թիը մէկ ձանով աղաղակել սկսան, մեծ
է քրիստոնեից ածը. եկեք երթանք լի-
կիանեսը քարկոծենք. մեր թրը ան
ածն է՝ որ թէոդորոս կըպաշտէ:

Աս խռովութիւնը բոլոր քաղքըցոց մէջ մըտնալով՝ շատ անկարգութի եղաւ. Լէանդրոս մէյմընալ ս՟բյն վրայ վազեց որ մեռցընէ, կեսարն իշխանը ս՟բը խալըցուց, Լէանդրոսը սպաննեց. աս խռովութիւնները տեսնալով ս՟բն Թէոդորոս՝ մէջէրնին մըտաւ խաղաղցուց ըսելով, քրիստոնէից սաստիկ խռովութի ընել չի վայլեր, այլ սիրով վարվիլ.

Մնացած քրիստոնէից բաղմութիւնը առին ս՟բը քաղաքը տարին, բանտին մէջ եղող քրիստոնէայները երբոր տեսան՝ կանչեցին, ողորմէ՛ մեզի ծառայ ա՟յ. ժղ՟վդը վազեց որ բանտին դուռը կոտրէ, ս՟բը չթողուց. ինքը խաչակնքելով վրան՝ դըռները բացվեցան, կապերնին քակվեցան, ուրիշ շատ հրաշք եղան ան օրը. Լիկինիոս տեսնալով որ ամէննալ քրիստոնեայ կըլլան, չորս դին ջուր կտրեցաւ, երեւելի զինուորներէն քանի մը բանտը խրկեց, որ գաղտուկ գլուխը կտրեն.

Անանկով կատարեցաւ ս՟բն Թէոդորոս յամին 315. կամ 320. օգոստոսի 26. իրեն մարմինը ինչպէս որ առաջուց ապսպրեր էր՝ արակլիա քաղքէն առին Եւքայիտա գեղը բերին, մէկալ ս՟բ Թէոդորոսին քովը դրին, որ իր քեռին էր. շատ հրաշքներ եղան ու կըլլան, ով որ հաւատով կարդայ ս՟րյն անունը. անոր համար վենետիկցոց հնուցմէ պաշտպան եղաւ աս ս՟բ Թէոդորոսը.

Ասիկայ ծնաւ ստամպօլ յամին իբր 380. որ երկրորդ տարին էր մեծին Թէոդոս կայսեր. Հայրը կըսուէր Անտիգոնոս, ազգական էր կայսեր ու երևելի ատենակալ, որ սինկղիտոս կըսուի. խիստ խելացի ու բարեպաշտ մարդ. Մայրը կըսուէր Եւպրաքսիա, Թ̃րական տունէ, խիստ հոգևոր խաթուն ու ողորմածասէր, սիրելի կայսեր ու Թագուհւոյն։

Երբոր երկու տարի իրեք ամիս անցաւ իրենց կարգըմելըն ետև, առջինեկ զաւակ մը եղաւ, որ է աս երանելի աղջիկը. որուն հայրը Անտիգոնոս՝ իր խաթունին անունը վրան դնելով՝ Եւպրաքսիա կոչեց, ըսելով իրեն. ահա ա̃ծ մեզի աղջիկ զաւակ մը տըվավ, որ քու յիշատակիդ համար քուկին անունդ վրան դրի, մեզիալ հերիք ժառանգորդ պիտոր ըլլայ. ասկից ետքը յիշելով աշխարհիս անցաւոր ունայնութիւնը՝ իրարմէ հրաժարելով՝ խելվընիս մտվընիս միայն ա̃ծ պաշտելու տանք, աղքատները հոգանք. ինչպէս որ կըսէ ս̃բ գիրքը || Աշխարհս անցանէ, բայց որ առնէ զկամս Ա̃յ մնայ յաւիտեան ||։ Հոս կյսենք որ քանի՛ տարի պիտոր ապրինք, ի՛րչափ ալ աւելի ապրինք ու Թսուն տարին պիտոր հասնինք, անկից աւելի կեանքը՝ ցաւօք է ու հեծութե̃, ինչպէս որ կըսէ ս̃բ գիրքը, ետքնալ վերջապէս մեռնինք եր-

թանք պիտոր. Հիմա որչափ աղէկ կըլ-լայ որ՝ անդիի կեանքը մոռնալով՝ ան կեանքին համար պատրաստուինք որ յա-ւիտեան պիտոր քշէ ։ Աս խօսքս լսածին պէս իրեն կինը՝ ձեռվըները վեր վերցը-նելով անանկ փառք տըւաւ ա̅յ. որով-հետեւ իր բաղձանքնալ ան էր. միշտ ա-ղօթք կընէր ա̅յ, որ իր երկանը սիրտը տպաւորէ աշխըրհիս ունայնութ̅իը, միտքը փոխէ ։

Անտիգոնոս իր կնկանը կամքը հասկընա-լով գոհու̅ն տըւաւ ա̅յ. շատ բան բաժ-նելով աղքատներու, ժամերու, վանքէ-րու, անարատութ̅ ապրեցաւ. բայց ասոր վ̅ր տարի մը միայն ապրելով մեռաւ ։ Անկից ետեւ եւպրաքսիա իր կինը՝ առաւ իրեն աղջիկը տարաւ Թ̅րին ու Թագու-հւոյն առջին, իրենց յանձնեց. յիշելով Անտիգոնոսին հաւատարիմծառայութ̅իը՝ մի մոռնաք ըսաւ աս որբս. անոնքալ լա-լով մխիթարեցին կնիկը. քիչ մը անցնե-լէն ետեւ առաջարկեցին որ՝ իրեն աղջիկը տան մէկ մեծ զօրապետի մը տղին. Եւպ-րաքսիա խաթուննալ հաւնեցաւ աս բա-նիս. երբոր ատենը գալու ըլլայնէ ըսաւ աս պսակը ընենք. որովհետեւ ան ատենը դեռ հինգ տարվան էր եւպրաքսիա իրեն աղջիկը ։

Բայց աս բանէս ետեւ՝ սինկղիտոսներէն մէկնալ զինքը ուզեց կին առնել, Թա-գուհին միջնորդ բռնելով աս բանիս .

եւպրաքսիա խաթունը որ իր երիկը ան-
տիգոնոս մեռնելէն ետև միտքը դրեր էր
աշխըրքէս հրաժարիլ, աս խօսքս լածին
պէս՝ խիստ շփոթեցաւ, ցաւեցաւ. իր միտ-
քը թագուհոյն բանալէն ետև՝ միտքը
դրաւ ստանպօլէն ալ հեռըննալ. իրեն ապ-
րանքները աղքատնէրու, վանքերու բաժ-
նելով, առաւ իրեն եւպրաքսիա աղջիկը՝
որ օխտը տարվան էր ան ատենը՝ գաղ-
տուկ մըսըր գնաց: Հոն որովհետև շատ
գեղէր, ագարակներ ունէր՝ անանկ ցըցը-
նելով որ ան երկիրները տեսնալու հա-
մար եկերէ, կանչեց իր գործակալները
համար ուզեց. բայց ինքը վերինթեբայի-
դը ելավ, հոն եղած վանքերը պտըտե-
լով շատ բան բաժնեց անոնց:

Հոն մէկ վանք մը տեսաւ, հարիւր եր-
սուն կուսանք մէջը. զարմանալի առա-
քինուէ՞ գիշեր ցորեկ աղօթքի հետ կըլ-
լային. գետնի վ՞ր խոտեղէն կամ մազե-
ղէն մը բռնելով՝ անանկ քիչ մը քուն կըլ-
լային. հագած զգեստնինալ անանկ մազե-
ղէն էր. օրը ժում մը կուտէին իրիկունէ
իրիկուն. միայն կիրակի ու շաբաթ օրե-
րը՝ երրորդ ժամու ատեն հաց կուտէին,
ոսպ, բանջար ու պտուղ, որ լուր օրերը
չէին ուտէր. իսկ միս, գինի, անուննալ
չէին ուզէր լսել. մէկէ մը ըստակ չէին
առնէր, այլ իրենց ձեռագործովը կապ-
րէին. բաղնիք մտնալ լուացվիլ ամենևին
չէին ըներ: Ամէնուն ջանքնալ ան էր

որ առաքինութ՟ մէկզմէկ գերազանցեն, պաք բռնելու, աղօթք ընելու, աշխատելու, հնազանդելու, խոնարհութի՟ ընելու, առանց կեղծաւորութե՟ ամէն աշխարհային բաներէ հրաժարելով ։ Մ՟ւէ որ մէկը հիվընտնալու ըլլար՝ դեղի, բժշկի, չէին իյնար . այլ Ա̄յ կամացը կըյանձնէին, աստուծմէ բժշկութի՟ կըխնդրէին . մէկը դուրս չէր ելլար, այլ միշտ վանքին մէջը կըկենային ։

Եւպրաքսէ խաթունը աս վանքը գնաց խունկ ու մոմեղէն տանելով, ուրիշ պարգեւներալ իրենց տալու . բայց Թէոդուլի սարկաւագուհին կամ որ նոյն է մեծաւորուհին բան մը չառաւ . հասկըցընելով որ՝ հոս եղած կուսանքները ամմէնն ալ աշխարհ ձգերեն, երկնային բարիքներու կըսպասեն . բայց քեզ չիտըրտմեցընելու համար խունկն ու մոմը առնենք եկեղեցնայ համար ։ Ուիշ մը խօսելէն պատմելէն ետեւ՝ Թէոդուլին հարցուց Եւպրաքսիա աղջկանը . կըսիրե՞ս որդեակ ըսաւ զք̄ ու աս քոյրերը որ զիրենք ք̄ի են տըւեր . պխնե̄ց Եւպրաքսէ աղջիկը . հրամմերես խիստ կըսիրեմ ըսաւ, կուզեմ ձեզի հետ մէկ տեղ ըլլալ, մէկ տեղ ք̄ օրհնել ։ Բայց Թէոդուլին Ի՞նչ պիտոր ընես ըսաւ քու նշանածդ . պխնե̄ց Եւպրաքսէ, ես ք̄ Թ̄ըը չեմ փոխեր երկրաւորիս հետ, որ այսօր է, վաղը կըկորսուի ։ Մ՟ւէ որ անանկ է ըսաւ Թէո-

դուլին՝ մեզի հետ եղիր․ Եւպրաքսէն պխնեց․ իրաւ կըսեմ, թէ որ մօրս դէմ չէնէ, չեմ բաժնըվիր անկից ։

Եւպրաքսեայ մայրը որ աս խօսքերս կըլըսեր, լալով գոհունի կուտար ա̄յ, ասանկ ա̄ծսիրուի̄ տեսնալով իր ուխտը տարվան պզտիկ աղջկանը վր̄․ ետքը ոտք ելլալով որ երթայ, Եւպրաքսիա աղջիկը չուզեց երթալու․ Թէոդուլի մեծաւորուհին յորդորեց որ երթայ․ դուն դեռ տղայ ես ըսավ, մօրդ կարօտ ես․ չես կրնար աս վանքին խստուի̄ը քաշել․ տեսավ որ միտքը չփոխվիր՝ ըսավ, որդեակ, մէկը չկրնար հոս կենալ, ինչվան որ իր սերը ք̄ի չիտայ, երկնաւոր փեսային խաչը չքաշէ ։ Եւպրաքսէն ըսավ ու՞ր է ք̄ը, Թէոդուլին մօրը հետ մէկ տեղ ժամը տարաւ, ք̄ի խաչելուի̄ը ցըցուց․ աղջիկը տեսածին պէս պագաւ․ եսալ ք̄ի կերթամ ըսավ, մէյմընալ իրմէ չեմ բաժնըվիր ։ Ան ատենը Թէոդուլին ըսավ մօրը․ գիտցիր խաթուն, որ ա̄յ շնորհքը կերևնայ աս աղջըկանը վրայ․ թող տուր, ա̄յ ընծայէ․ անոր փոխարէնը ք̄է պխտոր առնես ։

Մայրը չիկրնալով չէ ըսել, աղօթք ընելով ա̄յ ընծայեց, Թէոդուլեայ յանձնեց․ անալ աղօթք ընելով առավ, իրենց վանքին լաթերը հագուց․ մայրը գնաց՝ բայց իր սիրտը միտքը հոն ըլլալով՝ ամմէն իր ապրանքները աղքատաց ու վանքերու

բաժնեց . ինքնալ ան վանքը մտաւ ուր
մնաց իր աղջիկը ։ Տես ո՜յ բանը որ՝ քանի
մը օր անցնելէն ետև թէոդուլի մեծա-
ւորուհին տեսիլք տեսաւ . անտիգոնոս
լուսաւոր փառքի մը մէջ նստած՝ կաղա-
չէր քո՛ի որ իրեն խաթուննալ արքայուէը
մէջ առնէ ։ Նա տեսիլքը պատմելով իրեն՝
ապըսպրեց որ մահուան պատրաստութ̃ի
տեսնայ . անիկայ խիստ ուրախացաւ աս
բանիս վ̃ր . որովհետև միշտ կաղաչէր ո̃յ ,
օր մը առաջ լմնցընէ աս կեանքս , քնի
քովը երթայ . կանչեց իր աղջիկը եւ-
պրաքսէն , խրատ տալէն ետև ձեռքը յանձ-
նեց ունեցած երկիրներուն թուղթերը .
ապսպրեց վանքերու և աղքատներու
տալ . իրեք օրէն վախճանեցաւ ։
Նոր մեռնիլը լսելով նշանածին հայրը՝
հասկըցուց թ̃գրին՝ որուն խորհրդականն
էր՝ թէ անտիգոնոսին կնիկը մեռնելով՝
եւպրաքսէ աղջիկը առանց մօր , առանց
վերակացուի մնացած էր՝ հրամմէիք որ
հոս գայ իր նշանածը առնելու . շուտ մը
հրաման գրեց թ̃գրը իրեն մեծ խոստ-
մունքներ ընելով ։ Նայց եւպրաքսէն իր
ձեռքովը պ̃խն գրեց՝ յիշեցընելով իր
միտքը , որ մօրը հաւանութ̃ը քնի էր տր-
ված զինքը , աշխըրքի անուն չէր ուզեր
լսել . աղաչելով որ հոն եղած իրենց գե-
ղերը ապրանքները՝ աղքատներուն տայ
ու վանքերու ։ Թ̃գրը գովեց եւպրաք-
սեայ միտքը . ան ապրանքներնալ իրեն

ուզածին պէս ընել տըւան:

Նատենը տասներկու տարւան էր եղած Եւպրաքսէ կոյսը, որ լսելով թգ̃րին ըրածը խիստ ուրախացաւ. օրէ օր իր ճգնութիւնները եւելցուց. որը ժամ մը կուտէր աղ, հաց, ջուր. միայն տօն օրերը սալ ու կանաչեղէն. անդադար աղօթք կընէր. Ա̃ծաշունչին տեղեակ ըլլալով միշտ կըկարդար. իրեն ջանքն էր առաքինութ̃է վաստըկիլ, մանաւանդ խոնարհութ̃է ու հեզութ̃է. ամենուն ծառայութիւն կընայէր որ ինքը ընէ: Անոնց մէջ կանոն մը կար, երբոր փորձութ̃ի մը կուգար սատանայէն՝ կըզուրցէին մեծաւորուհիին. անով պաք ու աղօթք կըսանձնէր. ինքնալ ջերմեռանդութ̃ե աղօթքի հետ կըլլար: Երբոր Եւպրաքսեայ ասանկ հանդիպեցաւ, ամչցաւ զուրցելու. անկէց տրտում էր կեցած, կուլար. չէր ուզեր ոչ հաց ուտել, ոչ ջուր խմել. տեսնալով որ՝ մեծաւորուհին ամենց փորձութ̃ի քաշողներուն քար կրել կու տար, մախիր ցանել կու տար իրենց հագուստին վ̃ր, ինքնալ անանկ սկսաւ ընել. բայց մէկալ կուսանքը իմանալով՝ հասկըցուցին մեծաւորուհիին, անալ կանչեց Եւպրաքսէն յորդորելով խրատվանցուց. սատանան է ըսաւ որ փորձութ̃է հետ մէկ տեղ ամօթ կըբերէ, զուրցընել չիտար որ դեղնալ չիգտնաս, հոգեոր կարգով ու աղօթքով որ սա բանիս համար դըրե-

բէն որ հարք · բայց դուն զուրցելովդ
խոստովանելովդ սատանային գլուխը կո-
խէ, որ քուէ պրատկը առնես ։
Իր ըսելով վրան աղօթք ըրաւ · մէկի մը
յանձնեց որ մեծ մարապետներէն մէկն
էր, յուղիա կըրմէր · որ խիստ սէր կա-
պեց եւպրաքսեայ վըր, աղէկ խրատներ
սկսաւ տալ · կըյորդորէր սատանային
փորձութիւնները միշտ զուրցել հոգեւոր մօ-
րը, ո՛չ զի անոր աղօթքովը յաղթէ սա-
տանային ։ Եւպրաքսէնաս խրատները լսե-
լով անկեց ետքը բան մը չէր պահէր իր
հոգեւոր մօրմէն · հրաման խնդրեց երկու
կամ իրեք օրը ժամ մը ուտելու, ան ա-
տենը որ ինքը տասնըօխտը տարւան էր
եղած ։ Մեծաւորուհինալ զինքը փոր-
ձելու համար ծանր գործքեր սկսաւ
յանձնել · տեղ մը քարեր կային, հրամ-
մեց անոնք կրել՝ իբր թէ չէնք չինելու
համար պէտք էին · եւպրաքսէնալ սիրով
կրէր, կըմնայէր որ իր մարմնաւոր գե-
ղեցկութիւնը աշխատանքով պաքով ավրէ
աղերցընէ ։ Տասնըհինկ օր քարերը կրե-
լէն ետեւ՝ հոգեւոր մայրը փորձելու հա-
մար հրամմեց իրեն ան քարերը ուրիշ
տեղ տանիլ · տասնըհինկ օրալ ան քարե-
րը կրեց · իրեն սովորական գործքերէն-
ալ պաքէնալ ամենեւին ետ չիկեցաւ ։
Փռնապանալ ընել տըվաւ՝ որ հաց չինէ
ամէնուն համար · եւպրաքսէն առանց
մէկի մը օգնելու կընէր, ուրիշ կուսանք

ներուալ կըծառայեր ։

Սատանան տեսնալով որ չիկրնար աս աղջկանը յաղթել, գիշեր մը երբոր քուն էր՝ իր նշանածին կերպարանքը մտնալով բազմութ̄ ներս մտաւ՝ որ զինքը առնէ տանի․ եւպրաքսէն վախնալէն կանչել սկսաւ, ինչվան լսեց մեծաւորուհին եկավ արթընցուց․ երբոր պատմեց եւպրաքսէն տեսածները, մեծաւորուհին սիրտ տըվավ․ քո̄ քեզի հետ է ըսավ, չիթողուր քեզ սատանային ձեռքը ։ Գիշերվան ժամը զուրցելէն ետև հրամմեց եւպրաքսեայ ոտքի վր̄ կենալով̄ը կուսանքներուն վարքը կարդայ․ եւպրաքսէնալ անանկ աղէկ կարդաց որ՝ ամմէննալ լաց շարժեց ։

Ասանկ օրէօր առաջ կերթար հոգևոր ճամփու մէջ․ ամմէն ժամասացուե̄ ատենը անխափան կըգտնըվէր, ամմէն աշխատանքի գործքի կըվազէր, աշխարհական խօսքերէն կըփախչէր, հոգևոր խօսքերը ջերմեռանդու̄թ կըլսէր ։ Հրամման ուզեց մեծաւորուհիէն շաբաթնիքուն հինկ օր անօթի կենալ, միայն շաբաթ ու կիրակի կերակուր ուտել․ որովհետև շատ է ըսավ իմ քաշած պտուղս սատանային ձեռքէն․ անալ հրամման տըվավ, միայն զգուշ կեցիր ըսավ որ չհպարտանաս․ չըլլայ թէ ուրիշ դիւացէն սատանային որոգայթը իյնաս աւելի պաքիդ համար ։

Բայց սատանան ուրիշ փորձութի մը հանեց անոր դէմ. քուրերուն մէջէն մէկը գերմանա բռնած խիստ հակառակ ընկաւ եւպրաքսեայ դէմ. միշտ կանարգէր կընախատէր, կեղծաւորութե համար անչափ պաք կըբռնես կըսէր որ՝ քեզ մեծաւորուհի ընել տաս: Եւպրաքսէն թողութ ուզելով իրմէ՝ միշտ կընայէր խոնարհութ սիրտը շահիլ: Երբոր չեղաւ՝ մեծաւորուհին կանչեց գերմանան, աղէկ մը յանդիմանելէն ետեւ՝ քանի մը օր իրենց ժողովքէն դուրս հանեց. հազիւ եւպրաքսեային աղաչանքովը ներս առաւ:

Երբոր քանը օխտը տարւան մը եղաւ եւպրաքսէն՝ խնդրեց հոգեւոր մօրմէն որ բոլոր մեծ պաքը անօթի անցընէ. ոպ̃ զի կատարեալ յաղթեմ ըսաւ սատանայի ինչպէս որ դուն յաղթեցիր. որովհետեւ քս̃ մեր տ̃րն ալ կըսէ. ‖ Այս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք եւ պահօք ‖: Հոգեւոր մայրնալ մէկալ քուրերուն աղաչանքին համար հրաման տըւաւ: Երբոր ծաղկազարդը եկաւ՝ աղաչեց որ ինչվան աւագ եշթիալ իր ծոմը չաւրէ, անանկով որ հաղորդութը առնէ. բայց ան օրը անանկ մարմրիլ մը եկաւ իրեն՝ որ գետինը ընկաւ. հազիւ կրցան տանիլ եկեղեցին որ խորհուրդը առնել. անով զօրացաւ:

Աղօթքը լմնալէն ետեւ՝ հոգեւոր մայրը խրատ տըւաւ չափէն աւելի ձգնութի չը-

նել․ ան օրը հայ ուտելէն ետև ապըսպը-
րեց ամմէն որ մէյմէկ ժումուտել․ ան-
կեց ետքը եւպրաքսէն ալ անանկ ըրաւ․
Այս սատանան մարմնաւոր հարուած-
ներով սկսաւ փորձել՝թըուհին․ օր մը հո-
րէն ջուր քաշելնինի՝ յանկարծ հորին
մէջը ձգել տըվավ գլխիվար․ հոն վազե-
ցին մէկալ կուսանք, երբոր հորէն հա-
նեցին՝ ամենևին անվնաս գտան․ որով-
հետև եւպրաքսէն իմնալնինի օգնութի
կանչէրեր զքս․ հորէն ողջ ելաւ, ալ ա-
ւելի սկսաւ աշխատիլ․ Ուրիշ օր մը փայտ
կոտրելնինի՝ սատանան անանկ բռնեց
փայտահարը՝ որ ծռելով իր ոտքին զար-
կաւ․ անանկ գետինը ընկած մարած
գտան՝ ինչվան որ ուրիշները հասան,
ջուր զարնելով երեսին խաչակնքելով ար-
թընցուցին․ ետքը նորէն աշխատանքի
տըվավ զինքը․ ( ) մընալ փայտ կոտրե-
լէն ետև երբոր վրան շալկած սանդուխ-
քը (ներտիվէնը) կելլար, սատանան յան-
կարծ զարկաւ, վերէնիվար գլորեցաւ․
քովինները մեռած կարծեցին զինքը․
բայց եւպրաքսէն զօրութըն քնի ոտքի վր
կեցաւ անվնաս․ Նըգամմընալ երբոր կրա-
կին առջին կեցած բան կեփէր, անանկ
եռալով դուրս պոռտքայ որ՝ երեսին ու
վրան ցաթկեց․ ան ատեննալ անանկ
պահեց զինքը ած, որ բան մը չիմա-
ցաւ․
Սատանան սանկ զանազան փորձանք-

նելով կուզէր կոյսը կորսնցընել, քնալ զանազան հրաշքներով կըփառաւորէր ։

Մէկ դիւահար կնիկ մը բերին խիստ կապուած, երկաթներով կապած՝ վանքէն դուրս ձգեցին, բերողները փախան. մէկը չէր կրնար մօտենալ, կերակուրնալ հեռըվանց երկնցընելով կուտային. որչափ որ աղօթք ըրին՝ չկրցան բժշկել ։ Բայց միայն եւպրաքսէն իր մեծաւորուհիին հրամմելովը քովը կերթար կերակուրնալ կուտար. գերմանի մարապետունալ որ նախանձ ունէր եւպրաքսեայ վրէ, փորձեց ինքնալ գնաց կերակուր տալու. դիւահար կնիկը ասոր վրան վազեց, լաթերը պատռելով գետինը ձգեց, աղրաներովը խածնել սկսաւ մարմինը, մէկը չկրցաւ խալըցընել, միայն եւպրաքսէ կոյսը, որ գերմանին ազատեց, դիւահարին վրայալ շատ աղօթք ըրաւ, գաւազանով զարնելով յանուն յսի կըհրամմէր դիւին որ ելլայ. անիկայ կաղաղակէր չեմ ելլար, ելլալու ըլլամ ուր երթամ կըսէր. եւպրաքսէն հրամմեց ելլաս երթաս արտաքին խաւարը անշէջ հուրը. սատանան երբոր լսեց աս քնին խօսքերը՝ վայ տալով իրեն ըսաւ. վայ ինծի որ մէկ աղջիկէ մը կըբռնադատվիմ. աս ըսելով՝ ծուխ մը հանելով հալածվեցաւ գնաց. ամէնը զարմացան ։

Նանկալ օխտը տարվան տղայ մը անդամալոյծ խուլ ու համր ըռընտցուց ։

Աս բաներս ըլլալէն ետև գիշեր մը տե-
սիլք տեսաւ մեծաւորուհին՝ որ լուսա-
ւոր մարդիկ իրեն կըսէին . ան եղբարք-
սէն մեզի բեր . անմահ Թ̃ըը ամենուն
ա̃րը կուզէ անիկայ ։ Երբոր առին տա-
րին՝ մէկ գեղեցիկ դուռ մը հասան որ
ինքիրմէ բացվեցաւ , ան դռնէն ներս
տարին ա̃յ առջին կեցուցին . որուն ոտքը
պագաւ եղբարքսէն , բիւրաւոր հրեշ-
տակներաւ անուշ ձայներով երգել սկը-
սան . հոն մայրն ա̃յ կեցած կըցըցնէր
իրեն անճառելի փառքը անթառամ պը-
սակը բռնելով ։ Աս է վարձքը որդեակ
քուկին ճգնութեդ որ ինչվան հիմա քա-
շեցիր , տասն օրէն պիտոր գաս վայե-
լես ։

Երբոր աս տեսիլքը պատմեց ամենուն կու-
սանքներուն , ամենքնալ լալ սկսան , ինչ-
պէս պիտոր զատվինք կըսէին անոր ո̃ր
ընկերուհէն . եղբարքսէնալ լսելով անալ
լալ սկսաւ . մէկ բարեգործուհի մը չու-
նիմ կըսէր , որ համարձակիմ քո̃ւ առջին
երևնալու . վա՜յ իմ ծուլութեն , ես կար-
ծէի որ դեռ շատ պիտոր ապրիմ , պտուղ
արժանի ապաշխարութե կընամ ընել . հի-
մա ասանկ Թող խորհրդով ինչպէս ար-
ժանի պիտոր ըլլամ ա̃յ առջին ելլալ .
գոնէ տարիմընալ ապրէի՝ որ ատեն ու-
նենայի բարեգործուհի մը ընելու . մե-
ծաւորուհին յոյս կուտար կըքաջալերէր
նորէն տեսիլքը պատմելով ։

Եւպրաքսէն աղէկ հասկընալովը կամ-
քը, յոր ու ա̃ծածնայ բարեխօսութ̃եը
վ̃ր ապաւինելով, հրաժարական ողջոյնը
տըվաւ իր հոգևոր մօրը մեծաւորուհի-
ին ու ամմէն կուսանքնէրուն. ժամ մը-
տաւ, գիշերնիլուս աղօթքի հետ ըլլա-
լով պատարագ տեսնալէն ետև հաղորդը-
վեցաւ. ժամէն ելաւ, հիւանդ պառ-
կեցաւ: Ամմէն կուսանքնէրը քովը շար-
ված կուլային կողքային իրմէ բաժնըվե-
լուն վրայ. անիկայ աղօթք յանձնելով
որ մէկ տեղ ըննեն. երբոր լմնցաւ, սրբու-
հինալ հոգին աւանդեց իբր երսունու-
թը տարվան. երսուն տարի վանքին մէ-
ջը կենալէն ետև:

## ՍՈՒՐԲՆ ԲԱՐՍԵՂ

Ծնաւ ղայսէրի. իրեն առջիննէրը սե-
վըստցի էին, բայց հայրը նէօկէսարա-
ցի էր, նոյն անունով բարսեղ կըսվէր.
մայրը ղայսէրցի էր եմեղիա կըսվէր. եր-
կուքնալ ս̃բ. իր պապնալ ու քեռինալ
մարտիրոս եղած էին. իր ամմէն տունն
ալ սրբակաց մարդիկ էին: Իսկ իրեն
մակրինա քոյրը՝ ամմէնէն երևելի եղած
էր ս̃բութ̃ ու իմաստութ̃. որ իր եղբարնե-
րը ու քուրերը ամմէննալ իր ձեռքը մեծ-
ցուց աղէկ հոգևոր կրթութ̃ տալով. ա-

ճանկով ասոնք իրր թէ ամէնինալ տնով
տեղովնը եղան ։

Բարսեղ իր պզտիկուն առենը ծանր հի-ւանդութիւն մը քաշեց . Հայրը խիստ տրտ-մելով՝ քունին մէջը տեսաւ որ՝ Քս կը-սէ իրեն , ինչպէս որ աւետարանին մէջը գրած է . « Երթ , որդին քո կենդանի է » . Արթնալ անոր պէս հաւատալով՝ բոլորո-վին ողջընցած գտաւ իր տղան . որուն աղէկ կրթութիւն տըվաւ թէ ածպաշտութէն և թէ ուսման մէջ ։ Երբոր տասնըվեց տարուան եղաւ՝ հայրը վախճանած ըլլա-լով՝ Բարսեղ իր ուսումնասիրութիւնը ելլե-ցուց . աղէկ սորվելու համար աս գիտ-ան գլին քալեց , Աթէնք գնաց . ուր գըտ-նալով իր դաւառակիցը Գրիգոր Նազիան-զացին , խիստ սէր կապեցին երկուքը ի-րարու հետ . Մէկզմէկ կըյորդորէին ա-ռաջ երթալու ուսման ու առաքինութէ մէջ ։ Բայց Բարսեղ չիգտաւ Աթէնքը ինչպէս որ կըկարծէր , համ մը չառաւ . իրեն սիրտը վերին իմաստութիւնը կըփնտը-ռէր . իսկ աթենացիք միայն երկրաւոր գիտութէ ետեւէ ընկած էին , անոր հա-մար Աթէնքը ունայնութի կըկոչէր Բար-սեղ ։

Գրիգոր կըյորդորէր անիկայ սիրտը չի-կոտրել , ինչվան որ ուսումնին լմնցընեն . ետքը երկուքը մէկ տեղ հօգևորին տան ղիրենք . ասանկով աս երկու երիտասար-դը մէկ ընտիր օրինակ մը էին եղած ա-

թէնքի մէջ իրենց առաքինի վարքովը։
Այլ որ բարսեղ դարձաւ աթէնքէն, ի-
րեն մակրինա քոյրը, որ էր լման իմաս-
տութիւն կուսան, վախնալով չըլլայ թէ բար-
սեղ երկրաւոր գիտութիը սորվելով սիրտը
փքուի, հոգեւոր իմաստութէն պտղը, շատ
խրատ կուտար իրեն քրիստոնէական կա-
տարելութե՛ն եռանէ իյնալ։ Նա քրոջը
խրատներէն բարսղին սիրտը աւելի վառ-
ւելով, իր սէրը աշխարհային գիտութէ,
փառքէ բոլորովին կտրեց, ա̃ծային իմաս-
տութէ տրվավ։

Նամիայ ելավ, եկէու միջագետք գնաց
ուր որ կրօնաւորներ կային. աւելի ե-
գիպտոսի անապատը գնաց ճգնաւորնե-
րուն քովը, որ ան ատենը մէկ աթէնք
մըներ ա̃ծային իմաստութե. ան ճգնա-
ւորներուն վր̃ ինչ առաքինութե ծաղիկ-
ներ որ տեսաւ՝ իր վր̃ ժողվեց. զինքը
կատարելագործեց։ Այլ որ ղայսերի դար-
ձաւ, տեսաւ որ իր մայրը ու մակրինա
քոյրը կուսանաց վանքը մտած էին, ինքն
ալ անոնց նմանելով անապատի մը մէջ
քաշվեցաւ. ճգնութե, աղօթքի ու կար-
դալու հետ եղավ. ամմէն առաքինութե
մէջ զինքը կրթեց։

Նէոկեսարացիք շատ կըյորդորեին բար-
սեղը որ իր հօրը տեղը անցնի, դպրատուն
բանայ տղոց իր հօրը պէս, շատ բան ի-
րեն խոստանալով։ Կայսերցիքալ կու-
զեին որ՝ իրենց եկեղեցնայ պաշտօնեայ

ըլլայ · բայց բարսեղ մէկնալ յանձն չառնելով կըզգմայլէր երկնային մտածութե՛ն որ միայն առանձնութեան մէջ կընայ ըլլալ ։ Աս իրեն կատարելութեան վարքը տեսնալով շատ եղբարներ քովը եկան · զինքը հոգևոր հայր ընտրելով՝ կրօնաւոր եղան իրեն ձեռքին տակը · բարսեղ ալ աղէկ կըրթելով անոնք գիտուն վարդապետութեամբ, տեսական ու գործնական վարք սորվեցընելով, կանոններ շինեց, որ ան կանոներուն վրայ երթան միակերպ ։ Ասկից ետքը եղաւ որ սրբոյն բարսղին կարգն ու կանոնադրութիւնը մնաց ամէն արևելք, ինչպէս որ ինչվան հիմա կըքշէ ։

Անաց որ՝ եւսեբիոս ղայսերիին եպիսկոպոսը՝ քահանայ ձեռնադրեց բարսեղը · աս բանըս շատ դէմ եկաւ բարսղին · բայց իրեն պարտքը ընելու համար՝ սկսաւ եկեղեցնայ մէջ քարոզ տալ, առակաց գիրքը մեկնել, ատեն ատենալ պարապ գտածին պէս նորէն կառանձնանար, աղօթքի ու ճգնութեան հետ կըլլար · ուրիշ աշկերտներ ալ կըժողվէր, կրօնաւորութիւն կըսորվեցընէր, աղքատներու ալ կըհասնէր ։ Ոար յուլիանոսը որովհետեւ բարսղի հետ մէկ տեղ կարդացած էր աթէնք քաղաքը՝ համարձակեցաւ թուղթ գրել իրեն · հազար լիտր ոսկի ուզելով պարսից դէմ պատերազմելու համար · սուրբն բարսեղ յայտնի խօսքերով յանդիմանեց անոր ըրած չարութիւնները, իր քրիստոնեայ ժո-

ղովրդեան աղքատութեան հասկցուց ։ Այն բարոյն աղօթքովը եղաւ որ կըսեն, ետքը չար յուլիանոսը յանկարծ սատկեցաւ ։

Բայց յուլիանոսին տեղը վաղէս կայսրը նստաւ . ասալ արիոսեան ըլլալով՝ ուրիշ հալածումներնալ աս հանեց . ան ատենը նրն բարսեղ անապատէն ինջնալով, ուղղափառները հաստատեց, արիոսեանները պապանձեցուց խօսքով ու գրով, վաղէսին առաջարկութեան մերժեց ։ Ետքը երբոր եպս ձեռնադրվեցաւ ղայսերիին մը, ան ատենը աւելի ջանք ըրաւ արիոսեան աղանդը բոլորովին ջնջելու անկից, նաև ուրիշ աղանդները որ ան ատենը կային . լուսաւոր խօսքերով ճառեր, քարոզներ, մեկնութիններ կըգրեր, գրով և վշտալուց կաշխատէր . ասոր անոր, աւելի երևելի եպսներուն թըղթեր կըգրեր . ուր որ կախ ու տարաձայնութի կար ուղղափառ եպսց մէջ կըշըտկեր . ածսիրուն ու եղբայրսիրուն հաստատելու համար ժողովրդեան մէջ բանէ մը ետ չէր կենար թէ և բամբասվէր նախատվէր . իր աղօթքներնալ, ճգնութիններնալ միշտ կընէր, թէպէտև տկար էր ու հիւանդոտ ։

Նոյնով վաղէս կայսրը նոյն բարոյն նախանձը արիոսեանց դէմ՝ ուզեց քշել . բայց իր տղանալ, կիննալ ծանր հիվընդցան . իրեն գրիչնալ իրեք անգամ կոտ-

րեցաւ՝ քանի անգամ որ ձեռքը առաւ ճիռը գրելու • գիտցաւ որ ս՟րբոյն հրաշքներն են, քովը կանչեց, աղաչեց որ բժշկէ • ս՟րբն բարսեղ առաջարկեց՝ թէ որ թողուս ըսած արիոսեան մոլորութիւնը, ան առենը տղան կըբժշկուի • բայց վաղէս չիդառնալով իր մոլորութենէն՝ տղան մեռաւ • վաղէսին տեղը մոդեստիոս եպարքոսը դարձաւ ուղղափառ եղաւ, երբոր զինքը ողջընցած տեսաւ՝ ծանր հիւանդութենէ, ս՟րբոյն բարսղի ձեռք դնելովը ու աղօթքովը •

Այս խօսքերն ու քարոզութիւնը մէկ ուրիշ զօրութի՟ մը ունէին, բոլորովին ըլլալով ա՟ծային • ինչպէս որ ս՟րբն եփրեմ յայտնի տեսաւ, որ բարսղին խօսելու առենը վրան լուսաւոր աղաւնի մը կեցած էր, օրինակ հոգւոյն ս՟րբ • ինչ իմաստութե՟ խօսքեր որ կըխօսէր ժողովրդեան՝ ան աղաւնին էր որ ականջնիվար կըղուրցէր •

Ասանկ զարմանալի վարուք քաղաքավարութ՟ը ապրելով ս՟րբն բարսեղ՝ լսեց որ վաղէս կայսրը ուղղափառներուն հալածողը պ՟տղմի մէջ մեռեր է, ետևէն թէոդոս կայսրը նստելով՝ ուղղափառ եպ՟սները ետ դարձուցեր է քշված տեղերնէն, ասոր վ՟ր սիրտը հանգչեցաւ • անանկ հանգիստ սրտով վախճանեցաւ յամին 380 •

## ՍՈՒՐԲՆ ԱՆՏՕՆ

### Աբբայ հայր Անապատական.

Անիկայ խոմիթի էր եգիպտացի . բարե-պաշտ ու հոգևոր ծնողաց զաւակ . պզտ-տիկուց տանը մէջ թօյ մեծցած աղօթա-ւէր ժամասէր տղայմընէր , հեզահոգի , հնազանդ . մէկ նեղուն մը չէր տըված իր ծնողացը . կարդացողուն չունէր ու-սում չվյտեր , բայց ածաշունչին խօսքե-րուն խիստ փափագով մտիկ կըդնէր , ը-սածները բռնել կըճնայէր ։

Երբոր տասնութը տարվան էր՝ մեռան իր ծնողքը . ինքը ու քոյրը մինակ մնա-ցին . վեց ամիս անցնելէն ետև ժամ եր-թալու ատեն առաքելոց վարքը կըմտա-ծէր , թէ ինչպէս ամմէն բան թողուցին , քսի ետևէ գացին . ուրիշ աշակերտաց վարքնալ միտքը կըբերէր , որ իրենց ամ-մէն ունեցածը կըծախէին , գինը առա-քելներուն կուտային որ աղքատաց բաժնեն ։ Անոնք մտածելենին՝ մէյ մըննալ ժամուն մէջ ան օրվան աւետարանը լսեց որ կըկարդային . ‖ Եթէ կամիս կատարեալ լինել. երթ վաճառեա զամ զոր ինչ ունիս , և տուր աղքատաց. և եկ զհետ իմ. և ունիցիս գանձս 'ի յերկինս ‖ ։ Աս խօսքը իրեն սիրտը մտաւ , լուսաւորվեցաւ , իրեն համար ըսված սեպեց . իր ունեցածները , ոսկի արծաթ ամմէննալ ծախեց , աղքատաց

տըլուլ. միայն քիչ մը բան իր քրոջը հա-
մար պահեց, իր արտերը հոն եղող գե-
ղացիներուն պարգեւեց։

Երբոր մէյմընալ ժամը մօտնալով լսեց ա-
ւետարանին խօսքը. ‖ Մ՛ի հոգայք վս՟ վա-
ղուին ‖. ինչ որ պահերեր քրոջը համար՝
ամէննալ աղքատներուն բաժնելով ար-
տորնօք՝ իր քոյրը յանձնեց հաւատարիմ
կուսանքներուն, անանկով ամէն հոգէ
խալըսելով՝ գեղէն դուրս առանձին բնա-
կիլ սկսաւ. կարգով կանոնով զինքը ձըն-
շել. ան ատենը ինքը քսան տարուան մը
կար։ Սոմա գեղին մօտիկ մէկ ծեր մը
տեսաւ բնակած որ խիստ ճգնուի կը-
նէր. ինքնալ անկից բարի օրինակ առնե-
լով գեղէն հեռու սկսաւ բնակիլ յամին
իբր 270. անոր նման ճգնութիւներ ը-
նել։

Սոր բարի յօժարութիը տեսնալով սա-
տանան, սկսաւ միտքը փորձութի ձգել.
յիշեցընելով ազգականներուն գութը,
ունեցած մենծութիը, բռնած ճամփուն
դժվարութիը. բայց սրբն անտօն հաւատա-
քով աղօթքի հետ ըլլալով, ամէն փոր-
ձուե վրայ կելլար. եսքը սկսաւ ցանկու-
թե խորհուրդներով տանջել. անորալ
յաղթեց սրբն անտօն աղօթքով, պաքով ու
ճգնութ՟. անանկ որ՝ չդիմանալով սա-
տանան, օր մը պարշելի տղի մը կերպա-
րանքով երեւցաւ, իրեն ոտքին տակը ըն-
կած կըզսնկտէր ըսելով՝ ես շատ մարդ

խաբեցի գետինը ձգեցի, հիմա քենէ
յաղթըվեցայ։ Սբն անտօն ըսաւ. ‖ Տէ
է էմ օփնաչան, և էս փէօւէ ղիւշնամիս էմ ‖. Ս
սաղմոսը լսելուն պէս սատանան հալած-
վեցաւ, մէյմընալ քովը չեկաւ։
Բայց Սբն անտօն գիտնալով որ սատա-
նան շատ ճամփաներ ունի մարդը կոր-
սընցընելու, անկից ետև ալ աւելի շատ-
ցուց իր ճգնութիւնը. օրը ժամ մը կուտէր,
երբեմնալ երկու իրեք օր անգամ մը, կամ
շաբաթը անգամ մը. կերածնալ աղ ու
հաց, խմելիքը ջուր. խոտի վրայ կըպառ-
կէր, շատ հեղալ գետնի վրայ. գիշերնի-
րուս աղօթքի հետ կըլլար, իրիկվընէ
արևելք դառնալով աղօթք կըսկըսէր,
անանկ մը կըվերանար մտքովը՝ որ ինքը
չիմանալով մէյմընալ արևը երեսը ծա-
գած առտու եղած կըգտնար։ Հեռու
տեղ քարայրի (մաղարայի) պէս տեղ-
վանք կային. անոնցմէ մէկին մէջ մտաւ,
բերաննալ գոցել տըվաւ մէկի մը որ ի-
րեն հաց կըբերէր. հոն տասնըհինգ տա-
րի կեցաւ սաստիկ ճգնութեամբ։
Սատանան վախնալով չըլլայ թէ ուրիշ-
ներնալ օրինակ առնելով իրեն նման ան-
ապատը քաշվին, գիշեր մը շատ սատա-
նայներով վրան վազեց, անչափ ծեծեց
որ մեռելի պէս գետինը ընկավ. հաց
բերող եղբայրը սանկ ընկած տեսնալով,
շալկեց գեղին ժամը տարաւ, ուր ամ-
մէնը մեռած կարծեցին. բայց Սբն ան-

տօն կէս գիշերուն արթննալով՝ նորէն իր տեղը տանիլ տըվաւ. ծեծին ցաւէն չկրնալով ոտքի վըր աղօթք ընել, գետնատարած կընէր ։ Հոս եմ՝ չար սատանայներ կըսէր, ինչ ընէք, ասկէց աւելի ալ ընէք, քանի սիրոյն իս չէք կրնար բաժնել. [illegible], ըսելով սաղմոս կըզուրցէր ։

Սատանայները կապեցէն տեղը թնտացուցին. խուցին չորս դիէն պատելով՝ կերպ կերպ ահռելի գազաններու կերպարանքով վրան վազեցին, ողջ ողջ կուլ տալ կուզէին ։ Սբն անտօն վրանին նայեցաւ, լուսաւոր հաւատքովը ըսաւ, թէ որ ձեր քովը ուժ ըլլար, մէկերնիդ հերիք էր, բայց քս ձեր ուժը ոչնչացուց. թէ որ այմէ հրաման ունիք՝ ինչ որ կըրնաք ըրէք, չէնէ ինչու ասչափ չփոթերէք. մեր պահապանը Տր խաչն է, քս է. աս ըսելնինի վեր նայեցաւ, տեսաւ տանիքը բացված, լոյս մը որ վրան կ'ինջնար. սատանայները իսկոյն հալածուեցան, իրեն ցաւերը վերջացան, իր ծակծըկած խուցնալ շինվեցաւ. ան ատենը աղաղակեց, ուր էիր Տր իմ յս, ուր էիր ասչափ ատեն ։ Ձայն եկաւ իրեն վերէն, հոս էի ով անտոնիէ. քու կռուիդ կըտեսնայի, որովհետև համբերեցիր, յաղթեցիր, եսալ քեզի միշտ օգնական ըլլամ, ամէն աշխարհ անուանի ընեմ ։

Այս խօսքէս անանկ ուժ առաւ՝ սրբն Անտոն, որ առջինէն աւելի զօրացաւ : Անկէց ետքը բաղձալով աւելի անզբաղ Այ ծառայելու, գնաց սրբն Անտոն վերյիշեալ ծերոյն աղաչեց՝ որ մէկ տեղ ներսի անբնակ անապատը երթան . աղէկ իմացած էր որ Այ ծառայելու մէկ հատիկ ճամփայ՝ մարդէս փախչիլն է . երբոր ան ծերը աս բանիս նորութիւնը յանձ չառաւ իր ծերութիւնը պատճառ բերելով, ինքը մինակ սկսաւ դէպ՚ի անապատը երթալ . ան ատենը սրբն Անտոն երսունը-հինկ տարւան մը կար : Ճամփան տեսաւ արծըթէ թէփսի մը ձգած . սրբն Անտոն հասկընալով որ սատանային որոգայթն է, քամահրելով մը անցաւ գընաց . խոկոյն ան արծաթնալ աներևոյթ եղաւ . քիչմը առաջ երթալով մեծ կտոր մը տեսաւ ոսկիի . անկիցալ անցնելով լեռ մը ելաւ . վրան քարայր (մաղարայ) մը գտաւ լեցուն գազաններով, որոնք սրբը տեսածնին պէս փախան . հոն մտնալով քարերով գոցեց դուռը . քսան տարի կեցաւ . ոչ ինքը դուրս ելաւ, ոչալ ներս մարդ առաւ . երկու հեղ միայն տարին հաց կըտանէր մէկը, վերէն ներս ձգելով :

Ակօղներ կըլլային զինքը տեսնալու, բայց ներսէն կռուելու ձայն կառնէին . ինչ կեցերես հոս, մեր տեղն է ասիկայ . ելի գնա . սր. Անտոնին ձայնիալ կառնէին՝ որ

անոնց դէմ կըխօսէր . առաջ կըկարծէին որ ներսը մարդ կայ , եւ քը ծակերէն նայելով միայն ՚որը կըտեսնային . անկէց կիմանային որ սատանայներուն կուինէ. որոնք յայտնի տեսնալով որ ՚որ անտոնին սովեցուցած Ճամփան՝ մարդէ փախչիլ առանձնանալը՝ շատ հոգի փրկել տայ պիտոր մեղքերէ հեռըցընելով, անհնարին կըկատղէին հետը կըկռուէին . աս կուին էր որ եկօղները կըլսէին, վախնալով կըփախչէին եւ կըդառնային : Երբոր յամին 306 մեծն կոստանդիանոս թագաւորեց, ան ատենը քրիստոնէութիւնը համարձակ ըլլալով, շատ ցաւագարներ կուգային կըբժշկըվէին . շատ մարդ ալ քովը գալով իրեն խօսքերը լսելով, սիրտերնին կըշարժէր . իրեն աշկերտ կըլլային անանկ որ՝ քիչ ատենի մէջ ան մեծ անապատը լեցվեցաւ կրօնաւորներով . ամէնուն առաջնորդող, սովեցընօղ եղաւ ՚որն անտոն : Անցմէ օրինակ առնելով ուրիշ գիւղերնալ քանի Ճգնաւոր կային, անոնքալ աղաչեցին իրեն որ գայ՝ իրենցալ սովեցընէ ան կրօնաւորական վարքը : Սըն անտոն անոնցալ յօժարութե կերթար կըսովեցընէր . թէպէտ երթալու գալու ատենը մէկ գետ մը կանցնէր, որ մէջը լեցուն էին գազաններ : Հալածումի ատենը երբոր լսեց թէ իսքէնտէրիէի մէջ շատ քրիստոնեայ կընահատակվէին, իրեն գլխաւոր աշկերտ-

նէրովը հօն եկաւ որ ինքնալ մարտիրո-
սուն արժանի ըլլայ · քրիստոնեայները
դատաւորին առջին տանելու ատենը՝ քո-
վերնին կուգար սիրտ կուտար · բանտը
դրած ատեններին՝ կերթար կըմխիթարէր
կըծառայէր անոնց · գլխատուելու ատեն-
ներին՝ ինքնալ հօն կըվազէր · անոնց նա-
հատակվիլը տեսնալով՝ անանկ կուրա-
խանար իբր թէ ինքն էր որ մարտիրոս
եղաւ ։

Իրեն այչափ համարձակութիւնը տեսնալով՝
հասկըցուցին դատաւորին · անալ սաս-
տիկ հրաման մը հանեց աբեղայ մը չե-
րեւնալու, ո՛ւր մնաց ատեանը գալու · ա-
սոր վրայ ամմէն ճգնաւորները պահվե-
ցան, մինակ տր. անտոնը չիպահվեցաւ,
մանաւանդ աւելի երեւնալու համար՝
ճամփու վրայ կըկենար ուսկից որ դա-
տաւորը պիտոր անցնէր ։ Բայց մեծ ու-
րիշ բանի համար էր պահէր զինքը · մէկը
չիբռնեց · ինքնալ տրտմիլ սկսաւ · ետք-
նալ տեսնալով որ հալածումը կըքիչնար՝
իր տեղը դարձաւ · մարտիրոսուն տեղը
մըլ աւելի ճգնութեան տրվաւ զինքը ։
Հօնալ եկօղներուն շատվորութեն ձանձ-
րանալով՝ ճամփայ ելաւ հեռու տեղ մը
երթալու · երբոր վերին թեբայիդ պի-
տոր երթար՝ երկինքէն ձայն մը եկաւ ։
Թէ որ հանդարտութիւն կուզես գտնալ,
ներսի անապատը գնա ։ Երեք օր իրեք
գիշեր քալելով հօն գնաց · բարձր լեռ-

մը հասաւ, որուն տակէն ջուր կանցնէր,
վրանալ արմաւենիներ կային․ իրեն հացն
ու պտուղքը կըբերէին ան վաճառական-
ները որ զինքը բերին ։ Նոյնկայ է երկրորդ
անապատը որ ս՟ր անտոնի լեռ ըսուեցաւ․
ինչվան հիմա վանք կայ հոն․ տե՛ս ափրի-
կէին հատորը․ Թուղթ 77 ։ Հոն շատ
աշկերտներ եկան ս՟ր անտոնի քով․ որոնց
համար վանք շինեց նստեցուց որ պիսպի-
ռի անապատ ըսուեցաւ ։ Ինքը ներսի լե-
ռը կերթար, իրեն առանձին ճգնութեան
հետ կըլլար․ ամիսը քանի մը հեղ աս
գիւ վանքը կուգար, եղբայրներուն կա-
ռաջնորդէր կըխրատէր․ ցորեն ու բրինձ
բերել տըլալ, հոն ինքիրեն գետինը կը-
րանէր կըցանէր, իրեն աշխատանքովը
կապրէր․ պարտէզալ տնկեց հոն, երբոր
անապատին կենդանիները մտան հոն, այն
անունովը սաստեց անոնց, մէյմըն ալ չի-
մտան չիդպան ։

Սատանան հասալ զինքը հանգիստ չի-
թողուց․ իրեն նոր վարքին վրայ որ ամ-
մէնուն կըսորվեցընէր խիստ նախանձե-
լով՝ քանի՛ գազան որ կըգտնըվին՝ ամմէն-
նալ վրան ժողվեց, որ վախնայ փախչի․
ս՟րն անտոն հասկընալով, թէ որ այն հրա-
մանովն էք եկած ըսաւ՝ բզիք բզիք ըրէք
զիս․ իսկ թէ որ սատանան բերաւ ձեզ,
տեղերնիդ գացէք․ աս լսածնին պէս ամ-
մէննալ մէյմէկ դի գացին ։ Զիւպատրե-
ցաւ սատանան, աչքին ահռելի տեսիլք-

նէր կըցըցնէր․ երբեմն երբեմն սատա-
նայներու բազմութի խրարու հետ կըղտր-
նըվէին, իրեն վը՛ր կըվազէին․ բայց որն
անտոն միշտ քոի անունը տալով խաչ
հանելով ամմէննալ կըհալածէր ։

Առջի աշկերտներէն բարեկամներէն ե-
կան բռնադատելով տարին զինքը որ մխ-
թարլին, ճամփան ծարվեցան․ որն ան-
տոն աղօթքի կենալով ջուր բխել տը-
վաւ․ իր քրոջնալ տեսութի գնաց, որ
մայր էր եղած բազմութե կուսանաց ։
Հոն մէկ դիւահար մը բերին, որն ան-
տոն չուզեց հոն բժշկել․ մըսը խրկեց,
հոն իսկոյն բժշկըվեցաւ ինչպէս որ իրեն
յայտնըվերեր․ որովհետև կատարեալ
հոգետես էր եղած, շատ բան կիմանար․
տանելով տեսաւ որ հօրն ամոնի հոգին
հրեշտակներով երկինքը ելաւ․ տասվի-
րեք օր հեռու իր կեցած տեղէն ։

Օր մը աղօթքի մէջ տեսաւ զինքը եր-
կինքը ելաւ, բայց սև մարդիկ իրեն դէ-
մը ելլալով՝ թող չէին տար․ իրեն
հրեշտակը կըսէր անոնց, աս արդարը
ինչ մեղք ունի որ թող չէք տար․ ան
սևերը տղակուց ըրած մեղքերը համար
բերել կուզէին․ հրեշտակը ըսաւ․ ան
օրն որ աշխըրքէս դուրս ելաւ, զինքը այ
ըլալ, ածալ իրեն տղայութե մեղքերը
թողուց, կրօնաւորուե ատենը մեղք մը
չունի ։ Ուրիշ սևերը իրեն վը՛ր աղբայ
կըձգէին, հրեշտակը չէխեց, ամմէննալ

գետինը ընկան . տ̃ր անտոն շիտակ եր-
կինքը ելաւ ։ Նս տեսիլքը տեսնալէն ե-
տև շատ օր լալու հետ կըլլար տ̃րն ան-
տոն, անօթի կըկենար . եղբարներ կը-
սէր՝ աղօթք ընենք որ վերի սատանայնե-
րը մեզ չարգելեն ։

Ոմընալ եղբարները հարցուցին, մար-
դիկ մեռնելէն ետև հոգինին ինչ կըլ-
լայ . ան ատենը ձայն մը եկաւ իրեն . ան-
տոնին՝ ե՛լ, տե՛ս . խուցէն դուրս ելավ
տեսավ որ, բազմունի մարդկան թևեր
առած երկինքը կելլային, բայց մէկ սև
ահռելի մարդ մը կեցած էր անանկ եր-
կան որ՝ գլուխը երկինքը կըհասնէր . ա-
սիկայ թևերը երկնցընելով շատը անոնց-
մէ վար կըքաշէր, գետինը կըձգէր . ձգե-
լովը կուրախանար . մէկալնոնք վեր թըռ-
չելով երկինքը կըմտնային . անոնց վրայ
կատղելէն ակռայ կըկրճտէր ։ Նն ատենը
հասկըցաւ տ̃րն անտոն՝ որ անոնք քրիս-
տոնէից հոգիներն էին . սև հսկայ մար-
դը սատանան էր . շատ քրիստոնեայ հա-
ւատք ունենալնուն համար կուզէին վեր
ելլալ, բայց մեղաւոր ըլլալնուն համար՝
սատանան անոնք դժոխքը կըձգէր . մէ-
կալնոնք արդար ըլլալնուն համար եր-
կինքը արքայութիւնը կըմտնային ։

Քանի մը արխոսեանք տ̃ր անտոնի քովը
եկան, որոնք վռընտեց քովէն . բայց ա-
նոնք խաբէնտէրին դառնալով անանկ ձայն
հանեցին թէ տ̃ր անտոննալ իրենց մըտ-

քովն է. անոր համար ՚որն աթանաս ու-
րիշ ուղղափառ եպսներուն աղաչեցին, որ
գայ ամօթ ընէ ան հերետիկոսները :
Սբն անտոն իսկոյն ինջաւ խոքէնտէրին,
բազմութե առջին ք̃ի ծ̃նունդը քարոզեց ·
հոն կռապաշտներուն իր վրայ թափիլ
սկսան, օրհնութի կըխնդրէին · իրենց
հիւանդները ՚սբյն լաթերուն դպցուցած-
նին պէս՝ շուտ մը կըբժշկուէին · աս հը-
րաշքները տեսնալով՝ շատը քրիստոնեայ
կըլլային : Ինչափ շատ էին եկողներուն
բազմութիւնը, որ իր աշկերտներէն ոմանք
անդին հրել սկսան · բայց ՚սըն անտոն
ծիծաղելով մը կըղուրցեր անոնց · աս ե-
կողներուն բազմութիւնը աւելի չեն քան
սատանայներուն բազմութիւնը որ լեռը մեր
վրայ կուգային · անոնք մեզի չարիք ընել
կուզէին, աստնք բարիք ուզող են ·
Փիլիսոփայներուն քովը եկան, մոլընին
դնելով որ իրենց գիտութեը վրայ պիտոր
ելլան, անանկ մարդու որ չէր կարդա-
ցած · բայց ՚սըն անտոն ամային գիտութ̃
անանկ կապեց զիրենք որ պապանձելով
ետ դարձան · ինչ որ լսերէինք իր վրայ
շատ աւելի տեսանք ըսին : Ինչափ ա-
նուանի եղաւ որ մեծն կոստանդիանոս
թուղթ գրեց իրեն, քովը կանչեց · բայց
անիկայ չիգնաց : Որիսեան զօրապետ
մը խիստ կըհալածեր ուղղափառները ·
ասոր խրատ գրեց ՚սըն անտոն որ դադրի
հալածելէն, բայց անիկայ մտիկ չըդնե-

լով իր խորատին՝ չարաչար մեռաւ. ինչպէս որ ՟սբը գուշակեր էր. աս տեսնալով ամմէննալ կըվախնային, ՟սբյն խօսքը բռնել կընայէին. շատ զինուորներ շատ ունեւոր մարդեր աշխարհ ձգելով իրեն տակը կրօնաւոր կըլլային ։

Ասանկով ասըս եղած էր ըման մէկ վարպետ թժիշկ մը հոգեւոր ու մարմնաւոր, ամմէնուն բարիք ընող. ինչվան որ իննըսուն տարին հասաւ. ան ատենը աղաչեցին իրեն աշկերտները՝ որ իր ծերութիը նայելով՝ ալ չերթայ ներսի լեռը իրեն ճգնարանը. հապա իրենց քովը պիսպիռեան վանքը մնայ որ զինքը հոգան. բայց ՟սբն անտոոն յանձն չառաւ. միայն երկու հոգի իր աշկերտներէն հետը տարաւ. ասոնք զինքը նայեցան տասնըհինգ տարի ։ Ան ատենը եղաւ որ ՟սբն անտոոն ներսի անապատները գնաց, պօղոս անապատականը գտաւ. օրմընալ երբոր պիսպիռեան վանքը գնաց, զուրցեց աշկերտներուն իր մեռնիլը, որ ՟ած յայտներեր իրեն. անոնք լալ սկսան, աղաչեցին որ քովերնին նստի ինչվան իր մահը ։ Սբը ուրախ սրտով անոնք մխիթարելէն խրատելէն ետե՝ դարձաւ իր լեռը. քանի մը օրէն հիւանդցաւ. աշկերտներուն պատուիրեց որ՝ չիթողուն իր մարմինը մըսըր տանելու, այլ հոս հողի մէջ թաղեցեք ըսաւ անանկ տեղմը՝ որ դուք միայն գիտցած ըլլաք. անանկով ողջոյն տալով ու-

բոխ երեսով հողին աւանդեց յամին 356. հարիւր հինգ տարւան. աս տարիքն էր հասած՝ բայց ծերու երես կամ տկարութի չէր ունեցած, աղրայներէն մէկնալ չէր թափած, աչվըններնալ ողջ մնացած ։ Իսկ իր մարմինը 170 տարիի չափ դաղտուկ մնաց. բայց յամին 527 մէծային յայտ-նուէք գտնըվեցաւ. ամմէն տեղ իր հրաշք-ները տարածվեցան. ամմէն տեղալպաշտ-պան բռնըվեցաւ կրակէն պահելու, նաև ներսի հիւանդութե կրակէն պահելու ։ Մ՛ոքս մէկ հատիկ եղավ որ խիստ ճըգ-նութիր զուարթութէ հետ միացուց. երկան ադօթելը, սաղմոսելը սիրելի բան մը ը-րավ. ամմէնուն ճամբայ բացաւ աւետա-րանական խստութը սիրով յանձն առ-նել. անանկով եղավ հայր անչափ կրօ-նաւորներու, անչափ վանքերու ։

ԵԽՓԻՄԷ ԿՈՅՍ

Խատի գեղէն էր դիոկղետիանոս կայ-սեր ատենը. հայրը փիլոբրոն կըսվէր որ ատենակալ էր կամ սինկղիտոս. մայրը թէոդոսիա. երկուքնալ բարեպաշտ քրիս-տոնեայ ։ Մ՝էկ պրիսկոս ըսված անթի-պատոս մը՝ որ է փաշայի վէքիլ՝ օր մը խա-տի գեղեկավ որ քանի քրիստոնեայ հոն գտնայ,տանջէ վերցընէ. որովհետև խիստ

շատցերէին հօն քրիստոնեայները, շատը իզնիմիտէն փախած, ուր սաստիկ հալածում կար։ Պրիսկոսի աւելի դրդօղ եղաւ ապեղիանոս մէյմը՝ որ քուրմ էր արեւ կուռքին. ժանտ, բայց ճարտասան մարդ մը. ասիկայ յիշեցուց անոր, մօտիկ է ըսաւ արեւ կուռքին տօնը, պէտք է որ հանդիսով զոհ ըլլալի անոր կռատունին մէջը։

Պրիսկոս աս խօսքս աղէկ առիթ առնելով, թուղթ հանեց որ՝ ութը օր ամենուն պատրաստըլլին, արեւին կռատունը ժողվըլին զոհ մատուցանելու համար, ով որ չիգայ՝ չարաչար պատժըլի։ Ապեղիանոս որովհետեւ խիստ փնտռելու հետ էր, իմանայ ուր են կամ ով են քրիստոնեայները որ պահված էին. որը խատիգեղի մէջ, որնալ գուրսը. իմացաւ որ մէկ պզտիկ տան մէջ յիսուն հոգիի չափ քրիստոնեայ պահված կան, որոնց մէջն էր նաեւ աս եւփիմէ կոյսը, շուտմը գնաց մատնեց։ Պրիսկոս զօրք խրկելով ամէննալ իր առջին բերել տըրվալ, յորդորել սկսաւ որ իրենքալ զոհեն. երբոր անոնք համարձակութ̃ մերժեցին՝ հրամմեց տանջել, ետքը բանտը դնել։

Անոնք տասնըվլինը օր բանտի մէջ մնալէն ետեւ՝ ետքը նորէն բերել տըրվալ իր առջին պրիսկոս, ամէնուն ձեռքը կապած, վըզերնին երկաթ զարկած. երբոր նորէն

մերժեցին պրինկոսին խօսքը, ծեծել հրամմեց: Ան ատենը չար ապեղիանոսը խրատ տրւած պրինկոսի որ ամչննալ իղնիմիտ խրկենք ուր էր Թդրը, ան օրը ամչննալ սպաննել տանք: Աս բանիս հաւնեցաւ պրինկոս, բայց ուզելով մէջերնէն եւփիմէ կոյսը իրեն քաշել, որ աստղի մը պէս մէջերնին կըփայլէր, հիմակուհիմա բերդին մէջ թող միան ըսաւ. ասանկով տանելու ատեննին եւփիմէ կոյսը մէկ դի քաշեց, սկսաւ յորդորել. տեսաւ որ կըմերժէ՝ իր տունը տանիլ հրամմեց:

Ան ատենը որ կոյսը երկինքը նայելով խիստ աղաչեց այ, օգնութին խնդրելով, որ իրեն կուսութե ջահը չիխաւարի. իրեն հաւատքը յոյսը չիկորսուի, որ պղտիկուցմէ ինչվան հիմա անարատ պահեր եմ ըսաւ: Պրինկոս ուրիշներուն չիցըցընելու համար իր միտքը եւփիմեայ վրայ՝ կռապաշտութիը առջին դրաւ, յորդորեց որ քրիստոնէութիը ձգէ. կոյսը համարձակ պնդեց. ինչ տանջանք որ պիտոր տաս քրիստոնէութե համար՝ պատրաստ եմ ըսալ զօրութեն քի քաշելու, ո՛չ զի յաղթեմ քեզի ու քու հօրդ սատանայի: Աս խօսքերէս որ մէկ աղջկանմը բերնէն լսեց պրինկոս՝ կատղելով սէրը փոխեց ատելութի. նոր տանջանարան մը հրամմեց շինելու, սուրերով դանակներով լեցուն անիւներ (թէքէրլէկներ). երբոր անոնց

մէջը ձգելով կոյսը կըպտըտցընէին, երեսը խաչակնքելով ըսաւ. ով Թշնամի Ճըշմարտութ՜, գիտցիր որ ես մէկ տանջանք մը չեմ քաշեր. ք՜ս է իմին օգնականս ։

Դահիճները կըդարձընէին կըպտըտցընէին անիւները, որ կուսին մարմինը կըտոր կտոր կընէին, ոսկորներէն կըզատէին, անիկայ աղօթքի հետ կըլլար ։

Մէյմընալ հրեշտակ մը իջնալով՝ տանջանարանը կոտրտեց, եւ փիմէն ողջընցուց, դահիճներուն ձեռքը ոտքը Թուլցուց. երանելին անվնաս ելաւ տանջանքէն ։ Պրիսկոս աւելի խստանալով՝ փուռը վառել հրամմեց. որ կոյսը հոն աղօթքի կեցաւ, որ ինչպէս բաբիլոնի մէջ իրեք մանկունքը՝ անանկալ հիմա զինքը պահէ ա՜ծ. պրիսկոս հրամմեց կրակին մէջը ձգել զինքը, բայց իրեն սպասաւորներէն երկու հոգի սարսափելով ետ դարձան ըսելով. մենք չենք կրնար անոր մօտիկնալ, լուսաւոր նորատեսիլ մարդիկներ քովը կեցած են, խոլոռ աչքով մեր վրայ կընային, վրանիս կրակ Թափել կուզեն ։

Պրիսկոս ասոնց վրայ բարկանալով՝ բանտը դնել տըվավ. ուրիշ երկու զինուորի հրամմեց. երբոր ասոնք փուռը ձգեցին, ան լուսաւոր մարդիկը եւ փիմէն պահեցին, զինուորներուն վրայ կրակ Թափելով մեռուցին. երանելին անվնաս կենալով փռանը մէջ սկսաւ ա՜ծ օրհնել ։ Ես

բանիս մը՝ պրիսկոսին խենթենալ կու-
գար . ինչպէս իր ծառաները փուռէն
հեռու կենալով երկնցան մեռան . իսկ
Եւփիմէն կրակը մարելէն ետեւ ողջ անա-
րատ փուռէն դուրս ելաւ . մազմընալ
վրայէն չէր երած ։ Հրամմեց բանտը
դնել . վաղուան օրն ալ ան երկու սպասա-
ւորն ալ իր առջին բերել տըւաւ . տե-
սաւ որ ատոնք իրաւ քրիստոնէութիւնը ը̃ու-
ներեն , ամենեւին չեն ուզեր կռապաշ-
տութիւնը ը̃ունիլ , գաղաններուն առջին
ձգելով անանկ նահատակել տըւաւ ։
Իսկ Եւփիմէն հետեւեալ օրը հրամմեց
իր առջին բերել . անիկայ ա̃յ օրհնութիւնը
երգելով ճամփան՝ անանկ առջին եկաւ .
պրիսկոս նորէն յորդորեց կռապաշտու-
թիւնը ը̃ունելու , մեծ մեծ խոստմունք-
ներ ընելով իրեն . Ս̃բ կոյսը ծիծաղելով
մերժեց , իրեն կուրուինալ իր երեսին
տըւաւ ։ Ան ատենը պրիսկոս հրամմեց
տանջանքի գործարան մը շինել մեքենա-
ւոր (տօլապը չարխերով) , մէկէն զինքը
մէջը ձգել ։ Սրբուհին երբոր հոն եկաւ ,
համարձակ պարզերես մէջերնին կըքա-
լէր . երբոր դահիճները կուզէին անոր
մէջը ձգել , հրեշտակներու ձեռքով կոյ-
սը յափշտակւեցաւ աղօթքի կեցաւ , ի-
րեն տեղը դահիճները մէջը ընկան մե-
ռան ։

Աս տեսնալով պրիսկոս՝ անուշ խօսքերով
սկսաւ շողոքորթել՝ որ կռապաշտութիւնը

Ը̃ունի. երբոր կոյսը նորէն մերժեց, զինք-
նալ յանդիմանեց, ան ատենը հրամմեց
որ չարաչար ծեծեն. բայց չար ապեղիա-
նոսը միտքը ձգելով՝ սղոց (տէսթէրէ)
բերել տըւաւ որ երկու տախտըկի մէջ
դնելով երկու կտրեն. տաքցուցած եր-
կաթնէրալ որ երեն: Սըրբոր սկսան՝ի
կործ դնել, սղոցը դուլցաւ չէր կտրէր,
երկաթնէրնալ պաղեցան։
Դուապաշտնէրը աս ամմէն հրաշքնէրը
կախարդութի սեպելով՝ հրամմեցին որ
գազաննէրուն առջին ձգեն. գազաննէ-
րը իր վրայ գալու ատենը՝ եւ փիմէն խա-
չակնքելով զինքը՝ ա̃ծ օգնութի կանչեց.
գազաննէրը իրեն փէշէրը լզել սկսան.
բայց կոյսը կաղաչէր ա̃յ, որ ա՛ւ զինքը եր-
կինքը Ը̃ունի. գազաննէրնալ կըրորդո-
րեր որ իր վրան վազեն: Ան ատենը ա-
ռուծին մէկը վրան վազեց. ձայնմընալ
եկաւ երկինքէն. ‖ Սուֆէկ, էկó ամ բրա-
ն պուանէր, որ ֆուա ֆաղածնէրդ ֆէղէ պա-
տէցէն ‖: Նանկ շարժումմընալ եղաւ՝
որ ամմէննալ փախան. ան ատենը եւփի-
մէ կոյսը աւանդեց իր հոգին յամին իբր
303. և որովհետև մարդ մը չէր մնացեր
հոն, իրեն ծնողքը որ պահված էին,
եկան առին մարմինը, նոր գերեզմանի
մէջ դրին, որ քիչ մը հեռու էր խատի-
ղէն. ետքը փառաւոր ժամ մը շինվե-
ցաւ վրան. շատ հրաշքներ եղան։

Ծնաւ իսքէնտէրիէ, որ գրոց մէջ ա-ղեքսանդրիա կըսուի. Հօրը անունը մար-կեղոս կըսուէր, մօրը սողոմի. ասոնք ի-րենց զաւակը ա̅յ նուիրեցին, աղէկ խը-րատներով մեծցուցին. աթանասն ալ ան խըրատները պահելով բարի զաւակ մը ե-ղաւ, պարկեշտ, առաքինի, բարի օրի-նակ իր ամէն ընկերներուն, կարդալու գրելու ալ խիստ սէր ունեցող:

Օր մը իսքէնտէրիէին Հայրապետը ա-ղեքսանդրոս անունն՝ տեսաւ որ բազմութե̃ տղոց մէկ տեղ կըխաղան. մէջերնին աթա-նասը եպ̃ս ձեւանալով՝ որը քահանայ՝ որը եպ̃ս կըձեռնադրէր. իսկ ան տղաքը որ դեռ չէին մկրտըւած՝ կըմկրտէր ամէն ձեւերը ընելով: Ասոնք իր առջին կան-չեց, հարցուց ինչ կընէիք. անոնք ալ պ̃խն տըվին. ինչ որ ժամու մէջ կընեն, մենք-ալ ան բաները ըրինք. մեզի առաջնոր-դողը աս է ըսելով աթանասը ցըցուցին:

Աղեքսանդր Հայրապետը տեսնալով ա-թանասին շնորհալի կերպարանքը՝ վրան սէր մը կապեց, իր Հայրապետանոցը ա-ռաւ:

Ան առաջ երթալով աթանաս ա̅ծային ու արտաքին գիտութե̃ մէջ, գրագիր ե-ղաւ աղեքսանդրի, ետքը սարկաւագ ձեռնադրըւեցաւ. իրեն իմաստութե̃ը բարի վարմունքովը աջ բազուկ եղաւ

աղէքսանդր հայրապետին ։ Որովհետև
թէպէտ երիտասարդ էր՝ բայց ծերու
կատարելութին ունէր վրան . շնորհաբուղխ
քարոզող , ժողովուրդը հոգայող , քաղ-
քի մէջ կենալովն իբր թէ անապատի մէջ
կեցող անանկ կրօնաւորի պէս կեանք կը
վարէր . արիոսեանց հետ որ նոր ելեր
էին՝ քաջութ կը հակառակէր . աս դիան
դին թուղթեր կըգրէր աղէքսանդր հայ-
րապետին բերնէն , որուն հետ մէկ տեղ
նիկիոյ ժողովը գնաց . հոն ամէնուն ա-
ւելի հակառակօղ՝ արիոսը ամչցընող իր
հետևօղներուն հետ մէկ տեղ՝ աս աթա-
նաս սարկաւագը եղաւ ։

Ամէն՚ոք հարք որ ժողվերեին՝ կըզար-
մանային աթանասին բերած զօրաւոր
պատճառներուն ու ձեռնարկութցը վրայ .
որով ուղղափառաց կողմը յաղթող կը-
լար կուրախանար , իսկ արիոսեանց կող-
մը կըպապանձէր . նախանձէն աղրայ
կըկրճտէին աթանասին վրայ . յայտնի
կերևար որ՝ հոգին՚ոք աթանասը առել-
էր , իրեն գործիք էր ըրեր արիոսին չա-
րութիւնը խայտառակելու համար , ինչ-
պէս որ կըցըցընէ աս դիպուածս որ պատ-
մենք ։ Ժողովին մէջը խօսք բացվեցաւ
Հաւատամք մը շինելու համար որ Հան-
գանակ ալ կըսվի . երբոր աղէքսանդր հայ-
րապետ ու աթանաս ժողովքին տեղէն
ելան իրենց կեցած տեղը դարձան , ան
ատենն որ աթանաս մինակ իր խուցը

նստերէր՝ տեսաւ որ քովը եկած Աղեք-սանդր Հայրապետը, ըսաւ իրեն. գրէ եւ ինչ որ կուզեմ քեզի Հաւատամքին խօս-քերը, որ ետքը ես երբոր ըսեմ քեզի՝ կարդաս ժողովին մէջը ամէն Հայրա-պետներուն առջին։ Թագաւորն ալ գրեց ինչ որ Աղեքսանդրը ետևէ ետև զուր-ցեց Հաւատամքին խօսքերը. Լմնցընելէն ետև Աղեքսանդրը ելաւ գնաց։ Ժամ մը անցաւ՝ նորէն ներս մտաւ Աղեքսանդր Հայրապետը, Հարցուց թագաւորին ինչ կըկարդաս, թագաւորը ըսաւ Հաւա-տամքին խօսքերը կըկարդամ որ քիչ մը առաջ ինծի գրել տըվիր։ Աս ըսածին պէս զարմացաւ մնաց Աղեքսանդրը. գի-տէր որ ինքը ամենուն քովը չէր գացած, Հաւատամքին խօսքերն ալ չէր գրել տը-ված. անկէց Հասկըցաւ յայտնի որ Հո-գւոյն Սրբոյ գործքն էր ասիկայ. որ իրեն կերպարանքը առնելով թագաւորին քովն էր եկեր, տուն տըվերեր. բայց ինքը ա-մենուն բանը վեր չհանեց, թագաւորին չըզուրցեց. այլ երբոր ժողովըվեցան, հոն բարձր ձայնով կարդալ տըվաւ թագաւո-րին, որ ամէն ժողովականք միաբան

Հաւանութ̃ ընդունեցան։

Ժողովը լմննալէն հինգ ամիս անցնելէն ետև՝ Աղեքսանդրը հիւանդնալով վախ-ճանեցաւ. իր տեղը՝ որ թագաւորը պատ-րիարգ նստեցուցին Աղեքսանդրի աթո-ռը որ է Իսքէնտէրիէ. բայց ինքը փա-

խած ըլլալով՝ աս դին ան դին փնտըռե-
ցին անանկ գտան ։ Երբոր խորանը ե-
լավ աւքի պատարագը ընելու՝ տեսաւ
որ եկեղեցնայ տանիքը բացվեցաւ, սաս-
տիկ լոյս ինջաւ․ Հրեշտակներու բազ-
մութի խորանին քովը շարված կեցան․
ու միածին Թիւրը ՚նը խորհուրդին մէ
նստած՝ հայը իր անապական մարմնոյն
հետ կըշաղվէր․ իր կողը բանալով ՚նը ա-
րիւնը կըվազցընէր․ հոգին ՚նը աղաւնա-
կերպ երեւնալով խորհուրդին մէ կը-
հանգչէր․ իսկ պատարագը լմնալէն
ետեւ քն վեր համբարձաւ հրեշտակնե-
րով ։

Աս տեսիլքն որ տեսաւ ՚նըն աթանաս՝
ու ուրիշ քովի կեցողները՝ խիստ սիրտը
շարժեցաւ․ ամմէննալ զարմացած մնա-
ցին ։ Երբոր հաղորդութի տալ սկսաւ ժո-
ղովրդեան՝ մէկ անարժանութը առնող մը
հոն եղվեցաւ մեռաւ․ մէկ ուրիշմընալ
կատղիլ սկսաւ ինչվան իր մարմինը խած-
նել․ ասկէց ամմէնուն մէ սարսափ մը
ընկաւ, մէկը չիհամարձակեցաւ ՚նը խոր-
հուրդը առնել․ անոր համար ՚նը աթա-
նասնալ ելավ աղէկ քարոզ մը տըվավ ա-
սոր վըրայ, որ ամմէն մարդ ինքը զինքը
աղէկ սրբէ, շտկէ, ետքը ՚նը հաղորդու-
թիը առնէ ։ Ասանկով խիստ աղէկ հո-
գալ սկսաւ իր նոր ժողովուրդը՝ խրատե-
լով, սորվեցընելով, ամմէնուն հանե-
լով, մեծն ու պզտիկը միակերպ նայե-

լով, աղքատները հոգալով, հիւանդնե-
րը բժշկելով. ամենուն աւելի իր բարի
վարքը օրինակ տալով, որ անչափ զբաղ-
մանց մէջ իր աղօթքը, ճգնութիւնները չէր
վերջացըներ. անդադար ո՛ր գիրքը կը-
կարդար, հոգեշահ վիպասութիւններ կըգը-
րէր :

Արիոսեանք կոստանդիանոսին միտքը շի-
նելով թէ արիոսնալ նիկիական հաւատ-
քը ընդունիլ սկսաւ, քշուած տեղէն ետ
դարձընել տըվին, իրեն երկիրը նստե-
ցուցին որ էր իսքէնտէրիէ. բայց որով-
հետև աթանաս չընդունեց անիկայ իր ե-
կեղեցին, թէև կոստանդիանոս գրերէր
իրեն ընդունելու, անկից իրեն վ̄ր շատ ամ-
բաստանութիւն ընելով արիոսեանք՝ կոստան-
դիանոսին քով կանչել տըվին դատաստան
ընելու, բայց հոն երևան ելավ արիո-
սեանց ստութիւը ու աթանասին անմեղութիւը,
անոր համար կոստանդիանոս կայսրը պա-
տուով իր տեղը դարձուց աթանասը :

Արիոսեանք նորէն զրպարտութի հանե-
լով աթանասին վ̄ր, կայսերմէ հրաման
հանել տըվին որ՝ տիւրոս քաղաքը եպիս-
կոպոսներու ժողով ըլըվի, հոն կտրըվի
աթանասին վըրայ դատաստանը. աթա-
նաս հնազանդելով կայսեր՝ իրեն եպսնե-
րը մէկ տեղ առնելով որ քառասունըվինն
էին՝ գնաց ժողովը : Հոն մէկ կնիկ մը
հանեցին ժողովին մէջ՝ որ կըսէր թէ ա-
թանաս երբոր օր մը իմ տունս ինջաւ՝

ինծի հետ մեղանչեց ։ Ասոր դէմ ելած ժողովին մէջէն տիմոթէոս աթանասին աշկերտը, անանկ ցըցուց որ ինքն է աթանասը, կնկանը երեսին ըսաւ․ ես էրբ տունդ ինջայ, էրբ անանկ մեղք ըրի որ՝ իմ վրայ ատանկ մուր կըքսես․ մէյմըալ դէկնայէ ինծի ։ Կնիկը որ չէր ճանչնար աթանասը, այլ արխտեանք իրեն շատ ըստակ տըվէրէին որ աս զրպարտութիւնը ընէ․ պոռալով կըպնդէր կըսէր․ ես քեզ չեմ մի ճանչնար, դուն էիր որ եկար մեղանչեցիր․ տոր վը՞ր երդումալ կընեմ ։ Աս բանծին պէս՝ զրպարտութեան տուտը ամէնուն աչքին երեւան ելաւ․ ամէն ժողովականք կնիկը դուրս վռնտեցին ։ Երկրորդ զրպարտութիւն աս եղաւ որ՝ արխտեանք մէկ կտրած ձեռք մը հանեցին ձգեցին ժողովին մէջը, ըսելով որ արսենիոսին ձեռքն է, աթանասը խռովարար մարդ ըլլալովը՝ պատճառ եղաւ սպաննել տըվաւ ։ Մէն աթանաս առաջ հարցուց ամբաստանողներուն, իրաւ աղէկ կըճանչնա՞ք արսենիոսը․ հաստատուն խօսք տըվէք․ անոնք մէկ բերան ըսին աղէկ կըճանչնանք, ամէնքսալ հաստատուն խօսք կուտանք․ աս կտրած ձեռքնալ գիտենք որ արսենիոսին է ։ Ան ատենը մէկէն ժողովին մէջը հանել տըվաւ արսենիոսը, որ հոն պահված կեցուցերէր դաղտուկ․ ամբաստանողները տեսածնին պէս՝ հասկըցան որ ամէն-

նուն առջին ամօթ խայտառակ եղան, որոնց կըկրծոտէին աթանասին վը՛ր, կախարդ կըկանչէին․ հնարքներ կըփնտըռէին պատրիարգուն ձգել զինքը՝ ինչպէս որ վերջապէս ըրին։

Արիոսեանք ամբաստանեցին կայսեր՝ որ աթանասը ըսած ըլլայ․ ես կրնամ արգելել, իւրեններէն ցորեն խրկել չեմ իտար ստամպօլ․ աս բանիս վը՛ր խիստ բարկանալով կայսրը՝ Փրանսա քշեց աթանասը․ ուր շատ հոգևոր պտուղ ըրաւ մըր քարոզութ՛ն ու գրով․ բայց երկու տարիի չափ ու չորս ամիս հոն կենալէն ետև, նորէն իր աթոռը դարձընել տըւաւ կոստանդ կայսրը։ Արիոսեանք չէին դադրեր նոր նոր ամբաստանութի ընել աթանասին վրայ, ինչվան հռոմայ գրեցին յուլիոս պապին․ անիկայալ հռոմ կանչեց ամբաստանօղներնալ աթանասնալ․ մըն աթանաս գնաց հռոմ, տարի ու կէս հոն կեցաւ սպասեց, տեսնալով որ՝ ամբաստանօղներէն մէկնալ չեկաւ, ինքը իր աթոռը եկաւ, որ ժողովուրդը երեսի վը՛ր չիմնայ։

Արիոսեանք չիդադրեցան հալածելէն, մեծ ժողով մը ըրին անտիոք, աթանասը ձգեցին, անոր տեղը գրիգոր անունով մէկը դրին պատրիարգ, որ զինուորներով եկաւ նըստաւ․ շատ նեղեց ուղղափառները, մըը բանտը դրաւ, մըը քշեց․ գիր գրել տըւաւ կոստանդ կայսեր՝ չարախօսելով

որ աթանասը չէ թէ միայն անարժան է աթոռը նստելու՝ այլ նաեւ մահապարտ է. ատանկ ալ ամբաստանեց կոստաս կայսեր ալ որ հռոմ կընստէր ։ Ա՛ն աթանաս որ տեղ մը պահվըտած կեցեր էր, աս լսածին պէս նորէն հռոմ գնաց. հոն յայտնի եղաւ իր անմեղութիւնը. անոր համար կոստաս կայսրը միլան ըլլալով՝ հոն կանչեց աթանասը ու պատուով պահեց. իր եղբօրն ալ որ կոստանդ կըսվէր՝ ու ստամպօլ կընստէր, գրեց որ օրինաւոր ժողով ընել տալով խաղաղցընէ ամէնը ։

Աս խօսքիս վըրայ մեծ ժողով մը եղաւ սարդիկէ քաղաքը, հոն որ աթանաս բոլորովին արդարացաւ. արեւելեանք մտածեցին ինչ ընեն, իրենք ալ սարդիկէի մօտիկ Փիլիպէ քաղաքը ժողով ըրին աթանասին վըրայ շատ չարախօսութիւն ընելով դատապարտեցին, իրենց ըրած վճիռներնալ՝ սարդիկէ ժողովքին անունովը դուրս հանեցին. աս հերիք չէ՝ կոստանդ կայսեր ապաւինելով որ արիոսեանց դին էր՝ ուղղափառ եպիսկոպոսներէն ոմը բանտը դրին, ոմը քշեցին. բայց այնչափ անճոռնի անգթութիւններ ըրին՝ որ կոստանդնալ ձանձրանալով հրաման հանեց աթանասին ու իրեն հետեւօղներուն դէմ բան չընել ։

Երբոր գրիգոր բռնաւոր եպըը մեռաւ՝ կոստանդ կայսրը ետեւէ ետեւ թուղթ

գրեց աթանասին որ գայ նստի իր աթո-
ռը․ աթանաս ան ատենը ակուիղայ քա-
ղաքը ըլլալով՝ հռոմ եկաւ, անկեց ան-
տիոք անցաւ, ուր կոստանդ կայսեր հետ
տեսնըլելով սէր կապեց վրան․ միայն
թէ արիոսեանց դրդելովը առաջարկեց
աթանասի՝ որ իսքէնտէրիէ եղած ժա-
մերէն մէկը արիոսեանց ձեռքը տայ․
աթանասնալ աս խնդիրս պարապ հանե-
լու համար ըսաւ․ եսալ կըխնդրեմ որ՝
արիոսեանքալ անտիոք եղած ժամերէն
մէկը ուղղափառաց ձեռքը տան․ աս լսե-
լով արիոսեանք ոչ մէկը ըրին, ոչ մէ-
կալը։

Երբոր աթանաս իսքէնտէրիէ եկաւ,
ժողովը կայսերմէն աւելի պատուով ը̅
ունելու̅ն ըրաւ իրեն․ քիչ մը անցնելէն
ետեւ՝ ապստամբները սպաննեցին կոստա-
սը, որ արեւմտեան կայսր էր՝ հռոմ կը-
նստէր․ բայց կոստանդ արեւելեան կայս-
րը որ ստանպօլ կընստէր, ան ապստամբ-
ները իր տակը առնելով՝ ինքը ամմէնուն
վը̅ կայսր եղաւ։ Ան ատենը արիոսեանք
ամբաստանեցին որ՝ աթանասնալ ձեռք
ունէր ան ապստամբութե̅ մէջ․ քանիսալ
որ անիկայ իսքէնտէրիէի աթոռը նստած
է ըսին՝ եկեղեցւնայ բանը միշտ գէշի
կերթայ, հաւատքնալ կըկործանի․ լիբե-
րիոսի պապին անունովնալ սուտ թուղ-
թեր հանեցին աթանասին դէմ․ անով
շատ բանսարկութի̅ խառնելով՝ ուղղա-

փառնէրնալ երկու բաժնեցին ։

Աս բաներս խաղաղցընելու համար կայ-սերմէն հրաման ելաւ միլանու մէջ ժո-ղով ընելու . արխոսեանք եկող եպ̃սները առաջ կըբռնադատէին աթանասին դէմ ձեռագիր տալ, ետքը անոնք ժողովը կըմտցընէին . իսկ ժողովը չեկող եպ̃սնէր-նալ կըստիպէին կայսեր հրամանովը՝ որ աթանասը աթոռէն ձգեն . որուն շատ վախկոտներ հաւանուն̃ տըվին ըսելով՝ մէկ մարդու մը համար պէտքը չէ բոլոր եկեղեցին տակնուվրայ ընել, Թ̃րը ուղ-ղափառներուն դէմ հանել ։ Աս ժողո-վին մէջը կոստանդ կայսրը եղաւ թէ դատաւոր և թէ դատախազ (տաւաճի), յանցաւոր վճռեց աթանասը . ան ատե-նը ուղղափառ եպ̃սներէն ոմանք՝ անիրաւ է ըսին աս ժողովը, աթանասը հոս չէ . օրինաւոր քննութիւն վրան չեղաւ, մենք չենք խառնըվիր . չեկող եպ̃սներնալ ա-

սանկ գրեցին կայսեր ։

Կայսրնալ բարկանալով անոնք բանտը դրաւ, քշեց, իսքէնտէրիէ զօրք խրկեց որ աթանասը բռնեն . հինգ հազար զօրք յանկարծ պաշարեց ան եկեղեցին որուն մէջն էր աթանաս . բազմուն̃ ժողովըր-դեան թող չէին խոտր որ աթանասը ձեռ-վընին իյնայ . ինքը կուզէր՝ որպէս զի ժողովրդեան վնաս մը չըլլայ ։ Բայց վեր-ջապէս ժողովուրդը իրենց մէջ խառնե-լով զաթանասը փախուցին . զօրքը անի-

կայ չգիտնալով շատ կոտորած ըլլին ժողովրդեան մէջ. արխոսեանք քաղքին ժամերը տուները մտնալով թալլեցին ։ Աս բանէրս տեսնալով կռապաշտներըխրենք ալ անանկ ընել սկսան ։

Աթանասին տեղը անանկ եպս մը նըստաւ՝ ուսկից ամմէն ուղղափառ կըփախչէր. անալ որը ծեծելով բանտը կըդընէր, որնալ կըսպաննէր. ժղվդը չդիմանալով ըրած անգթութեցը՝ օր մը յանկարծ վրան վազեցին ժամուն մէջը. անիկայ հազիւ խալըսելով կայսեր ընկաւ ապաւինեցաւ. անկէց օգնութի առնելով նորէն եկաւ, աւելի բռնութի ըրաւ ժողովըրդեան վրայ ։

Աս ատէնները աթանաս անապատի դին փախած ըլլալով՝ երբոր լսեց որ իր պատճառովը շատ եպսներ նեղութի կըքաշեն, ինչվան լիբերիոս հռոմայ հայրապետը, ինչվան ովսիոս կորդուբայ եպսը՝ որ սարդիկէ ժողովքին գլուխն էր եղած, միտքը դրաւ որ անձամբ երթայ կայսեր ճար մը գտնայ ։ Երբոր ճամբան լսեց որ՝ կոստանդ կայսեր հրամանովը արխոսեանք հալածումը շատցուցերեն, աթանասն ու մէկալ եպսները կըփնտռեն կորսնցընելու, ան ատենը յոյսը կտրելով յած միայն ապաւինեցաւ, նորէն անապատը դարձաւ ։ Հոնալ տեսնալով որ կրօնաւորները կըչարչրեն ոմ զի աթանասը ձեռք տան, աւելի խորունկ անապատը գնաց,

լեռնէ լեռ՝ անընդհատ տեղեր քալեց մեզ
տարի, որ իր պատճառով ուրիշներուն
չարիք մը չի հասնի. երբեմն անանկ հո-
ղերու մէջ բնակեցաւ՝ որ ամենևին արև
չէր տեսնար. բայց հոնալ խոստական
թուղթեր կըգրէր ժողվքեան ու եպսաց որ
համատատուն կենան. ան ատենը գրեց
շատ ճառ արիոսի ու մակեդոնի դէմ.
Չկաւ ատեն որ կոստանդ կայսրը մե-
ռաւ, յուլիանոս ուրացողը նստաւ. ա-
ռիկայ զինքը բռնելի ընելու համար՝
քանի քշուած եպսներ որ կային՝ տեղեր-
նին դարձուց. Որն աթանասն իսկէն
տեղին իր աթոռը եկաւ. ժողով ընելով
ամմէն հակառակութի շակեց. Բայց ըման
որ խաղաղացաւ, ուրիշ հալածում մը
ելաւ յուլիանոսէն աւելի դէշ, որ ամ-
մէննալ կուզէր կոտորած ընել, աթա-
նասին համարալ գրերէր որ դուրս քշեն.
Զինոր բռնողները վրայ եկան՝ ուղղա-
փառները նաւակի մը մէջ դրին աթա-
նասը, նեղոս գետին վրայէն փախուցին.
բայց ճամփան լսելով որ ետևնէն կու-
գան՝ վախը առաւ զիրենք. Որն աթա-
նաս որ միշտ այ ապաւինելով ամմէն բա-
նէ կըխալըսէր, շուտ մը ետ դարձընել
տըվավ նաւակը. հոն վրայ հասան փնտը-
ռօղները, իրենց կըհարցընէին մըրդեօք
տեսա՞ք աթանասը. Նոնք պխն տըվին,
հիմա տեսանք հեռու չէ ձեզնէ, աս լսած-
նին պէս՝ զիրենք թողուցին, առաջ եր-

Թող սկսան որ գտնան ։

Ընանկով՝ որն աթանաս խալըսելով իս-
քէնտէրիէն դարձաւ գիշերանց, պատահի
մը տուն պահվեցաւ ինչվան որ յուլիա-
նոս սատկեցաւ, յուլիանոս կայսր նըս-
տաւ, որ ամենքն հալածումը դադրեցուց․
ան տանը՝ որն աթանաս յանկարծ եր-
ևան ելլալով գիշերանց իրեն ժամը ե-
կաւ․ եւ երբ կայսերմէն հրամանն առնե-
լով համարձակ նստաւ իր աթոռը ։ Բայց
յուլիանոս շուտով մեռնելով՝ շուտով անո-
ցաւ խաղաղութիւն․ որովհետեւ վաղէս
նստաւ կայսր որ արիոսեան էր․ քա-
նի եպիսներ որ յուլիանոսին հրամանովը
դարձերէին, նորէն քշել հրամմեց․ իս-
քէնտէրիեցիք թող չէին տար աթանա-
սը քշելու ան պատճառով որ՝ յուլիանո-
սին հրամանովը դարձերէր իր աթոռը
կըսէին, չէ թէ յուլիանոսին ։ Աս ա-
թանաս տեսնալով որ խռովութի կըլլայ՝
ինքիրմէ ելլալ․ վաղէս լսեց, քաղաքը
խաղաղելու համար նորէն դարձուց իր
աթոռը ։

Ասկէց ետքը որչափ որ նստաւ՝ որը՝ ան-
դադար աշխատելու հետ եղավ ժողովըր-
դեան մը․ ամենքն եկողները կըմխիթա-
րէր, սիրտ կուտար համբերութ՝ քաշել
ան հալածումը որ արիոսեանք կընէին
վաղէս կայսեր ձեռքովը․ շատ յորդո-
րակներ՝ թուղթեր գրեց ուղղափառ ե-
պիսկոպոսներուն որ զգուշանան արիո-

սեանց աղանդէն ։ Ասանկ լի արդեամբք առ ա̃ծ փոխեցաւ յամին իբր 371 . ապսպրելով որ իրեն մարմինը հասարակաց գերեզմանը թաղեն . բայց ետքը ստանպօլ բերին , անկից վենետիկ . ուր մէնքալ կըտեսնանք ամբողջ կեցած , բաց 'ի գլխէն որ ուրիշ տեղ է տարուած ։

Ուրիշ ս̃րբեր մեղքի առիթներէ փախչելով չիմեղանչեցին ս̃ր եղան . բայց աս ս̃րիս վարքը ան կըզարմացընէ որ՝ իր բոլոր կեանքը յիսուն տարիի չափ մեղքի առիթներու մէջ անցուց , կռիւներու մէջ , բայց մէկ մեղք մը չըրաւ . պատճառն որ՝ ինչ կընէր , ա̃ծ իր աչքին առջին ունէր , ա̃յ համար կընէր ։ Անոր համար գրիգոր նազիանզացին իր գովասանքին մէջը կըսէ . թէ որ ս̃րն աթանաս կուզես ճանչնալ՝ ճանչցիր առաքինութիւը . վ̃ո զի ս̃րն աթանաս ըսել՝ առաքինութի̃ ըսել , մի և նոյն է ։

---

## ՍՈՒՐԲՆ ՍԱՐԳԻՍ

Կապադովկիա աշխարքէն էր՝ որ զայսէրու երկիրն է . խելացի ճարպիկ մարդ , զինուորութե̃ մէջ ըլլալով , շատ քաջութի̃ ընելով բարբարոսաց դէմ՝ մեծն կոստանդիանոս զինքը ստրատելատէր ըրած , որ մեծ պատիւ է . և գաւառապետ , իբր

պէյլէրպէյի ։ Նա երանելին խիստ աստուածապաշտ ըլլալով՝ իր մեծութիւնը բանեցուց աստուածպաշտութիւնը ծաւալելու համար ․ պզտիկուցմէ աղէկ կարդացած ըլլալով աստուածաշունչ գիրքը՝ իրեն իմաստութիւնը շատ տեղէն վերցուց կռապաշտութիւնը՝ որ դեռ կըգտնըւէր, կռատունները կըփլցընէր, անոնց տեղը ժամ կըշինէր, ինչվան որ Թագաւորեց չար Յուլիանոսը ։

Տեսնալով սարգիս որ Յուլիանոս նորէն կռապաշտութիւն խօթել կուզէ՝ խիստ կըցաւէր, աղօթքով կաղաչէր Աստուծոյ ցըցընել իրեն որ ինչ ընէ ․ Յիսուս իրեն երեւնալով ապսպրեց դուրս ելլալ իր երկրէն, երթալ ան երկիրը՝ որ ես քեզի ցըցընեմ ըսաւ, ուր մարտիրոսութեան պսակը առնես ։ Նա օրերը լսեց ո̃րը՝ որ Յուլիանոս շատ զօրքով պիտոր արեւելք գայ պարսից դէմ կռուելու, յիշեց իրեն երեւցած տեսիլքը ․ ինչ ապրանք որ ունէր՝ ծախեց, աղքատաց բաժնեց ․ իր ամմէն մեծութիւնը փառքը մէկ դի ձգելով Հայաստան փախաւ ։

Տիրան Հայոց Թագաւորը պատուով ընդունեց սարգիսը իրեն Մարտիրոս անուն տղովը՝ որ որբ էր մնացած իր մօրմէն ․ քանի մը օրէն լսելով տիրան՝ որ Յուլիանոս անտիոք քաղքը հասած ըլլալով՝ շատ փնտռելու հետ է քրիստոնեայները, վախցաւ իրեն քովը պահել ․ խորհուրդ տըւաւ սարգսին՝ ելլալ պարսից Թագաւորին քովը երթալ, որ կըսուէր շապուհ ։

Երբոր շապուհ տեսաւ ասիկայ՝ խիստ ուրախացաւ . իրեն քաջութիը գիտնալով՝ բարբարոսներու դէմ խրկեց ծեծկըռւելու . ուր ա̃ծային օգնութիը որուն միշտ կապաւինէր , շատ յաղթութի ըրաւ սարգիս : Բայց անչափ կախնները չէին խափաներ իրեն աղօթքը , իրեն ջերմեռանդութիը ընելու , աղքատներուն հասնելու :

Որ մը լսեց շապուհ՝ որ տաճկաստանէն շատ զօրք վրայ գալով կավրեն կավըրշալըկեն պարսից աշխարքը՝ անոնց դէմ խրկեց սարգիսը զօրքով , բայց իր մարտիրոս տղան իր քովը պահեց : Երբոր սարգիս հոն հասաւ՝ հետի եղօղները թշնամեաց բազմութիը տեսնալով խիստ վախցան . որն սարգիս աղէկ առիթ գըտնալով՝ թէ որ ամմէն սրտովնիդ հաւատաք ըսաւ ճշմարիտ ա̃ծը՝ մէկէրնիդ հազարը կըհալածէ յիսն անուննովը . ասկէ սկսաւ ճշմարիտ հաւատքը քարոզել . իրեն քարոզելովը մէկ շնորհք մը ինչաւորաց վրայ . ամմէննալ ը̃ունելով քրիստոնէութիը յաղթեցին թշնամիներուն . իսկ երբոր թշնամիները սարգսին վ̃ր ուղեցին վազել , մութ խաւար ընկաւ վրանին , ճամփանին մոլորեցան , ձայնմընալ լսեցին որ կըսէր . մի կռուիք ա̃յ ծառային հետ ամմէնքդալ կըկորսըիք :

Ա՝յս բաներս լսելով՝ աւելի հաստատեցան նորահաւատները . ան ատենը ամ-

Մէն զօրքը մէկ բերան կանչելով կըհա-
ւատանք ըսին ամենամբ երրորդութեան՝ որ
սարգիս կըքարոզէ · աս ըսելով մկրտը-
ւեցան ։ Մուապաշտներէն ոմանք գացին ,
աս ամմէն բանը պատմեցին շապուհ թա-
գաւորին , վերադիր ընելով թէ սարգիս
հռոմայեցոց զօրաց հետ միաբան է · ա-
սոր վր՞ խիստ խռովեցաւ շապուհ , բայց
խռովութիւն մը չելլալու համար՝ առաջ
պարգևներ, ետքնալ իր մարտիրոս տղան
խրկեց քանի մը մեծներով՝ հետնալ մէկ
սիրալիր խօսքերով թուղթ մը գրելով
իր քովը կանչեց ։

Աչբոր ասոնք Ջամփան կուգային՝ թշնա-
միները բռնեցին իրենց բանակը տարին ·
Որն սարգիս լսածին պէս խիստ տրտմե-
լով ոյ ապաւինեցաւ , իրեք օր բան մը
բերանը չդնելով գիշեր ցորեկ աղօթք
կընէր ոյ որ իր զաւակը ազատէ ։ Մէյ-
մընալ չորրորդ օրը ձիաւոր մարդ մը ե-
կաւ թշնամիներուն բանակէն , իր տղան
և ուրիշ բռնըվօղները հետը բերելով՝
օխտը հոգի ըսաւ, աս տղան գերի բռնե-
ցին բերին , օխանալ ան օրը մեռան · մեր
բանակին մէջինալ փորձանքներ չիպակսե-
ցան , մեր զօրագլուխնալ տեսիլք կը-
տեսնար , աս պատիժները աս տղին հա-
մար է կըսէր · տարէք իր հօրը ձեռքը
տըվէք , չէնէ ամմէնքդալ կըկորսըվիք ։
Աս ըսելով նոր դարձօղները աւելի կը-
հաստատվէին քրիստոնէութե վրայ , աղա-

ղակելով մեծ է Տէ՛ն սարգսի ․ չիդար-
ձանձնէրնալ կըդառնային Ճշմարիտ հա-
ւատքը կընդունէին ։ Սէ՛ն սարգիս ուրա-
խանալէն փառք կուտար Այ, իր զաւկին
ազատվելուն համար ․ աղօթք կընէր Թըլ-
նամեացքանակին համար՝ որ Այ բարկու-
Թիր անցնի վրայնէրնէն, Ինչվան որ ի-
րեք օրէն մարդ եկաւ անոնցմէ ըսելով,
մեծ է սարգսին Տէրը ․ իրեն աղօթքովը
դադրեցաւ պատիժը ․ մենքալ կըհաւա-
տանք ան Այ ։

Սէ՛ն սարգիս լսեց իր տղին բերնէն Թէ
շապուհ զինքը կըկանչէ, ատոր համար
եկանք որ ըսավքեզ տանինք, հասկըցաւ
սարգիս շապուհին չար միտքը ․ ամմէն
զօրքը կանչելով ըսավ ․ եկավ ատեն որ
քրիստոնէութինիս յայտնենք, զօրքը մէկ
բերան աղաղակեցին քեզի հետ մէկ տեղ
պատրաստ ենք մեռնիլ ․ բայց աղաչելովը
սան որ չերթայ ։ Սէր պխնեց ․ մեր Տէրը
չիհրամմէր մարմնով զօրանալ, այլ հոգ-
ւով ․ նեղուէ մէջ համբերել ․ անոր հա-
մար մի խափանէք Ճամփաս, այլ աղաչե-
ցէք որ արժանի ընէ իս իրեն անուանը
համար մեռնիլ, ձեզ ալ Ճշմարիտ հա-
ւատքի մէջ հաստատել ։ Աս ըսելով բա-
նի մը զօրքով ու իր տղովը պալոնից գու-
ռը եկավ ։

Շապուհխիստ ուրախացաւ իր գալուն
վրայ, պարգևներ տըվավ ․ կարծեց որ
սուտ էին իր լսածները քրիստոնեայ ըլ-

լալուն համար . իրաւը հասկնալու հա-
մար իրենց տօնին օրը սարգիսը հրաւի-
րեց կռատունը գալու՝ կրակը պաշտելու ։
Պճնեց ո՞րը , եւ Ճշմարիտ ա՛լ երկիրպա-
գանեմ որ կրակը ստեղծերն է . քեզխալ
պէտք էր թ՞էր , անխիայ պաշտել՝ չէ թէ
անշանց ստեղծուածը ։ Տեմնաս մի , ը-
սաւ շապուհ , հիմա յայտնի եղաւ քու-
կին մոլորութիդ . քուկին սէրդ մէկ հրէ-
այի մը տուվերես՝ որ խաչվեցաւ ։ Նա քա-
մահրանքը լսելով՝ որը չփղխմացաւ , թա-
գաւորին երեսին թքաւ իր կատապաշտու-
թենը վրայ . եւ չեմ վախնար ըսաւ քենէ
ու քու գարշելի կուռքերեդ . այլ Ճշմա-
րիտ ածը կըպաշտեմ , որուն չեն համնիր
հայհոյիչներուն խօսքերը ։

Նա տանը շապուհ հրամեց քարերով
բերնին զարնել , երկըթէ կապերով կա-
պել , գետինը քաշկռտել . անանկով բռ-
լոր մարմինը քեղըրթվեցաւ . քաշօղնե-
րը կըյորդորէին որ քրիստոնէութիւնը թո-
ղու , կուռքերը պաշտէ ։ Անը պինդ ու-
վով . ցըցուցէք ինծի կուռքերնիդ՝ որ
անոնց զօրութիւնը տեսնամ , եսալ իմ այս
զօրութիւնը ցըցընեմ ։ Երբոր աս լսեց շա-
պուհ թ՞լըր , կարծելով որ կուռքերը
կուզէ պաշտելու՝ ուրախանալով քանի
մը մենծերու հետ կռատունը խրկեց ։
Ան մտածին պէս ո՞րը ըսաւ . ասոնք
տասներկու կուռքեն , չորսը վիշապիրե-
րան ունին , չորսը սատանայի երես ու-

նին, չորսը կռվու գլուխ. առանցմէ որը պաշտելու է ըսելով՝ առուծնին հասկըցուց ։ Չորսը անոնք վրան կըկատղէին, թողուցէք որ ըսավ քովերնին երթամ. հոն երեսը խաչ հանելով, այ̃ օգնուի̃ը խնդրելով, վրայի եղած երկաթներովը զարկաւ կուռքերուն, ամէնն ալ փշուր փշուր եղան. տեսաք մի ըսավ անմիտներ

ձեր պաշտածները ինչ եղան ։

Ամէնն ալ վրան վազեցին, բռնելով կըքաշկռտէին, մէկ բերան մեռնի կըկանչէին. անանկ վազելու ատենը մարտիրոս իր տղան կոխկռտըվելէն մեռաւ, իր անուան նշանակուի̃ը գործքով կատարելով մարտիրոս եղավ ։ Նազմուին առին ատեանը տարին, հոն կուզէին մեռցնել. բայց շապուհ թ̃րը չիթողուց. դուն չես վախնար սարգիս ըսավ որ ան կուռքերը քեզ կըմեռցընեն, չէ թէ ես կըմեռցընեմ. Ս̃ը պնդեց. պատրաստ եմ մեռնելու իմ այ̃ համար՝ որ ինծի անմահուի̃ կուտայ, քուկին կուռքերդ բան մը չեն կրնար ընել. ինչպէս որ երկաթներովս անոնք փշրեցի, կրնայի նոյն երկաթներնալ փըշրել, բայց ես կուզեմ մեռնիլ այ̃ համար

ըսելով գլուխը, շլինքը կըծռէր ։

Թ̃րը հրամմեց բանտը տանիլ. հոն դահճապետը շատ տանջանք կուտար ս̃րյն. Թ̃րին վճիռը կըղրկէր, որ վճիռ հանեց մեռնելու. ս̃ը կըգոհանար, մարտիրոս ըլլալու շնորհք կըխնդրէր ա̃ծմէ ։ Ն

գիշերը սատանան երևնալով ըսաւ. ինչ-
պէս որ դուն իմ կուռքերս կոտրտեցիր,
եսալ քուկին ոսկորներդ կոտրտել պի-
տոր տամ. ՚որը չխելով անիկայ քնին
անուննովը հալածեց: ()րնիբուն կըչար-
չարէին ՚որը քերելով քաշկռտելով. անի-
կայ չարչարվելու ատենը աղօթք կընէր.
ան գիշերը հրեշտակ երևցաւ ըսաւ. զօ-
րացիր ով սարգիս ես քեզի հետ եմ. ինչ
որ խընդրեցիր՝ տըվի քեզի, ինչալ որ աս-
կից ետքը խնդրես՝ անոնքալ պիտոր տամ:
Աս խօսքէս սիրտ առաւ ՚որը, տանջանքնե-
րը բանի տեղ չիդըրավ. սատանան կատղե-
լէն նորէն կերևնար, ահ կըձգէր սիրտը
պատմելով, ինչպէս կարողութի ունէր ամ-
մէն չարիք ընելու. ես էի ըսավ որ ադամ
դրախտէն դուրս հանեցի, յոբը զարկի,
մարգարէները, առաքեալները, մարտի-
րոսները չարչարել ու մեռցընել տըվի.
քոալ հրէայներուն սպաննել տըվի: Ան
սարգիս՝ քնի զօրութը մարդուս փրկըվի-
լը, սատանային ամօթով ըլնալը՝ իրեն
երեսին տալով նորէն հալածեց: Հին-
գերորդ օրը երբոր աղօթքով օգնութի
կըխնդրէր քնէ, երևցաւ իրեն քն. սիրտ
տալով ալքայութի խոստացաւ իրեն: Անի
լուսէն բանտը լուսաւորվեցաւ, սարգ-
սին կապանքներնալ արձըկվեցան. հոն
եղող բաղմութիը տեսնալով փառք կու-
տային այ. շապուհ թիփրին կըպատ-
մէին:

Րասյուհ պատուով երկրէն ընկալ իր
ա՛ջին, յորդորեց զատենակալու . այսօր մեր
Հրամանը կատարել բաւ , եթէ զինձ
պատգամերեցին պաշտել : Նայց իր միտքը
ան էր որ՝ սարգիսը ապրեցընէ , յուլիա-
նոսին դէմ խրկել , որ շատՀոյ վրան կու-
զար . գիտէր սարգսին քաջութիւնը՝ որ
կրնար դէմ դնել : Իր թզրին խաբէութիւնը
ցխանալով սարգիսն՝ ի չէս կրնար բաւ
բերել ալէս մոլորցընել . թէ որ իս չիմա-
ցընես , բուՀին մաՀդ իմ ձեռքովս պի-
տոր ըլլայ . չեմ թողուր որ՝ ապիղծ երկ-
րովդ ՀայՀոյութիւ խօսիս Ճշմարիտ այ
դէմ : Իր լաճին ալէս շատուՀ թզըր
Հրամմեց բաղքին դուրս Հանել սպան-
նել . տանելու ատենը կռապաշտներէն
քին պաՀօդները թէ ինչու մեր կու-
քերը կարաեցդ , վրան կըլլազէին , ը-
զուրկներով մարմինը կըրզըքաէին .
Ան սարգիս աս չարչարանքները բանի
ա՛նեղ չխնայելով , Հայր մեր ըսելով կեր-
թար , կըլխէր այ զօրութիւ որ արդար-
ները միջա փրկէրէ , կաղաչէր որ նոյն
զօրութիւ իրենալ տայ . երբոր մեռնելու
տեղը Հասաւ՝ գոՀութի ընդան այ մար-
տիրոսութ արժանի ըլլալու Համար . թո-
ղութի խնդրեց իր և ամմէն քրիստոնէից
մեղքերուն . ում որ իր անունը յիշէլու
ըլլայ , ամմէն վտանգներէ փրկէ , սատա-
նայները Հալածէ , Հիւանդները բժշկէ ,
բանտէ ծառայութէ ազատէ . խաղաղութէ ,

նեղուն, ալէկոծուն, ամմէն չարէ խալըս-
ցընէ․ ով ալ որ իրեն յիշատակը կա-
տարէ, խնդրեց որ բխուրապատիկ վարձ
հատուցանէ ։ Ախբոր խօսքը լմնցուց՝
Հրեշտակ մը երկինքէն իջնալով ձեռքը
պսակ բռնած սիրտ տըվաւ իրեն․ ինչ որ
խնդրեցիր ըսաւ՝ ած պիտոր կատարէ․
Քրիստոնեայն որքու անունովդ բան մը
պիտոր խնդրէ, իր խնդիրքը կառնէ ։
Հոն եղած բազմութիւնը տեսնալով Հրեշ-
տակը՝ աղաղակեցին, մեծ է Քրիստոնէ-
ից ածը, անկէց ուրիշ ած չիկայ ։ Մեր
դարձաւ անոնց ըսաւ, իմ մեռնիլս որ այ
համար կըմեռնիմ՝ մեռնիլ չէ, Հապա
անմահութիւն ձեռք ձգել․ ինչ ուրախութիւն
կիմանամ որ պզտիկութենէ փափագած
բանս, այսօր կունենամ․ որ է նահա-
տակիլը․ որց քովը երթալ ։ Աս ըսելով
ծունկ չոքեցաւ դէպ արեւելք․ խաչա-
կնքելով շլինքը դահճին երկնցուց ըսե-
լով, տր յս ընկալ զհոգի իմ․ երբոր գը-
լուխը կտրըվեցաւ յամին 363, լոյս մը
իջաւ մարմնոյն վրէ, որ ցոլանալովը կա-
պաշտնները կերէր, ձայն մը կուգար եր-
կինքէն․ եկո՛ ով երանելի սարգիս․ յա-
ւիտենից Հանգիստը ժառանգէ ։ Քրիս-
տոնեայ եղողները մարմինը վերուցին,
բայց շապուհ բարկանալով տասնըչորս
հոգի անոնցմէ կտորեց՝ որ պարսիկ էին․
մարմիննին գազաններուն առջին ձգեց,
բայց մէկ գազան մըն ալ չմօտեցաւ․ Հա-

կընալով որ շատ պարսիկ քրիստոնեայ կըլլան աս հրաշքները տեսնալով՝ միտքը դըրաւ կըրակով երել։ Մէյմըն ալ յուլիանոսին գալը լսեց, ամմէն բանը մէկ դի թողուց, անոր դէմ գնաց. ան ատենը քրիստոնեայք ասոնց ու նոյն սարգսին մարմինը, ու իր մարտիրոս տղին, առին պահեցին։

## ՍՈՒՐԲՆ ՍԻՄԷՈՆ

### Սէնաչէայ.

Սնոտիքայ երկիրը ծնած ըլլալով փոքր թէոդոս կայսեր օրը, աղքատ ծնօղաց զաւակ, իր հօրը ոչխարները կարծէր. կիրակի օրերը ժամը երթալով ա՟ծաշունչ գիրքը կըլսէր։ Երբոր տասնըրեք տարվան եղաւ, օր մը պօղոս առաքելոյն խօսքերը լսելով, և աւետարանին երանութիւնները, սիրտը անանկ ա՟ծային լոյս մը ծագեց, անանկ արթընցուց, որ փընտըռտուք ընկաւ միտքը իմանալու. հոն մէկ բարի ծեր մը գտնալով՝ հարցուց, ինչ էր ան կարդացած խօսքերը. ես մէկ տխմար տղայ մընեմ ըսաւ, կըփափագիմ ա՟յ ճամփան գտնալու։

Ծերը պատմեց. ժուժկալութ՟ն մ՟ի էր. թէ որ կուզես ըսաւ, որդեակ, ժուժկալութիւնը սորվիլ, ան է որ՝ մէկը ՚նը սրտով պաք

պահէ, ահով դողով աղօթքի հետ ըն-
լայ, գիշեր ցորեկ բարեգործուի̃ ընելու
ետեւէ լինայ. աս բաներս աշխըրքի մէջ
կենալովալ կրնայ ըլլալ, բայց կարգով
կանոնով վանքերու մէջ կըլլըմի : Ահա
լսեցիր ըսավ, որդեակ, աս ամմէն խօսքը
սրտիդ մէջը բռնէ, նայէ աղէկը քեզի
ընտրէ. թէ որ կըփափագիս կատարե-
լու՛ն Ճամփան երթալ, պէտք է քեզի ա-
նօթի կենալ, ծարաւ քաշել, մերկ մը-
նալ, լալ, հառաչել, արթուն կենալ,
քանի մը բան քեզի հերիք սեպել, մէ-
կալ բաներէն ետ կենալ, խոնարհութի
յանձն առնել, հալածանքի համբերել,
քամահրըվիլ, շատ բան քաշել մարդէ,
միայն թէ հրեշտակներէն զրկեալ չիմը-
նաս : Ծ քու միտքդ բանայ որ Ճանչնաս,
ասոնք ընես, որդեակ, քու բաղձանքիդ
հասնիս :

Աս խօսքերս տղին սրտին մէջը կրակի մը
պէս անանկ վառեցին ա̃ծային սէրը,
որ աշխարհ բոլորովին ձգեց քամահրեց,
երկնային մարդ մը եղաւ. Նոր զարմա-
նալի Ճամփայ մը բռնեց, որ հոս պատ-
մենք : Առաջ ժամ մը մնալով՝ գետնի
վը̃ր ընկաւ, խնդրեց ա̃ծմէ, որ իրեն
Ճամփայ մը ցըցընէ ուր երթայ, ինչ
ընէ. աղօթքէն ելավ, իր ծնողաց բան
մը չըսելով որ արգելք չըլլան՝ մէկէն ան-
ապատը փախաւ. հոնալ երեսի վը̃ր ի-
նալով՝ օխտը օր անօթի ծարաւ կեցաւ.

կուլար կաղաչէր այ՟ որ իրեն առաջնորդ
ըլլայ ։

Ած իրեն առաջնորդեց հեղիոդորոս ար-
քային վանքը եկաւ, որ մեծ մարդ էր այ՟
առջին · իրեն ոտքը իյնալով ըսաւ, ողոր-
մէ ինծի մեղաւորիս որ կըցանկամ այ՟
ծառայել · խօշահէ ։ Հեղիոդորոս ամմէն
բանը իմանալով վանքը առաւ · սիմէոն
անանկ ճգնութ՟ ու պաք պահելով կեցաւ
հոն, որ ամմէնը զարմացուց · իրեք տա-
րի սաանկ կենալէն ետև՝ սիրտը կեփէր
աւելի ճգնութ՟ ընել կուզէր · օր մը հո-
րին չուանը քակելով անանկ պինտ մէջքը
փաթթեց որ՝ մսին մէջը թաղվեցաւ, ա-
տեն անցնելով որդնոտեցաւ · պաքնալ
անչափ աւելցուց՝ որ բոլորշաբաթը ժում
մը կուտէր կիրակէէ կիրակի · ինչ կերա-
կուր որ իրեն կուտային՝ անոնք աղքա-
տաց կըբաժնէր ։

Աս բաներս տեսնալով եղբարները՝ գանկ-
տեցան վանահօրը · որովհետև իրենք
ամմէն օր իրիկունէ իրիկուն կուտէին ·
վանահայրը կանչեց սիմէոնը հարցուց
սաանկ խիստ պաք պահելուն ու որդնո-
տելուն վրա · անիկայ պինն մը չիտալով
վար կընայեր կուլար · երբոր հանվեցը-
նել տրվաւ, տեսաւ որ չուանը միսը մըտ-
նալէն որդնոտերեր · հազիւ քակեցին,
խոցերը յիսուն օր նայելով բժշկի ձեռ-
քով բռընտցուցին ։ Ամմէննալ զարմա-
ցած կընայէին վրան · իսկ ինքը իբր մէկ

ուրիշ մարդ մը եղած կըսէր․ Նօրէնութե յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ ||։ Թո-ղէք ինծի պէս մեղաւորի պատիժ քաշել ու մեռնիլ։

Բայց եղբարքը սոսկալով աստր ձգնուէն չէին ուզեր մէջերնին․ անոր համար վա-նահայրնալ ձամփայ տըվաւ աստր։ Սի-մէոն խոնարհուէ բաժնըվելով կերթար կուլար․ ինչվան գտաւ մէկ ցամաք հոր մը լեցուն օձերով, հոն ձգելով զինքը՝ օխտը օր անօթի մնաց․ բայց Ած որուն մտածմունքը շատ հեռու է մարդուս մտածմունքէն՝ հրեշտակներ խրկեց վա-նահօրը՝ որ հասկըցուցին թէ սիմէոն ո՛ր-չափ մեծ էր Այ աչքին, և ապսպրեցին որ գտնայ բերէ։ Երբոր վանահայրը աս տեսիլքը պատմեց ամմէն եղբարներուն․ փնտռելով աս դիս ան դին, ետքնալ ան մութ հորը ինջնալով գտան բերին։

Վանահայրը տեսածին պէս՝ սիմէոնին ոտքը ընկաւ թողութի ուզելու․ ասկից ետքը դուն եղիր ըսաւ առաջնորդ, ծա-ռայ Այ։ Սիմէոն որ բոլորովին խոնարհ էր՝ կուլար երբոր աս խօսքերս կըլսէր․ քանի մը օր հոն կենալէն ետև՝ չուզե-լով լսել անանկ գովութիններ՝ գաղտուկ ե-լաւ անկից, ուր իրեք տարի էր կեցած․ գնաց մէկ անապատ մը, քարեր ժողվե-լով մէկ նեղ տեղմը շինեց իրեն․ չորս տարիի չափալ հոն կեցաւ, շաբաթը ան-գամ մը թըջած սոպ ուտելով, իսկ մեծ

պաքին մէջ ամենեւին բան մը չուտելով, կըբաղձար որ մօվսէսի ու եղիայի նմանի ։ Բայց հոնալ իր սրբութ անունը ելավ, բազմութի սկսան գալ․ ամեն եկող երբոր իրեն բերնէն ելած խօսքերը կըլսէին խիստ կըշահէին ։

Ան անապատին մէջ բասոս կամ վլասոս անունով վանահայր մը կար, առաջնորդ երկու հարիւր աղբարներու, մարդ ա̃ծաշնորհ, որ կըքալէր կըպտըտէր ամեն եղբարներու քով, կառաջնորդէր, ո̃ր հաղորդութիը կըբաշխէր՝ գլուխ քննից ըլլալով ։ Սիմէոն ասիկայ իրեն հոգևոր հայր ընտրեց, բացաւ իրեն ամեն խորհուրդը և անչափ փափագը ա̃յ ծառայելու ։ Բասոս իրեն խրատ տըվավ որ ճըգնութ մէջնալ պէտք է ընտրողութի ընել․ երբոր անօթենալէն մարելու պէս կիմանաս՝ պէտք է ըսավ քիչ մը բան ուտել․ չափը անցնիլը՝ վնաս կուտայ չէ թէ մինակ մարմնոյ՝ այլ նաև հոգւոյ ։

Սիմէոն կատարեալ հնազանդելով՝ իրեն յանձնեց տասը հաց ու ջուր խրկել, որ պէտք եղած ատենը առնէ ։ Անանկ ըրաւ բասոս, դուռնալ ծեփեց որ քառսուն օր մէկը չիկրնայ քովը գալ․ բայց երբոր օրերը անցնելէն ետև՝ եկաւ բացաւ, տեսաւ որ ամենեւին հաց ու ջուր չէր առած․ զինքնալ տեսաւ գետինը ընկած, աղօթքի մէջ յափշտակված․ դըդելով արթնցուց աղօթքէն, բայց իբր կէս մե-

ուած ըլլալ անչափ պաքէն. Երանելին
խնդրեց որ խորհուրդ հաղորդուի. ա-
նով զօրանալով գետնէն ելաւ, քիչ մը
խոտ կերաւ. անչափ խոտը հերիք սե-
պեց իրեն։

Աս կերպը տեսնալով Բասոս՝ զարմացաւ
մնաց. հասկընալով որ սիմէոնին վարքը
ածմէ է, ալ բան մը չըսաւ իրեն խիստ
ճգնութեը համար. միայն իր աշկերտնե-
րուն պատմեց ասոր հրաշալի վարքը։
Միմէոն անչափ առաջ գացած էր իր հո-
գեսիրութե ու ջերմեռանդութեը մէջ՝ որ
անկից ետեւ շատ հեղ երսունըլլինը օր ա-
նօթի ծարաւ կանցընէր. քառասնե՛րդ
օրը միայն կուտէր սրբութի առնելէն
ետեւ. քանի օր ոտքի վր կըկենար աղօ-
թելով, սաղմոս ըսելով, երկնային մտած-
մանց մէջ ընկղմելով՝ ետքը քանի մը օր
նստած կանցընէր. անկից ետքը գետնա-
տարած կըկենար, անդադար ած օրհնե-
լով. անանկ որ՝ իբր թէ երկրիս վր մարդ
չէր. այլ մէկ անմարմին մը հրեշտակնե-
րու հետ մէկ տեղ ած փառաւորօղ։

Երեք տարի աս նեղ խուցս կենալէն
ետեւ՝ մօտիկ լեռ մը կար հոն գնաց. քա-
րեր շարելով պատ մը դարձուց վրան
բաց. հոն կեցաւ գիշեր ցորեկ. անձրեւն
ու մրուը՝ ցուրտն ու տաքը քաշելով։
Քանի որ կըմտածէր թէ ինքն բանն
ած՝ երկնի եւ երկրի ստեղծօղը՝ կընար
մարմին առնելով՝ կաթիլ մը արեան թա-

փնելով՝ աշխարհս փրկել, հերիք չխե-
պեց, այլ անօթի ծարաւ կեցաւ, ամ-
մէն սաստիկ տանջանքները քաշեց. եւ
որ մեղաւոր իր ծառան եմ, որչափ ա-
ւելի պէտք է որ քաշեմ ըսելով, ասանկ
ճգնութե̃ կատար զինքը։ Ու որովհետեւ
հնալ շատ մարդ կուգային իրեն՝ երկան
շղթայ (զինճիլ) մը կապեց. մէկ ծայրը
իրեն ոտքը, մէկալ ծայրը քարի մը վր̃.
ոպ̃ զի մէկը չիկրնայ անկեց դուրս հա-
նել՝ թէեւ ինքը ուզենայ։ Ասանկով միշտ
երկնային բաները կըմտածէր, կարօտով
փափագով դէպ 'ի երկինքը կըհառա-
չէր. իրեն հաւատքը լուսաւոր ըլլալով՝
ինքը թէ աչքով կըտեսնար, իրեն եկօղ-
ներուն ալ աս բանս կըսորվեցընէր։
Մելիտիոս անունով մէկը եկաւ ասոր
քով՝ որ անտիոքայ եպս̃ը կըկարծեն. շատ
զարմացաւ իրեն ըրած ճգնութե̃ը վր̃,
բայց խրատ տըվաւ շղթան վերցընել.
հերիք է մարդուս ըսաւ ինքիր կամքովը
զինքը կապել։ Աս բանիս շուտ մը հնա-
զանդեցաւ սիմէոն. դարբին (չիլինկիր)
մը կանչելով՝ քակել տըվաւ շղթան.
բայց կապած տեղը ճզմըված ըլլալով՝
միսը տրորէր որդնոտէրէր, որոնք կամօք
կըթողուր երանելին որ տանջըվի. պօ-
ղոս առաքելոյն ըսածը միշտ յիշելով,
թէ երբոր մարմինս կըտկարանայ. հո-
գիս կըզօրանայ։

Բայց ա̃ծ որ իրեն ծառայօղներուն միշտ

չնորհք կըբաժնէ, ասորալ չնորհք հո-
գեշահ վէպատուն տըլալ, ու չնորհք բժշկութէ. քովը եկողներուն զարմանալի խօսքերով հոգինին կըշահէր. ամէն ցաւալ կըռընտցընէր. անչափ եղան եկողներուն բազմութիը որ՝ ամէն անապատի Համիայները լեռները քաղաք մը դարձերէր: Իրեն անունը լսողները հեռու տեղերէն զանազան ազգերէն կըվազէին՝ քովը կուգային. արապ, պարսիկ, հայ, կիւրձի, նաեւ Ֆրէնկիստանէն. սպանիացիք, իդալացիք, ինկլիզ, Ֆըրանսզ, ամէննալ ասոր կուգային: Հռոմ տուներու մէջ՝ Համիաներու վը՛ր ասոր քաշված պատկերը կըդնէին, կենդանի նըքի պէս կըպադնէին:

Անանի որ ինքը փառքէ կըփախչէր, ա՛ծ ալ անչափ կըփառաւորէր իր ծառան: Եկողներուն շատըլորութիը անչափ էր որ՝ հազիւ կընայիս իրեն լաթերուն դպչիլ. ինկ ձեռքը պադնել՝ քիչ հոգի կընային, բայց ամէննալ կըշահէին. որը փորձանքներէն ցաւերէն կըխալըսէր, որը իր Թշնամիներուն հետ կըհաշտըվէր, որը իր հոգեւոր խօսքերը լսելով մեղքէ կըդառնար կապաշխարէր. անհաւատներնալ դարձի կուգային քրիստոնեայ կըլլային:

Բայց աս ամէն արդիւնքը բան մը չէր երենար նըքին աչքին. իր բաղձանքը փափագը ան էր որ՝ միայն ա՛յ հետ տեսնը-

լի, աղօթքով հետը խօրաթէ, որուն երկնային անուշութիւնը միայն ինքը կառնէր կիմանար ։ Անոր համար տեսնալով որ՝ ինչվան հիմա ուր որ գնաց՝ բաղմութէն չիկրցաւ խալըսելու, միտքը դրաւ անանկ տեղ մը ելլալ՝ ուր մարդիկ չիկրնան մօտիկնալ. հոն կենալով բոլորովին հոգեղէն ըլլայ ։ Սիւն (տիրեկ) մը տնկել տըվավ իր կեցած տեղը՝ հինգ կանգուն բարձր. անոր վր̄ կեցաւ հինգ տարիի չափ. ետքը աւելի բարձր սիւն մը տնկեց տասվերկու կանգուն բարձր. տասվերկու տարիալ հոն Ճգնեցաւ. ուրիշ սիւն մը տնկեց քսան կանգուն բարձր. հոնալ տասվերկու տարի կեցաւ ։ Ետքը աւելի բարձր սեան վր̄ ելլալ՝ որուն երկանքը երսուն կանգուն էր. չորս տարիալ հոն կեցաւ ։ Անկէց բարձր սեան վր̄ ելլալ՝ որ երսունըվեց կամ քառսուն կանգուն բարձր էր. աս սեան գլուխը խուցմընէր շինած վրան բաց, քովերը պատշգամբ (փարմախըլըխ) քաշած. հոն ինչվան իր մահը կեցաւ տասնըվեց տարի. ամմէն իր կեանքը որ սեան (տիրեկի) վր̄ անցուց, եղաւ քառսունօխտը

տարի ։

Առաջ քան օր՝ երբոր քառսուն օր առքի վր̄ կենալ սորվեցուց իրեն գիշեր ցորեկ. ծոմյամամք բան մը բերանը չիդնելով. իբր թէ ան սեան վր̄ ինքնալ մէկ սիւն մընէր եղած, բայց հոգեղէն սիւն. աչ-

վինէրը բոլորովին վեր վերցուցած , ձեռ-
վինէրը բազկատարած բացած , միտք-
նալ բոլորովին ՚ի յափշտակված , ան-
դադար աղօթքի հետ կըլլար , մանա-
ւանդ տօն օրերը՝ իրիկունը արևելք դար-
ձունելով գլուխը աղօթքի կըկենար բազ-
կատարած . առտուն արևը ելլալով եր-
բոր երեսին կըզարնէր՝ անկէց կարթըն-
նար իբր իր փափագը առած . ան փա-
փագը՝ որ կուզէր բոլորովին երկնային
ըլլալ , մարդիկներէ հեռանալ , ՚ի հետ
միանալ , որ աս աշխարհիս մէջ միայն ա-
ղօթքի մէջ կըլլայ , ՚ի հետ խօսաթե-
լով ։ Աստուած որ անանկ անօթի կան-
ցըներ , ամմէն շաբաթ կըհաղորդըվէր .
իր ուզած կրօնաւորներէն ոմանց թող
տալով իր քովը ելլալու ։

Այս ամմէն բանը լսելով եգիպտացոց ան-
ապատին հայրը՝ ինչ արտաւոր նորա-
ւանիլ բանմըն էր իրեն վարքը , ժողվըւե-
ցան՝ որոշեցին մարդ մը խրկել , իրենց
գիտցէն հարցընել ։ Ինչ է աս նորութին
որ դուն կընես . ինչու թողուցիր հին
Ճամփան՝ որ առջափ ՚ու հարք սորվեցու-
ցերէն , նոր Ճամփայ մը բռներես որ՝ մէկը
չէ ըրած . վար ինջիր , հասարակաց Ճամ-
փան բռնէ ։ Աւէ որ չիհնազանդի մեզի-
ջինջնայ ըսին , յայտնի է որ՝ մարդկային
բան է , բռնութ ինջեցուցէք . իսկ թէ որ
մեզի հնազանդի՝ ինջնալ ուզէ , յայտնի
նշան է որ ՚ածային բան է . թողուցէք

ըսին, խափանօղ չըլլանք իր ըրածին։ Սիմէօն շուտ մը ցըցուց որ՝ իր ըրածները ա̃ծային ազդեցութիւնը կամքովը եղած էին՝ և ոչ մարդկային, ըսածին պէս՝ թէ ժողովը հրամմեց վար իջնալու, բան մը չխօսելով՝ սանդուղք բերէք որ, ըսաւ, վար իջնամ։ Ան ատենը ժողովքին մէկալ հրամանը յայտնեցին իրեն, թող վերցնին իջնալու․ յորդորելով որ հաստատուն կենայ իր ճգնութեր մէջ։

Երբոր ժողովը լսեց իր հնազանդութիւնը, խիստ ուրախացաւ սանկ ա̃ծային քաղաքավարութեր վ̃ր․ բայց ամենուն վրայ ալ մէկ զարմանք մը մէկ ահ մը ընկաւ․ սրբոյն անունանալ ալ աւելի մեծցաւ ծաւալեցաւ․ ինքը բարձր սեան վրայ ելեր էր որ խալըսի մարդիկներէն ու մարդկային գովութէն, ա̃ծաւ անչափ շնորհք տրվաւ իրեն որ՝ ալ աւելի գովվեցաւ, եկօղներուն շատվորութիւնը անհատնում եղաւ, որոնք կուգային աս սրբյս քով՝ իրենց նեղութեց դեղ գտնալու։ Որովհետեւ ամմէն ցաւ կըբժշկէր․ սրտերնուն անցածները գիտէր կըզուրցէր․ հեռու տեղեր եղած բաները կըպատմէր․ ամմէն բժշկըվօղներունալ կապսպրէր, որ մըսէք սիմէօն բժշկեց․ աս խօսքս սուտ է կըսէր, հապա ըսէք որ ա̃ծ բժշկեց․ աս խօսքս ճշմարիտ է․ մերդվըննաք կըսէր ա̃յ անունին վ̃ր, որ է անուն ահաւոր․ հապա երդվըննալ հարկ ըլլայ՝ սիմէօ-

նին անուանը վըր երդվընցիք, որ է մե-
ղաւոր ։

Լսեց իրեն մայրը, չիդիմացաւ եկավ իր զաւկին կարօտը առնելու, քսանօխտը տարի տեւած չըլլալով. և որովհետև սիմէօնին սիւնը պատով էր, չէր թողուր կնկտոց պատէն ներս մտնալու, մարդ խրկեց մայրը. որը լամծին պէս՝ երեսը գոցեց, չուզեց իր մայրը տեսնալու ։ Շատ լաց ողբ ըրաւ մայրը. Հայրդ քու կարօտէդ լալով ողբալով մեռաւ ըսավ, քեզ կորսըված սեպելով. հիմա ես որ քեզ գտայ եկայ, ինչու պիտոր չիտեսնամ. Թէ որ չիտեսնամ, եսալ հոս կըմեռնիմ ։ Սիմէօն իր փաքրաւորին բերնովը հասկըցուց ըսելով. աս աշխարհս իրար չիտեսնանք որ՝ ան դին արժանի ըլլանք տեսնալու ։ Աս խօսքս լսելով մայրը՝ ա՜լ աւելի սիրտը կեփէր զինքը տեսնալու ։ Սէր մարդ խրկեց ըսելով. քիչմը հոս հանգչէ՛, քուն եղիր, ինչվան որ իրար տեսնանք ։ Անալ ուրախանալէն գլուխը պատին կըթնցընելով քուն եղաւ, հոգին աւանդեց ինչպէս որ սիմէօն խնդրեր էր իրմէ. ան ատենը վար իջաւ սիմէօն, սաղմոս ըսելով սեանը առջին թաղել տըրվավ՝ որ միշտ տեսնալով անոր հոգին յիշէ աղօթքին մէջը ։

Սատանան սիմէօնին ատանկ սրբութիւնը տեսնալով՝ ուրիշ կերպով մը ուզեց փորձուէ մէջ ձգել. գիշերը աղօթքին ատե-

նը զինքը երեցուց իբրև տ̃ր փառաց որ կուգայ․ ո՛վ հաւատարիմ ծառայ, ըսաւ, վեր ելիր որ փառաւորվիս, պսակդ առնես։ Աշրանելին առջի բերանը վախնալով ան ահաւոր տեսիլքէն՝ անանկ սեպեց որ ա̃ծ կըկանչէ զինքը, ուզեց հնազանդիլ․ երբոր ոտքը վեր առաւ խաչակնքեց զինքը, իսկոյն իմացաւ սատանային խարդախութ̃ը․ ոտքը վար առնելով ա̃յ դիմեց։ Սատանան տեսնալով որ իրեն չարութ̃ը երևան ելաւ, կատղելէն ոտքին զարկաւ աներևոյթ եղաւ։ Ան զարնելէն՝ մէկ խոց մնաց բացվեցաւ առջի խոցին վ̃ր որ նոր էր ողջընցած․ անանկ վէրք մը՝ որ որդնոտեցաւ․ անկէց ետքը մէկ ոտքի վ̃ր կըկենար մինչվան իր մահը, որ մեռաւ յամին 459․ սեպտ․ սկիզբները, 69 տարվան։ Տասը տարի վանքի ու անապատի մէջ ճգնեցաւ․ մնացածնալ սեան վ̃ր․ անոր համար Սէ-

նակէայ ըսվեցաւ․

Մեռնելէն ետև երեսը լուսով կըփայլէր․ շատ հանդիսով մարմինը առին տարին վեց եպս̃ներ, անտիոք քաղաքը թաղեցին․ հոն եղող իշխանը 6000 մարդով ընկերացաւ, ո̃չ զի տեղացիք չյափըշտակեն ՚ը մարմինը, ինչպէս որ խօսք դրերէին։ Անչափ բազմութ̃ի ժողվըվեցան, որ լեռը լեցուցին մարդով․ իրեն տապանը եղաւ մէկ մեծ ուխտատեղի մը, շատ հրաշքներ տեսնալով ինչպէս

իր կենդանութեան ատենը, անանկալ մահուանէն ետքը ։

---

## ԿԱՏԱՐԻՆԷ ԿՈՅՍ

կամ

## ՆԵՐՏԱՌԻՆԷ·

Իսքէնտէրիէ քաղքէն էր որ հին անունով Աղեքսանդրիա կըսվի. անոր համար ինքնալ կատարինէ աղեքսանդրացի կըսվի. մաքսենտիոս ու մաքսիմինոս թագւորներուն ատենը ։ Աս կոյսը քրիստոնեայ էր՝ ազգական կոստանդիանոսի, գեղեցիկ երեսով, զօրաւոր խելքով. ան ատենը իսքէնտէրիէ քաղաքը խիստ ծաղկեալ էր ուսմամբ. ամէնուն քով մեծ սէր կար սորվելու, ուր չէ թէ միայն էրիկ մարդիկ՝ այլ նաև կնիկ մարդիկ սորվելու հետ կըլլային. անոր համար աս կոյսն ալ որ խիստ խելացի էր՝ սորվելու հետ եղաւ. շատ առաջ գնաց. երևելի փիլիսոփաներուն գրքերը անչափ կարդաց որ ինչվան բերանաւավ սերտեց անոնց գըրվածները. սորվեցաւ նաև թուաբանութի՛, երկրաչափութի՛, երաժշտութի՛, աստղաբաշխութի ։ Իսկ լեզու սորվելու անանկ յաջողութի՛ մը ունէր, որ երսուն լեզուէն աւելի սորված էր ու կըխօսէր. անանկ եղաւ որ՝ աս աղջըկան իմաստութե՛ անու-

Իր ամէն ազգաց մէջ անուն հանեց. ո՛վ
ալ որ զինքը կըտեսնար, հետը կըխօսէր,
ամէննալ զարմացած կըմնային։
Երբոր վերոյիշեալ Թգ̃րը Իսքէնտէրիէ
կամ, կռատունը գնաց զոհ մատուցա-
նելու. աս կերպը Թգ̃րական տնէն ըլլա-
լուն համար համարձակու̃ն ունենալով,
ոծմէալ սիրտ առնելով, քովը գնաց. Ի-
րէն իմաստու̃թը սկսաւ մէկիկ մէկիկ ցը-
ցընել իրե՛նց գրքերէն վկայու̃թ բերելով
Թէ ինչպէս մեծ մոլորու̃թ է կուռքերը
պաշտել. և ինչպէս պէտք է Ճշմարիտ
Ածը պաշտել, և որդին նո̃ր միածին, որ
իրեն խաչելով մեզի փրկիչ եղաւ։
Թգ̃րը, քովի իշխաններըՙ ամէննալ զար-
մացած կեցած էին աոր Ճարտասան լե-
զուին ու խելացի խօսքերուն վրայՙ որ իր
բերնէն կըլլէին. անոր համար Թգ̃րը իր
հետը տարաւ. իշխաններու հետ խոր-
հուրդ ընելով, կռապաշտներուն մէջէն
երևելի փիլիսոփաները, Ճարտասանները
քովը կանչեց, որ աս աղջկանը հետ խօ-
սաթելով քրիստոնէութիւնը ձգել տան,
կռապաշտութիւը ընունել տան. Յիսուն
փիլիսոփայ ու Ճարտասան մարդիկ ժող-
վըւեցան, հետը խօսիլ սկսան, բայց կա-
տարինէին ձեռնարկութիւնները որ կընէր,
վկայութիւնները որ իրենց գրքերէն կըբերէր
կըցըցընէր անչափ բաղմուէ առջինՙ ամ-
մէնուն բերանը կըգոցէր կըպապանձե-
ցընէր. մինակ էր խելքը իր իմաստու̃թը

չէր՝ հապա հոգին՝ որուն անոր բերնովը կը խօսէր. ան հպարտ փիլիսոփայներուն միտքը կը շփոթէր իրենց կուռքերուն ստութէը վրայ։

Ոչ ատենը ամենայն յայտնի խոստովանեցան որ՝ մենք աս աղջկանը պէս չենք կրնար տալ. ըսածները ճշմարտութիւն են։ Մէջը տեսնալով աւչափ փիլիսոփայներուն խայտառակվիլը, մոլընին ծախը իրենց կուռքերուն վրայ, քրիստոնէից պէս մէկ ա̃ծ ը̃ունիլը, կեցած տեղը կոտոր կոտոր կըլլար, կըկատղէր, մէկէն ամենայն կրակը ձգել կը հրամմէր։ Սրբոր ատոնք կըտանէին երելու, կուսին կաղաչէին ճար մը գտնալու իրենց մկրտըվելուն վրայ. պխն տըվավ կոյսը, մի վախնաք, կրակը ձեզի մկրտութիւն կըլլայ, դուք շնորհակալ եղէք ա̃յ՝ որ ձեզ մոլորուէ դուրս հանեց. հրեշտակներուն հետ պիտոր ուրախանաք։

Ոնանկով կրակին մէջ նահատակվեցան աս յիսուն փիլիսոփայները, բայց իրենց մէկ մազնալ չէր երած. աս տեսնալով բազմութի ժողովրդեան քրիստոնեայ եղան. որոնց մէկն էր պորփիւրոս զօրապետ իրեն 200 զինուորներովը։ Մէջը իր կատաղութիւնը կուսին վ̃ր թափեց. իրեն ծիրանի հագուստը, ոսկի զարդերը վերցընելով ծեծել հրամմեց, ետքը բանտը դնել տըվավ։ Արբեվարի խաթուն մը կար որ երբեմն թագուհի եղած էր

մագնէնտախոսին ատենը. ասիկայ խիստ կըբաղձար տեսնալ կատարինէ կոյսը, վերոյիշեալ պորփիւրոսը յարմար ատեն գտնալով տարաւ աս խաթունը կատարինէին քովը. երբոր լսեց անոր բերնէն ելած խելացի խօսքերը, քանի շնորհքը սիրտը միտքը լուսաւորեց, բոլորով սըրտով հաւատաց, տունը դառնալէն ետև մկրտուեցաւ.

Երկրորդ անգամ ատեանը կանչեցին կոյսը. երբոր տեսաւ Թագը որ առջինին պէս նոյն Ճշմարիտ հաւատքը կըխոստովանէր, խիստ բարկացաւ. մէկ իշխանի մը խորհրդով անանկ մեքենայի մը վրայ կեցընել տուաւ, որուն անիւները (Թէքերլէկները) սուրեր գամուած ունենալով պտըտցընելու ատենը կտոր կտոր պիտոր ընէին մարմինը. Նա ատենը սրբուհին առ Ա͞ծ աղաղակելով հրեշտակ մը եկաւ փրկեց զինքը. Նա տեսնալով վերոյիշեալ Թագուհին, Թագին քով վազեց, շատ մեղադրանք տալով իրեն երեսին՝ ասանկ անօրէն ըլլալուն համար, ինքնալ հոն զՔ͞ն Ա͞ծ խոստովանեցաւ համարձակ. Թագը խիստ բարկանալով հրամմեց գլուխը կտրել անորալ, պորփիւրոսինալ իրեն 200 զինուորներովը.

Սկսաւ կատարինէին հարցուփորձ ընել յորդորել. շատ բան զուրցելէն ետև երբոր տեսաւ Թագը որ միտքը չփոխեր, գլուխը կտրել հրամմեց. Երբոր կտրե-

լու տեղը հասան՝ սրբուհի կատարինէն աղաչեց դահիճներուն որ քիչ մը թողուն. ինքը աղօթքի կեցաւ. աղաչեց Այ՝ որոնք որ իր անունը յիշեն ողորմուի գտանան, իրենց ցաւերուն բժշկուի. ո՛վալ որ հոգեվարքուն ատենը իմ անունս յիշելու ըլլայ ըսաւ, անոր հրեշտակ երկնից խրկէ ըսաւ Տր իմ, որ խաղաղուք հոգին առնուզէ։ Ձայն եկաւ իրեն, դուն եկօ, ընկերուն հետ հանգչէ, ո՛վալ որ քուկին հանգստեան օրը կատարէ, եւալ իրենց խնդիրքները պիտոր կատարեմ։ Անկէց ետքը գլուխը կտրեցին. որուն արեան տեղը կաթ բխեց. իրեն մարմիննալ հրեշտակները առին սինէական լեռը տարին. ուր ատեն մը կերեւնայ որ քաշուած կեցերեր ձգնուէ համար։

---

## ՍՈՒՐԲՆ ԿԻՒՐԵՂ

### ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ

Պաղեստինու երկրէն էր որ է Նարաշամ. եէմ քաղքի մէջ սորվեցաւ, խիստ տեղեակ եղաւ հին ու նոր կտակարանաց. արտաքին ուսման մէջնալ աղէկ վարժեցաւ. բայց առաքինուեց վր պըզտիկուցմէ սէր մեծ ունենալով՝ կրօնաւոր եղաւ. աղօթքի, պաքի, հոգեւոր կրթութեց տըվաւ զինքը։ Նա իրեն աղէկու-

Թինէրը տեսնալով Մակար Եղմայ եպսը՝ զինքը սարկաւագ ձեռնադրեց. իսկ Մաքսիմոս եպսը ձեռնադրեց քահանայ։

Սովորութի էր որ եպսը քարոզելու չելած՝ քահանայ մը կեցնար առաջ կըխօսէր ժողովրդեան. Մաքսիմոս եպսը իրեն քարոզիչ ընտրեց Կիւրեղը՝ Ճարտասան լեզուին ու սքանչելի վրդպունը համար, որ խիստ հարկաւոր էր Եղմայ մէջ. որովհետեւ ամէն տարի բազմութի զանազան ազգաց կըժողվըվէին հոն, որոնց մէջը շատ գիտուն մարդիկալ կըգտնըվէին։ Նոյնպէս նաեւ բազմութի երեխայից՝ այսինքն նոր դարձողներնալ հոն կըգտնըվէին, դուրսի երկիր դարձողներնալ շատը Եէմ կուգային յորդանան գետին մէջ մկրտըվելու համար. ասոնք պէտք էր կըթել, սորվեցընել, պատրաստել, ասանկ բանի մէկ հատիկ յարմար մարդըն Կիւրեղ էր. յարմար եղաւ նաեւ ժողվրդը զսպելու զգուշացընելու հերետիկոսներու դէմ, որ ան ատենը խիստ շատցերէին կերպ կերպ հերետիկոսութիւներ հանելով. ան պատճառաւ ուղղափառաց մէջնալ շատ հակառակութիներ կըլլային տեղ տեղ։

Երբոր Մաքսիմոս Եղմայ եպսը մեռաւ, մէջերնին վէճ ելաւ. բայց ժողովրդեան բազմութինը Կիւրեղը ուզելնուն համար՝ անիկայ գրին Եղմայ եպս. որ աւելի ջանք ըրաւ ան ատենը հերետիկոսութիը

բառնկել․ ան ջանքով շատ մոլորեալ քրիստոնեայները ուղղափառութեան Ճամփան բերաւ ։ Ա՟ծ ալ իրեն նոր ժողովուրդ մը շատացուց երկնային հրաշքով ասանկ․ Մայիսի օխտը, երրորդ ժամու ատեն մէկ հրաշալի լուսեղէն խաչ մը երեւցաւ երկինքը գողգոթայ լեռանը վ՟ր, որ կերկննար ինչվան ձիթենեաց լեռան վ՟ր․ բոլորտիքնալ պսակաձեւ ճառագայթ ուներ ծիրանի գօտիի պէս ։ Ու տեսիլքը որ երկան ատեն քշեց՝ ամմէն քրիստոնեայ ժողովքը տեսնալով վախեցին, ու սիոնի եկեղեցին մտան ա՟ծ օրհնելու համար․ իսկ անհաւատները տեսնալով շատը դարձան քրիստոնեայ եղան ։ Ան կիւրեղ ասոնք ամմէննալ առաւ օրէրով կըրթեց, սորվեցուց․ տեսիլքին պատմութիւնալ կոստանդ կայսեր գրեց ։ Ու է որ Երեւման խաչ անունով կըտօնենք ։

Կիւրղին անունը որովհետեւ օրէօր խիստ մեծնալու հետ էր, ակակիոս՝ որ պաղեստինեան կեսարիոյ եպ՟ն էր, խիստ նախանձիլ սկսաւ վրան․ վրան անուն հանելով թէ պարտաւոր է աթոռոյն՝ ձգեց անիկայ աթոռէն․ քաղքէ քաղաք հալածեց․ ինքը տիրել սկսաւ ան աթոռոյն ։

Երբոր հարկ եղաւ կիւրղի եջմէն դուրս ելլալ՝ մեծ ժողովքին բողոքելով անտիոք եկաւ․ բայց հօն քաղքին եպ՟ը վախցանած գտնալով՝ անկից ելաւ տարսոն

(Թէրսիս) գնաց, որուն եպսը սիղուանոս սիրով ընդունեց, թող տըվավ որ քաղաքուն ընէ։ Անկից սելեւկիայի ժողովը գնաց հետը մէկ տեղ. ուր 150 եպս ժողվըված էին յամին 359. ասոնք կիւրղին դատը (տավան) քննելով ընդունեցան զինքը, արժանի վճռեցին եէմայ աթոռը նստելու, ակակիոսը իրեններով մերժեցին։

Բայց ակակիոս սիրելի ըլլալով կոստանդ կայսեր որ արիոսեան էր, ստանպօլ գնաց կիւրղի վըր շատ ամբաստանուի ըրավ. մէկնալ աս էր որ՝ երբոր եէմ սով (խըթըլը) եղավ, կիւրեղ աղքատաց հանելու համար նաև ժամուն բաները ծախեց. որոնց մէջն էր նաև ան ոսկեթել շուրջառը՝ որ մեծն կոստանդիանոս՝ կոստանդ կայսեր հայրը՝ եէմայ ժամուն էր տըվեր աս մտքով որ՝ միայն մկրտուի ընելու ատենը հագնըվի. կիւրղէն մէկ միմոս (չէնկի) մը ծախու էր առեր ան շուրջառը, իրեն խաղերը խաղալու ատենը կըհագնէր։

Ակակիոս ասանկ ամբաստանուիններ ըրավ կիւրղի վըր. բայց ինքը ածմէ պատժըվելով մեռավ. կոստանդ կայսր քանի արիոսեան եպսներ կային՝ որ ակակիոսի դին կըռունէին՝ ժողվել տըվավ. ասոնց ժողովը կիւրեղը ձգեց, կայսրնալ անոր համար քշել հրամմեց։ Բռկավ ատեն որ յուլիանոս կայսր նստավ. ասիկայ առջի

բերանը զինքը սրբելու համար՝ ամ-
մէն քշված եպոնները եւ կանչել հրամ-
մեց. ան ատենը կիւրեղալ եկավ էջմայ
աթոռը նստաւ ։

Երբոր յուլիանոս եկդ անգամ արեւելք
եկավ պարսից դէմ երթալու համար,
պաղեստինու (բարաշամու) երկիրը հաս-
նելու ատենը՝ հրէայները գիտնալով որ
քրիստոնէից դէմ է, խնդրեցին յուլիա-
նոսէն որ զիրենք պաշտպանէ քրիստոնէ-
ից ձեռքէն, հրաման տայ իրենց սինոդա
շինելու ։ Յուլիանոս որ ամմէն կերպով
կուզէր քրիստոնէութիւնը ջնջել, հրէայնե-
րուն ամմէն կերպ ազատութի տալէն ետեւ՝
հրաման տըվավ յայտնի զոհ մատուցա-
նել, ինչպէս որ դրերեր մովսէս ։ Հրէ-
այները ըսին որ՝ ինչվան մեր փլած տա-
ճարը չշինվի, մենք զոհ չենք կրնար ը-
նել. անոր ալ հրաման տըվավ անօրէնը,
շինելու ըստակնալ թագրական գանձէն
վճարելու խօսք տըվավ ։

Աս հրամանը հրէայներուն եղավ տօն
ցնծուն, ամմէն դիացէն հոն թափեցան
ժողվըվեցան աշխատելու, գետինը փո-
րելու. իրենց կնիկտիքնալ ինչ զարդ որ
ունէին՝ հանեցին տըվին որ տաճարնին
զարդարեն. եւ ոք զի ամուր շէնք ըլլայ՝
հին փլած տաճարին մնացած քարերնալ
փորեցին հիմանց հանեցին. որուն վը-
րան կիւրեղ արդէն մարգարէացեր ըսեր-
էր, թէ որ աւետարանին խօսքն է, աս

ճարին մնացած քարերնալ պիտոր չի֊մընան։ Սա ըսելով կըմխիթարէր, աղօթք ընելու կըյորդորէր քրիստոնեայները՝ որ տաճարին նորէն շինուելուն համար խիստ կըցաւէին։

Հրեաները՝ որ ամէն բան պատրաստած ըլլան որ կըսպասէին հետեւեալ օրը տաճարին հիմը ձգելու, անանկ գետնաշարժ ու փոթորիկ մը եղաւ որ շրջակայ տուները ամէննալ փլան․ իրենց բանւորներնալ որ մէջն էին՝ մեռան․ հանած հողերնին իրենց փորած փոսերուն մէջը նորէն լեցուեցան․ ինչ քարեր քերեստէներ որ պատրաստեր էին՝ հեռու տեղեր ցիր ու ցան եղան։ Բայց Հրեաները աս բանս պատահմունք կարծելով՝ նորէն ձեռք զարկին փորելու, ան ատենանալ գետնին տակէն կրակ ելաւ, շատ Հրեայ կորանցուց․ փախչող Հրեաները եկան քրիստոնէից ժամը, բայց բացված դուռները ինքիրենին գոցուեցան հրեից դէմ։ Անոնք կարծելով որ ժամու մէջի եղող քրիստոնեայներն են որ կըգոցեն, ուժով կըհրէին որ բանան․ ան ատենանալ ժամուն ճակատէն կրակ ելաւ որը երեց, որը խանձելով փախուց։ Երբոր եկան փլած տուները բանալու, մեռնողները հանելու, կրակմընալ յանկարծ հոն ելաւ գործիքնին երեց․ փախչողներուն ետեւէն կըվազէր երելու լափելու։

Ու ամմէն բանը ըլլալէն ետեւալ չէին
արթննար Հրէայները, չէին իմանար որ
խաչին զօրութիւն է զիրենք պատժողը ·
բայց մ̃ծ իրենց աչվըննին խօթելու ար-
թընցընելու համար՝ հետեւեալ գիշերը
լոյս խաչանման երեւցուց երկինքը աստ-
ղերով զարդարուած գողգոթա լեռնէն
մինչեւ ձիթենեաց լեռը, ինչպէս որ
տարիով առաջ երեւցերէր · զարմանալի
բանմընալ ան եղաւ որ՝ շատ Հրէայնե-
րուն հագուստին վրայալ խաչեր երեւցան
ու գիս ան գին բանուած · Հրէայները
կըթօթվէին ՝ կըշփէին, կըլուանային,
որ ան խաչերը հանեն աներեւոյթ ընեն,
բայց ճար չեղաւ ։

Ու բանիս մ'էր քրիստոնեայները խիստ
ուրախացան փառաւորվեցան, մանա-
ւանդ որ՝ նոյն խաչերը քրիստոնէից շատին
վրայալ նաեւ եկեղեցնայ սպասուց վրայ
ալ երեւցան · Հրէայներէն ու հեթանոս-
ներէն շատ մարդ դարձան քրիստոնեայ
եղան · որոնք ամմէննալ ՙորն կիւրեղ
կըքունէր, կըսորվեցընէր, ետքը կըմկըր-
տէր ։ Իսկ Հրէայ մնացածները ամմէն-
նալ ամչցած վախի մէջ ընկած թողու-
ցին տաճարին շէնքը ։

Նկրով ատեն որ վաղէս կայսր նստաւ ·
տիկայ արիոսեան ըլլալով քանի ուղղա-
փառ եպ̃ս կային որ դարձերէին քշված
տեղերէն, նորէն քշել հրամմեց · ան
պատճառով ՙորն կիւրեղալ նորէն քշվե-

ցաւ. անանկով պաղեստինու կամ՝ բա-րաշամու երկիրը առանց եկօսի մնալով լեցվեցան հոն զանազան հերետիկոսներ։ Կիւրեղ տասը տարի մը քշված կենալէն ետեւ՝ գրատիանոսի ու մեծին Թէոդոսի ատենը ինչպէս որ ուրիշ քշվողները, ա-սանկալ ինքը կիւրեղ դարձաւ եկաւ ե-րուսաղէմայ աթոռը. սկսաւ շտկել բա-րեկարգութ՟ մտցընել. բայց շատ բան քա-շեց հակառակորդներէն ։

Յամին 381 ստանպօլու ը՟հանուր ժողո-վը գնաց. հոն նորէն հաստատվեցաւ իր աթոռը. անկէց ետեւ խաղաղութ՟ նստե-լով քանի մը տարի լի արդեամբք առ ա՟ծ փոխեցաւ իբր յամի 386 կամ 389։ Իրեն գրուածներուն մէջը երեւելի ե-ղավ ան գիրքը որ կրավի Կոչումն ըն-ծայուէ։

---

## ՍՈՒՐԲՆ ՊԱՆԴԱԼԷՈՆ

## ԵՒ ԵՐՄՈՂԷՍ

Նիկոմիտ քաղքէն էր Մաքսիմիանոս կայ-սեր օրը, հայրը կռապաշտ էր սինկղի-տիկոս՝ այսինքն դրան մարդ. մայրը քրիս-տոնէ. բայց իր տղայուն ատենը մայրը վախճանելով չկրցաւ սորվիլ քրիստո-նէութիւնը. մանաւանդ որ իր հայրը կռա-պաշտներուն գլխաւորը գրեթէ զինքը

սորվելու, ետքնալ եւփրօսինոս բժշկապետին քովը դրաւ բժշկութիւն սորվելու, որ կռապաշտ էր ու Թ՟րի բժիշկ։

Օր մը տեսնալով Թ՟րը՝ պանդալէոն տղան աղւոր երեսով, շնորհալի վարմունքով, խիստ հաւնեցաւ. հասկցաւ ալ որին տղան ըլլալը, յանձնեց բժշկապետին որ աղէկ սորվեցընէ։ Տղան վարպետին երթալու գալու ատենը ամէն օր կանգնէր մէկ տան մը առջեւէն՝ ուր Երմողէս կամ Երմողայոս քահանան կընակէր. աս քահանան երկու բեր մարտիրոսներուն կոտորվելուն ատենը փախած ըլլալով հոն գաղտուկ երկու ընկերով պահված կընստէր առանձին. կըտեսնար ամմէն օր աս պանդալէոն տղան պարկեշտ ու շնորհալի. խմացաւ հոգւովն որ աս տղան ինչ մեծ մարդ պիտոր ըլլար այ առջին։ Օր մը ներս կանչելով սիրով խօսեցաւ հետը. թէ որ դուն որդեակ, քրիստոնեայ ըլլաս ըսաւ՝ քու անուանովը ամէն հիւանդները կըբժշկես. աս ըսելով հասկցուց իրեն քրիստոնէութիւնը։

Պանդալէոն տղան աղէկ երկրի պէս ընդունեց աս աւետարանական սերմունքը՝ որ լսեց Երմողէայ բերնէն, ամէն օր իրեն քովը կուգար խրատ կըլսէր, ետքը տուն կերթար. օրմընալ ճամբան երթալնինի, տղայ մը տեսաւ որ օձը զարնելով մեռուցեր էր, օձնալ քովը կեցեր

նր ։ Հիմա է ատենը ըսալ ո՞ր յո՞ քո՞, թէ որ կուզես խունիլ, աս տղան բուկին անուանովը ողջունցու ․ աս ըսածին պէս մեռած տղան յարուն առաւ, օձն ալ սատկեցաւ ։ Ըս տեսածին պէս՝ վազեց եկաւ երմողեայ քովը, հասկըցուց իրեն ինչպէս գործքով տեսաւ իրեն ըսածները, Յիսուսին անուան զօրութիւնը․ շուտ մը մկրտուիլ ուզեց ։

Օխտն օր երմողեայ քովը կեցաւ, ամմէն բան սորվեցաւ․ ետքը ուզեց հայրնալ դարձընել․ հեռըվանց խօսքեր կըպրտըտըցընէր ․ ինչու կուռքերը չեն շարժիր կըսէր, նստօղները միշտ նստած են, կեցօղները միշտ կեցած են կըհարցընէր, մէկը տարակոյս կըձգէր․ անչափ ըրաւ որ՝ հօրը միտքը կասկած ձգեց, կուռքերուն վոհ ընելը վերջացուց ։ Բայց երբոր օրմընալ տեսաւ որ՝ ան կայրը որ բժիշկները չէին կրնար ողջընցընել, իր տղան պանդալեօնը վրան մէկ խաչ մը հանելով՝ Յիսուսին անունը տալով՝ մէկէն լուսաւորեց, ան ատենը շուտ մը հաւատաց․ երմողայոսին ձեռքովը քրիստոնէութիւնը սորվելով մկրտըվեցաւ, իրեն կուռքերը կոտրտեց ։ Բայց տես Աստուծոյ շնորհքը որ՝ ճշմարիտ հաւատքը ճանչնելէն ետեւ քիչ մը անցաւ մեռաւ ։

Հայրը մեռնելէն ետեւ՝ պանդալեօն իր ամմէն ծառաները ազատեց․ հօրը ապրանքը աղքատաց բաժնեց․ ինքը սկսաւ

բարեգործուԹեանց ետևէ լինալու. Հիւանդ-ներու, աղքատներու, բանտը եղողներու, տանջանք քաշողներու քովերնին պտը-տելով սիրտ կուտար, կըմխիԹարէր, Յին անունովը կողջընցընէր : Ի՛նչափ որ՝ նա-խանձ ընկաւ բժիշկներու մէջ. գնացին մատնեցին Թ՛գրին. Թէ որ պանդալէոնը չիկորսնցընես ըսին, ամէննալ քրիստո-նէ կընէ. պատմեցին իրեն ինչպէս բան-տը կերԹայ, տանջըվող քրիստոնեայնե-րը կյորդորէ որ ամուր կենան իրենց քրիստոնէուԹեանը վրայ. ան կոյրնալ ցը-ցուցին որ քրի՛ անունովը լուսաւորեր էր.

Մ՛քը աղէկ հասկընալու համար կոյրը իր առջին կանչեց, զուրցընել տըվավ. երբոր իրաւը հասկըցաւ որ քրիստոնեայ եղերէ, մէկէն գլխատել տըվավ. ետքը պանդալէոնը կանչեց յանդիմանեց: Պան-դալէոն պ՛խն տըվավ. Թէ որ կուզես աս բանիս իրաւը հասկընալ, հրամայէ որ անդամալոյծ մը բերեն առջիդ. քուկին քուրմերդ Թող վրան գան, կուռքերուն անուններին տալով կանչեն. ես ալ քրի՛ ա-նունը կանչեմ; նայինք որին անունովը կըբժշկըվի, ան ատենը կիմանաս իրաւ հաւատքը : Նանկ ընել տըվավ Թ՛գրը. երբոր քուրմերը շատ կանչվռտելով չի-կըրցան բըժշկընել անդամալոյծը, պան-դալէոն մէկ անգամ քրի՛ անունը տալով ոտքի վե՛ր հանեց :

Իր Հրաշքը յայտնի տեսնալով կռա-
պաշտօնէրը՝ շատը հաւատքի եկան. ան
ատենը քուրմերը ամմէնը մէկէն Թ՛ղրին
ոտքը վազեցին, շուտ մը կործանելու կա-
ղաղակէին պանդուխտը։ Ն՛ղրը առաջ
շատ յորդորեց պանդուխտը որ ձգէ
քրիստոնէութիւնը. տեսաւ որ չիդառնար,
Հրամմեց կապել ու երկըթով քերել,
կողէրնալ երել։ Պանդուխտն ան տան-
ջանքին մէջը քն կրկանչէր օգնութի. որ
երմնղեայ կերպարանքովը երեւցաւ իրեն.
քաջալերելով կրակը մարեց, կապանք-
ները արձըկեց։ Ն՛ղրը ատոնք կախար-
դութի սեպելով երկըթէ տապակ տաքցը-
նել տըլաւ, զուրշին հալեցընել, զինքն
ալ մէջը ձգել։

Իբր աղօթքի կեցաւ. ան ատենը Հրեշ-
տակ երեւցաւ, ձեռքէն բռնելով մէկ
տեղ կրակին մէջը մտաւ. մնալուն պէս
շուտ մը կրակը մարեցաւ, տապակը պա-
ղեցաւ։ Մաքսիմիանոս Թ՛ղրը կատղելէն
Հրամմեց վիզը մեծ քար մը կապել, ծո-
վը ձգել. ան ատեննալ քն երեւցաւ եր-
մնղեայ կերպարանքովը սատակեց ծովուն.
մնանկ գործուի առավ որ՝ ջուրին վրայէն
ամմբը ելավ պանդուխտն։ Նանք կը-
տեսնար Թ՛ղրը, որովհետեւ ծովին քովը
կեցեր էր. բայց կախարդութի է ըսելով
գազաններուն առջին ձգել Հրամմեց։
Հանալ տեսաւ պանդուխտն քն նոյնպէս
երմնղեայ քշնչին կերպարանքովը. որուն

զօրուն պանդալէոնի տարը կըլլէին ։ Բը տեսնալով ժողովը մէկ բերան կըկանչէ-ին , մեծ է ածն քրիստոնէից , արձըկէ , թող տանք սա արդարը ։ Բը լսելով թա-գաւորը՝ խըղճալուն տեղը կատղելով ա-նոնցմէ հազար հոգիի չափ կոտրել տը-վաւ , մարմիննին գազաններուն առջին ձգեց ․ տեսնալով որ՝ գազանները անոնց ալ չեն մօտիկնար ամենեւին , անոնքալ ջարդել տըւաւ ։

Զիգապըրեցաւ Թէրլին կատաղութիը , նո-րէն կըմտածէր չարչարելնուըը ․ մէկ անիւ-մը (Թեքերլէկ) շինել տըւաւ մեքենա-ւոր , որուն մ՚ի կապելով՝ դէպ՚ի վար գըլ-տորել տըւաւ՚ուըը ։ Բայց հնալ տեսաւ հրաշքը ․ կապերը քակվեցան , անիւը ջարդ ու բուրդ եղաւ , կատարածներուն մ՚ի քալելով 500 հոգիի չափ անոնցմէ սպաննեց ։ Ծիրը տանք կըտեսնար կը-զարմանար , բայց իր մոլորութենէն չէր դառ-նար ․ իր առջին կանչելով պանդալէոնը՝ ով սորվեցուց քեզի աս բաները՝ կըհար-ցընէր ․ անալ յայտնի ըսաւ որ երմողէս քահանան սորվեցուց , յուսալով որ զինքն ալ կարելի է դարձընէ ։

Ծիրը խրկեց պանդալէոնը , որ կանչէ իր առջին բերէ ․ երմողէս ան գիշերը քնէ լսած ըլլալով իր նահատակվիլը , ուրախուն պանդալէոնին հետը եկաւ Թէրլին առջին , երբը իր երկու ընկերն ալ բերել տըւաւ ։ Բայց ինքը փոխվէ-

լուն դառնալուն տեղը՝ Ինքը Թգ՟րը ա-
ռանք կըյորդորէր որ՝ պանդալէոնին մտա-
քը փոխէն, անոնք ան ատենը յորդորե-
լուն տեղը աղօթքի կեցան. ատոնց ա-
ղօթքովը բան մը տեսաւ Թգ՟րը՝ որ պան-
դալէոնէն չէր տեսած ։ Ի՞նչ աղօթք ը-
նօղներուն երեւցաւ, երեւնալովը շարժ
ելաւ. ան շարժէն կուռքերը գետինը
ընկան, փշուր փշուր եղան, մէկը ներս
վազելով զուրցեց Թգ՟րին ։

Շուտ մը իրեքնալ տանջել հրամմեց
Թգ՟րը, ետքը գլխատել տըվաւ. Ինքը
սկսաւ նորէն յորդորել պանդալէոնը.
տե՛ս ըսաւ ան իրեքը դարձան, կուռքե-
րուն զոհեցին. դուն ալ անանկ ըրէ. պան-
դալէոն որ գիտէր ինչ ըրավ Թգ՟րը անոնց
մէ՞ր, երեւան հանեց, նահատակվիլնին
զուրցեց ։ Թգ՟րը ան ատենը յուսահա-
տելով, որդողելէն հրամմեց առաջ ծե-
ծել, ետքը գլխատել ։

Գլխատելու ատենը երբոր դահիճը թու-
րը հանեց որ զարնէ, թուրը ձեռքին
մէջ մոմի պէս կակըղցաւ, ծալըվեցաւ.
տեսածնին պէս դահիճները՝ ամմէննալ
ռէյն ոտքը ընկան, հաւատքի եկան ։ Ս՟ը
աղօթքի կեցաւ. տ՟ր ա՟ծ փափագս կա-
տարէ ըսաւ. աս մարդիկներուն թօ-
ղութ շնորհէ, արքայութ՟ մանակից ըրէ ։
Ձայն եկաւ երկինքէն՝ որ քուկին փա-
փագդ կատարեցի, երկինքին դռները
բացված են քեզի. քուկին անունդ ալ

Պանտելէյմօն ըսվի, որ Ամենողորմ ը-սել է. դուն ամմէնուն ողորմութի ըրիր՝ դունալ հիմա ողորմութի գտնաս. ա-պաւէն ըլլաս իրենց նեղութե̃ ատէնը. քուկին նշխարքներդալ ամմէն ցաւա-գարները բժշկեն.

Անկէց ետքը 'որը կանչեց դահիճները՝ ըսավ որ թ̃րին հրամանը կատարեն. անոնք կըքաշվէին, բայց 'որը զուրցեց, թէ որ չընէք, մասն չէք ունենար ինծի հետ. անոնքալ առաջ եկան ամմէն մար-մինը համբուրեցին, ետքը գլուխը կտրե-ցին յամին իրր 303. բայց արեան տեղ՝ կաթ վազեց. մարմինը ձիփ ձերմակ կտրեցաւ. ինչ ծառինալ որ կապերէին՝ պտղով լեցվեցաւ. Տեսնողներէն շատը դարձան քրիստոնեայ եղան. թ̃րը լա-ծին պէս՝ ծառը կտրել հրամմեց, մար-մինն ալ երել. բայց քրիստոնեայներըդաշ-տուկ ոսկորները առին թաղեցին, կաթ-նախառն արիւննալ ժողվեցին պահե-ցին.

---

## ՍՈՒՐԲՆ ՈՆՈՓՐԻՈՍ

### Յունիս

Եգիպտոսէն ըլլալով պզտիկուց կրօնա-ւոր եղավ մէկ վանքի մը մէջ՝ որ ութը կըսվէր, Երմոպոլիս քաղքին մօտիկ,

Թեբայիդու մէջ. հոն սորվեցաւ Ոնոփրիոս ամէն կրօնաւորական կարգը։ Երբ որ չափահաս մարդ եղաւ՝ կըլլէր վանքի մէջի եղօղներէն՝ ուր հարիւր հոգիի մը չափ կային, թէ ճգնաւորներ կան որոնք անապատի մէջ միս մինակ առանձին կեցած կըճգնին. անոնց վարքը մէնէ շատ վեր է։

Այս բանս Ոնոփրիոսի դէմ կերևնար. ինչպէս կրնայ ըլլալ կըսէր վանքի մէջ նըստողներէն վեր ըլլալ, ուր շատ խոնարհութի, շատ համբերութի, ու կամքը կոտրել պէտք է եղբարներու հետ մէկ տեղ վարվելու համար։ Անոնք պինեցին, ասոր համար վեր է ճգնաւորներուն վարքը՝ որ սաստիկ է անոնց պտղմը սատանայներուն ձեռքէն. անապատի մէջ կենալով՝ մէկէ մը մէկ մխիթարութի մը չունին ոչ մարմնաւոր ոչ հոգևոր, ինչպէս որ մենք հոս վանքի մէջ կունենանք իրարմէ. այլ միայն ածմէ կըսպասեն գըտնալ իրենց մխիթարութինին. երանի անանկ մարդու՝ թէ որ գիտնայ ինչպէս որ պէտք է համբերել։

Այս խօսքերէս խիստ վառւեցաւ Ոնոփրիոսին սիրտը, իրենալ բաղձանք կուգար անանկ կեանք վարելու. գիշեր ատեն աս փափագով ճամբայ ելաւ, դէպ'ի անապատը սկսաւ երթալ, քիչ մը հաց, քիչ մը ջուր հետը առնելով չորս օրվան համար։ Բայց խորունկ անապատին մէջ

մոնաշինի՝ յանկարծ լոյս մը տեսաւ իր ոտքին, վախէն ետ դառնալ մտածեց. ետքը ա̃յ ապաւինելով ուժ առաւ, սկըսաւ առաջ երթալ. ան ատենը իրեն պաշտպան հրեշտակը երեւցաւ, առաջնորդ եղաւ ան խորունկ անապատին մէջ։ Ասանկ երթալով մէկ քարայրի (մաղարայի) մը ոտքին հասաւ. դուռը զարկաւ, մէյմընալ տեսաւ որ ներսէն մէկ ալեւոր մարդ մը ելաւ շնորհալի երեւով. բարեւ տալով ըսաւ. դուն ես իմ եղբարս Ոնուփրիոս, ներս եկո՛, ա̃ծ քեզի օգնական ըլլայ, որ աս ս̃բ կոչումը քեզ կոչեց։

Հոն քանի մը օր սորվեցընելով Ոնուփրիոսի աս Ճգնաւորական վարքը, ետքը առաւ աւելի խորունկ անապատը տարաւ. ասանկ չորս օր չորս գիշեր ներս քալելով մէկ պզտիկ խուց մը գտան, քովնալ արմաւենի (խուրմայի) ծառ։ Աս է ըսաւ ահա ան տեղը՝ որ ա̃ծ քեզի պատրաստերէ. հոն երսուն օր մէկ տեղ կեցաւ, ինչ որ պէտք է սորվեցընելով ետքը ելաւ իր տեղը եկաւ. տարին անգամ մը միայն քովը կուգար, ինչվան որ վախՃանեցաւ աս ծերս՝ որ ս̃բն Ոնուփրիոս թաղեց։

Ինկեց եւ ալ աւելի շատցուց իրեն Ճգնութիւնները Ոնուփրիոս, այնչափ նեղուի քաշեց տաքէն, խորշակէն, ցուրտէն, անօթի ծարաւ մնալէն, որ շատ հեղ

մեռնելու դուռը հասաւ․ ինչվան որ բարերարին ձ̃ծ տեսնալով իրեն համբերութիը, ջանքը, հրամմեց հրեշտակին ամմէն օր իր հացն ու ջուրը տանիլ, քովի եղած արմաւենիինալ ամիսը կուզ մը բերելով, ան արմաւն ու հոն բուսած խոտերը իրեն հերիք կըլլային․ Նանկով վաթսուն տարի հոն ապրելով խիստ Ճգնութ̃ սաստանային փորձութեր գիմանալով արիութ̃, հրեշտակային վարք մը ունեցաւ․

Նմմէն շաբաթ՝որ հաղորդութիը կառնէր հրեշտակի սպասաւորութ̃, ան առնելովը բոլորովին կըփոխուէր, հոգևոր մարդ մը կըլլար, ձ̃ծային սիրով կըհալէր, շատ հեղ իրմէ դուրս կըյափշտակուէր, իբր երկնաւոր դրախտին մէջը զինքը կըտեսնար՝որց հետ մէկ տեղ․ սիրտը անպատմելի ուրախութ̃ կըլեցուէր, չէր յիշէր որ արդեօք աս աշխարհիս մէջն է մի․ անոր համար երբոր ինքիրեն կուգար՝ ալ աւելի Ճգնութիները կըշատցընէր․ յիշելով ինչ մեծ փառք է եղեր մարդուս՝ ա̃յ ծառայելը, ա̃յ համար քաշելը․ ինչ մեծ վարձք կայ եղեր քաշօղներուն աշխատօղներուն ։

Նյբոր՝որն Օնոփրիոս ասանկ Ճգնութե հետ էր՝ պափնուտիոս մէյմը որ՝որ կրօնաւորներէն մէկն էր եգիպտոսի մէջ մէկ փափագ մը կիմանար սրտին մէջը խորունկ անապատները ներսէ ներս քա-

ըլլու տեսնալու, արդեօք հոնալ կըգըտ-նըվին ձգնաւորներ իրմէ աւելի հեռու տեղեր քաշուած ։ Նա փափագը մ̃ծ էր ձգեր սրտին մէջը՝ ո՞վ գի իր ծառան ոնուփ-րիոսը թաղել տայ իրեն, ինչպէս որ պի-

տոր պատմենք ։

Նա մտքով ձամփայ ելլալով պափնուտիոս՝ տասնըօխտը օրի չափ ներս քալեց անհը-նարին աշխատուք . ասանկ երթալով ան տաք տեղվանքը՝ հասաւ մէկ լեռան մը մօտիկ, ուր հեռըվանց տեսաւ ասոք ո-նուփրիոսը . բայց մէկ ահռելի կերպարան-քով մը որ վախցաւ . մարդ մը մազերը երկընցած, վերէնիվար մազերով գոցած մարմինը, մէջքը տերեւներ փաթթած, երեսը պաքէն ձգնուէն բոլորովին փոխ-ված . ասիկայ իրեն մէկ վայրենի մար-դակերպ անասուն մը երեւնալով, և ոչ իրաւ մարդ, վախէն լեռան վի՞ր վազեց

որ փախչի ։

Նա ատենը՚ոք ոնուփրիոս հասկընալով իր քովը կանչեց . մի՛ վախնար ըսաւ, եսալ քեզի պէս մարդ եմ, յախն անուանը հա-մար աս անապատը եկեր նստեր եմ ։ Նա լսելով պափնուտիոս լեռնէն վար ինջաւ, ոտքը ընկաւ . բայց ՚որը թող չտըվաւ . դունալ ՚իդ ծառան ես ըսաւ՚ոքերուն սի-րելի . ինչպէս է աշխարհ, ինչպէս են եգիպտոսին կրօնաւորները հարցուց ։ Պափնուտիոս քիչ մը պատմելէն ետև՝

ուզեց որ իրեն վարքը պատմէ ։

Ոնոփրիոս պատմելէն ետև իր խուցը
տարաւ. օրնիրուն ատանկ հոգևոր խօ-
սակցութ̃ անցրնելէն ետև՝ արևը մարը
մտած ատենը հաց մը ուտան քիչմընալ
ջուր. ո՛վ պափնուտիէ, ելի՛ր կե՛ր ըսաւ սրբն
ոնոփրիոս, շատ յոքնած կըտեսնամ զքեզ,
քիչ մը զօրանաս. Պափնուտիոս չուզելով
առաջ ինքը ուտել, երկուքը մէկ տեղ
կերան. գիշերնիլուս աղօթքի հետ ե-
ղան, բայց առտու եղածին պէս՝ պափ-
նուտիոս տեսաւ որ սրբյն ոնոփրիոսին երե-
սը արևի պէս լուսաւորվերէ, ինքնալ
փոխված հրեշտակ մը դարձերէ, ու-
րիշ մէկ վախմընալ ան ատենը առավ
զինքը:

Սէն ոնոփրիոս մի վախնար ըսավ. այսօր
ես լմնցընեմ պիտոր իմ կեանքս, մար-
դասէրն Ած̃ քեզ հոս խրկեց որ իմ մար-
մինս թաղես. երբոր եգիպտոս երթաս՝
ինչ որ տեսար պատմէ՛ եղբարներուն որ
իմանան յիշեն, եսալ խօսք կուտամ, ով
որ իմ յիշատակս ընէ աղօթք ընելով,
կամ նուէր մը տալով, կամ ուրիշնե-
րուն բարիք ընելով՝ անիկայ առաջի Այ̃
պիտոր յիշեմ. Ածալ իր երկնային բա-
րուէյը արժանի ընէ. որովհետև հաձոյ
եղավ Այ̃ իմ խնդիրքս կատարելու.

Պափնուտիոս կաղաչէր սրբյն, որ ինքը
հոն իրեն տեղը կենայ, եգիպտոս չի-
դառնայ. բայց սրբն ոնոփրիոս ըսավ իրեն,
դուն ատոր համար չեկար, այլ քեզ Ած

հոս բերաւ որ՝ անապատի մէջ եղող ա̅յ ծառայները տեսնաս, եղբարներուն պատմես որ շահին, ա̅ծ փառաւորեն ։ Ն̅ն ատենը պափնոտիոս ոտքը ընկաւ օրհնէնք ուզեց . ինչպէս որ աս աշխարքիս մէջ իրար տեսանք ըսաւ, խնդրէ ա̅ծմէ որ անանկալ անդին աշխարհը իրար տեսնալու արժանի ընէ ։ Ս̅ն Ոնոփրիոս օրհնէնք տալով ելաւ աղօթքի կեցաւ . արցունք թափելով հառաչելով երկինքը կընայէր . քիչ մը անցաւ՝ գետինը ծռեցաւ ծունկ չոքեց . քու ձեռքդ կըյանձնեմ տ̅ր ա̅ծ իմ՝ հոգիս ըսելով աւանդեց ։

Իսկոյն հրեշտակներու ձայներ լսեց պափնոտիոս, որ անոր հոգիին առջեւէն երթալով կերգէին անուշ ձայներով երգ երկնային . պափնոտիոս վրան զմայլելով ըլլալով թաղել սկսաւ . իր հագուստը երկու ճղքելով՝ մէկ կտորը ձգեց ս̅բյն մարմնոյն վրայ . փորուած քար մը գտաւ, անոր մէջը դրաւ երանելւոյն մարմինը . վրանալ քարեր ժողվելով ծածկեց ան ս̅ր նշխարքը ։ Կուլար կըհառաչէր, չէր ուզեր անկէց զատուիլ . խնդրել սկսաւ ա̅ծմէ որ հոն կենայ, բայց մէյմընալ տեսաւ որ ան խուցը փլաւ, արմաւենի ծառը գետինը ընկաւ . անկէց իմացաւ որ ա̅ծ չուզեր իրեն հոն կենալը, սկսաւ լալ ս̅բյն բաժնըւելուն վ̅ր ։

Ն̅ն ատենը հրեշտակ ա̅յ իրեն երեւնալով

սիրտ տըւաւ, առաջնորդեց Ֆինչլան որ հասաւ եգիպտոս . բայց Ճամփան ուրիշ շատ Ճգնաւորներու հանդիպեցաւ , որ Թէպէտ չէր Ճանչնար , բայց անոնք իրեն անունը տալով բարև կուտային . երանի քեզի եղբայր պափնուտիէ կըսէին , որ արժանի եղար հայրին ոտքերոս տեսնալու , իրեն օրհնէնքը առնելու ։ Աս ամմէն բանն որ տեսաւ , եգիպտոս հասածին պէս պատմեց ամմէն եղբարներուն . անոնքալ առոր հոգևոր Ճանապարհորդուէն հոգևոր նոր բաներ իմանալով, ա̃ծ կօրհնէին , կըզարմանային Թէ ինչ զարտուկ ծառայներ ունի եղեր իրեն՝ անբընակ անապատներու մէջ ։

---

## ՄԱՐԻԱՆԷ ԿՈՅՍ

### որ և Մարգարիտա

Աս կոյսը անտիոք քաղքէն էր՝ որ սիսիդիայ գաւառին մէջն է . մէկ հատիկ աղջիկ հարուստ մարդու մը զաւակ, որ կռապաշտներուն քուրմն էր . իր պզտիկուՙն տանը մեռաւ իրեն մայրը . անոր համար հայրը մէկ կնկան մը քով դրաւ, որ ա̃յ յաջողելովը քրիստոնեայ էր ։ Երբոր քիչ մը մեծցաւ մարիանէն՝ իրեն հայրը մէկ գեօղի տեղ մը չինեց քաղքէն դուրս , հոն դրաւ կուռքերը պաշ-

տելու համար․ բայց աղջիկը ճշմարիտ հաւատքը սորված ըլլալով ան քրիստոնէից կնիկէն, երբոր բանտարկութիւնը բացվեցաւ՝ կուռքերուն ստութիւնը սկսաւ երեւան հանել․

Օր մը արեւուն լոյսը ծագելու ատենը՝ ներսէնալ ինքը լուսաւորվելով ածմէ, ըսաւ իրեն քովի եղած աղջիկներուն ու աղախիններուն․ ած անիկայ է՝ որ աս արեւս ստեղծեր է․ եսալ ան ածը կըպաշտեմ, անոր խունկ կըմատուցանեմ․ աս արեւն ու հօրս կուռքերը չեմ պաշտեր․

Երբոր հայրը իմացաւ, այնչափ ատելի եղաւ որ՝ դուրս հանեց մարխանէն իր զաւկուէ, երեսի վր ձգեց․ ան ատենը մարխանէն ալ աւելի մօտիկցաւ քրիստոնէից կնկանը իր դայեկին․ սկսաւ ոչխար արծել քաղքէն դուրս․ զինքն ալ ածպաշտութեան մէջ կրթել, բայց մկրտութի չկրցաւ առնել․

Երբոր տասնըչորս տարվան եղաւ, կըլուէր ինչ տանջանք որ կըքաշէին մարտիրոսները, իրենալ փափագ կուգար, լալով հառաչելով կըսէր․ ախ, երբ կըլլայ որ իսալ տանջէին քնի համար․ ո՞վ զի հոգիս խալըսի յաւիտենական տանջանքէն․ աս բանիս համար շատ հեղ աղօթք կընէր կաղաչէր այյ․

Ան օրերը դեկոս, ու ամնոց դիոկղետիանոս կայսրը մէկ իշխան մը խրկեց հոն, ապստամբելով ինչ քրիստոնեայ գտնալու

ըլլայ՝ տանջէ, անոնց արիւնովը քաղքին
պատերը գունաւորէ. սա իշխանը երբոր
քաղքին քովը հասաւ, տեսաւ մարիանէ
կոյսը որ ուրիշ աղջիկներու հետ ոչխար-
ներ արծելով կը դառնար իր դայեկին
տունը կերթար, խիստ հաւնեցաւ իրեն
աղւորութե̃ը համար, հրամեց ծառայնե-
րուն որ իրեն բերեն: Երբոր կոյսը բըռ-
ներ կը տանէին, քա̃ն անունը կանչելով
շատ աղաչելով շնորհք խնդրեց իրմէ, որ
սրբութի̃ը պահէ, հաւատքը, յոյսը զօրա-
ցընէ, արիութիւն իմաստութի̃ տայ որ
աներկիւղ ըլինէ ան բռնաւորին:

Ծառայները եկան պատմեցին իշխանին,
որ ան աղջիկը քրիստոսի անունը կու-
տայ, քրիստոնեայ է. ասիկայ արժանի
չէ պահելու ըսին. իշխանը խիստ տըրտ-
մելով հարցուց ինչ անուն, ինչ ազգէ ըլ-
լալը, ինչ ա̃ծ պաշտելը. մարիանէն իր
անունը զուրցելէն ետև՝ համարձակ զուր-
ցեց Ճշմարիտ ա̃ծ պաշտելը հայր և որդի
և հոգինը, և ք̃ն ա̃ծ և մարդ: Իշխանը
հրամեց պահել անիկայ, ինքը մտաւ քա-
ղաքը կռապաշտութի̃ը շատցընելու. քանի
քրիստոնեայ որ ձեռք կը ձգեր, ամէն-
նալ սպաննել կու տար, անոնց արիւնը
քաղքին պատին քսել կու տար:

Քանի մը օր անցնելէն ետև մարիանէն
ալ առջին բերել տըվաւ. տեսնալով ի-
րեն աղւորութի̃ը՝ խղճա՛ խնայէ՛ ըսավ քու-
կին մատղաշ տարիքիդ, քուկին աղւորու-

Թնդ մը · եկօ կուռքերը պաշտէ որ չի-մեռնիս, ամմէնունալ ցանկալի ըլլաս ։ Այսը ըմինեց · դուն չես կրնար իմ կամքս փոխել, և ոչ յոյս կտրել որ այս մը գրեր եմ · իրեն հոգւոյն որչ զօրութիը իմ մը խրկեց, իս զօրացուց · եսալ իմ անձս ի-րեն պատարագ պիտոր մատուցանեմ ։ Աշխանը ըսաւ, թէ որ ինծի չես լսեր, շատ տանջանքով քեզ պիտոր կորսնցը-նեմ, իսկ թէ որ լսես՝ իմ կուռքերս պաշ-տես, քեզ թագուհի կընեմ ։ Այսը պա-տասխանեց, ես չեմ վախնար քու տան-ջանքէդ, թէ որ մարմինս չտանջըվի՝ հո-գիս չիմտնար երկնաւոր թագրին քովը · ես պատրաստ եմ ինչվան 'ի մահ անոր կամքը կատարելու · անիկայ իրեն որ խա-չին նշանովը իմ մարմինս կըպահէ ։

Աս խօսքերուս մը խիստ սրդողելով իշ-խանը՝ հրամմեց երկրթէ գաւազանով ծեծել · անչափ զարկին որ՝ մարմինը պատռտելով արիւնը գետինը կըվազեր, բայց ինքը աղօթքի հետ կըլլար ըսելով · ‖ Ի քեզ Տր յուսացայ, մի ամաչեցից ‖ · քեզի համար յանձ կառնեմ աս հարուածնե-րը, որ ինծի ողորմիս ։ Աշխանին քով նստողներէն մէկ մենծ մը ըսաւ · ով մա-րիանէ կուռքերը պաշտէ մեծ պարգև կառնես · քու ծաղիկ տարիքդ նայէ, դուն քեզի ողորմէ · ինչու ասանկ կըտան-ջըվիս, ազնուութիդ կըկորսնցընես · ա-սանկ կըսէին հոն եղող ամմէն ժողովուր-

դը, լըրատ կուտային իշխանին կամքը
կատարելու ։

Բայց երանելի կոյսը ամչնալ չէխեց, ով անմիտ խորհրդակիցք սատանայի ըսալ․ ինչպէս չէք իմանար որ՝ Ճշմարիտ ա՟ծն է իմ օգնականս․ ով որ անոր կապանքին կըփրկէ․ անոր համար չեմ պաշտեր ձեր խուլ ու համր կուռքերը ։ Դուն ալ ով անօրէն դատաւոր ըսալ․ գիտցիր որ ամենևին չեմ լսեր քու հօրդ սատանայի․ դուն իմ մարմինս կըտանջես, այլ ք՟ն իմ հոգիս ձեռքէդ կըփրկէ․ դուն կերթաս դժոխքին անդունդը ։

Իշխանը հրամմեց կախել, մարմինը երկըթներով քերել․ սրբուհին երկինքը նայելով աղօթք կընէր․ խնդրելով ք՟նէ որ իր կուսութիւնը պահէ, զինքը զօրացընէ ։ Դահիճները անանկ կըտանջէին որ՝ տեսնօղներուն սիրտը չէր դիմանար․ իշխաննալ իր երեսը գոցեց որ չտեսնայ տըված տանջանքնին․ լսէ՛ ինծի աղջիկ կըսէր, կուռքերուն երկրպագութիւն տուր որ խալըսիս, չէնէ քեզ սրով պիտոր մաշեմ ։ Չէր գիտէր որ տանջանքին դիմացընել տըվօղը հոգին ս՟բ էր․ թէ որ առաջ սիրտ ըրաւ դիմացաւ, տանջանք քաշելէն ետև լեցված ըլալով հոգւով ս՟բով, իր սիրտը կապված միացած էր բոլորովին ա՟յ հետ, չէր կընար անոր սէրը թողուլ ։ Անոր համար պինեց երանելին․ քանի տանջանք որ տաս ինծի, անչափ

ուելի աղեկուն ըրած կըլլաս․ Թէ որ մարմինս հոգաս ըսաւ՝ չապրիր հոգիս․ Թէ որ չխտանջըմլիմ՝ չեմ պաակլլիր ։

Իշխանը կեցած տեղը կտոր կտոր կըլլար, չէր գիտեր ինչ ընէ որ՝ աս աղջըկան միտքը դարձընէ․ Հրամմեց բանտը տանիլ։ Իսկ կոյսը ան մութ բանտին մէջ զինքը խաչակնքելով աղօթքի նստաւ․ Երկիւղածութ̃ կաղաչէր Ա̃յ որ զինքը չթողու․ սատանան որովհետև իրեն հետ հակառակ ընկերէ՝ յայտնի ցըցընէ, անիկայ խօսեցընելով ինքը լսելով՝ դատաստան կտրէ մէջերնին։ Աս խօսելնին մէյմընալ յանկարծ տեղը շարժեցաւ, վիշապ մը դուրս ելաւ՝ վիզը օձեր փաթթըւած, աչքէն բերնէն կրակ ու կայծակ կըցաթկէր․ ասանկ ահագին տեսիլքով գարշելի հոտով վազեց սրբուհւոյն վ̃ր․ ան ատենը վախ մը ընկաւ վրան, բայց պզտիկ փայտէ խաչ մը ձեռքը ունենալով աղօթքի նստաւ։ Երբոր աս վիշապը որ էր կերպարանեալ սադայէլը՝ բերանը բացաւ կուլ տալ կուզէր, կուսին ձեռքի եղած խաչափայտը վիշապին փորը պատռեց, կոյսը մնաց անվնաս։

Ա̃ծ որ տկարները ձեռք կառնէ իր զօրութը անմոնցմով կըցըցընէ, մէկ լոյս մը հանել տըլլալով ան ատենը բանտին մէջ, հոգին̃ը աղաւնիի մը պէս երևնալով ըսաւ․ սիրտ առ, զօրացիր ով մարիանէ․ ոտքովդ վիշապին վզին վրայ կոխէ, խօ-

սեցընել տուր , որ իր ըրած չարութիւնները
ամենննալ խոստովանի , յայտնի ընէ ։
Աս խօսքէս սիրտ առավ մարիանէ կոյ-
սը , կոխեց վիշապին վզին վրայ , երդմնե-
ցուց յանուն զօրութեան Հոգւոյն՝ որ ըսէ ,
ով է ինքը , ինչ գործքեր է ըրեր ։ Ասի-
կայ պատմեց , ես եմ սատանաներուն գը-
լուխը որ կըսվիմ բելիար , սադայէլ . աս
ըսելով սկսաւ ետքը մէկիկ մէկիկ խոս-
տովանիլ իրեն ըրած չարութիւնները . Թէ
ինչպէս ա՟ծ զինքը գերազանց ստեղծուած
մը ստեղծեր էր հրեշտակ լուսոյ , իսկ
ինքը շնորհակալ ըլլալուն տեղը՝ ուզեր
էր իրեն քաշել ա՟յ փառքը . աս բանիս
համար ա՟ծ ալ զինքը իրեն հետևողներ-
նալ դժոխոց անդունդը խրկերէր ։ Ա՟ծ
ըսավ հողեղէն մարդմընալ ստեղծեց ,
խօսք տըվավ իրեն ու իր զաւկըներուն
որ երկինքը մեր ընկած տեղը նստեցընէ ,
աս բանս խիստ ծանր եկաւ մեզի՝ քանի
թէ մեր փառքը կորսնցընելը . նախան-
ձելէս չի դիմացայ , մարդունալ սորվե-
ցուցի ա՟յ դէմ ելլալ , ա՟յ պատուէրքը ոտ-
քի տակ առնել , անանկով մահ խօթեցի
աշխարհ , եղբար եղբօրը հետ կռիւ ը-
նել , զիրար սպաննել , ա՟յ դէմ մեղքեր
ընել դրդեցի , ինչվան որ ա՟յ բարկութիւնը
շարժելով ամենքը մէկէն ջրհեղեղով կոր-
սընցուց , ետքը ա՟յ տեղ կուռքերը պաշ-
տել սորվեցուցի ։
Ասոր նման ինչ չարութիւն որ ընել տըվեր

էր մարդուս առաջուցմէ ինչվան ետքը, ամմէննալ մէկիկ մէկիկ խոստովանեցաւ, աղաչեց որ՝ ոտքը վզին վրայէն վերցընէ, թող տայ զինքը ։ Մարիանէ ըսաւ՝ իս անհնարին տագնապի մէջ ձգեցիր․ իս թող տուր․ եսալ խօսք կուտամ, ուր որ քու անունդ յիշվի՝ հոն չիմօտիկնամ ։ Իրեն մեծ տագնապը հարհըրելը ան էր որ՝ մէկ տկար աղջըկան ուժովը կապերէր հոն զինքը հոգինո՞ր, ու իրեն ամմէն խայտառակութիւն անոր բանալ ու ղուրցել կըրռնադատէր ։ Արբուհին Մարիանէ նորէն վրան խաչակնքածին պէս՝ գետինը պառտեցաւ, ան չար վիշապը սողայէլը անդունդը կորաւ ։

Սաղուան օրը բանտէն հանեցին, իշխանին առջին բերին․ կըղարմանար իշխանը անանկ ողջ առողջ մնալուն վը՞ր, բայց ինքը միտքը փոխելուն տեղը՝ նորէն կըյորդորէր սրբուհւոյն միտքը փոխելու, իրենց կուռքերը պաշտելու․ տեսնալով որ միտքը չիփոխեր, հրամմեց նորէն քերել մարմինը ու կրակին վը՞ր խորվել ։ Արբուհի Մարիանէն աղօթքի կեցաւ, դահիճներուն ձեռքը կապվեցան․ տես ըսավ ով դատաւոր, ես խուլերուն չեմ երկրպագեր, այլ միայն Ճշմարտին այ, որ հոգիսալ մարմինսալ մարդկրտի մը պէս անարատ պահեց իրեն սքանչելի փառքովը ։

Նու ատենը իշխանը հրամմեց ջուր տաք-

ցընել, ձեռքը ոտքը կապած եփուն ջու-
րին մէջը ձգել․ Երանելի կոյսը աղաղա-
կեց ո՜յ, որ ան ջուրը ըլլայ կրկին մկրտու-
թի․ ու ըսածին պէս մեծ շարժ մը ե-
ղաւ, աղաւնի մը երեւցաւ, ձիթենիի
պտուղ իր բերնին մէջ, ձայն մը եկաւ
որ կըսէր ։ ‖ Եկո՛ հարսանէ, հանգի՛ր արքայ-
ութե՛ մէջ․ Երանի՛ քեզի որ կուսութիւնդ ամբողջ
պահեցիր ‖ ։ Նոյն կապերը ինքիրերնին
քակուեցան, կոյսը ողջ առողջ ելաւ ջու-
րին մէջէն ։

Սա հրաշքը տեսածին պէս ժողովուրդը՝
մէջերնէն իրեք հազար հոգիի չափ դար-
ձան ամէննալ քրիստոնեայ եղան ։ Իշ-
խանը կըկատղէր աս բաներս տեսնալով․
ու չիդիմացաւ, հրամմեց Մարիանէն
քաղքէն դուրս հանել․ անորալ ամէն
դարձօղներուն գլուխնալ կտրել ։ Երթու-
հի Մարիանէն ան ատենը խնդրեց, Տ՜ր
Ա՜ծ ըսաւ, ով որ իմ անունս յիշելու ըլ-
լայ, ան մարդը ինչ նեղութե՛ մէջ որ ըլլայ,
իրեն օգնութի գտնայ ։ Սանկով աս երա-
նելիս եղաւ արագահաս օգնական ամ-
մէնուն, ով որ իրեն բարեխօսութեը կա-
պաւինի ։

## Նշխարաց Փոխադրեալ

Աս ո՞րս ան տղան է որ՝ Յս իր գիրկը առնելով, վրան ձեռք դնելով օրհնեց · ինչպէս որ կըպատմէ աւետարանը մատթ · ԺԸ · ԳԼ · և մարկ · Թ · ԳԼ ։ Ասանկով Էմայ գիրկը ծնած ըլլալով՝ եօթէն աշկերտ եղաւ մանաւանդ պետրոսի ու յովհաննու · անտիոքայ աթոռընստաւ եւոդիոսի ետևէն՝ որ յաջորդ էր պետրոսի, մօտիկ տեղվանք շատ կռապաշտ դարձուց քրիստոնեայ ըլլալ քարոզութե ու հրաշքներով · իսկ հեռու տեղ եղողները գիր գրելով կըզարծընէր, ամենուն սիրտ կուտար հալածանքի համբերել · իր մր միայն կըցաւէր որ՝ արժանի չէր եղած մարտիրոսութե ։ Գիտցէք որ կըսէր, նահատակվիլն է՝ որ մեզ աւելի կըմօտիկցընէ, ընտանի կընէ այ · յսին համար մեռնիլն է՝ որ յսին սէրը կըցըցընէ ։

Իրեն այսչափ մեծ փափագը Ած ալ կատարեց · երբոր տրայանոս կայսրը անտիոք եկաւ, իր առջին կանչեց իգնատիոսը իբրև գլուխ քրիստոնէից · սկսաւ յանդիմանել · դու ինչու համար ըսավ այս քաղաքն ու ամէն աորւոց աշխարքը կռապաշտութէ դարձուցիր, քրիստոնեայ ըրիր ։ Իգնատիոս յայտնի քարոզեց քրիս-

տանելուն Ճշմարտութիւնը , կուռքերուն
ստուտին . ասոր վ̄ր երկան Հակաճառութի
ըրաւ . Տրայանոս սրդողելով հրամմեց
կունակը ծեծել , երկըթներով կողերը
քերել , աղով շփել :

Ետքը նորէն առջեւը բերել տալով կը֊
յորդորեր կուռքերուն զոհելու . տեսաւ
որ միտքը չփոխեր , հրամմեց ձեռքին
մէջը կրակ լեցընել , կողերնալ էրել . գե֊
տինը կրակ փռել , կրակին վ̄ր զինքը
պառկեցընել : Բայց որն Իգնատիոս ա֊
նանկ վառեալ էր սիրովն Քրի , որ աս
ամմէն տանջանքը բան մը չէր երեւնար
իր առջին :

Տրայանոս հրամմեց երկըթներով կողերը
քերել . աղ ու քացախ լեցընել վրան .
ետքը իրեք օր իրեք գիշեր անօթի ծա֊
րաւ բանտիններսի դին թօմբուխը զար֊
նել սրվավ շղթայներով . ետքնալ վճիռ
հանեց Հռոմ տանիլ , գազաններուն առ֊
ջին ձգել :

Խիստ ուրախացաւ որը երբոր աս լսեց .
ուրախանալէն շղթայները իր վ̄ր ձգել
կուտար . գաւհիճները առին անանկ
կապված Սելեւկիա իջեցուցին . անկից
նաւով Իզմիր բերին . հոն որյն Պօլիկար֊
պոսի հետ տեսնըվելով խ'ստ ուրախա֊
ցաւ , որովհետեւ մէկ տեղ աշակերտա֊
կից էին : Շատ եպսներ , քահանայներ ,
սարկաւագներ եկան հոն զինքը տեսնա֊
լու , ոպ̄ զի հօգեւոր շնորհք առնեն իր֊

մէ · Ինքը ամմէն եկողներուն առջին կը-
ցըցըներ ինչ փափագ ինչ սէր ուներ օր
մը առաջ նահատակուելու · քանի սէրն որ
իր սրտին մէջը ուներ՝ գիտես թէ դուր-
սէնալ կըցըցըներ կրակի պէս վառուե-
լով ։ Ամմէնունալ կաղաչէր մանաւանդ
պօղիկարպոսի՝ աղօթք ընել որ իրեն փա-
փագը շուտով կատարուի · օր մը առաջ
գազաններուն ձեռքով աշխըրքէս ելլայ,
քանի տեսոյն արժանի ըլլայ ։
Կասկած մը առաւ որ՝ հռոմ եղած քրիս-
տոնեայները տեսէ ենգինքը խալըսցընե-
լու · երկան բարակ թուղթ մը գրեց ա-
սոնց իզմիրէն աղաչելով, չըլլայ որ աս
շնորհքիս մարտիրոսութե խափանօղ ըլ-
լան ։ Ես շատ աղօթքով իմ փափագիս
հասայ ըսավ · միայն թէ դուք հիմա
արգելօղ չըլլաք · սեղանը պատրաստ է՝
վրան զոհ ընելու է · ասկէց աւելի շնորհք
ինծի չէք կրնար ընել որ՝ իս թողուք
վրան ելլամ զոհ ըլլամ · ո՞վ զի դուքալ
քովս բոլորուելով սիրով երգ ընէք յ̃ի,
թէ ա̃ծ արժանի ըրավ, ասորւոց եպ̃ը
արեւելքէն արեւմուտք բերել տըվավ, որ
մարտիրոս ըլլայ ։ Անանկով մինակ անու-
նովքրիստոնեայ չըլլամ, այլ եւ գործքով ·
ան ատենը գործքով կրնամ քրիստոնեայ
ըլլալ, երբոր քանի համար աշխըրքէս վեր-
նամ · քրիստոնեայն ան ատենն է մեծ՝
երբոր աշխըրքէս ատելի ըլլայ ։ Ես մէկ
ցորեն մըն եմ · ցորենը ինչվան որ աղաց-

քի տակէն չանցնի՝ հայ չիկրնար ըլլալ · անանկէնէ թողուցէք խօ որ գազաններուն ակռաներուն իբր աղացքով մանրըւիմ, ոչ՛ գի հայ՞ու ըլլամ ոչ ։ Ասէք գազաններուն խօ անանկ կուտան որ՝ մարմինէս կտոր մը չիթողուն գուրսը, մեռնելս կարօտ չըլլայ թաղելու, այլ իրենք ըլլան իմ գերեզմանս ։ Ան ատենը կըլլամ ճըշմարիտ քու աշակերտ, երբոր աս աշխարհքս ալ չիտեսնայ իմ մարմինս · ամմէն տանջանք թող վրաս գան, միայն թէ զքո՞ ինծի ունենամ ։ Աղօթք ըրէք եղբարք, ինծի համար մուզէք որ ապրիմ, այլ մեռնիմ · մեռնելովս լոյսը պիտոր տեսնամ · հիմա մարդ եմ, ան ատենը հրեշտակ պիտոր ըլլամ ։

Ասոր նման խօսքեր որ շատ կան ան թղթին մէջը՝ յայտնի կընեն որ աս՞ուս բոլորովին վառած էր սիրովը քու · մարդմընէր եղած՝ որ իբր թէ աչքովը կըտեսնար երկնային փառքը · խելքը միտքը հոն երթալէր օր մը առաջ ։ Աս թուղթը գրելէն ետև զինքը նաւ մտուցին, Իզմիրէն նաւով ելան, բայց Ճամփան տեղ տեղ ցամաքով՝ տեղ տեղալ ծովով երթալով՝ հռոմ հասուցին ։

Գիտնալու բան է որ՝ հին ատենը կռապաշտները հռոմ զանազան խաղեր կըխաղային քանի մը օր ետևէ ետև, մէկ խաղերնալ ան էր որ՝ մահապարտ մարդիկը անօթի գազաններուն առջին կըձգե-

*գէին, որ ամենինաւ կըտեսնային, անոր համար դաշինքները կարտօրային ձամբան, որ ան խաղին հասցընեն ։ Ուրեմն ընդհանուր խաղին տեղը մնացին, կանչեց ամենուն .* Ո՛վ Նազիանզացիք, դուք որ [illegible] [illegible] [illegible] . մի՛ [illegible] [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] ։

*Ու ըսելնինի երկու աւիծ վրան թողուցին, որ ամբողջ մարմինը կերան յամին իբր 110 . ինչպէս որ ինքը փափագելով կըցանկար որ գազաններու բերանը թաղվի . միայն քանի մը մեծ ոսկորները թողուցին ։ Ու ատենը ոմանք ալ տեսիլք տեսան որ, իր հոգին աջ աղջին երեւ կեցերեր . իբր ծանր աշխատանքէ եկած քրտինքը կըսրբեր ։*

---

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ

որ և Նազիանզացի ։

*Ո՛նաւ Նազիանզ քեշը . մայրը քրիստոնեայ էր ու խիստ բարեպաշտ . հայրը՝ որ նոյնպէս գրիգոր կըսվէր՝ կռապաշտ էր, բայց ետքը իր ընկերոջը աղօթիւք դարձաւ քրիստոնեայ եղաւ . երկու տաբիէն ետեւ Նազիանզու եպս եղաւ ։ Որիս*

ռոմեկայ ըսպալէն ետև. ծնաւ սա գրիգոր տղան մօրը աղօթիւք․ որ ուխտ էր ըրեր այ նուիրել․ անոր համար գիտես թէ պզտիկուց սկսաւ այ շնորհքը վրան երևնալ․

Իր տղայութեան ատենը գիշեր մը տեսաւ երազին մէջը երկու կուսանք, որ ըսին իրեն․ ‖ Մ՚ենք ենք Մ՚աքրութի – Պարկեշտութի, ընտանի – սիրելի Երկնաւոր Թագրին, Թէ ր Քեղի նման ըլլա՝ Թգրին առջին նշանեներ զեղ ‖ ․ Գրիգոր սա երկու աստուածութիւնը գերազանց կերպով ունեցաւ․ ինչ խորհուրդ որ իրեն պարկեշտութեան դէմ, սա տեսիլքը միտքը բերածին պէս՝ շուտ մը կը փարատէր, ինքնալ ամէն փոյթին կըջանար զգուշանալու․ ամէն երկրաւոր վայելչութիւնները ձգերէր, փափուկ կերակուրներէն՝ հագուստէն՝ զբօսանքներէն՝ միշտ ետ կըքաշվէր․

Երիչ եպսկոպոսինալ ունեցաւ կեսարիանոսով, քոյրմինալ գործերու տնուն․ սաոնքալ բարեպաշտ անձինք եղան․ ամենկ մօրը ձեռք կըթըմբելով, որ իր զաւակները ամենայն բարեպաշտութեան կըրթեծցընէր, մանաւանդ գրիգորը․ որուն շատ հեզ կըլլանար ծառայութը, նաև հապետաց վորքը կորդալ կուտար․ կըսորվորեր անոնց արդարութն ծառայութն նմանիլ՝ անկէց ալ ին պզտիկուց սեր կուտար ծառայութը կարդալու, խեղք հաւցընելու․

Երբոր մեծցան՝ իրենց սէր եկաւ արտաքին ուսմունքներն սորվելու . անոր համար քալեց ան քաղքըները ուր որ ան ատենը ուսմունք ծաղկեալ էին . աւելի աթէնք ուզեց երթալու , բայց Յուլիան ատտաիկ ալեկոծուի քաշեց , մօտիկ ընկղմելու եղաւ ուսկից մօրը աղօթքովը խալըսեցաւ . ինչպէս որ մէկին յայտնվերեր աթէնքի մէջ . հոն իրեն ընկեր ունեցաւ Ս. Բարսեղ . երկուքնալ խիստ սէր կապեցին իրարու հետ . իրենց սրամըտութը ուսումնասիրութը շատ առաջ գացին , ամէնէն վեր ելան , իրենց բարի վարքովնալ աղէկ օրինակ եղան ամէնուն . անանկ որ՝ աթէնացիք չէին ուզեր թող տալ .

Այս գրիգոր ծովու Յուլիան թողուց , ցամաքէն փախաւ նազիանզ եկաւ , գալուն պէս կուզէր անապատը առանձնանալ , բայց ծնողքը չթողուցին որ իրենց ծերութը հոգայ . Մէն գրիգոր անոնքալ կըհոգար , կատարեալ կրօնաւորութնալ կըպահէր . որովհետև ուխտ էր ըրած ամէն տեղ անանկ կենալ ինչպէս թէ անապատի մէջ ըլլար , հօգուոյն բաները աւելի հոգալ քան թէ մարմնոյն բաները , միշտ վերինը մտածել , պարապ խօսք մի չխօսիլ , պարապ չփկենալ , այլ միշտ ա՜ծաշունչը կարդալ , անոր խօսքերը մտածել . Անանկ վարք ունենալովը բոլորովին ա՜յ հետ միացաւ . շատ հեղ քա

կըտեսնար․ հետը ընտանեքար կըխօրաթեր ։

Իր աշխատանքովը իրեն հայրը խալըցուց աղքատական մոլորութէ․ որոնք խաբէական խօսքերով մոլորցուցեր էին․ հայրենալ զինքըքահանայ ձեռնադրեց, որ զի օգնական ըլլայ իր ծերութե տանը ։ Աղբօր ծնօղքը ծանր հիւանդութի քաշեցին, աղօթքով ողջընցուց, եւքը անապատը քաշվեցաւ․ որ՝ն բարօղի հետ, որուն հետ շատոնցմընէ խօսք դրած էին հոն քաշվելու․ երկուքը մէկ սիրտ մէկ հոգի ըլլալով կըջանային առաքինութե Ճամբան երթալ․ խիստ կրօնաւորական կեանք վարել, պաքով աղօթքով անցընել ։ Ընկուքին խուցնալ որովհետեւ շատ հեռու չէին իրարմէ, շատ կըտեսնըվէին մէկմէկու հետ․ հաւատքի մը, բարի վարուց մը խօրաթելով․ քանի որ տասնկ հոգւորի մէջ առաջ կերթային, այնչափալ տեսլի մը կըլլար իրենց արտաքին ուսմունքը որ աթէնք սորվեցան, հոգեւորէն զուրկ ըլլալուն համար ։ Անապատին մէջը գրեցնին գիրգոր ծայրն Ճառեր, քարոզներ, խելացի խօսքեր, գեղեցիկ տաղեր, որոնք սորվեցընել կուտար տղոց․ աւոնցմով ամօթ ըրաւ յուլիանոսը, որ միտքը դրեր էր թէ քրիստոնէից մէջը չիկայ ամենեւին իմաստութե գըրուած ։

Անանկ վարք կըվարեր գիրգոր անապա-

տի մէջ․ միայն թէ իր ծերացեալ ծնօղաց կամքը կատարելու համար երբեմն նաղխանդ քաղաքը կերթար, երբեմն անտապատը կըքաշուէր, ետքը երբոր վաղէս կայսեր տանը արխոսեանք նորէն համարձակուի առին, ան տանը բոլորովին քաղաքը ինջու, ինչպէս բարսեղալ, գրիգորնիւսացինալ։ Նո իրեքնոքը իրեք ջահ եկեղեցւոյ ըլլալով, ժողովրդեան մէջ ըմմնային, ուղղափառները լուսաւորելով կըպահէին արխոսին մոլորուէ։

Երբոր բարսեղ եպս ձեռնադրըվեցաւ կեսարիոյ վրայ՝ ու գրիգորնալ եպս ձեռնադրեց սասիմայ քաղքին վրայ․ բայց հայրը ան տանը անկար ըլլալով՝ իրեն նաղխանդու աթոռը նստեցուց․ երբոր հայրնալ մայրնալ վախճանեցան, գրիգոր ըլլալ նաղխանդու աթոռէն, որովհետեւ ես ըսաւ միայն գործակից եղայ հօրս, կապված չեմ, ուրիշ հովիւ մը ընտրեցէք ձեզի։ Բայց տեսնալով որ հինկ տարի անցաւ նաղխանդայիք մէկը չըգրին, ակամայ յանձն առաւ նորէն հօն գարձաւ։

Ուղղափառ եպսնները խօսք դրին սատանպօլ ժողով ընել․ որովհետեւ հոն շատ գորացեր էին արխոսեանք եւ ուրիշ հերետիկոսներ, անոր համար գրիգորնալ կանչեցին․ երբոր հոն հասաւ՝ վազէս արխոսեան կայսրը մեռեր էր՝ մեծն թէոդոս տեղը նստեր էր։ Գրիգորին ինչած տա-

նը ստանալօքն մէջ եղած ըմանն ուղղափառութը ննկելու տուն. անոր համար ան տեղը անապատախա կոչեցին, որ ըսել է Յարութ. իբր թէ հոն յարութ առած ուղղափառութը։ Հոն կրծողվեցին ուղղափառները ըսել իրեն քաղցրաբուղխ վրդ՟պութը, որ կրտորվեցրնէր միասնական՟նը երրորդութը. բանին այ և հոգւոյն սբյ ածութը, յստակ խօսքերով անանկ կըվրդ՟պտէր՝ որ ամօթով կըմնային ան ատենվան հերետիկոսները՝ որ խիստ շատցերեին, ու կուգային իրեն հետ հակաճառելու. բայց գրիգոր անանկ կըկապեր անոնք իր խօսելովը, որ չէին կրնար իրեն դէմ խօսք հասցընել, ետ կըդառնային։

Ան տեղը եղած որ զինքը կոչեցին Նազեան. հերետիկոսները ալ ձոր չիգտնալով կըսկըսեին ծաղր ընել, նախատանաց անուններ տալ, զրպարտութ ընել։ Նա ամենն ըրածնին պարապ ելաւ. ո՞րն գրիգոր անանկ մէկ շնորհք մը ունէր բնական և գերբնական՝ որ ամէնուն սիրտը իրեն կըքաշէր. մէկ անգամ հետը խօսողը՝ մէյմընալ չէր ուզեր իրմէ զատվիլ. անոր համար հեռուէն իրեն անունը լսողներ երևելի մարդիկ՝ վազելով աստ քովը կուգային. ինչվան ո՞րն հերոնիմոս մեծ վրդ՟պտն լատինացւոց՝ աստ քովը եկաւ, փառք սեպեց իրեն աշկերտ ըլլալ. աս նշանաւոր խօսքը զուրցեց։

Գրիգոր ա͞ծաբանին վկ͞յութիւնը՝ ուրիշ յունաց ու լատինացւոց վկ͞յութիւններէն շատ վեր կը դասենամ։

Ասանկ մեծ մարդ ըլլալով՝ ստամպօլու պատրիարգ ըրին զինքը. թէպէտ ինքը շատ դէմ կեցաւ. ինչ խռովութի որ կը- հանէին հերետիկոսները սիրով հեղութ͞բ ամենայն խաղաղցուց. ուղղափառնե- րուն մէջէնալ քանի նախանձօղներ որ ելան ու իրեն վը՞ր խռովութի հանեցին, որն գրիգոր ամենայն հանդարտութ͞բ տա- րաւ։

Այս խռովութի հանօղը եղաւ Մաքսիմոս ըսված մէյմը՝ որ շատ աղէկութի տե- սերէր իրմէ, երբոր հիւընդցած էր գրի- գոր՝ աս Մաքսիմոս զինքը ստամպօլու պատրիարգ ձեռնադրել տուաւ։ Գրի- գոր որ խաղաղութի կըսիրէր՝ ուզեց հրա- ժարիլ, բայց բազմութի ժողովրդեան թող չտուաւ. մեծն Թէոդոս որ դուր- սէն եկերէր ստամպօլ՝ առաւ գրիգորը նստեցուց աթոռը. իրեն հակառակորդ- ները մէկի մը ձեռքով սպաննել ուզե- ցին, ա͞ծ ան մարդուն ձեռքովը բանը երեւան հանել տուաւ։

Տեսաւ որն գրիգոր որ հերետիկոսները դեռ չէին վերջացած, յորդորեց թէո- դոս թ͞գը ժողով ընել տալ, զինքնալ ա- թոռէն հանել. ասոր վրայ ստամպօլու ը͞նհանուր ժողովը եղաւ 150 հայրա- պետներու. որոնք Ճշմարիտ ուղղափառ

հաւատքը սահմանելէն ետև՝ եկան գրիգոր ածաբանը բռնադատեցին որ իրեն օգուտը չնայելով՝ հապա ուղղափառաց օգուտը՝ նորէն նստի ստամպօլոյ աթոռը ։ Բայց սբն գրիգոր յիշեցընելով անոնց իրեն ըրած երախտիքը, ու չարախօսներուն զրպարտութիւնը, հրաման խընդրեց հրաժարելու ։ Անանկով ելաւ գնաց նազիանզի մօտիկ արիազոն գեղը . հոն նստելով՝ ճգնութե տըվաւ զինքը, հօրը ապրանքնալ աղքատաց բաժնեց ։

Ան ատենը շատ գրքեր շարադրեց . իրեն վարքնալ գրեց որ՝ իր չարախօսները ամօթ ընէ ։ Աս սբս այնչափ խիստ էր իր վրայ որ՝ անգամ մը իրեն երեցաւ թէ խիստ խօրաթեց մէկի մը հետ, զինքը պատժելու համար քառասուն օրլուռ կեցաւ . երբոր ծանր հիւանդութե մէջ ընկաւ՝ ան ատեննալ օգտակար գրուածներ հանելէն ետ չէր կենար, ինչվան որ վերջին թելը հասնելով հոգին աւանդեց յամին իբր 390, ընտանեբար խօսելով քի հետ ։

ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՑԻ

Եղբայրն էր սբյն բարսղի, անոր ու մակրինայ քրոջը դաստիարակութե պզտիկուց մէ աղէկ կրթութի ունեցաւ . մեծնալէն ետև կարգըվեցաւ թէոսեպիայի հետ, որ

երևելի կնիկ եղաւ իրեն առաքինուեցը համար, բարի օրինակ ամենուն. ինչպէս զարդ եկեղեցւոյ կըկոչէն զինքը: Գրիգոր եպքը քահանայ ձեռնադրըւելու. իսկ իր ընկերը Թէոսեբիան մեռնելէն ետև՝ գրիգորը բռնադատելով եպս ձեռնադրեցին Նէոկեսարիայի վրայ, որ կըսուի նաև Նիւսա. բայց երբոր վաղէս կայսր արիոսեան ըլլալով՝ քշել սկսաւ ուղղափառ եպսները, ան ատենը գրիգորն ալ քշեց, պատճառն որ՝ համարձակ ըրհակաճառէր արիոսեանց հետ, ամմէնուն առջին ամօթ կընէր: Աղէսի վերջի տարին քշըւելէն դարձաւ գրիգոր, անտիոքայ ժողովը գնաց. երբոր ժողովէքէն կըդառնար՝ ուզեց տես երթալ մակրինա իրեն քրոջը, որ մարապետի պէս մէկ տուն մը քաշված կեցերէր:

[illegible]րվան մը ճամբայ մնացած՝ երազին մէջ տեսաւ ձեռքը նշխարքներ, ուսկից անանկ լոյս կըցոլանար որ աչվընին կառներ. աս տեսիլքը իրեք հեղ տեսաւ մէկ գիշերվան մէջ՝ բայց մեկնութիւնը չիմացաւ. երբոր տունը եկաւ՝ իր մակրինա քուրը տեսաւ ծանր պառկած. որ՝ նըյն բարսղին ետևէն ինքնալ նոյն տարվանը մէջ մեռաւ անանկ ջերմեռանդութ քնի տեսոյն փափագելով խորունկ հոգևոր բաներու վր խօրաթելով որ գրիգոր զարմանալով իրեն հետը խօսելով՝ գրեց հոգւոյն վրայի գիրքը: Բայց մեռնելէն

եւ հանկըցաւ գրիգոր իրեն տեսած ե-
րազին խորհուրդը ։

Ասկէց ետքը եղաւ ստամպօլու Ը՟ հանուր ժողովը, ուր գնաց գրիգոր հետը տանելով իրեն շինած գիրքը եւնոմեան հերետիկոսաց դէմ, ժողովին մէջ կարդալու ։ Նախանձօղ բանսարկու մարդիկ որ չէին պակսեր՝ գրիգորին դէմ գրգռեցին Իղնատիոսը, որ ՚ոչ բարսղէն եւ ղայսերիու ենչս էր նստած ․ բայց ետքը իրաւը հասկընալով շինվեցաւ հետը ։

Գրիգոր ամէն տեղ կըպտըտէր իր ժողովուրդը հովուելու եւ եկեղեցնայ օգուտը հոգալու համար ․ եէմալ գնաց ուխտի համար ։ Ամէն եպչներ՝ ուր որ մէկ գժուար բան մը կելլար՝ զինքը հոն կըկանչէին, գրիգորնալ հասնելով մէկ ճար մը կըգտնար, ամէն բան կըշտկէր, զօրաւոր ըլլալուն համար թէ խելքով, թէ մանաւանդ ճարտասանութ̃ ։ Ասանկով մէկ լուսաւոր ճրագ մը եղաւ եկեղեցնայ ․ սրբուք̃ մեռաւ յամին իբր 396 ․
շատ աղէկ գրքեր թողլով ։

---

## ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ

Ան նէոկեսարիա քաղքէն էր՝ որուն գաւառը պոնտոս կըսուէր ․ հեթանոս ծնողաց որդի՝ այլ ազնուական, անչափ որ՝ ասոր պապերն էին՝ որ պոնտոս գա-

ւորին իշխանը կըլլային ։ Աս գրիգոր տղակուց մէկ կատարեալ մարդու մը վարք ունեցաւ ․ ամենեւին չունէր ան բընութիը որ սովորական է տղոց ․ խաղի հետ ըլլալ, ժուռ գալու ետեւէ իյնալ, հագվիլ կապվիլ, փափկութի սիրել, աս բաներէս մէկնալ չունէր ․ հապա իրեն սիրելի բան առաքինութին էր, իմաստութի, ուսումնասիրութի ․ անանկ որ՝ պէտք է ըսել թէ՝ ա՟ծ աս տղան պզտիկուց որոշերեր իրեն քաշել, իրեն մեծ ծառայ ընել ։

Ասանկ մը լուսաւորելու էր՝ որ գրիգոր արարածոց վր նայելով՝ ինքիրմէ Ճանչնալ սկսաւ արարիչը ․ ինչվան որ թողուց կռապաշտութիը որուն մէջ ծնած էր, քրիստոնէութիը ընդունելով մկրտըվեցաւ ։ Աչքոր խաքէնտէրին երթալով՝ փիլիսոփայութի ու սբ գրոց տեղեկութի սորվելու հետ էր ․ հոն եղող մէկ տեղ սորվող երիտասարդները կըտեսնային ասոր խելքը որ ամմէնէն վեր էր, իրեն սբ վարքը՝ որ մէկ չափահաս ծերու մը պէս էր, իր խօսվածքը, իր վարմունքը կատարեալ, ամենեւին անարատ, հեռու ցփութէ, աշխարհասիրութէ, օտար իրենց աշխարհասէր վարմունքէն, ասոր վր շատ նախանձ կապեցին, մտմտացին ինչ ընեն որ անունը կտրեն, պոռնիկ կնկան մը ըստակ կերուցին, որ բազմութե առջին եկավ պոռալով ըսավ ․ ո՞ւր է ըստակն որ՝

ինծի խօսք տըւիր տալու, քանի՛ մէկ կու-
շացընես ։

Աս լսելով ամմէն հօն եղօղները դայ-
թակղելով՝ նայեցան որ կնիկը անկէց
չեռըցընեն. բայց սբն գրիգոր ամենուն
փորդողելով՝ գիտէր որ՝ ով է ան կնիկը
դըդօղը, ան մարդուն ըստակ հանեց տը-
ւավ որ կնկանը վճարէ ։ Որ ասանկ խո-
նարհութեն ցըցուց, բայց արդարութեն
ածային իրեն վրէժխնդրութիը ըրավ. սբն
անմեղութիը երևան հանեց, ան կնիկը
քիչ մը ան դին գացածին պէս՝ դիւա-
հարեցաւ գետինը ինկաւ ամմէնուն առ-
ջին. երբոր դեռ խղդէր պիտոր անիկայ
զարհուրելի ձայն հանելով, սբն գրիգոր
քովը եկավ. այ անունը տալով բժշկեց.
ամմէն տեսնօղները իրաւը հասկընալով,
զարմացան ։

Ասկէց ետքը սբն գրիգոր գնաց ոտօգի-
նէսին քով. հինկ տարի անոր աշկերտե-
լով՝ ինչ որ քրիստոնէական ուսմունք
կան՝ աղէկ մը սորվեցաւ. երբոր իրեն
աշխարհքը դարձաւ, ամմէննալ իրեն կա-
ւաջարկէին կարգըվելու. բայց անիկայ
մէկէն հրաժարեցաւ ։ Ամասիայի եպսը
ուզեց զինքը քահանայ ձեռնադրել, ինչ-
պէս որ ած իրեն ապսպրրէրէր. բայց
գրիգոր անկէցալ հրաժարելով իրեք օր-
վան հեռու տեղ փախաւ. ինչվան որ ած
իրենալ հրամմեց, ան ատենը քահանայ
եղավ. բայց չէր համարձակէր իրեն պաշ-

տօնը 'ի գործ դնել, քարոզութ̃ի ընել ․ որովհետեւ ան ատենը անանկ քրիստոնեայներ ելեր էին՝ որ պտոյտ խօսքերով վդ̃պտելով պարզամիտները կըխաբէին ։ Նոր համար շատ աղաչանք կընէր այ̃՝ որ իրեն մէկ կանոն մը յայտնէ, հաւատքին շիտակ խոստովանութ̃իը սորվեցընէ, որ ինքնալ համարձակ ան բանը քարոզէ ամմէնուն ։ Աս բանիս համար երկան աղօթք ու հոկում ընելէն ետեւ՝ տեսավ մէկ ծեր քահանայ մը հրեշտակային կերպարանքով որ կըսէր իրեն ․ այ̃ հրամանովը եկայ քեզի վդ̃պտելու կանոն մը սորվեցընելու ․ աս ըսելով՝ մատովը ուրիշ տեսիլք մը կըցըցընէր ։ Սէյմընալ աս դիս նայելով տեսավ մէկ սքանչելի թագուհի մը, անանկ լուսի մը մէջ նըստած որ մարդուն աչքը կառնէ ․ աս ծերուն անունը տալով ըսավ ։ Ս՛վ յոհաննէս աւետարանիչ, սորվեցու ասոր ճըշմարտութ̃ե խորհուրդը՝ որ կըխնդրէ ։ Նաւ ալի̃ն տըվավ ․ պատրաստ եմ, ով մայր ա̃ն, ընել՝ ինչպէս որ դուն կըհրամմէս ։

Ան ատենը յոհաննէս աւետարանիչ բացաւ ա̃ծաբան բերանը, մէկիկ մէկիկ զուրցեց իրեն ինչ խօսքով որ քարոզելու է ամմէնաս̃բ երրորդութ̃իը ։ Աս վդ̃պութ̃ին է՝ որ ս̃ըն գրիգոր իր ժամուն մէջ քարոզեց գրեց ․ ան ձեւ վդ̃պտութ̃իը պահվեցաւ իբրեւ այ̃ վդ̃պտութ̃ի չէ թէ միայն նէո-

կեսարիոյ մէջ՝ այլ ամմէն տեղ՝ ամմէն ժողովքի մէջ որ 'որ հարք կըժողվէին. Մանաւանդ նիկիոյ 'որ ժողովքին մէջ. իրեն գրուածնալ պահվեցաւ իբրև ա̃ծմէ գրուած մը. աս վկայութին է որ գրիգոր ա̃ծարաննալ 'որն բարսեղալ քարոզեցին.

Ս'ըկեց ետքը եղավ որ 'որն գրիգոր սիրտ առավ, քաղաքը եկավ, միտքը դնելով որ ժամ մը շինէ հոն. որովհետև ինչվան ան ատենը միայն կաստուններ էին չէթէ միայն քաղքին՝ այլ ամմէն գաւառին մէջ. առաջ ուզելով որ կաստունները վերցընէ՝ քաղքէն դուրս կաստուն մը մնաւ գիշեր ատեն որ խիստ երևելի էր. ինչ որ քուրմերը կըհարցընէին՝ սատանայներնալ ան կուռքին բերնովը պ̃տն կուտային. Սըն գրիգոր խաչին զօրութ̃ը ստատեց, սատանաները դուրս վռնտեց. ինքը հոն գիշերնիլուս աղօթքի հետ եղավ. լուսուն դէմ ելավ գնաց.

Առտոր քուրմը եկավ, ինչպես որ սորված էր հարցուց կուռքին. սատանայները դուրսէն զուրցեցին. գրիգորը եկավ մեզ դուրս հալածեց, անկարելի է հիմա մեզի ներս մտնալ քեզի պ̃տն տալ: Քուրմը կատղելով եկավ գտավ գրիգորը, դատաւորին կուզեր մատնելու. գրիգոր հեզութ̃ պ̃տն տըվավ. ով զի իմանաս ինչ զօրութի ունի մեր Ճշմարիտ ա̃ծը, ինչպես իրեն ձեռքն է, ուր որ

կուզէ՝ ան սատանաները հոն կը կեցընէ ,
որ դուք ալ տեղ կը պաշտէք ․ եւ հիմա
անոնք նորէն տեղերնին դարձընեմ ։ Աս
ըսելով գիր մը գրեց հրամմելով սատա-
նայներուն որ նորէն կռատունը մտնան ․
քուրմը առաւ աս գիրը կռատան մէջ
սեղանին վրայ դրաւ ․ եւ իրաւ գրածին
պէս սատանաները նորէն մտան , սկսան
կուռքին բերնէն խօսաթել ։

Ասոր վրայ խիստ զարմանալով քուրմը՝
նորէն եկաւ Գրիգորին աղաչեց որ՝ իրեն
սորվեցընէ ով է ան Աստուածը՝ որ սատանայ-
ներուն վրայ ասանկ իշխանութիւն ունենայ ։
Երբ հասկըցընելէն ետեւ՝ քուրմը ուրիշ
մէկ հրաշք մ'ալ ուզեց որ հաւատայ ․
ան ատենը Սուրբն Գրիգոր լեռան վրայի
քարը մէկ խօսքով տեղէն հանեց , ուրիշ
տեղ մը բերել տըւաւ ուր որ կուզէր
քուրմը ։ Աս հրաշքը տեսածին պէս
քուրմը՝ բոլոր սրտով հաւատաց ․ ամէն
բանը ձգելով առաւ Սուրբը քաղաքը տա-
րաւ , ըրած հրաշքներն ալ ամէնուն
պատմեց ։

Հոն Ճշմարտութիւնը քարոզելով Սուրբն Գրի-
գոր՝ ամբողջ քաղաքը դարձուց քրիս-
տոնեայ ըրաւ ․ ան քուրմն ալ սարկաւագ
ձեռնադրեց ․ քաղքըցւոց ծառայութիւնը
եկեղեցի մը շինեց , որ ատեն անցնե-
լէն ետեւ՝ երբոր շարժը ամէն շէնքերը
փլուց , աս եկեղեցին միայն մնաց որ չի-
փլաւ ։ Ինչ խնդիրք որ ուզէր՝ աղօթ-

քով ա̃ծմէ կառնէր , ինչ աղէկութիւն ձեռքէն կուգար՝ ամմէնուն կընէր , ինչ-պէս որ յայտնի կըցըցընեն աս գրուած-
ներս որ հոս պատմենք ։

Երկու եղբայր ժառանգութի բաժնելու ատենը խիստ մեծ կռիւ ունեցան մէկ ծովի մը վրայ որ իրենց երկրին մէջն էր . ամմէն մէկը կուզէր որ իրեն ըլլայ ան ծովը . Ս̃րն գրիգոր մէջերնին մտաւ՝ շատ խրատեց , չկրցաւ շտկել . անոնք իրեն խօսքին մտիկ չընելով զօրք ժողվեցին որ՝ հետևեալ օրը իրարու հետ պիտոր զարնըվէին ։ Ս̃րն գրիգոր տեսնալով անոնց պատրաստութիւնը՝ օր մը առաջ գնաց ծովին քով , գիշերնիլուս աղօթքի կեցաւ , ան ծովը անանկ ցամքեցուց որ՝ եզրէն վրան շէնքեր շինվեցան , արտեր պարտէզներ տնկըվեցան , կռիւնալ վեր-
ջացաւ գնաց ։

Նեոկեսարիա գաւառին մէջէն գետ մը կանցնի գայլ անունով . որ շատ վնաս կուտար ատեն ատեն դուրս պոռթքալով , ինչ որ կընէին՝ չէին կընար Ճար մը գտնալ ։ Ս̃րն գրիգոր իր գաւազանը ան գետին քովը տնկելով աղօթքի կեցաւ . գաւազանը կանանչնալ սկսաւ , գետին ջուրնալ ոչ երբէք գաւազանէն ան դին
անցաւ ։

Կոմանայի քաղքին ժողովուրդը եկան աղաչեցին որ գայ իրենց վրայ մէկ եպ̃ս մը ձեռնադրէ . երբոր գնաց՝ ընտրելու

ատենը մէկը աս կուզէր, մէկալը ան. Տ՟րն գրիգոր ըսավ անոնց. դուրսի կերպարանքը, դուրսի մենծութը մի՛ նայիք, ժողովուրդ, հապա ան հոգին ընտրեցէք որ այ՟ հաճոյ է ։ Մէջերնէն մէկը ան ատենը ելավ ծաղը ընելով մը ըսավ. թէ որ ադպէս է՝ աղէքսանդրոս դարբինը անանկէնէ բերենք. աս ըսելով հոն մտուցին իր առջին բերին մէկ դարբին մը (չիլինկիր), մրոտ երեսով, աղտոտ ու ծրտոտ հագուստով ։ Տ՟րն գրիգոր չի-մերժեց անիկայ, այլ լուանալ տըլավ, լաթերը փոխեց, նոյն դարբինը ձեռնադրեց իրենց վրայ քահանայ ու եպ՟ս ։ Բոլոր կըզարմանար ժղ՟վը, մէյմընալ ետքէն հասկըցան որ աս դարբինը փիլիսոփայներէն մէկն է եղեր, իրեն խոնարհութ՟ե համար՝ մէյմընալ աղքատներուն հասնելուն համար՝ աս արհեստը սկսեր է բանեցընել, իր վաստըկածնալ աղքատաց կուտայ եղեր. ան ատենը ժողովուրդը փոխեց զարմանքը. իրենց չիճանչնալուն վր՟ զարմանալ սկսան, և Տ՟րն գրիգորի ճանաչողութ՟եը վրայ ։ Գանք որ աս աղէքսանդրոս անչափ երևելի եղավ սրբութ՟ը, որ հոգւոյն Տ՟րյ շնորհքը աղաւնակերպ ինջած վրան տեսան, ետքնալ հաւատքի համար մարտիրոս եղաւ ։

Ասանկով Տ՟րն գրիգոր միշտ պտըտելով նէօկեսարիա գաւառին մէջ, միշտ հրաշք-

նէր ընելով , շատ մարդ դարձուց քրիստոնեայ ըրալ· որուն վրայ Թ՟ըը բարկանալով՝ հրամմեց իշխանին որ ժամերը գոցէ , քրիստոնեայները տանջէ ։ Նա ատենը ՚նըը վախնալով իր նորահաւատ ժողովրդեան մ՟ը , որ չըլլայ թէ ամէնքը չիկրնալով դիմանալ ուրանան հաւատքը , հրաման տըւաւ որ ատեն մը փախչին , ինքնալ անապատը քաշուեցաւ իրեններովը , բայց մէկ մը մատնելովը եկան կռապաշտները բազմութ՟ պաշարեցին անտեղը ։ Ս՟ն գրիգոր իրեն սարկաւագովը ( որ դարձած քուրմ էր ) , հոն բազկատարած աղօթքի կեցաւ , անոր աղօթքովը ամէն փնտըռօղները կոյր եղան , որչափ որ պտըտեցան՝ չիկրցան գտնալ , ետ դարձան . մատնօղնալ աս հրաշքը տեսնալով՝ քրիստոնեայ եղաւ ։

Հալածանքը որովհետև երկնցաւ՝ ՚նըն գրիգոր հօգ կընէր , կըմտմտար , միշտ աղօթքի հետ կըլլար . օրմընալ իրեն հոգետեսութ՟ը տեսաւ որ՝ մէկ երիտասարդ մը տրօագիոս անուն տանջանքներ քաշելով նահատակուեցաւ . անկէց ձայն եկաւ իրեն որ՝ հալածումը պիտոր դադրի ։ Նս լսելով ՚նըը ուրախացաւ , ամմէնուն պատմեց . իրեն սարկաւագնալ գնաց ք՟ղքը հասկըցաւ որ՝ իրաւ ՚նըյն պատմածին պէս եղերէր , ան ատենը ամմէննալ զարմացան մնացին որ՝ ինչպէս իմացերէր ՚նըը օրովը , նահատակին ա-

Նունոյը ։

Երբոր նոյն Գրիգորի աղօթքովը հալածանքը դադրեցաւ, քաղաքը դարձաւ, մարտիրոս եղողներուն մարմինը ժողվեց, յատուկ տեղեր շինելով տեղաւորեց. իրենց տօնն ալ կատարել ապսպրեց ։ Առաջուցմէ իմանալով իր վախճանիլը՝ հոգ կընէր, կըփնտռուէր արդեօք կուսպաշտութիւն դեռ մնացեր է Նէօկեսարիայի մէջ. ետքը հասկընալով որ՝ տասնըօխտը հոգի միայն մնացեր էին, անոնց համար ալ շատ աղօթք ըրաւ որ անոնք ալ դառնան, իրմէ ետև եկողը կուսպաշտ մը չփտնայ ։ Ասանկ լի արդեամբք անցընելով իր կեանքը, իր նորահաւատ ժողովուրդն ալ օրհնելով, հոգին աւանդեց ՚ի յ աւրեղիանոս կայսեր ատենը, որ նստեր էր յամին 270։

---

ՍՐԲՈՒՀԻ ՔՐԻՍՏԻՆԷ

Տիւրոս քաղքէն էր տրայիանոս կայսեր ատենը. մէկ հատիկ զաւակ իրեն ծնողացը, որուն հայրը ուրբանոս կըսուէր. հարուստ մարդ միանգամայն և դատաւոր, մայրը Թիֆրական տունէ էր ։ Երբոր քրիստինէին չափը հասաւ, տասներկու տարւան մը եղաւ, հարուստներէն շատը ուզեցին իրենց տղոցը նշանել գեղեցիկ ըլլալուն համար. բայց իր հայրը

ուրբանոս կուռքերուն մէն խիստ սէր ունենալուն համար, կուզէր որ իրեն դուստրը քրմուհի ըլլայ. կուռքերուն ծառայութեան մէջը մտցընէ։

Նա մտքով ոսկիէ արծըթէ կուռքեր շինել տըւած, բարձր աշտարակի մը մէջ շարեց, հոն դրաւ իրեն աղջիկն ալ քրիստոնեաներէն, ոչ զի մէկի մը չերեւնայ, հոն միայն կուռքերուն ծառայէ, զոհ ընէ. տասներկու աղջիկալ իրեն ծառայութիւն տըւաւ։ Երբոր ուրիշները ետեւէ կիյնային ուրբանոսի՝ որ իր աղջիկը նշանէ, ուրբանոս պատասխան կուտար, լաւ է իմ աղջըկանս անանձ կենալ, որ կուռքերուն աւելի սիրելի ըլլայ. չէր գիտեր որ անիկայ քրիստոսի սիրելի պիտոր ըլլար։

Նա կայսր բնական խելացի ըլլալով առաջուցմէյալ տեսած ըլլալով քրիստոնէից բարի վարքը, իրենց նահատակութիննալ լսած, անկից իրեն մէկ տարակոյս մը կուգար, իր խելքին մէջ պտըտցընելով կըկասկածէր որ սուտ ըլլան իրենց պաշտած կուռքերը, կըհառաչէր, կըփափագէր որ մէկ տեղէ մը իմանայ ճշմարտութիւնը։ Տարիքը աւելի առնելէն ետեւ՝ երբոր օր մը բուրվառը ձեռքը առած պատրաստութիւն կըտեսնար կուռքերուն խունկ ծխելու, Աստուած որ պատրաստ է ասանկներուն ողորմիլ, յանկարծ իր միտքը բացաւ, իրեն մէկ խղճմտանք մը եկաւ ան սուտ կուռքերը պաշտելու, ժող-

վեց ան կուռքերը, տարաւ պատուհա-
նին մէջ դրաւ. սկսաւ երկինքը նայիլ
դէպ 'ի արեւելք ։ Ո՛վ է արդեօք ստեղ-
ծեր բոլոր աս արեւը, լուսնկան, աս-
տեղները. աս ընելով կըհառաչէր, ա՛խ,
տ̄ր ա̄ծ քրիստոնէից, յայտնի ըրէ՛ կըսէր
ինծի քուկին անունդ, որ քեզ պաշտեմ,
սուտ ա̄ծները չիպաշտեմ, աս կըսէր
ու արցունք կըթափէր ։

Ան գիշերը ք̄ս իրեն երեւնալով, զինքը
կանչելով սիրտ տըվավ, եսքեզի հետ եմ
ըսավ ով քրիստինէ. չեմ թողուր. դուն
համբերութ̄դ հոգիդ պիտոր գտնաս ։ Աս
խօսքով հասկըցուց իրեն որ մարտիրո-
սութ̄ պիտոր մեռնէր. բայց կուսին սիր-
տը ուրախութ̄ լեցվեցաւ, սկսաւ փառք
տալ ա̄յ ։

Ան օր անցած էր որ կուռքերուն
խունկ չէր ծխած. քովի աղջիկները ի-
րեն յիշեցուցին. չըլլայ թէ ըսին մեր
վրայ բարկանան կուռքերը ։ Քրիստի-
նէն պ̄ն տըվավ, ով մոլորեալներ՝ կուռ-
քերը սուտ են. ես ասկէց ետքը անոնք
պիտոր ձգեմ, միայն ք̄սի ա̄ն իմոյ զոհ
մատուցանեմ ։ Անոնք ոտքը ընկան, կա-
ղաչէին, չըլլայ որ ըսին հայրդ լսէ, քեզ-
ալ մեզալ կըկորսնցընէ ։ Աս զուրցելնի-
նի՝ հայրը ներս մտաւ, կուռքերուն զոհ
ըրավ. աղջիկները պատմեցին հօրը ինչ
որ ըսավ քրիստինէն ։

Հայրը կանչեց, աս ինչ է ըսավ դուստր

իմ որ քու վրադ կըլլեմ։ Քրիստոնեն ըսավ, իս մի կանչեր քու դուստրդ, այլ դուստր երկնաւորին ա̃յ։ Հայրը չիմացաւ աս խօսքս. կարծեց որ իրեն սուտ ա̃ծներուն համար կըսէ, ելավ գնաց։ Ան ատենը պարապ ատեն գտնալով քրիստոնեն, ա̃յ անունը կարդալով, քանի կուռք որ կային, ամմէննալ կոտրտեց աղքատներուն բաժնեց։ Քանի մը օրէն հայրը եկավ, երբոր իմացաւ ինչ ըրեր է իր աղջիկը ան կուռքերը, բարկանալէն հրամմեց իր սպասաւորներուն երեսին զարնել. աս հերիք չիսեպելով գաւազանով ծեծել տըվավ զինքը։ Այսը դէպ 'ի երկինքը վերցընելով ձայնը՝ անանկ օգնուի̃ կըխնդրէր ա̃ծմէ, համարձակ վար կըզարնէր կռապաշտներուն անմտութի̃ը, ինչպէս չէք համկընար կըսէր, որ մեկի մը մէկ օգնուի̃ չէն կընար ընել։

Աս խօսքերուս վրայ հայրը ալ աւելի կատղելով, վիզն ու ձեռվըներբ երկաթը զարնելով անանկ բանտը տանել տըվավ. ինքնալ տակնու վրայ եղած տուն եկաւ, կիսամեռ պառկեցաւ։ Աղջնալ իմացածին պէս՝ լալով աղալով գլուխը մոխիր ցանելով՝ անանկ բանտը վազեց. վայ որդեակ, աս ինչ ըրիր ըսավ, իս պիտոր մեռցընես, ես շատ աղաչելով կուռքերուն քեզ ծնայ. յիշէ՛ ան մայրական կաթն որ քեզ տըվերեմ, քեզ ձեռքովս մեծցուցեր պահերեմ. ինչ ըրիր հիմա.

Ինչպէս մոլորեցար․ ուրիշ ա՟ծ մը պաշ-
տել սկսար որ մենք չենք ճանչնար։
Բայց քո՟ին սէրը որ կըվառէր որբուհւոյն
սրտին մէջը՝ չէին կրնար մարել ոչ հայ-
րական և ոչ մայրական սէրը․ ան էր իր
փափագը որ քո՟ի համար մեռնի, հոգ-
ւոյն ս՟րյ զօրութիւը առնելով ըսաւ իր մօրը․
իս մի՛ կոչեր քուկին դուստրդ․ ես քո՟ի
դուստր եմ, ան է իմ հայրս մայրս․ ես
իս անոր եմ նուիրեր․ անիկայ իս լուսա-
ւորեց որ ձեր կուռքերուն ստութիւը ճանչ-
ցայ կտրտեցի․ դուքալ թէ որ կուզէք
ապրիլ՝ դարձէք, ճշմարիտ ա՟ծը պաշ-
տեցէք։

Ասոնք լսելով մայրը տրտմութեամբ տուն
դարձաւ պատմեց հօրը․ հայրը խիստ
սրդողելով՝ լաւ է ըսաւ որ ես անիկայ
տանջանքով սպաննեմ, քան թէ ամե-
նուն առջին ամօթով մնամ։ Առտուն
ատեանը (տիվանը) բերել տըվավ քրիս-
տինէն, բռնադատեց որ դառնայ․ տե-
սաւ որ իր մտքին վը՟ր ամուր կեցած է,
ծեծել տըվավ անչափ որ՝ ծեծօղները
յոգնեցան, բայց կոյսը փառք տալով ա՟յ
իր հօրը երեսին կուտար․ ինչպէս միտք
չես առներ կըսէր քո՟ի զօրութիւը, որ դա-
հիճները զարնելէն յոգնեցան, ես բան
մը չեղայ։

Հայրը հրամմեց կախել․ երկըթներով
քերել․ անանկ քերեցին որ՝ միսը կտոր
կտոր վրայէն գետինը կիյնար․ ինչեցը-

նելէն ետև՝ հօրը գաղանունը յիշեցը-
նել ուզելով կոյսը, գետինը ինկած ա-
րիւնաթաթախ մին կտորը իր երեսին
նետեց, կուզէր ըսալ մարմինս ուտել,
ա՛ռ ուզածդ ։ Բայց հայրը գութ չար-
ժելուն տեղը՝ աւելի կըկատղէր, նորէն
կըբռնադատէր որ կուռքերուն զոհէ ։
Ան տըղան քրիստոնէէն, քա՛ որ իմ
լուսաւորեց, հոգւով մարմնով կը-
փրկէ ։

Մէկ մեքենայ (չարխ) մը բերել տըւաւ
հայրը՝ վրան սուրեր գամուած . անոր վը՛ր
կապել տըւաւ կոյսը . գետիննաւ հրամ-
մեց կրակ վառել, անանկով պտըտցընել,
որ մէկ գիտցէն ան մեքենան ոսկորները
պիտոր կտրտէր, մէկալ գիտցէնալ կրա-
կը պիտոր երեր ։ Բայց կուսին աղօթ-
քովը կրակը մարեցաւ, ինքնալ մեքենայ-
ին վը՛ր կեցած բան մը չեղաւ ։ Ա՛ս հրաշ-
քէնալ չիշարժեցաւ հայրը, բանտը դնել
տըւաւ անօթի . ան գիշերը հրեշտակ
մըն երևնալով խոցերը ողջընցուց, կերա-
կուրալ տըւաւ ։

Այս հրաշքով կըպատահէր, հայրը մըն դէմ
մեռցընել կուզէր իր զաւակը . ան գի-
շերը հինգ հոգի խրկեց որ՝ աղջիկը
բռնեցին նաւու մը մէջ դրին, վիզը քար
կապելով ծովը ձգեցին . հրեշտակ մըն
ծովէնալ խալըսցընելով ցամաքը բերաւ ։
Երբոր հօրը իմացուցին, ամմէն հրաշքը
կախարդութ սեպելով բանտը խրկեց որ

վաղուան օրը սրով սպաննէ․ չիշարժեցաւ ամենեւին սրբուհիին խօսքերէն, որ նորէն երեսին կուտար իրեն խստասրտութիւնը, իրեն կուրութիւնը։ Բայց արդարութիւն այ առաւ իր վրէժը պատուհասելով․ նոյն գիշերը տանջուելով սատկեցաւ իր հայրը։

Բանի մը օրէն ուրիշ դատաւոր մը եկաւ․ ասիկայ ալ տեսնալով որ քրիստոնէն ամուր կեցերէ իր քրիստոնէութեան վրայ, նորէն տանջանքներ տըւաւ․ առաջ հրամմեց ծեծել, ետքը տաքցուցած երկաթ սոլերուն տակը դնել․ գլխուն մազերը ածիլել ու անանկ մերկ քաղքին մէջ ժուռ ածցընել․ ետքը կռատունը բերելով կբռնադատէր զոհ ընել։ Այսը ձեռքը երկինքը վերցընելով աղօթեց այ, ամմէն կուռքերը գետինը ինկան կոտրտեցան, տեսնօղները դարձան քրիստոնեայ եղան իրեք հազար հոգի չափ․ ան դատաւորնալ վախէն ամօթէն յանկարծամահ եղաւ։

Երրորդ դատաւոր եկաւ յուլիանոս անուն․ անալ տեսնալով որ քրիստոնէն չիթողուր քրիստոնէութիւնը՝ փուռը ձգել տըւաւ․ բայց կոյսը ողջ ելաւ փռնէն։ Իր հրաշքը կախարդութի սեպելով, թովիչներ կանչեց, անոնց ձեռքով օձեր խրկեց քրիստոնեայ վր․ բայց օձերը սրբուհոյն ոտքին տակը կըշարժէին, բան մը չէին ըներ․ դատաւորը կատղելով թովչին

հրամմէց որ՝ օձերուն վրայ կարդալով հրամմէ որ սպաննեն կոյսը · բայց օձերը թողչին վր̃ յարձըկելով մեռուցին ։ Նոյն ատենը քրիստոնէն գոհութ̃ տալով այ՝ հրամմէց օձերուն որ մէկի մը չդպչե- լով իրենց տեղը երթան · ինքը եկաւ մեռելին վր̃ աղօթք ընելով՝ յախն ա- ռունը տալով՝ ողջընցուց · աս մարդս ողջընցածին պէս դարձաւ քրիստոնեայ եղաւ ։

Ինչ հրաշքներ որ տեսաւ դատաւորը չարթընցաւ , նորէն կըստիպէր կոյսը որ կուռքերուն զոհ ընէ · ետքը հրամմէց ծիծերը կտրել տըլաւ · ուսկից արեան տեղը կաթ վազեց ։ Շատ կռապաշտներ աս հրաշքները տեսնալով ու լսելով քրիս- տոնեայ եղան , որոնցմէ օխտը հոգի մեծ պաթուններ էին ։ Դատաւորը տեսնա- լով որ՝ քրիստոնէին պատճառովը շատ հոգի քրիստոնեայ կըլլան , լեզուն կտրել տըլաւ որ ինչու կռապաշտութիւնը կանար- գէր իր լեզուովը · բայց կտրելէն ետեւ կոյսը յստակ խօսքով սկսաւ գոհանալ այ ու աղաչել , որ ասկէց ետքը քովը տա- նէ զինքը ։ Ձայն եկաւ երկինքէն , ով քրիստոնէ , եկուր , հանգչէ այն ուրախուե մէջը որ քուկին չարչարանքովդ վաստը- կեցար ։ Նոյն ատենը դատաւորը հրամ- մեց , երկու հոգի վրան վազեցին , կողը խոցելով նահատակեցին աս բազմաչար- չար կոյսը երանելի քրիստոնէն յամին իբր 110 ։

## Աեղրաշէ .

Աղքատ հրէայի մը զաւակ էր, մէկ գեղի մը մէջ՝ որ իրեք մղոն հեռու էր Ելեւթերուպոլիս քաղաքէ. բայց ինծ որ պզտիկուց ընտրեր էր աս տղան մեծ հայրապետ մը ըլլալու, ինչ գիտութիւններ որ գլուխը կու գային, հոգին՝ որ կըշտկէր, իր ուզած ճամփան կըբերէր .

Եպիփան երբոր տասը տարուան եղաւ՝ հայրը մեռաւ. իրեն որբեւարի մայրը աղքատուէ, տանջըւելով՝ իրենց էշը հանեց Եպիփան տղին տըլաւ որ ծախէ .

Ճամփան մէկ կրօնաւոր մը ասոր դէմը ելլալով՝ հարցուց ծախու է մի. Եպիփան այնչափ միամիտ տղայ էր որ ըսաւ. կըծախեմ, բայց գիտցիր որ շատ կատաղի էշ է, կըվախնամ առնողին վնաս մը չըտայ, եսալ ինչ առջին պարտական չըլլամ. Աս ըսելու չըլլայ՝ էշը անանկ մը զարկաւ Եպիփանին որ մարեցաւ. կրօնաւորը քիչ անունը տալով բժշկեց, էշն ալ սատկեցուց .

Ասկից արթննալով Եպիփան հարցուց ով է քու՝ որուն անունը տալով իս ըընացուցիր. կրօնաւորը տեղնիտեղը պատմեց. Եպիփաննալ միտք առաւ. Այց ան տանը մէկ հարուստ հրէայ մը իրեն բովը առաւ, որդեգիր ըրաւ Եպիփանը .

ամմէն հրէութեան բանը սորվեցընելով, խոստացաւ աղջիկը իրեն տալ. բայց քիչ մը անցաւ աղջիկնալ ան հրէայնալ մե-ռան. Եպիփանը եղաւ անոր ժառան-գը:

Օր մը տեսաւ որ աղքատ մը ողորմութիւն խնդրեց կրօնաւորէ. կրօնաւորը բան մը չունենալով՝ իր կապան հանեց տըւաւ որ ծախէ, մէյմընալ տեսաւ որ՝ ան կա-պային տեղը ձերմակ կապայ մը ինջաւ երկինքէն, կրօնաւորը ծանկեց: Ծնկից վախ մը ընկաւ իր սրտին մէջը. ան կրօ-նաւորին ետեւէն երթալով քրիստոնէու-թինալ կրօնաւորութինալ սորվեցաւ ան-կից, իր քրոջը հետ մէկ տեղ եկեղեցին մտաւ մկրտըվեցաւ, իր մայրը մեռած ըլլալով: Մտնալու ատենը հօղաթափ-ները ոտքէն ընկան. ան օրէն ինքնալ ուխտ ըրաւ միշտ բոպիկ շրջելու. մկրտը-վելու ատենը եպոր տեսաւ եպիփանու երեսը բոլորովին լուսաւորված, գլխին վրայալ պսակ մը զարմանալի:

Եպիփան մկրտըվելէն ետեւ իրեն քոյրը կուսանաց վանքը դրաւ, ինքնալ տասնը-վեց տարվան տղայ գնաց ան վանքը ուր էր 'որն Հիլարիոն՝ կրօնաւոր եղաւ: Երբ-որ ուխտի համար եէմ ու եգիպտոս քալել սկսաւ՝ հոն սատանան մեծ փոր-ձանք հանեց գլուխը, գնոստիկեան չար աղանդաւորները իր առջին հանելով, որոնք ուզելով իրենց քաշել ււ տղան,

տարին իրենց բնակարանը նստեցուցին, Հոն իրենց մոլորութ̃ե գրքերը տըվին որ կարդայ · երբոր եգիփտան աղէկ գիրք կարծելով կըկարդար միամտութ̃, իրենց չար կնիկները քովը խրկեցին · ասոնց վարմունքէն հասկընալով որ որոգայթի մէջ ընկած է, ամմէն օրտով մ̃յ ապաւինեցաւ, հաղիւ զինքը անարատ խալըցուց շնորհօքն ա̃յ ։

Գնաց եգիպտոս եղած եղ̃բներուն պատմեց · անոնքալ իմացածնին պէս՝ իրենց գլխաւորներէն ու Թսուն հոգի քշեցին · եգիփտաննալ վախէն շուտ մը իր տուջի կեցած վանքը դարձաւ, ա՛լ աւելի Ճգնութ̃ե տըվաւ զինքը · Նոյն հիլարիոնի վը̃ր նայելով՝ ինքնալ միայն հաց ու աղ կուտէր չափով երկու իրեք օր անգամ մը, ջուրնալ չափով կըխմէր ։ Վանքին մէջնալ ինչ աշխատութի որ կար, ամմէննալ ընելէն ետև՝ աղօթքէն կարգալէն չէր պակսէր ։

Սատանան որ հակառակ է ասանկներուն, գիշերվան աղօթքի ատենը ահռելի տեսիլքներով վախցընել սկսաւ, ետքը բազմութ̃ի վրան վազելով չարաչար ծեծեց · բայց եգիփտան յ̃ած ապաւինելով միշտ անփաս մնաց · ա̃ծալ աւելի շնորհքներով զինքը փառաւորեց, որով շատ հրաշքներ կընէր, անոնցմէ մէկքանին պատմենք ։

Երբոր անապատը կըփախչէր մարդու

գովասանք չփլանելու համար՝ Ճամփան քառասուն աւազակներէն մէկը որ միա-չէն էր՝ Թուրը ձեռքը առած անանկ վրան վազեց, բայց զարնելու ատենը աչ-քը բացվեցաւ . ամմչննալ ոտքը ընկան Թողուի խնդրելու . հետերնին տարին որ Ճամփան ուրիշ աւազակներէն պահեն . Մէյմընալ տեսան որ՝ Ճամփան անդադար խրատ կուտար իրենց աւազակուէ չընել՝ իրեք օր Ճամփայ ընելէն ետև Թողու-ցին գացին . մէկը միայն անոնցմէ իրեն աշկերտելով մկրտըվեցաւ , յոհաննէս անուն առնելով նոյն վանքը կրօնաւոր եղաւ . աս է որ՝ եպիփանին վարքը գրեց ։

Անգամ մը դիւահար մը բժշկեց եպի-փան , դեւը անկէց ելաւ՝ պարսից Թ̃գրին աղջկանը մտաւ . չեմ ելլար կաղաղակէր՝ մինչվան որ չիգայ եպիփան ։ Թ̃գրին մար-դիկը եկան տեսան ու գոց խուցի մը մէջ աղօթք ընելէն չիդադրիր , մէկը ա-նոնցմէ Թուրը քաշեց դուռը կուզէր կոտ-րել , բայց ձեռքը գօսացաւ . եպիփան դուրս ելաւ ձեռքը ողջընցուց , վերջի-չեալ յոհաննէսին հետ մէկ տեղ երԹա-լով Թ̃գրին աղջիկը բժշկեց . մոգպետը աս հրաշքը կախարդուէ սեպելով եպի-փանը կախարդ կանչեց . անոր համար պատժըվելով պապանձեցաւ ։ Եպիփան անալ ըռընացուց . մէկ երիտասարդ մը յարոյց . ետքը իր անապատը գալով հոն

Ջուր մը ըղձեցուց, գազանները հալա-
ծեց, առիւծ մը սատկեցուց։

Ան անապատին մէջ յիսուն չափ աշ-
կերտ ունեցաւ, որոնք ամենքնալ աղէկ
կըթեց. մէկ աշկերտմընալ հռոմայէն
իրեն եկաւ, որ երեւելի մարդու տղայ
էր բայց գիւահար էր եղած. ասիկայ
երազին մէջ կըտեսնար եպիփանը որ կը-
սէր իրեն. թէ որ ինծի խօսք տաս՝ անա-
պատը գալու ըլլաս ինծի աշկերտելով՝
ես քեզ կըռընտընեմ. անալ խօսք տը-
ւածին պէս ողջընցած արթընցաւ. ա-
նանկով քովը եկաւ, աշակերտ եղաւ։

Մէկ անուանի Ճարտասան ու փիլիսո-
փայ մը կար ուրՓայ քր̃քը կռապաշտ.
իրեն անուննալ եպիփան. ասիկայ լսե-
լով 'սըյն եպիփանու մեծ անունը՝ քովը
եկաւ. շատ խօրաթեց հետը՝ շատ հա-
կաճառեցաւ տարիի մը չափ, բայց չի-
կըրցաւ քըխստոնէութի ը̃ունիլ։ Օր մը
'սըյն քովը գիւահար մը բերին անանկ
կատաղի՝ որ վաթսուն հոգի հազիւ կըր-
նային զսպել երկաթներով կապելով.
'սըն եպիփան քովի անունը տալով իրեք
հեղ վրան խաչակնքելով բուժեց։ Ան
տեսածին պէս փիլիսոփայ եպիփանը շուտ
մը քըխստոնեայ եղաւ. քահանայ ձեռ-
նադրըւեցաւ, կրօնաւոր ըլլալով շատ
աշկերտներ ունեցաւ, երեւելի մարդ մը
եղաւ։

Մնաց որ՝ 'սըն եպիփան եկօղ կայօղէն

ձանձրանալով. յոհաննէս աչքերը իր հետը առնելով, դուրս ելավ անապատէն, եէմու խոքէնոտէրին քալեց, ուր անկիղաս հրէայն դարձուց ։ Տեղ մը տեսաւ որ հերաքս անուանով կրօնաւոր մը ծուռ վղպուն կընէր՝ անինկայ պապանձեցուց. ինքը չիտակ վղպութիւն սկսաւ ընել. ետքը հերաքսին լեզունալ բացաւ ։

Մերին թեբայիդի մէջ բուբիդ տեղը օխտը տարի նստաւ. հանալ սկսան մարդիկ գալ. մէջերնէն մէկ փիլիսոփայ մը եկավ եւդեմոն ըսված, որուն հետ հակաճառելէն ետև՝ իր միաչէն տղին աչք տըլավ. ատ տեսնալով եւդեմոն քրիստոնեայ եղավ ։ Մյրբոր իր անապատը դարձաւ՝ չորութիւն ըլլալով հոն, ամմէն եղբարք եկան իրեն աղաչեցին որ աղօթէ, աղաչէ ա̃յ որ անձրև գայ. տ̃րն եպիփան աղօթքի կեցածին պէս՝ իրեք օր անանկ անձրև եկավ, որ պէտք եղավ նորէն աղօթք ընելով դադրեցընէ ։

Փիւնիկեցիք զինքը կանչեցին ե̃պս ըսելու իրենց վրայ՝ տ̃րն եպիփան փախաւ, պափոս քաղաքը եկաւ որ խըպըրըսին մէջն է. հոն գտաւ իլարիոնը, որ խըրատ տըլավ եպիփանին թէ սաղամինա քաղաքը երթայ. աստանկ հաճոյ է ըսավ ա̃յ. բայց տ̃րն եպիփան որ փառքէն կըփախչէր՝ հոն քիգնաց, նաւ մտաւ որ ասկաղոն երթայ. փառքէ փախչիլ ուզեց, այլ ա̃յ ձեռքէն

չիկրցաւ փախչիլ․ Ծովուն մէջ անանկ մէկ ալեկոծում մը հանեց որ իր չուզելովը հարկ եղաւ սաղամինա մնալ։ Եպիսկոպոսներ ժողվըվէրէին հոն, մէկ էնոս մը ձեռնադրել կըփնտռէին ան քաղքին վր̄․ Մէջերնէն պապ անունով էնոսը կըսէր որ՝ եպիփանն է յարմար, ինչպէս որ ա̄ծ ինծի ցըցուց․ աս ըսելով գնաց գտաւ, եկեղեցին բերելով՝ առաջ սարկաւագ ու քահանայ ձեռնադրեցին ետքը էնոս։

Ան եպիփան կուլար որ իր առանձնութիւը կորսնցուց, բայց պապ էնոսը կըմխիթարէր զինքը՝ յիշեցընելով իրեն ա̄յ կարգաւորութիւը․ անկէց ետքը անդադար խրատելու քարոզելու հետ եղաւ, շատ վանքեր շինեց, ժամերու մէջ բարեկարգութի խօթեց, աղքատներուն վր̄ անչափ գութ ցըցուց՝ որ ատեն ատեն եկեղեցնայ սպասներնալ կըծախէր, աղքատաց կըբաժնէր․ շատ բանալ հրաշքով կըկատարէր։

Նջի օրը երբոր խորանը ելաւ պատարագելու՝ յայտնի տեսաւ ս̄բ խորհուրդին վր̄ հոգւոյն ս̄րյ շնորհաց նշանը․ անկից ետև քանի անգամալ որ կըպատարագէր նոյն յայտնութիւը կըտեսնար։ Ի՛նչ դժուարին բան որ ըլլար՝ միշտ երեսին վր̄ ընելով կըխնդրէր ա̄յ իրեն ցըցընել աղէկը․ ա̄ծալ իրեն ձայն կուտար ըրէ կամ մընէր։ Նանկ ա̄յ հարցընելով

մէկ մեծ եկեղեցի մը շինեց սաղամինա, որովհետեւ առջինը պզտիկ կուգար ժողովրդեան ։ Պորակոն իշխանին տղան բժշկեց, իշխաննալ ուրիշ հիւանդուէ բուընտցուց, անոր համար ամմէն տնովը դարձաւ քրիստոնեայ եղաւ ։

Ասանկալ սիւնեսիոս իշխանին մեռած տղան յարուցանելով դարձուց իշխանը քրիստոնեայ ըրաւ ․ ինչպէս մէկ հրեայմընալ դարձուց խասհակ անուն գիտուն մարդ ։ Նըրբոր ստանպօլ գնաց՝ եւդոքսիա թագուհիին շատ խրատ տըվաւ ․ բայց տեսնալով որ թագուհին կըպնդեր կուզեր վերջապէս որ ոսկեբերանը աթոռէն ձգէ, ան ատենը՝ որն եպիփան չուզելով խառնըվիլ՝ նաւ մտաւ որ իր տեղը դառնայ ․ նաւուն մէջը հիվընտցաւ ․ գուշակեց որ փոթորիկ պիտոր ըլլայ ․ անանկով հոգին աւանդեց աս զարմանալի հայրապետը 115 տարվան ․ յամին 403 ․ որուն վարքը պզտիկուց սկսեալ՝ եղաւ բոլոր հրաշք մը, մեռած ատեննալ մընցուց հրաշքով մը՝ որ հոգին աւանդելուն պէս փոթորիկը խաղաղցուց ։

Տարսոն քաղաքը ծնած էր անիկայ որ հիմա Թերսիս կըսուի՝ իրեն էյալէթը հին ատենը Կիլիկիա, հիմա ատանա կըսւի · Դիոկղետիանոս ու Մաքսիմիանոս կայսերաց օրը · քրիստոնեայ ծնողաց զաւակ, ազնուական ու հարուստ · ինքն ալ մէկ շնորհալի գեղեցիկ երեսով երիտասարդ մը · դուրսի աղւորուէ հետ՝ խելքն ալ զարմանալի ։ Ինչ որ պէտք է բժըշկուէ արհեստին ամէն բան կատարեալ գիտէր պզտիկուցմէ · բայց բժշկուէ արհեստը աւելի աղքատներու վ̅ր կըբանեցըներ, ամէննալ ձրի բժշկելով · որովհետև աս ՛որս ինչպէս գիտուք՝ ասանկալ ամէն կերպ առաքինուէ պզտիկուցմէ զարդարուած էր, բայց իրեն եղբայրսիրուէ առաքինութիր ամէնէն աւելի կըփայլէր ։

Իրեն ըրած բժշկութիւններնալ աւելի հաւատքովը կընէր քան անունը կարդալով, քան թէ դեղերով · մարմիննին բժշկելը հերիք չսեպելով՝ հոգիներնալ կընայեր որ բժշկէ ։ Ան սաստիկ հալածանաց ատենը մէկ դի ձգելով վախը, Դիոմիդէս ամէնուն կերթար կըյորդորէր ամուր կենալ ճշմարիտ հաւատքին մէջը, չվախնալ մեռնելէն, համարձակ խոստովանիլ Քս̅, ոչինչ սեպել աս անցաւոր աշխարհս, յաւիտենական կեան-

քին միայն սպասել ։

Տարօնին երկրին մէջ ասանկ հոգևոր ու մարմնաւոր բժշկութի ու բարիք ընելով՝ ամենուն հասնելով՝ մեյմըն ալ լսեց որ բիւզանդիա գաւառին մէջ աւելի սաստիկ է հալածանքը, հոն շատ քրիստոնեայ կըբռնեն կըչարչարեն. աս էյալէթը հիմա կըսվի գօճա իլի. խիւտավէնտկեար սանճաղի. աս բանս լսածին պէս վազեց եկաւ անոր մայր քաղաքը նիկիա, որ հիմա չինիգլիք կըսվի ։ Ու քաղաքս նման տեսնալով իր տարօնքաղաքին՝ ուզեց հոն նստիլ. սկսաւ պտըտիլ բժշկութի ընելով, ամեննալ զարմացընելով. որովհետև մէկ շնորհք մը ունէր՝ որ ինչ բանի փակչէր՝ հաւատքով ընելուն համար առաջ կըտանէր. բայց իր միտքը փափագը աւելի հոգևոր բժըշկութե վրայ ըլլալով՝ բռնըված քրիստոնէներուն քովը կըպտըտէր. ըստակ տալով բանտապաններուն՝ բանտերը կըմտնար, ամենուն ալ խրատ կուտար տանջանքներուն համբերել. խօսքերնին կըհոգար կըուրախացընէր ։ Ու քաշածնիդ ոչինչ է, անցաւոր է կըսէր. վարձքերնիդ յաւիտենական. յիշեցէք առջի մարտիրոսներուն քաշածները. իրենց քաշածները անցան գացին, բայց իրենք հիմա կըվայելեն արքայութիը. ասանկ խօսքերով ամէնուն սիրտը կըվառէր. ամէն քրիստոնեները կըցանկային հիմա յունի խա-

չակից ըլլան որ՝ ետքնալ քոլին փառակից ըլլան ։

Նոր ամմէն ըսածներն ու ըրածները գացին մատնիչները պատմեցին մաքսիմիանոսի, թէ ինչպէս դիոմիդէս մէյմը վարպետ բժիշկ՝ բայց կուռքերը վար կըզարնէր, կուռքերուն տեղը մէկ խաչելեալ մարդ մը կըպաշտէր. ան է ա՜ծ կըսէր, ուրիշներուն կըսորվեցընէր ։ Մաքսիմիանոս առաջալ լսած ըլլալով սաստիկ ամբաստանութի՞ իր վ՞ր, սուտ խուլ կըլլար գիտնալով իրեն երեւելի բժիշկ ըլլալը. հիմա չի կրնալով դիմանալ՝ մարդիկ խրկեց որ բռնեն իզնիմիտ բերեն, ուր կընստէր ան ատենը մաքսիմիանոս ։

Մէն դիոմիդէս իր բռնըվիլը բանի տեղ չիսեպելով՝ երկու բանի վ՞ր խիստ հոգ կընէր կըմաշէր. մէյմը՝ չինիզլիկ եղող քրիստոնեայներուն վ՞ր. չըլլայ թէ իրեն հեռընալովը՝ մէջերնէն մէկը տանջանքին չիդիմանալով հաւատքը ուրանայ. մէյմընալ՝ չըլլայ թէ մաքսիմիանոս իր դին քաշել ուզելով՝ իրեն խնայէր, նահատակութե՞ պսակէն զինքը զրկէր, որուն անչափ փափագ ունէր ։ Նոնք մտածելով խիստ կըտրտմէր իր վրայ. մինչ որ բռնօղներուն բերնէն լսեց, թէ թ՞րը քեզի պէս աղվոր երիտասարդ աղնուական պիտվական մարդ մի վախնար չիկորսնցըներ ։

Անոնք աս խօսքերս կըսէին զինքը մխի-թարելու համար, բայց մէյմէկ խոց կըլ-լային երանելւոյն համար. որուն սիրտը վառված էր ա՟ծային սիրով, կըսպասէր կըփափագէր արիւնը թափել ա՟յ հա-մար ։ Ճամփան երբոր քիչ մը հեռըցեր-էին քաղքէն՝ աղաչեց տանօղներուն՝ զին-քը ձիէն իջեցընել, քիչ մը թողուլ որ աղօթք ընէ. երբոր թող տըվին՝ ծունկ չոքելով բարձր ձայնով ըսավ ա՟յ ։

Դուն իս ստեղծեցիր տ՟ր ա՟ծ. աս կեր-պարանքը դուն տըվիր ինծի. եսալ քեզի խօսք տըվի աս գեղեցկու՟ի պատկերիս անարատ պահելով քեզի տամ, իմ ստեղ-ծողիս ընծայեմ. ես ժմկաւոր մահուա-նէ չեմ վախնար, այլ պատրաստ եմ կեանքս տալ. հիմա ինչպէս որ կուզես անանկ կատարէ քու կամքդ իմ վրաս. շնորհակալ կըլլամ թէ որ խոստովանող անուան զիս արժանի ընես. քեզի կը-յանձնեմ իմ հոգւոյս պահպանութիը, ո՟ր զի նորէն մարմնոյս հետ միանալով, անա-պական մարմին առնելով, քուկին սրբե-րուդ հետ մէկ տեղ արժանի ըլլամ միշտ քեզ փառաւորելու ։ Աս ըսելով զինքը խաչակնքեց, հոն հոգին աւանդեց յա-մին իբր 303 ։

Տանօղ զինուորները կըզարմանային որ աղօթքին ձայնը դադրելէն ետև ինչու չիգար. շատ սպասելէն ետև ելան քովը գացին. աւաղ կարծեցին որ քուն է,

մէյմընալ տեսնալով որ մեռած է , ձեռ-
քի կապանքները ինքիրմէ քակուած · զար-
մացան ու վախցան , թէ Մաքսիմիանոսը
դուք անիկայ փախուցիք ըսելով չըլլայ
թէ զիրենք պատժէ , ասոր վրայ խորհուրդ
ընելով գլուխը կտրեցին , անանկ Մաքսի-
միանոսի առջին տարին · բայց կտրօղ զի-
նուորները կուրցան ։

Մաքսիմիանոս մինակ մեռելուն գլուխը
տեսնալով զարմացաւ մնաց · խիստ ցա-
ւեցաւ որ չիկրցաւ ողջ տեսնալու , որով-
հետեւ լսեր էր անոր աղւորութիւն ու խել-
քը՝ կուզէր կենդանի տեսնալ · նոյն բե-
րօղներուն ապսպրեց որ գլուխը մարմնոյն
քով տանին , գերեզմանի մը մէջ դնեն ,
որ անանկ երեւելի մարդուն յիշատակը
չիկորսուի ։ Երբոր ատոնք տարին մարմ-
նոյն քովը դրին , նոյն ատենը իսկոյն աչ-
վընին բացվեցաւ · տեսան որ ագռաւ մը
քովը կեցած թող չէր իտար ուրիշ թըռ-
չուններուն մօտիկնալ՝ որ մարմնոյն ան
իրեք օրը՝ որ ձգած կեցած էր հոն ։

Բայց ասկէց երեւելի հրաշքը ան եղաւ
որ՝ իրենց հոգեւոր աչքնալ բացվելով
քրիստոնեայ եղան · ուրիշներուն ալ ան-
երկիւղ քարոզեցին Ճշմարիտ հաւատ-
քը ։ Իսկ նոյն մարմինը մէկ հարուստ
խաթուն մը պատրոնիա անունով , շատ
ըստակ տալով՝ առաւ , անուշ եղերով օ-
ծելով պատշաճաւոր տեղ մը դրաւ · ինք-
նալ իսկոյն բժշկըվեցաւ իր հինցած ցա-

ւէն ․ ուսկից շատոնց էր որ կըտանջըւէր, չէր կրնար բժիշկներուն ձեռքով ողջու̃ն մը գտնալ ։ Երբոր մեծն կոստանդիանոս թ̃ր նստաւ, աս նոյն մարմինը իրեք տեղ բաժնելով ․ մէյմէկ եկեղեցի շինել տըւաւ վրանին ․ մէկը նիկիա որ է չինիզլիք ․ մէկը նիկոմիդիա որ է իզնիմիտ ․ մէկալն ալ սաանպօլ, տօնել հրամելով օգոստոսի 16 ։

---

## ՅՈՒԼԻԱՆԷ ԿՈՅՍ

Ափրիկանոսի մեծ իշխանի մը աղջիկ էր իզնիմիտ քաղքին մէջ, մաքսիմիանոս կայսեր ատենը ․ իր ծնօղքը կռապաշտ ըլլալով յուլիանէն իրը տարվան նշանեցին եղեւսիոսի հետ՝ որ կայսեր խորհըրդակից էր, ու սիրելի բարեկամ իրեն ։ Բայց ա̃ծ պզտիկուցմէ ընտրած ունենալով յուլիանէն, իր սրտին մէջը մէկ սէր մը անկերեր ճշմարիտ ա̃ծը իմանալու ․ կըտեսնար արեւը, աստղերը, ուրիշ արարածները, իր մտքին մէկ հարցմունք մը կիմանար ներսէն, ո՞վ է արդեօք ստեղծեր ասոնք ․ ինչպէս կըլլայ կըսէր ասոնց պտըտիլը, ինչէն կըլլան հովը, ծովը, կրակը, ո՞վ է ասոնց զօրու̃ն տըւօղը ․ աս մտածմունքներէն կիմանար որ իրենց կուռքերը չեն ասոնք ստեղծօղը ․ ասոնց

զօրութի՛ն տըվօղը · իրենց կուռքերնին փայտ ու քար էին · փայտ ու քարը ինչպէս կրնան աս երկնային բաները ստեղծել կըսէր ։ Նոյնք մտածօղը որովհետեւ ինքիրմէնալ կիմանայ ասոնց արարիչը , Ճշմարիտ Աճը՝ պօղոս առաքելոյն բածին պէս · ասանկ պատահեցաւ ըման աս կուսխս , որ ինքը քիչ մը իմանալով կուզէր քրիստոնէիցմէ իմանալ աղէկը ։ Սօրմէն մինակ հրաման առնելով՝ հօրմէն գաղտուկ՝ քրիստոնէներուն քովը գնաց · անոնցմէ տեղնիտեղը Ճշմարտութիը հասկըցաւ ։ Նոյն օրէն իր տարակոյսը փարատեցաւ , սիրտը բացվեցաւ , մէկ Աճային սէր մը վառեցաւ իր սրտին մէջը · ամմէն որ կըհառաչէր ,ախ կըսէր · ես ամմէն երկրաւոր բաներէն ետ կըկենամ , միայն թէ ան երկնաւոր արարչին հաճոյ ըլլայի , մէյմը երեսը տեսնայի ։ Նս կըսէր , անդադարալ աղօթքի հետ կըլլար ,պաք կըբռնէր , ամմէն հանդըստուէ զինքը կըզրկէր · միայն Աճաշունչը կարդալ , վկայներուն բամծները սորվիլ կըջանար , որ քրիստոնէից ժողովներուն մէջը կըքարոզէին ։

Նրբոր աս սրբուհիս ասանկ երկնաւոր մտածականներով կըմենծնար , իրեն նըշանածը ելեւսիոս կռապաշտ ըլլալով՝ բոլորովին երկրաւորը կըմտածէր ։ Իրենց ծնօղքը խօսք կապած էին տասնըութը տարվան որ ըլլայ՝ հարս առնեն զինքը ·

հիմա եկեր մօտիկցէրէին օրերը լմննա-
լու՝ մարդ մարդու վրայ կըխրկէր զինքը
առնելու, հարսնիք ընելու ։ Յուլիանէ
կոյսը որ բոլորովին երկնաւոր հարսնի-
քին կըբաղձար, մտածեց ինչ ընէ որ՝ աս
մարմնաւոր փեսան իրմէ հեռացընէ, փե-
սին ականջը ձգել տըւաւ որ՝ ինչվան ե-
պարքոսութի̄ (փաշայութի̄) մը ձեռք չիձգէ՝
իրեն հարս չըլլար ։

Ելևսիոս որ գիտէր աս կուսին աննման
գեղեցկութի̄ը, գիտէր իրեն խելքն ու
շնորհալի պարկեշտութի̄ը, բան չիթողուց
որ չընէ. շատ ոսկի արծաթ տըւաւ ե-
պարքոսութի̄ մը ծախու առաւ. մէկէն
յուլիանեայ իմացընելով՝ շուտ մը հարս-
նիքը ընել կարտորցընէր ։ Կոյսը տեսնա-
լով որ աս բանովսալ չիկրցաւ խափանել
ան մարմնաւոր հարսնիքը որ իրեն ատե-
լի էր, յայտնի բացաւ միտքը, հասկը-
ցուց որ՝ ինչվան քրիստոնէութի̄ը չը̄ունիս,
ես չեմ կրնար քեզի հարս ըլլալ ։

Աս բանս լսածին պէս ելևսիոս տակնու-
վրայ եղաւ, գնաց աղջըկանը հօրը պատ-
մեց, հայրնալ շփոթելով կանչեց աղջի-
կը, առաջ անուշութենով խօսեցաւ,
պատճառը հարցուց. երբոր յուլիանէն
նոյն բանը կրկնեց, հայրը սրդողելով
թէ որ կուռքերուն չիզոհես ըսաւ՝ գա-
զաններուն առջին քեզ կըձգեմ. աս ը-
սելով բանտը խրկեց ։ Նոքը իր առջին
բերել տալով՝ տեսաւ որ նոյն միտքին վը̄

է, չարաչար ծեծեց, Եւեսիոսին ձեռքը մատնեց, որ ինչ կուզէ ընէ ։

Եւեսիոս վրան խիստ սրդողած ըլլալով զինքը անարգելուն համար՝ շատ բան պիտոր ընէր. բայց երբոր տառանին (տիվանին) մէջը տեսաւ իրեն գեղեցկութիւնը որ ամմէնուն աչքը կըզարնէր, մէկէն ինջաւ իր բարկութիւնը ։ Ով հանճարեղ կոյս ըսավ, ասանկ հրաշալի աղվորութիւնդ մավրեր՝ խօսքիդ վրայ կենալով քեզ տանջանքի տալով. Թէոր չես ալ ուզեր կուռքերուն զոհել, ինծի հետ կարգըվէ քեզ Թագուհիի պէս պիտոր մեծցընեմ ։ Պատասխանին տըվավ յուլիանէն. ինչվան որ քրիստոնեայ չըլլաս՝ ո՛չ մենծութիւն, ո՛չ տանջանք չեն կրնան իմ միտքս փոխել ։ Եւեսիոս ըսավ անաւ կընէի, բայց Թագաւորէն կըվախնամ ։ Տէ՛ս հիմա ըսավ յուլիանէն, Թէ որ դուն աս Թագաւորէն կըվախնաս, որ միայն մարմնոյն կիշխէ. ես ինչպէս չիվախնամ երկնաւոր Թագաւորէն որ մարմնոյսալ հոգւոյսալ կիշխէ, անոր համար ի՛նչ տանջանք որ ուզես տուր, ես քու կամքդ չեմ կատարեր. քուկին ընկերութիւնդ դժոխք է իմ առջիս ։

Աս խօսքերս լսելով Եւեսիոս իր սէրը փոխեց գազանական բարկութիւն, չորս դիացէն գետնին վրայ ձիգ կապել հրամմեց երկան ատեն՝ անանկ ծեծել տըվավ որ արիւնը գետի պէս կըվազէր. բայց կոյսը Աստուծոյ սիրովը վառված ըլլալով՝ ուրախութ

կըքաշէր ան տանջանքը, աղօթք ընելով օգնութիւն կըխնդրէր. Ինչուոր կըհարցընէին այն կուտար ։ Նորէն կըյորդորէր ելեւսիոս կուռքերուն զոհելու. յուլիանէն ալ նորէն կըմերժէր անոր յորդորն ու տըված վախը ։

Ան ատենը գլխուն մազերէն կախել տըւաւ ելեւսիոս, առտըւընէ ինչւան իրիկուն անանկ թողուց. գլխուն մորթը զատվեցաւ, աչվըները ընքվինները այլայլեցան. ետքը բանտը դնել տըւաւ. քանի մը օրէն բերել տալով կըյորդորէր կուռքերուն զոհելու. մեղք ես ըսաւ յուլիանէ, սիրտս վրադ կըխըշխըշայ, թգ̃րայ հրամանն է քեզ տանջանքով պիտոր մեռցընեմ. մորիդ վրայ ամուր կենալովդ աղվորութիդ մի կորսնցըներ. հօրդ մօրդ ծերութինալ ախով վախով գերեզմանը մի իրկեր. բայց թէ որ կուռքերը պաշտես, կամքս կատարես՝ բիւր բարիք քեզի պիտոր ընեմ. անանկ մեծութիւն քեզ հասցընեմ որ՝ մէկի մը չէ եղած ։ Կոյսը պ̃խն տըւաւ. մի յուսար որ քուկին ասանկ խօսքերովդ իմ միտքս պիտոր փոխես. ես անանկ մեծութէ հասայ որ՝ արծաթն ու ոսկին անոր քովը բան մը չեն. անանկ փեսայ գտայ որ՝ երկինք երկիր ոչինչ են անոր քով ։

Աս խօսքերուս վր̃ շատ սրդողելով ելեւսիոս, հրամմեց երկաթներ տաքցընել, կողերուն ձեռվըներուն ծնկվըներուն վր̃

կապել, անանկ բանտը դնել որ հոն մեռնի ։ Լոյսը հոն աղօթքի կենալով կըսէր ․ Տէր իմ Յս ․ ես քեզ պզտիկուցմէ սիրեցի, քեզ ընտրեցի, քեզի ընկայ, դուն ինծի առաջնորդելով իս կռապաշտութ̃է խաւարէն դուրս հանեցիր ․ այսչափ բարիք որ ըրիր ինծի, հիմա մի հեռընար ինծմէն, այլ շնորհէ որ բոլոր մարմինս քեզի զոհ ընեմ․ ինչպէս որ դունալ բոլորովին քեզ մեզի տըվիր, արիւնդ թափեցիր ։

Ա՛ս ըսելէնին՝ սատանան որ նախանձէն վրան կոխար՝ հրեշտակի կերպարանք առած իրեն երեւցաւ․ յորդորեց որ քիչ մը ատեն զոհ ըրէ կուռքերուն, ետքը թող տուր․ Յուլիանէն աս խօսքս լսելով, դուն ով ես հարցուց ․ սատանան ըսաւ ես եմ հրեշտակ ա̃յ, ա̃ծ իս խրկեց որ աս խօսքս քեզի ըսեմ ։ Յուլիանէն որ կռապաշտութ̃է նոր դարձած ըլլալով չէր լսած ինչ որոգայթներ կըբանեցընէ սատանան, շփոթութ̃ի մը եկաւ վրան, տեսնալով տեսքը հրեշտակի, բայց խօսքը թշնամւոյն ․ ան ատենը աչվըները արցունքով լեցուցած աղաղակեց ա̃յ՝ որ իրեն յայտնէ ով էր խօսողը ։ Նոյն ժամն մը լսեց երկինքէն, զօրացիր ով Յուլիանէ, ես քեզի հետ եմ, քեզի իշխանութ̃ի կուտամ․ դուն բռնէ սա երևցողը, զուրցընել տուր ․ թող ինքը ըսէ որ ով է ․ աս ձայնին հետ մէկ տեղ հրեշ-

տակները վար ինջան, երկաթները վրայէն քակվեցան, իր խոցերը ըռընտցան, բըռնել տըվլին ան հրեշտակ ձեւացածը. կոյսնալ հրամմեց որ ըսէ, ով էր ինքը։ Անիկայ աներեւոյթ զօրութ̃ կապվեցաւ. իրեն սատանայ ըլլալը երեւան հանելէն ետեւ՝ իրեն պատիժ՝ մէկիկ մէկիկ խոստովանեցաւ ինչ չարիք որ ըրերէ առաջուցմէ ինչվան ետքը՝ եւան խաբելը, կայէնին եղբայրասպան ըլլալը, ջրհեղեղին, աշտարակին ատենի եղած մեղքերը, ետեւէ ետեւ ինչվան յուդային մատնելը զուրցեց խոստովանեցաւ որ՝ ամմէննալ ես ըներ տըվերեմ։ Անոնք զուրցելու ատենը անանկ կապված էր սատանան՝ որ չէր կրնար շարժիլ. կոյսը կրնախատէր, կըզարնէր, անիկայ խիստ տանջվելէն վայ կուտար իրեն որ՝ ինչպէս մէկ աղջկանէմը բանըված կապկըպած կեցերէր, կաղաչէր որ թող տայ զինքը։ Ան ատենը եւլեսիոսին ծառայները վրայ հասնելով առին տարին յուլիանէն իր առջին. եւլեսիոս տեսնալով զինքը ողջառողջ իր առջի գեղեցկուէը մէջ՝ կըզարմանար, կըհարցընէր. ինչ արհեստ ունիս որ՝ տանջանքները քեզի մէկ վնասմը չեն իտար։ Պ̃ն տըվավ կոյսը. աս բանս մարդու ձեռքով արհեստով չեղավ, այլ իմ այ̃ զօրութ̃ը. որ ոչ միայն քեզ, այլ եւ քու հայրդ սատանան իմ ձեռքովս ամօթ ըրավ. ինծի արքայու֊

թէ դուռը բացաւ, քեզի որ կուռքերը կըպաշտես՝ չմարուելու կրակ պատրաստեց ։

Ըս խօսքերս զինքը վախցընելու՝ ճշմարտութիւնը ճանչնալուն տեղը՝ աւելի կատղեցաւ Եղեւսիոս. որովհետեւ դուն չճանչցար ըսաւ մեր կուռքերուն շնորհքը՝ որ քեզ կենդանի պահեցին, առջի գեղեցկութիդ տուին. չճանչնալէն ետեւ նաեւ կրակ կըսպառնաս մեզի, ես քեզ հիմա կրակին մէջ ձգել տամ։ Նայիմ քու խաչելեալ ՅԾդ քեզ ինչպէս պիտոր փրկէ ։ Նորոր մեծ կրակ մը վառեցին. սրբուհին յուլիանէ շատ աղօթք ընելով՝ երեսը խաչակնքելով՝ ինքիրմէ կրակին մէջը մտաւ. շուտ մը կրակը սրբուհւոյն վր կամարաձեւ կեցաւ. աչքէն վազած արցունքնալ կըրակը մարել տըվաւ ։

Ըս տեսնալով հինգհարիւր հոգիի չափ դարձան քրիստոնեայ եղան. ասանկալ հարիւր երսուն կնիկ մարդ. Եղեւսիոս աղջիկները ամմէննալ սրով կտրել տըվաւ. իսկ կնիկները զանազան տանջանքովնահատակեց ։ Իր վրէժնալ յուլիանէէն առնել ուզելով՝ մէկ պղնձէ աման մը տաքցընել տըվաւ, զիփթ, եղ, ղուրշին, իրենց զոհերուն ճարպնալ մէջը ձգելով կրակը բռնկցուց. լման որ մէջի ձգածները սկսան եփ ելլալ, բերին սրբուհին որ մէջը ձգեն. անիկայ նորէն երեսը խաչակնքելով՝ երկան աղօթք ը-

նելով՝ ինքնիրմէ մէջը մնաց ։ Ինքը անվը-
նաս անարատ մնաց · իսկ ամանը յան-
կարծ պատռելով մէջինը թափեցաւ ·
քովի կեցած դահիճներուն վր̃ կրակ
ցաթկեցընելով շատ մարդ կորսնցուց ։
Արեւսիոս տեսնալով որ՝ ինչ տանջանք որ
տըւաւ սրբուհւոյն չիկրցաւ վնասել յու-
սահատեցաւ , վճիռ հանեց որ գլխատ-
վի ։ Սրբոր Ճամփայ ելաւ սրբուհին գըլ-
խատվելուն տեղը երթալու , բաղմուի
ժողովրդեան հետը կերթային · ամէն-
նալ կըորդորեր սրբուհին ըսելով · աս-
կեց աւելի մեծ շնորհք մեծ պարծանք
չիկայ մարդուս , ինչպէս որ ա̃յ համար
մեռնիլ , Ճշմարիտ հաւատքին համար
արիւն թափել ։

Սրբոր տեղը հասաւ , երկան ատեն ա-
ղօթքի կեցաւ ։ Տ̃ր ա̃ծ՝ ըսաւ · ասկէց
աւելի մենծուն չիկայ ինծի՝ ինչպէս քու-
կին սէրդ · ան սէրն է որ՝ ինծի կանուշ-
ցընէ ամէն տանջանքը · ան սէրն է որ
սիրտս կըվառէ օր մը առաջ քու երեսդ
տեսնալու · քուկին տեսուինդ աւելի է
իմ առջիս՝ քան թէ բոլոր աշխըրքիս
թ̃գըուիը ։ Իմ տեղս հրեշտակները քեզ
օրհնեն՝ որ ասանկ նահատակութ̃է իս
արժանի ըրիր · հիմա բաց ո̃բ հարսնա-
րանդ · ո̃բէրուդ մէջը իս ը̃ունէ , որ քե-
զի հարս եղայ պղտիկութէս ։ Ըսաւ որ
իմ անունս յիշէ՝ խնդիրքնին կատարէ ·
ինչ ցաւ ինչ նեղուն որ ունենան՝ փրկէ ։

Աս ըսալ. երեսը խաչ հանեց. 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ ըսելով վիզը ծռեց դահճին առջին. անանկով նահատակվեցաւ յամին իբր 300: Բայց եղեւսիոսը պատժըվեցաւ. երբոր նաւ մըտած Դամիայ կընէր, նաւը մէկ անբնակ կղզիի մը զարնելով մէջինները ամէնը ընկղմեցան, եղեւսիոս տախտակի մը վրայ ելլալով կղզին ընկաւ. բայց հոն գազաններուն կերակուր եղալ:

## ԿԻՒՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ

Ծնաւ աղեքսանդրիայ (իսքէնտէրիէի) սահմանը, ազնուական ու բարեպաշտ ծնողքէ. աղէկ կրթութի̃ ունեցաւ, ետքնալ աղէկ ուսում սորվեցաւ Թէոփիլէ պատրիարգին ձեռքովը, որուն քեռորդին կամ եղբօրորդին էր. երբոր քահանայ ձեռնադրվեցաւ՝ ամէննալ կըզարմացնէր իրեն զօրաւոր քարոզութ̃ը ու բարի վարքովը: Անոր համար Թէոփիլէն մեռնելէն ետեւ՝ ժողովուրդը աւելկայ կուզէր որ իրենց պատրիարգ ըլլայ. բայց որովհետեւ ոմանքալ տիմոթէոս աւագ սարկաւագը կուզէին՝ իրեք օր վէճ ըլլալէն ետեւ՝ վերջապէս կիւրեղը նըստուցին աղեքսանդրիոյ պատրիարգ: Ասիկայ նստածին պէս իրեն առջի ջան-

քը ան եղաւ որ՝ Նովատեան հերետիկոս-
ները աղեքսանդրիայէն դուրս հանէ .
դուրս հանելէն ետեւ քանի՛ եկեղեցի որ
ունէին՝ ձեռվընէրնէն առաւ ուղղափա-
ռաց տըւաւ ։ Աղեքսանդրիայէն քիչ մը
հեռու տեղվանք սատանայներ կային .
Թէոփիլոս շատ ուզերէր հալածել բայց
չէր կրցած . հիմա կիւրեղ աղօթքով
ինդրեց ա̃ծմէ Ճարը ցըցընել . հրեշտակ
մը երեւնալով իրեն ապսպրեց քանի մը
նշխարք , նաեւ ս̃րյն մարկոսի նշխարքը
հոն բերել . բերածին պէս սատանայնե-
րը հալածվեցան ։

Մեծ խռովութի մը եղաւ հրէից ու քրիս-
տոնէից մէջ . հրէայները բազմութ̃ վա-
զելով շատ քրիստոնեայ կոտրեցին . ետ-
քը Թէպէտ հրէից գլխաւորները բռնե-
լով խաղաղցուցին , բայց ս̃րն կիւրեղ ա-
պըսպրեց , ինչ հրէայ որ չդառնայ քրիս-
տոնեայ չըլլայ , աղեքսանդրիայի մէջ
Թող չմնայ . ասոր վ̃ր շատ հրէայ դուրս
ելան ցրուեցան . ոմնալ դարձաւ քրիս-
տոնեայ եղաւ ։ Քաղաքապետը տեսնա-
լով՝ որ անոնց երթալովը շատ վնաս ե-
ղաւ առուտուրի՝ ամբաստանութի գրեց
կայսեր . կիւրեղնալ աղէկ արդարացուց
զինքը , հրէայներուն պատճառով եղած
վնասը առջին դնելով ։

Նէշը ան եղաւ որ՝ քաղաքապետը քեն
պահեց կիւրղի վ̃ր . աս երկուքը հաշ-
տեցընելու համար բազմութի կրօնաւոր-

ներու եկան անապատէն . Հաշտուէ տե-
ղը՝ քանը աւելի գէշի գնաց , ինչվաննոր
խռովուի եղավ . ուրիշներէն զատ ամմո-
նիոս անուն երևելի կրօնաւոր մը՝ նաև
իպատիա անունով կին մը սպանվեցաւ ,
որ քաղքին մէջ խիստ երևելի էր , Թէ-
ոնայ փիլիսոփային աղջիկն էր . անանկ
զօրաւոր խօսքով ու գրով՝ որ իր ատեն-
վան փիլիսոփայներէն վեր կըդնէին ա-
սիկայ : Ինչ և իցէ՝ կիւրեղ իրեն խոհե-
մութը սաալ խաղաղցուց :

Սանկալ վերցըվեցաւ մէկ ուրիշ տա-
րաձայնութի մը Թէոփիլէ պատրիարգին
օրէն մնացած . որ ոսկեբերանը որոգի-
նեան սեպելով խիստ Հակառակ էր կե-
ցած . կիւրեղնալ որ Թէոփիլէէն շատ
աղէկութի էր տեսած , անոր պէս ինքնալ
չէր ուզեր ոսկեբերանին յիշատակը ը-
նել . Թէև ուրիշ եկեղեցիներէն Թուղ-
Թէր առավ ասոր վր՝ որոնք ոսկեբերան
նըց հետ կըյիշատակէին , զինքնալ կը-
յորդորէին անանկ ընել : Բայց ան ծուռ
միտքը տարաձայնութիը կիւրեղ տեսիլք
տեսնալով մը շտկեց :

Սըբօր Նեստոր ստանպօլու պատրիարգ-
նստաւ՝ իր մոլորութիը սկսաւ աս գիս ան
դին ծաւալել Թուղթէր գրելով նաև ե-
գիպտոս եղած կրօնաւորներուն : Աս լսա-
ծին պէս նըն կիւրեղ՝ զօրաւոր Թուղթ
մը գրեց ան կրօնաւորներուն , յայտնի
ցըցընելով Նեստորին մոլորութիը . ուրիշ

իրեք թուղթալ գրեց աս բանիս վ̃ր ․ մէյմը փոքր Թէոդոս կայսեր, մէյմընալ եւդոքսիա Թագուհիին, մէկալընալ պող-քեր դշխոյին՝ որ Թէոդոսին քոյրն էր ։ Աս մոլորութիւնը լսելով նաև Կեղեստիա-նոս Հռոմայ Հայրապետը՝ գրեց Կիւրղի որ քննէ ․ Կիւրեղալ խրատական թուղթ մը գրեց Նեստորի, բայց Նեստոր զինքը մոլորած գտնելուն տեղը՝ անոր վ̃ր ա՛լ ա-ւելի կատղելով, Կիւրեղը մոլորեալ ըրա-նեց ։ Կեղեստիանոս հասկընալով իրաւը՝ ժողովով դատապարտեց Նեստորին մոլո-րութիւնը, Կիւրղինալ գրեց որ ինքը հոգայ շտկէ բանը ․ աս հրամանս առնելով Կիւ-րեղ՝ շատ հոգ տարավ ուրիշ եպիսկոպոսներուն ալ գրեց ․ աղեքսանդրիայի մէջալ ժո-ղով մը ընելով՝ Նեստորին աղանդը դա-տապարտեց ։

Նեստոր անչափ ամուր կեցաւ իր մոլո-րութեան վրայ՝ որ հարկ եղավ Գ̃ հանուր ժո-ղով ընել Եփեսոս քաղաքը ․ ան ժողով-քին մէջը Կիւրեղ իբրև փոխանորդ Հռո-մայ Հայրապետին՝ ամմէնէն վեր նստե-լով զարմանալի ճառ մը խօսեցաւ գո-վասանք՚որ ա̃ծածնայ ․ անով սուտ հա-նեց Նեստորին աղանդը, դատապարտել տըվավ ։ Նոքը հալածուիլ քաշեց Նես-տորեաններէն ․ բայց ինքը կըսէր որ՝ ինչ-վան մահս կեցերեմ աս ուղղափառութիւնը քարոզելու ։ Ասանկ աղէկ խօսուածքո-վը, իրեն բարի սրտովը՝ շահեցաւ նաև

անտիոքայ պատրիարգը յովհաննէս անուն, որ առաջ թշնամի էր իրեն։ Սա ՚րս ուրիշներէնալ հալածում քաշեց, որոնք չէին հասկընար իրեն խորունկ վարդապետութիւնը․ բոլոր մնացած կեանքնալ գրաւոր աշխատանքով անցուց հակառակորդաց բերանը գոցելու համար․ իր գրուածքներուն մէջ երևելի է Պարապմանց ըսուած գիրքը, մէյմընալ Կաննոց գիրքը։ Սանկ իրեն արդեամբքը եկեղեցնայ մէջ մէկ լուսաւոր ջահ մը եղաւ, ինչվան որ առ աստուած փոխվեցաւ յամին իբր 444։

---

## ՍՈՒՐԲՆ ԱԲԲԱՅ ՄԱՐԿՈՍ

Օր մը երբոր ՚որն սրապիոն՝ յովհաննէս ճգնաւորին քովն էր՝ տեսիլք մը տեսաւ․ երկու կրօնաւոր զինքը կըկանչէին, կըյորդորէին որ թարմակիա լեռը երթայ, հոն աբբայ մարկոսը տեսնայ․ որուն նման ՚որ հիմա աշխըրքիս մէջ չիկայ կըսէին․ քառասուն օրէն ետևալ պիտոր մեռնի։ Սա տեսիլքէն արթննալով սրապիոն՝ շուտ մը իսքէնտէրիէ ինջավ, որ տասն օրվան ճամփայ էր իր կեցած տեղէն․ ճամփան անանկ տաք էր որ՝ գիտես թէ գետնէն կրակ կըցաթկէր։ Հոն հարցընելով վաճառականներուն՝ հաս-

կըցաւ որ Թարմանկիս ծովու քովլեռմընէ · ծովէն երթալով մօտիկ է · բայց ցամաքէն քանի հինգ օրվան մը ճամփայ է ։

Արապիոն ցամաքէն երթալը աւելի ընտրելով՝ հետը ամանով մը ջուր առավ և արմաւ (խուրմա) , գինքը Աստուծոյ յանձնելով ճամփայ ելավ · տասն օր սաստիկ ներսէ ներս երթալով՝ սարսափը առավ գինքը · մէկ անասուն մը , մէկ թռչուն մը չտեսաւ , ջուրալ չգտաւ · անանկ մէկ ահռելի անապատ մը որ՝ ոչ անձրև կուգայ , ոչ ցող կիջնայ · մխիթարութիւն մը չիկայ ։ Տասն օրէն ետև իր հետը բերած ջուրնալ արմաւնալ հատաւ , ինքնալ աշխատանքէն ու անօթութենէն գետինը ինկաւ · ուժ մը չէր մնացեր վրան , կըմըտածէր եա դառնալ · բայց Աստուծոյ աղաղակեց , իրեն ապաւինեցաւ ։ Անկմընալ յանկարծ տեսաւ որ ան երկու կրօնաւորները նորէն իր քովը եկան , ինչ յոգնէր կեցերես ըսելով՝ իրեն արմաւ (քէօք) մը ցըցուցին · աս կէր , առաջ գնա՛ ըսելով՝ աներևոյթ եղան · և իրաւ անիկայ կերածին պէս՝ ծարաւը անցաւ , ուժը վրան եկաւ , սիրտնալ հանգչեցաւ ։

Ան Արապիոն սաստիկ զօրանալով՝ հինգ օրալ ներսէներս գնաց անապատը ճղքելով , մէյմընալ լեռան մը քով հասաւ անանկ բարձր որ՝ գլուխս թէ ծայրը եր-

կինքն էր եղած, բայց չոր ցամաք ամենե-
ին ինչպէս որ կըլլան խիստ բարձր լեռ-
ները՝ օխտը օր քշեց ինչվան որ գլուխը
եղաւ. ութերորդ օրը գիշեր ատեն տե-
սաւ մէկ քարայրի (մաղարայի) մը̄ որ
հրեշտակներ կինջնային կըսէին. Ահա
ո՛վ աբբայ մարկոս, դու որ մարդու մը
չէիր ցանկար տեսնալ, բայց միայն հայր
սրապիոնին, հիմա քեզի բերինք անիկայ.
տես ուրախ կեցիր.

Աս խօսքերս լսելնին հայրն սրապիոն
գիշեր ատեն վախ մը եկաւ իր վը̄. մօ-
տիկցաւ ան քարայրին՝ մարդու ձայն
լսեց, որ էր ձայն անո՛ր Ճգնաւորին աբ-
բայ մարկոսին. ասիկայ հրեշտակներէն
հասկընալով որ պիտոր մեռնի, կըդողար
ո̄յ ահեղ դատաստանէն, թէպէտ մեղք
մը չէր ըրած. անոր համար կըլսէր հայրն
սրապիոն որ ինքիրեն սիրտ տալու հա-
մար աս խօսքերս կըզրուցէր աբբայ մար-
կոսը.

Արդ՝ ը̄ էր տրտում ես հոգի իմ, ը̄ էր
խռովես զիս. յիշէ ա̄ծ ու մխիթարվէ.
հազար տարին իբր թէ մէկ օրմըն է ա̄յ
աչքին. երանի է քեզ՝ որ աշխարքիս մէջ
չիկենալով՝ անոր ապականութը̄ը չխըլըշ-
տըկվեցար. երանի ձեզի իմ աչքըս, ա-
կանջս, ձեռվըներս, ոտվըներս, որ ա̄յ
շնորհքովը աշխարքես դուրս եղալով չին-
կար ան մեղքերուն մէջ, որ աշխարքի
մէջ ծնալով կինայիք իյնալու. Ասանկ աս

Որը յիշելով իմ ըրած բարերարութիւնը իր վրայ, և իրեն չունենալը մէկ բարեգործութիւն մը՝ մէկ գիտցէն խիստ վախ կու գար իրեն, մէկալ գիտցնալ ինքիր զինքը կըքաջալերէր․ այնչափ ձգնուիները, ծոմը, աղօթքը, բան մը չէին երևնար իր աչքին։ Ան երկիւղն իմ՝ որ որ գրոց ըսածին պէս սկիզբն է զգօնութե, պզտիկուցմէ սիրտը տպաւորէրէր, ան երկիւղն իմ էր որ զուրցընել կուտար աս խօսքերս։ Ո՜ ըրած անբաւ սիրոյն դէմ ես ինչ աղէկութիւն ըրած ունիմ որ հիմա իր աչքին պիտոր ելլամ՝ ըսելով վախ կու գար, նորէն իրեն սիրտ կուտար չյուսահատիլ, այլ իմ անբաւ ողորմութեր վրայ յոյսը դնել։ Ասանկ զինքը քաջալերելով նորէն կըսէր․ արդ՝ Տէր պատրաստ եմ անձն իմ․ ինչու կըվախնաս․ Մի վախնար հոգի իմ, երբոր աս մարմնոյս դուրս ելլաս՝ հրեշտակներ քեզի առաջնորդ պիտոր ըլլան։ Մի վախնար հոգի իմ․ յիշէ ինչ կըսէ դաւիթ մարգարէն․ բանակք հրեշտակաց տն շուրջ են զերկիւղածովք իւրովք և պահեն զնա։ Յիշէ հոգի իմ՝ քոյին ըսածը․ Երանի է ծառային այնմիկ որ արասցէ կամս տն իւրոյ։ Այսչափ քաջալերութե խօսքերը հերիք չէին ըլլար, իրեն երկիւղը դադրեցընելու․ այլ կուլար կըհառաչէր անանկ՝ իբր թէ մէկ աղէկ բան մը ըրած չունի, ինչ բանի համար ած

զինքը իրեն արքայութեան փառաց մէջը տու-
ներ · իր հոգևոր սրատես աչքին առջին
քանի մը չէին երևնար իրեն ըրածները ·
Պարծեալ կյիշէր ան չար սատանայինէ-
րուն բաղմունքը՝ որոնք վերը լեցուած կե-
ցերեն Ճամփուն մէջ, ամէնուն գործքը
մէկիկ մէկիկ կըքննեն · կյիշէր ահաւոր
Թագաւորին ատեանը · ասոնք յիշելով մէկ
դիէն կըդողար, մէկալ դիէնալ Աստուծոյ կա-
պաւինէր · Աս խօսքերս կըցըցընեն որ՝
իրեն հաւատքը, յոյսը, սէրը շատ վեր
էին քան ուրիշ քրիստոնէից ·

Աբբայ մարկոսը աս խօսքերս լուրցելով
ներսը կըդողար, հայրն սրապինդնալ
դուրսէն մոխիկ գնելով կըդողար · կըզար-
մանար, ինչպես ան մարդն որ՝ որուն
նման մեծ մը չկար, անանկ վախ քաշէ
Աստուծոյ առջին երևնալու · Երբոր աբբայ մար-
կոսը դադրեցուց իր խօսիլը, հայրն սրա-
պինդ բարև տալով ներս մտաւ · աբբայ
մարկոսնալ իրեն անունը տալով բարևեց ·
մէկ անուշահոտութիւն մը բուրեց ան ատե-
նը երկնային · Ես քեզ շատոնց կուզէի
տեսնալ ըսաւ ով հայր սրապին · ինը-
սունօխտը տարի է որ մարդու երես չեմ
տեսած, հիմա քեզ կըտեսնամ · մէկ ա-
նասունմընալ չեմ տեսած, մարդու կե-
րակուր չեմ կերած · աշխըրքիս լաթերը
չեմ հագած · Ան ըսելով պատմել սկսաւ
իրեն քաշածները · Երսուն տարի ըսաւ
խիստ տանջանքով եմ կեցած աս լեռս՝

անպատմելի ճգնութիւն, անօթի ծարաւ. չար սատանայներուն հետ կռուելով, գետնին հողը ուտելով, ծովուն ջուրը խմելով՝ որ լեռանը տակն էր։ Երսուն տարի մերկ անցուցի, շատ փորձութիւններ քաշեցի, շատ հեղ սատանաները իս կըքաշէին, լեռանը գլխէն ինչվան վար կըտանէին, իս ծովը ձգել կուզէին, բայց Ած թող չէր տար, անանկ կըքաշկըռտէին վերէնիվար՝ որ միսս պատառ պատառ գետինը կիյնար, քանի՛ որ անոնք իս վար կըբերէին, այնչափալ ես համբերութեամբ ինչվան լեռան գլուխը կելլայի թէպէտ խոցերով ցաւերով լեցված. ան սատանաները կաղաղակէին երեսիս։ Ինչ եկեր ես հոս. գնա աստից, մերն է աս տեղս. մարդ մը չէ եկած հոս։ Բայց ամմէն նեղութէ փրկեց իս Ած, որուն ապաւինէրէի համառատուն յուսով։ Երբոր ասանկ երսուն տարի համբերեցի, Այ ողորմութիը վրաս ինջաւ. Մարմնոյս վրայէն մազեր հանել տըվավ՝ որ բոլոր մարմինս գոցեց, պահեց պաղէն տաքէն. հոգևոր մարմնաւոր կերակուրս պարգևեց, հրեշտակներուլ խրկեց իս մխիթարելու։

Արապին որ զարմանալով մը մտիկ կըդընէր իրեն պատմածներուն, ուզեց իմանալ նաև իրեն գալը, հարցուց. Երբ եղավ քուկին հոս գալդ կաղաչեմ, և ինչպէս եկար։ Պատասխանեց աբբայ Մարկոս. ան-

ալ քեզի պատմեմ ով զաւակ իմ․ պըզ-
տիկուց ես Աթէնք քաղքին մէջ փիլ-
սոփայութի կըսորվէի․ երբոր ծնօղքս
վախճանեցան՝ օր մը ինծի մէկ միտք մը
եկաւ․ ամէն մարդ կընայիմ որ աշխարհ
կըթողուն կերթան, ու մընալ ես պիտոր
երթամ, ա՟յ արդար դատաստանին առ-
ջին ելլամ․ լաւ է անանկէնէ ըսի, ես
հիմակուցմէ ելլամ աշխըրքէս՝ որ բոլո-
րալին ունայնութի է ։ Լման որ աս մտքիս
վ՟ր հաստատվեցայ, ինչպէս ելլալս՝ ուր
երթալս կըմտածայի ։ Մէյմընալ միտքս
կաթեց տախտակի մը վրայ նստիլ, ու
ծովուն տալ․ յոյսս ա՟յ վ՟ր դնելով ուր
որ տանինէ հոն երթալ ։

Աս խորհուրդիս վ՟ր միտքս լուսաւորվե-
ցաւ, որտիս ուրախութի մը եկաւ․ ծո-
վուն ահագին տեսիլքը ինծի վախ մը
չբերաւ ամենեւին․ անանկով մէկ մեծ
տախտակ մը առի, լաթերս հանվեցայ,
մէկ թեթեւ լաթով մը տախտըկին վ՟ր
նստելով ծովուն մէջ հրեցի․ ու ա՟յ յանձ-
նելով ուր որ ուզէ հոն առաջնորդէ ։
Մէյմընալ յանկարծ անուշ հով մը սկը-
սաւ փչել․ քիչ քիչ տախտակը առաջ
քշելով ցամաքը աչքէս աներեւոյթ ե-
ղաւ․ ես վըրան իբր մէկ մեծ նաւի մը
վ՟ր նստած հանգիստ երթալով աս լե-
ւան տակը հասայ ։

Երբոր ցամաքը ելայ՝ գոհունի տըվի ա՟յ․
բայց լեռան վ՟ր նայելով մէկ կանանչ մը

չիգտայ , ան ամէնը յոյսս բոլորովին ՚ի ձգեցի . ան որ իս ահագին ծովէն փըրկեց ըսի , աս անապատիս մէջնալ իս կըփըրկէ . անանկով երսուն տարի համբերեցի ան նեղութէնցը ինչ որ առաջ պատմեցի : Հիմա տասը տարի մը կայ որ հրեշտակ ՚ի քու անունդ տըվլով ինծի ով հայր սրապիոն . օրէօր կըսպասէի քեզ տեսնալու . գոհութիւն ՚ի որ քեզ այսօր տեսայ . խիստ աղէկ ըրիր որ եկար :

Ինչվան որ աս խօսքերս լմնցուց՝ հայրն սրապիոն անոր ձայնը միայն կըլսէր , զինքը չէր տեսնար՝ գիշեր ատեն ըլլալով . Հիմա առտըվան լուսը սկսելով՝ տեսաւ որ աբբայ մարկոսին ձայնը մարդու ձայն էր , բայց ինքը մարդ չէր , այլ մէկ կենդանի մը հաստ ու երկան մազերով վերէնիվար գոցված . վախ մը եկաւ իր վրայ : Աբբայ մարկոսը հասկընալով ըսաւ . մի՛ վախնար որդեակ իմ սրապիոն իս ասանկ այլանդակ ու աղտոտ տեսնալով . աս աղտոտութէ̃ մէջ չիմնայ պիտոր քնի գալստեան ատենը . վախը մէկ դի թո՛ղ . դուն հիմա սկսիր ինծի պատմել աշխըրքիս վրայ , թ̃րներն ա̃րդեօք առջինին պէս անանկ կռապաշտ մնացած են , եկեղեցնայ հալածօղ են : Երբոր լսեց որ թ̃րներնալ իրենց զօրքերնալ՝ հիմա ամէնը քրիստոնեայ են , խիստ ուրախացաւ փառք տըվլով ՚ի :

Հապա ըսաւ հաւատն որ առջաի պայծա-

ուացերէ , հաւատքովալ հրաշք ընօղներ
կան մի , հիւանդները բժշկօղ , մեռելնե֊
րը յարուցանօղ . ինչպէս որ կըսէ քն̃ տրն̃
մեր , թէ որ հաւատքով աս լեռանալ ը֊
սէք , տեղէդ ելիր փոխուէ , լեռնալ տեղէն
ելլայ , ձեզի հնազանդի ։ Աս ըսելու ա֊
տենը՝ մէյմընալ ան մեծ լեռը որուն վր̃
կեցեր նստէրէին , տեղէն ելաւ բարձրը֊
ցաւ կերթար ծովը պիտոր իյնար . ան
ատենը աբբայ մարկոս ձեռքը լեռանը
կըթընցընելով ըսաւ . իմ խօսքս քու֊
վրադ չէ որ՝ դուն տեղէդ շարժիլ սկսար .
ես աս եղբօրը բան հասկըցընել ուզեցի ,
քեզի ինչ . դարձիր տեղդ նստէ ։ Աս
խօսքը ըսելու ատենը՝ լեռնալ նորէն
դարձաւ , իր տեղը անշարժ կեցաւ .
Աս բաներս տեսնալով հայրն սրապիոն
գողալէն երեսին վր̃ ընկաւ . աբբայ մար֊
կոսը բռնեց վեր վերցուց . մի վախնար
ըսաւ . անանկէնէ չես տեսած ասանկ
հրաշագործութի̃ որ վախը քեզ առաւ .
Մեղք անանկ քրիստոնեայներուն , շատ
մեծցաւ եղամ ինծի . Ճշմարիտ քրիստո֊
նեայ անոնք են որ՝ չիտակ աներկբայ հա֊
ւատքով ինչ որ ըսեն ըլլայ . ուր որ հա֊
ւատք չիկայ՝ անուամբ միայն են քրիստո֊
նեայ . վայ ան տեղինալ որ անունով մի֊
այն քրիստոնեայ են . անոր համար օրհ֊
նեալ է ա̃ծ , որ իս աշխըրքէս հանեց հե֊
ռըցուց ։

Ասանկ խօսքերով անցընելով բոլոր օրը ,

երբոր Երիկոն եղայ, միայն խօսելու ա-
տեն չէ ըսայ, կերակուրալ առնենք,
ձեռքը վեր վերցընելով, ո՛ր հովուեցէ
սաղմոսը ըսայ. ետքը աջ դին նայելով
հրամցուց, երթանք ուտենք ըսայ ինչ
որ ած պատրաստերէ : Հայրն սրապին
կըշարմանար որ՝ ո՛վ պիտոր պատրաս-
տէր, մարդ մը չկտեսաւ պատրաստող,
քարայրին մէջնալ բան մը չկար. բայց
ներս մտածին պէս՝ տեսաւ սեղան դըր-
ված, երկու աթոռ, տաք հաց ձեան
պէս ճերմակ, աղնիւ կանանչեղէն, ձէյ-
թին, խուրմա, աղ, ոսկի գաւաթ, մէ-
ջի խմելիքը մէկ համ մը, հոտ մը ունէր
որ կըսէ, կարծեմ թէ թզընէրնալ ա-
նանկ համչեն առած :

Ուտելէն գոհանալէն ետև՝ ըսաւ աբբայ
Մարկոսը. տեսա՞ր ո՛վ եղբայր սրապին
ո՜յ բարերարութիւը՝ ամմէն օր ինծի հա-
մար մէկ բաժին մը կըպատրաստէր, այս-
օր քու գալուդ համար երկու բաժին
պատրաստեց : Ես երսուն տարիան քա-
շածներուս տեղը որ պատմեցի՝ ինծի հի-
մա աս հանգստութիս տըվաւ. հողն ու
աւազ ուտելուս տեղը՝ աստանկ համով
հաց տըվաւ. ծովու ջուր խմելուս տեղը՝
աս անուշ խմելիքը տըվաւ. տաք ու պաղ
քաշելուս համար՝ աս մաղէրն ու ամ-
բութիը տըվաւ մարմնոյս, որ անկէց ետև
չեմ իմացած ո՛չ տաք ո՛չ պաղ՝ սատանայ-
ներուն դէմ կռուելուս համար՝ հիմա

հրեշտակներ եղած են ինծի մխիթա-
րող ։

Ասկէց հասկըցիր ո՛վ զաւակ իմ, ու ան-
հատնում գթութիւնը՝ որ ունի իրեն եր-
կիւղած ծառայներուն վրայ · ամենեւին
պէտքը չէ յուսահատիլ ու քաղցրութէն ·
ամմէննալ թող իմ վրայէն սորվին ու ան-
վերջանալի գթութիւնը ։ Նս ոչ երբեք յոյս
կտրեցի իրմէ · ան երսուն տարվան քա-
շածներուս ատենը մէկ կարծիքմընալ
չինկավ սիրտս թէ ան մոռցերէ զիս · մէկ
մեղագրանք մը չանցաւ մտքէս՝ թէ ամ-
մէն քաշածներս անպիտան կերեւան ու
աչքին · հապա իս արժանի սեպելով ան
ամմէն նեղուէ · ուրախութի կըհամբե-
րէի, ու զի մաքրըվիմ սրբըվիմ իմ ըրած
սխալանքներէս ։ Անոր համար ու բարե-
բարութինալ տեսնալով ողորմեցաւ իմ
վրայ · ասանկ իննըսունօխտը տարի աս
լեռը կեցայ · հիմա լմնցաւ իմ տարիքս ·
ան քեզ խրկեց որ՝ քուկին ու ձեռքով
թաղես զիս ո՛վ որդեակ ։

Ասանկ խօսքերով, խրատներով անցուց
օխտը օր · միայն հացէն եւ խօրաթէ-
լով կըպատմէր ու ըրած բարերարութի-
ները, ու ըրած հրաշքները իր վրայ ·
իսկ մնացած ատենը աղօթքի հետ կըլ-
լար, ու և հրեշտակաց հետ խօսակից
ըլլալով մէկ երկնային սահղծուած մը
կերեւնար ։ Ութերորդ օրը հաց ուտե-
լէն եւ ըսալ · թողութի ըրէ եղբայր

որապին, աս գիշեր քեզ աշխատցնեմ
պիտոր արթուն կենալով. Երբոր արեւը
մարը մտաւ՝ սկսան սաղմոս ընել ինչվան
գիշերվան վեց ժամը. ընթրնելէն ետեւ
նստեցուց՝ ըսաւ. տես որ եղբայր որա-
պիոն, մարմինս աղէկ մը ծածկես. ե-
լեաս քարայրին դին տաս, դունալ հաս
ջուշանսաս, շուտով ելլաս երթաս ։
Ան ատենը որապին լալով աղաչեց աբ-
բայ մարկոսին, որ խնդրէ այմէ. ինքն-
ալ հոն մէկ տեղ վախճանի. սիրտս խիստ
խռովված է ըսաւ աս ահագին անապա-
տին մէջ. ոչ ճամփայ ունի, ոչ ջուր ։
Լուռ կեցիր, մի լար ըսաւ աբբայ մար-
կոսը. ած որ քեզ հոս բերաւ, անիկայ
քեզի առաջնորդ կըլլայ կըտանի. մի
վախնար՝ տանջանքով եկար, բայց հան-
գիստ անաշխատ կըդառնաս ։ Գիտցիր
որ հայր որապին, այսօրվան օրս ինծի
ամէնէն մեծ օր է. այսօր պիտոր տես-
նայ իմ հոգիս ան արքայութիւնը՝ որ ած պատ-
րաստեր է արդարներուն ։
Աս ըսելու ատենը իրենց կեցած քարայ-
րը լեցվեցաւ լուսով ու արեւէն աւելի
պայծառ, լեռները կըփայլատակէին.
Եւ իրենց կեցած լեռը անուշահոտուէ
ծխով լեցվեցաւ. որապին վախէն գե-
տինը ինկաւ. աբբայ մարկոսը զինքը վեր
վերցուց, մի վախնար ըսաւ որդեակ իմ.
բայց աս ըսելու ատենը տեսաւ որ՝ իր
ենաւ բոլորովին լուսաւորված էր,

Երբ հոգւով՝ որով լեցված՝ բարի ընկեր ը-
սաւ ՚որ հրեշտակներ գաբրիէլ և մի-
քայէլ ։

Նոյն ատենը քաղաքէն դուրս հանեց ը-
սելով · ո՛վ որդեակ իմ սրապին ո՛չ ողոր-
մութիւն քու վրադ ըլլայ , կեցած տեղնալ
սկսաւ օրհնել · անչափ ատեն իմ կենդա-
նութեանս բնակարան եղար ըսաւ , հիմայ
մարտինոս հանգստեան տեղ ըլլաս , ինչ-
վան որ դայ յարուցիչն քո · դառնալ ով
մարմին իմ , որ եղար տուն ցաւոց , հոս
կեցիր ինչվան որ գայ քո , որուն համար
անչափ տանջանաց համբերեցիր · երբ
ամէն մէկ զգայարանքներուն վերջի ող-
ջոյնը տալով ըսաւ · հանգչեցէք ամեն
երբը որ արթուն կենեճայիք , զքո կը-
պաշտէիք ։

Այս խօսքերս երբոր կըսէր հայրն սրա-
պիոն լալ սկսաւ · յանկարծ մէյմընալ
ձայն մը լսեց երկինքէն · եկէք հոս ան-
պատին ընտրեալ անօթը որ իմ կամքս
կատարեց , եկէք կատարեալ քրիստո-
նեայն ։ Նոյն ատենը արքայ մարկոսը բա-
ցելով ըսաւ · ո՛վ հայր սրապին , ո՛չ խա-
ղաղութիւն հետդ ըլլայ · ո՛ծ բարիք հատու-
ցանէ քու աշխատանքիդ որ ինծի հա-
մար աշխատեցար · խաղաղութիւն ո՛չ ամ-
մէնուն վրայ ըլլայ , ո՛ր յս իրեն եկեղե-
ցին յաւիտեան պահէ ։ Տէ՛ր ըսաւ եղ-
բայր սրապին , մէկ բան մը չի հագւե-
ցընէս աս մարտինոս , այլ իրեն մաղերովը

Թաղես ինչ որ ա̃ծ հագվեցուց . իմ ու-
կորնկրեսաւ մէկ բան մը չիտանիս և ոչ
մէկ մազ մը . դուն ալ հետեւեալ գիշերը
Ճամփայ ելլի՛ր գնա՛ , մի՛ վախնար հինկ
ժամէն ետև տեղդ պիտոր հասնիս ։

Սա զուրցելու ատենը նորէն ձայն մը ե-
կաւ երկինքէն՝ ճերճէ՛ր ։ Ան ատենը արքայ
Մարկոսին երեսը բոլորովին զուարթ ու-
րախ՝ ելլի՛ր ըսաւ ո՛վ եղբայր սրապիոն ա-
ղօթքի հետ ըլլանք . Հայր սրապիոնը
մէյմը վեր նայելնինի՝ տեսաւ որ՝ արքայ
Մարկոսին հոգին հրեշտակները առեր
վեր կըտանէին երգ երգելով . տեսաւ ալ
որ վերի եղած սատանայներու բազմունի
վրայ թափեցան . ժամ մը հոն կեցուցին
արգելեցին քննուն ընելու ։ Բայց ժա-
մէն ետև ձայն եկաւ երկինքէն , փախէ՛ք
ժողովք սատանայի , սա մարդս արդար
է . անկից ետև տեսաւ մէկ հրեղէն ձեռք
մը անոր հոգիին վր ինչվան որ վեր եր-
կինքը ելլալով աներևոյթ եղաւ ։

Սոնք տեսնալով հայրն սրապիոն , մէկ
գիացէն զարմանքով՝ մէկալ գիացէն
սրտմութ լեցված , լալով ողբով առաւ
նը մարմինը հոն թաղեց . աղաչեց ա̃յ որ
ան ահռելի անապատէն զինքը հանէ .
արևը մարը մտնալու ատենը մէյմընալ
տեսաւ որ՝ ան երկու կրօնաւորները որ
առաջ յոհաննէս Ճգնաւորին քովը տե-
սերեր , նորէն իրեն քովը եկան . երանի
է քեզի ըսին ո՛վ եղբայր սրապիոն , որ

արժանի եղաւ աբբայ Մարկոսը տեսնալու Թաղելու , որու նման սբ. հիմա չիկայ աշխարհքիս մէջ . եղե՛ր ըսին երթանք գիշերվան ատեն որ տաք չիքաշես ։ Երբոր ասանկ գնալու հետ եղան հինկ ժամ՝ այ ըրած բարերարութեցը վը խորաթելով , բարև տալով հեռըցան իրմէ . Մէյ մընալ հայրն սրապիոն տեսաւ զինքը որ յոհաննէս Ճգնաւորին խուցին առջին կեցերէ , ուսկից որ առաջ Ճամփայ ելերէր , զարմանքը առաւ զինքը , բարձր ձանով սկսաւ գոհանալ այ ։ Յոհաննէս Ճգնաւորը ներսէն իրեն ձայնը առնելով դուրս վազեց , մէկիկ մէկիկ լսեց իրմէ ամմէն եղածները . զարմացաւ օրհնեց այծ ըսելով , Իրաւի մենք գործքով քրիստոնեայ չենք , այլ միայն անունով ։ Քանի հոգի որ կային լսեցին , շուտ մը գիր անցուցին աբբայ մարկոսին վարքը ։

---

## ՊԵՂԵԳԻԱ կամ ՊԵՂԱԳԻԱ ԿՈՅՍ

### Տարսոնայէ

Կսինկայ էր մէկ խելացի ու գեղեցիկ աղջիկ մը , հարուստ մարդու զաւակ , բայց կռապաշտ . տարսոն քաղքին մէջէն որ հիմա Թէրսուս կըսըվի ատանա գաւառին մէջը . հոն եկած էր սբ. եպս մը կղեմոն անունով , որ քրիստոնէութի

քարոզելով շատ հոգի դարձուցերէր ։
Մօր անունը լսելով պեղեգիա կոյսը՝ ճշմարիտ լոյսն հաւատոյ սրտին մէջը վառվեցեր ․ կըփափագեր հետը տեսնը-վելու որ սորվի անկից ճշմարիտ հաւատ-քը ․ բայց չէր կրնար , մէյմը՝ որ կզենան եպ̃որ հալածվելով տարօրնէն դուրս եր ելած , մէկը չխօսեր ուր ըլլալը ․ մէյմը-նալ որ՝ պեղեգիա անանկ մէկի մը հետ նշանած էր՝ որ դիոկղետիանոս կայ-սրաշտ կայսեր որդեգիրն էր , սիմըկի-կիոս դատաւորին զաւակ ։
Բայց ք̃ո որ զինքը լուսաւորեր պիտոր , գիշերը երազին մէջը ցըցուց իրեն կղե-ան եպ̃որ ․ տեղնալ ցըցուց ուր որ պահ-ված կեցերեր քաղքէն դուրս ։ Պեղե-գիան արթննալով աղաչեց մօրը՝ զինքը խրկել իր սնուցչին (դադային) քովը ի-րեն տեսուի , որ անալ տարօրն քաղքէն դուրս կըննաէր ․ անանկով պեղեգիան երկու իրեն աղախինները՝ քանիմընալ ներքինիները սպասաւորները հետը առ-նելով դուրս ելավ ․ որոնց մէջը երկու հոգի ծածուկ քրիստոնեայ էին ։
Երբոր քաղքէն քիչ մը դուրս ելան՝ տեսան եպ̃որ որ ծառերուն մէջը ժուռ-կուգար ․ պեղեգիան իրեն սպասաւոր-ները հոն թողուց , ինքը երկու աղախի-նովը եպոսին քովը եկավ ․ պատմեց իրեն տեսած երազը ․ աղաչեց որ ճամփայ մը ցըցընէ , ինչ պէտք է ընել իրեն՝ որ ճըշ-

մարիտ Ա՟ծը պաշտէ ։ Ինքը առաջ հաս-
կըցուց մկրտութեան պէտք ըլլալը ․ Երբոր
կոյսը փափագով խնդրեց, ինքը աղօթք
ընելով հոն ջուր բղխեցուց ․ պեղեգիան
ու իրեն երկու աղախինը մկրտեց, որ-
խորհրդոյն ալ հաղորդեց, որ հալածան-
քի պատճառովը վրան կըկրէր ։
Մկրտուելէն ետեւը պեղեգիան ջուրին
մէջ երկու հրեշտակ տեսաւ ձեռքերնին
ճերմակ լաթեր բռնած ․ ինքն ալ մկրտը-
ւելէն ետեւ անանկ մէկ երկնային սիրով
մը լեցուեցաւ, որ իրեն մեծութիւնը, ամ-
մէն աշխարհ քամահրելով յոխ երկնա-
ւոր փեսային զինքը նուիրեց ․ իրեն փա-
ռաւոր հագուստը հանեց, ինքնին որ-
վաւոր աղքատաց բաժնէ ․ ինքը աղքատ
լաթեր հագած՝ իր ծառայներուն քով
դարձաւ ․ մէջերնէն կուսպաշտ եղողնե-
րը դարձուց քրիստոնեայ ըլլալ ․ անոնց
հետ եկաւ իր սնուցչին տունը ։ Բայց
անիկայ վախցաւ իր տունը ընդունիլ նոր
քրիստոնեայ եղած աղջիկը, իր մօրը
տունը դարձուց ։
Երբոր մայրը տեսաւ զինքը անանկ աղ-
քատ լաթերով, հարցուց հասկըցաւ որ
քրիստոնեայ եղեր է, սկսաւ լալ ողբալ,
իր նշանածին իմացուց, ան զի գայ աղ-
ջըկան միտքը փոխէ ․ Նշանածը եկաւ,
տեսնալով որ պեղեգիան իր միտքը չի-
փոխեր՝ ինքիր զինքը սպաննեց ։ Մայրը
վախնալով չըլլայ թէ իրենց մէկ փոր-

ձանք մը Հաննի՝ գնաց մատնեց դատա-
ւորին, որ իր առջին կանչելով պեղե-
գիան շատ յորդորեց որ միտքը դարձը-
նէ. երբոր տեսաւ որ պեղեգիան թէ ի-
րեն յորդորանքը՝ և թէ իրեն տրուած
վախը բանի տեղ չէր սեպեր վար կըղար-
նէր, Հրամմեց ցուլի մէջ ձգել. տախկայ
պղնձէ շինած աման մընէր՝ ցուլի (պու-
ղայի) ձևով շինված, որ խիստ տաքցը-
նելով մեծ մահապարտները մէջը կը-
ձգէին.

Սրբուհին պեղեգիա որ խիստ կըփափա-
գէր քնի Համար կեանքը տալ, ուրա-
խութ՟ ան ամանին մէջը մտաւ, ոչ փառք
տալով Հոգին աւանդեց, անանկ մէկ ա-
նուշահոտութի մը բուրեց բոլոր քաղքին
մէջը՝ որ շատ կռապաշտներ դարձան
քրիստոնեայ եղան, որոնցմէ երկու Հո-
գիով նահատակվեցան. Նոյն պեղեգիային
մնացած ոսկորները դատաւորը Հրամ-
մեց, Հանեցին լինատոն լեռը տարին
ձգեցին՝ որ չըլլայ թէ քրիստոնեաները
տանեն տանին. բայց ոչ Հրամմանովը չոր
տաւիւծ եկան պաՀապան եղան ոսկոր-
ներուն. ինչվան որ նոյն սրբուհին երև-
նալով կղեոնան եպսին՝ յայտնի ըրաւ ի-
րեն տեղը. Նշխնաւ ոսկորները առաւ
լեռան գլուխը տարաւ, քարերով գո-
ցեց. ետքը Հալածանքը քիչմը ինչա-
լէն ետև՝ վրան խորան ու մատուռ շի-
նեց. ուր շատ քրիստոնեայ ուխտի կու-

գային, աղօթք ընելով իրենց խնդիրքը կառնէին ։ Տօնէն անցնելէն ետև Ստամպօլ Պէյօղլու բերին կըսեն սաոր ՚ոք նըշխարքները ։

## ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Իրեն հայրը կըսուէր Անակ. իրեն մայրը Ոգոհէ ։ Հայրը պարթևաց ազգէն ըլլալով կաւապաշտ, ան մտքով պարսից երկրէն անով տեղով ելաւ եկաւ Հայաստան՝ որ մեր Հայոց թագը խաբելով առնուն սպաննէ. սակայն երբոր արտաշ գաւառը հասան, թագէոս առաքեալին գերեզմանին մօտիկ, հոն եղաւ լուսաւորչին յղուիլը. իսկ ծնունդը եղաւ վաղարշապատ քաղաքը՝ որ մեր թ՟րներուն փայթախտն էր ։ Երբոր Անակ սպաննեց Խոսրով թ՟րը՝ բոլոր Անակայ տունը թուրէ անցուցին. միայն իրեն երկու պզտիկ տղաքը կրցան փախցընել. մէկը սուրէն պարսից երկիրը տարին. մէկալը որ մեր լուսաւորիչ պիտոր ըլլար՝ իրեն ծծմայրը սափի անուն զայնէրի փախուց. որ քրիստոնեայ ըլլալով՝ տղան մկրտել տըւաւ, գրիգոր անուն դնել տըւաւ, ինչպէս որ Հրեշտակ մը ըսեր էր Ճամփան, ծառի մը վրայէն աղաւնիի բերնէն Կեսերէ կանչելով, որ թարգմանի արթուն ։

Սոփին բարեպաշտ քրիստոնեայ կնիկ ըլ-
լալով՝ աղէկ կրթութ՟ մեծցուց գրիգորը. աղէկ աշկերտ ըրաւ գրոյ՝ ինչպէս որ պէտք էր. երբոր գրիգորը մեծցաւ՝ դաւիթ անունով մէյմը իր աղջըկանը հետ կարգեց որ կըսուէր մարիամ: Ներկու զաւակ ըլլալէն ետև՝ որ արիստակէս ու վրթանէս ըսուեցան, մարիամ վանք մը մտաւ. իսկ գրիգոր իրեն հօրը ըրածնէրը հասկընալով տրդատ թգ՟րին քովը եկաւ, անոր ծառայութեր մէջ մտաւ առտուածային ծածուկ կարգաւորութ՟ը. իբր թէ իրեն հօրը ըրածին տեղը որ տրդատայ հայրը մեռուցերէր, հատուցում ընէ. բայց ամենեւին չիհասկըցուց որին տղան ըլլալը:

Ներբոր տրդատ հռոմայեցոց երկրէն իր երկիրը հայաստան դառնալու եղաւ գիոկղետիանոս կայսերմէն պատկերով առաջ երզնկայ ինջաւ. հոն խիստ երևելի կուռք մը կար անահիտ անունով՝ ան կուռքին զոհ մատուցանէ: Զոհը ընելէն ետև երբոր սեղան նստաւ, գրիգորին ըսաւ որ ծաղկէ կանանչէ շինած պսակ ընծայէ կուռքին, որ անչափ բարերարութի ըրերէր մեզի կըսէր. ան ատենը գրիգոր իրեն քրիստոնեայ ըլլալը երևան հանեց. ես կեցաւ ան կուռքին պատիւ ընելու: Տրդատ բարկանալով ան օրը պահել տըւաւ. վաղուան օրը առջին բերելով ըսաւ. դուն մէկ օտա-

բական մը քովս եկար , այսչափ տարի միա-
մըտուք̃ կըծառայէիր . եսալ միտքս դրեր
էի քեզ մենծութե̃ հասցընելու . Հիմա
ինչ եղաւ քեզի , ինչու իմ կամքս չես ը-
նէր . կըպաշտես ա̃ն ա̃ծը որ ես չեմ պաշ-
տեր . ատ ըսելով վախցուց ։

Գրիգոր պ̃ն տըվաւ . ես միայն արարի-
չը կըպաշտեմ , ան է միայն Ճշմարիտ
ա̃ծ . ձեր կուռքերը անշունչ անբան են ,
մարդու ձեռագործ են . անոնք պաշ-
տօղներնալ անմիտ են , անոնց պէս իրենք
ալ անբան անասուն կըլլան որ անանկ-
ները կըպաշտեն ։ Տրդատ ըսաւ . որով-
հետև դուն կուռքերնալ մեզալ անա-
սուն ըրիր , անանկէնէ եսալ քեզ հիմա
անասնոյ պէս տանջեմ որ հասկընաս ։
Առաջ հրամմեց ձեռքը ետեւը կապել ,
բերանը փայտ խօթել . երկրորդ՝ կոնակ-
նալ աղի քարեր շալկել տըվալ անասնոյ
պէս . երրորդ՝ չուաններով կապելով վեր
վար կինջեցընէին կըվերցընէին օխտն օր
անանկ կապկըպած ։

Ետքը տրդատ առջին բերել տալով հա-
կըց որ մի̃ հիմա գրի̃գոր ըսաւ որ անա-
սունը դուն ես եղեր , մեր կուռքերը
ա̃ծ են եղեր , որ քեզ ձիու պէս , իշու
պէս տանջել տըվին . հիմա թէ որ յանձ
չառնես անոնք պաշտելու՝ ա՛լ աւելի ալ-
տոր տանջըվիս գիտցի՛ր ։ Գրիգոր պ̃ն
տըվաւ . քու կուռքերդ չիմացանալ որ
ես ինչ տանջանք քաշեցի . այլ իմ Ճշմա-

րիտ ա̃ծս իս պահեց․ փայտաշէն կուռ-քերդ կրակով պղտոր երկլին, զիրենք պաշ-տօղներնալ հետերնին մէկ տեղ․ իսկ քա-րաշէն կուռքերդ քարի պէս ջուրին տա-
կը պղտոր լինան ։

Տրդատ աս խօսքերուս վ̃ր խիստ սրդո-ղելով չորրորդ տանջանքը տըվաւ․ որ էր մէկ ոտքէն գլխիվար կախել, գլխին տա-կը աղբ մըտռուկ ծխել ։ Հինգերորդ՝ կախելով չարաչար ծեծել տըվաւ մար-մինը․ օխտն օր անմանկ կախված տեղը կըծեծէին, որ մարմինը ջարդ ու բուրդ եղաւ․ գրիգոր անմանկ կախված ա̃յ ըրած գործքերը մէնծուիը անոնց կըմ̃ջպէր, իրենց դարձին համար ա̃յ կաղաչէր ։ Տրդատ նորէն առջեւը բերել տալով, նո-րէն կըյորդորէր կըվախցնէր ։ Գրիգոր պխն տըվաւ․ ես օր մը առաջ կուզեմ աս մարմինէս ելլալ, յաւիտենական կեան-քը մտնալ․ ինչպէս կուզես հրամմէ՛ իս
մեռցու ։

Տրդատ ըսաւ․ ես քեզ մէկէն չեմ մեռ-ցըներ, այլ երկան տանջանքներով, որ կուռքերուն անարգանաց տեղը հատու-ցանես ։ Վեցերորդ տանջանքը տըվաւ․ փայտէ կոճեր բերել տըվաւ, ձիվերը մէջը սխմել հրամմեց չուաններով կա-պելով․ ինչվան ոտքին մատվըներէն ա-րիւնը դուրս փըղռտալ սկսաւ․ ան տան-ջանքը փոխեց ։ Եօթներորդ տանջանքը հրամմեց, ոտվըներուն դամէր զարնել,

Ձեռքէն բռնելովս զիս ան դին քալցը-
նել, անանկ որ վազած արիւնը գետինը
կըթրջէր ։ Քանի որ Տրդատ տանջանքը
կաւելցընէր, գրիգորին մէկ դիէն ա-
ղօթք կընէր ա̃յ որ իրեն համբերութի̃
տայ, կռապաշտ ժողովրդեանը դարձ.
մէկալ դիացէնալ կուռքերուն ստուիը,
ճշմարիտ ա̃ծպաշտուի̃ը իրենց կըսորվե-
ցընէր . բայց մէկ օգուտ մը չեղավ, այլ
Տրդատայ վը̃ աւելի կատաղուի̃ մը ե-
կավ, աւելի յամառութի̃ սատանային
գրգռելովը . միտքը դրավ որ տանջանքը
շատցընելով գրիգորին միտքը վերջապէս
փոխէ ։

Անոր համար ութերորդ տանջանք տր-
վավ . գլուխը մամուլի (Ճէնտէրէի) մէջ
դնել տալով, եղեգով մը քթին մէջէն
աղ, պօռայ, բորակ քացախ փչել ։ Ին-
ներորդ տանջանք տրվավ մէկ տիկի (թու-
լումի) մը մէջ տաք մոխիր լեցընել հրամ-
մեց, անանկ գլուխը անցընել վիզէն կա-
պել . վեց օր անանկ կեցուց ո̃րը ։ Տաս-
ներորդ՝ գլխիվար կախել հրամմեց, խու-
ղի մը անցընելով աղիքներուն ջուր լե-
ցընել փորը, այնչափ որ քիթէն բերնէն
ջուրը դուրս կըվազէր ։

ԺԱ . տանջանքը եղավ երկըթէ քերիչ-
ներով կողերը քերել ։ ԺԲ . երկըթէ
փուշեր գետինը ցանել, ան փուշերուն
վըրայ քաշկռտել պատռտըցընել, ինչվան որ
բոլոր մարմինը ծակծըկեցան ։ ԺԳ .

ծնկղըները երկրթէ ամաններու մէջ հագվեցընել, անանկ կախված թողուլ իրեք օր ։ Դ՟ղ ․ կապար (ղուրշին) հալեցընել ․ անանկ եփուն՝ մարմնոյն վ՟ր և թերթին մէջ ջուրի պէս լեցընել ։

Որչափ տանջանքներ կուտային, գրիգորին ողջ մնալը կըտեսնային, որ յայտնի հրաշք էր, բայց սրտերնին ամենևին չէր շարժեր ․ անչափ կռապաշտներէն մէկն ալ չիդարձաւ ․ մէնդ թէ մենծերէն մէկը իմանալով որուն զաւակ ըլլալը, ով թագաւոր ըսավ, աս մարդս անակայ զաւակը ըլլալով՝ որ քու հայրդ խոսրով Թ՟գըր մեռուց, ապրելու՝ արևին լոյսն ալ տեսնալու՝ արժանի մարդ չէ ։ Աս լսածին պէս տրդատ՝ շուտ մը գրիգորին ոտքը ձեռքը կապած՝ արտաշատ բոված բերդը խրկեց, որ աչքը չիտեսնայ ․ հոն խոր վիրապը ձգել հրամմեց, որ մահապարտները ձգելու համար դեշ հոր մըներ, խորունկ, թաց, լեցուն օձերով ․ հոն ընկածը մէկէն կըմեռնէր ։

Ամենք լոյսը տեսնալու արժանի չսեպեցին անանկ մարդու՝ որ ա՟ծ պատրաստեեր ան մարդով զիրենք լուսաւորելու ․ անոր համար ինչպէս որ տանջանքներու մէջ՝ անանկ ալ աս մահաբեր խոր վիրապին մէջ՝ ողջ առողջ պահեց զինքը տասնըչորս տարի ․ որբևայրի կնկանմընալ երազի մէջ ապսպրեց հրեշտակ մ՟յ ամմէն օր մէյ մէկ հաց հորին բերնէն վար

նեալ․ անով կապրէր ան լոյսը՝ որն գրի-
գոր մութ խաւար բանտին մէջ․ իրեն
պահապան հրեշտակինալ ապապրըված
էր ա̃ծմէ, որ կուգար կըմխիթարէր ան
բազմաչարչար նահատակը ։

Տրդատ ալ տանջանքները տալէն ետև
երզընկայի մէջ, Ճամփայ ելաւ իր փառ-
թաւոր երթալու որ Վաղարշապատ կըր-
վէր, և իբր թէ ան հրաշքները չէր տե-
սած, գրիգորին բածները չէր լըսած
կուռքերուն սուտը վըրայ, ամմէն տեղ
սաստիկ թուղթ գրեց որ հոգ տանին
կուռքերը պաշտելու, քրիստոնեայները
ջնջելու․ օրինակ բերելով իրեն ըրածը,
թէ ինչպէս ինքնալ չէր ապրեցուցած իր
սիրելի ծառան գրիգորը քրիստոնեայ ըլ-
լալուն համար ։

Բայց ինչ անհասանելի խորհուրդ է
ա̃ծային խորհուրդը․ ան գրիգորն որ
կենդանութ̃ առենը անչափ քարոզութ̃ի,
անչափ հրաշքներով տանջանք քաշելով
չփկրցաւ տրդատը դարձընել, ա̃ծ անանկ
ըրաւ որ՝ իր մեռեալ կարծըված առենը
տրդատնալ ամմէննալ դարձուց ։ Խոր
վիրապը ձգելէն ետև տասնըչորս տարի
անցաւ, մէյմինալ հեռու աշխըրքէն հռո-
մայու երկրէն խումբ մը կուսանքներու,
ժողովակար աղջիկներու խրկեց ա̃ծ տըր-
դատայ բով․ որ անոնքալ նորէն քրիս-
տոնէութ̃ Ճշմարտութիը ցըցուցին իրեն․
քրիստոնէութ̃ համար արիւնին թափե-

ցին ․ իրենց արիւնն ալ արդիւնաւորեցաւ գրիգորին քարոզութենը պտուղ ընել, որը-
դառնալ ամէնն ալ լուսաւորել ։

Ասոնք էին որ Հռիփսիմեանք, որոնք ամէնն ալ տրդատ նահատակել տուաւ, մարմիններնին բացը ձգել․ բայց վեց օրէն ետև ա̃ծային բարկութիւնը շարժեցաւ, ին-քը վրէժխնդիր եղաւ անոնց արեանը սատանկ ։ ( )րմը երրորդ որսորդութե (ավի) ելավ տրդատ, յանկարծ վրան դիւահա-րիլ մը եկաւ, սկսաւ զինքը առասպայլէն վար նետել, մարմինը խածնել, նաբու-գոդոնոսորայ պէս իր կերպարանքը փոխ-վեցաւ, խոզի նման եղաւ․ խոզերուն մէջը կըմտնար կըխառնըվէր, խոտ կու-տէր․ շատ ուզեցին բռնել քաղաքը բե-րել, ճար չեղաւ․ անոր ուժը մէկը չէր կրնար զսպել ։ Անակնկալ դիւահարեցան նաև տրդատայ ամէն ծառայները, ամ-
մէն տունը ։

Բայց ո՛վ բարութիւնը որ մէկ գիտցէն թէ որ պատժէ, մէկալ գիտցէն իրեն ողոր-մութիւնը կըցըցնէ․ իրեն հրեշտակը խըր-կեց որ երևնալով խոսրովիդուխտին ը-սաւ, ձեր տանը ճար չիկայ, բժշկութի ըլլար, ինչվան որ գրիգորը խոր վիրա-պէն չիհանէք, ձեր քովը չիբերէք ։ Աս խոսրովիդուխտ տրդատ թ̃ր̃ին քոյրն էր, կոյս աղջիկ․ որ օտայ ըսված մեծ նախարարը անակայ ձեռքէն փախուցեր կամախ բերդը պահեր էր ինչվան որ տըը-

դատ եկաւ Թ՟իր Նատաւ . Հօն քրիստո-
նէից մօտիկ ըլլալով, կերեւայ որ ինչպէս
օտայ Նախարարը անոնցմէ լսելով՝ քիչմը
իմացեր էր կուռքերուն սուտ ըլլալը, ա-
սանկալ աս կոյս իմացած էր . խորենա-
ցին Ե . 82 . աս բանիս նշան մը կու-
տայ :

Խոսրովիդուխտ Հրեշտակին բանը զուր-
ցեց քանի մը մենծերուն որոնց որ պէտք
էր . անոնք աս խօսքս լսածնին պէս իր
բերնէն, ամմէննալ վրան փըթան ըսե-
լով . վայ, անանկէնէ քեզիալ բան մը
եղերէ . մենք քեզ ողջ մօքով խելացի
աղջիկ մը դրերէինք մտվընիս, դունալ
խելքդ կորսնցուցերես եղեր ըսին . ան
հօրին մէջ լինօղը ամիամընալ չապրիր,
ուր մնաց որ տասնըչորս տարի ապրած
մնայ գրիգորը՝ քանի որ զինքը հորը ձգե-
ցինք : Բայց Հրեշտակին տեսիլքը կրկին
ու կրկին երեւնալով պատուիրելով խոս-
րովիդուխտին, ան ատենը վերոյիշեալ
օտայ Նախարարը խրկեցին . երբոր եկան
հօրին բերնէն չուան երկնցուցին, տե-
սան որ գրիգորը ողջ է, չուանը բռնե-
լովվեր ելավ, զարմացան մնացին . մար-
մինը լուանալով որ սեփ սեւ էր կտրած,
լաթ հագվեցընելով առին տարին վա-
ղարշապատ :

Գխւահարած մարդերը տեսածնին պէս
գրիգորը՝ առջեւը վազեցին տրդատնալ
ամմէնքնալ, մերկ խայտառակ փրփրա-

լով ոտքը ընկան ։ Այն գրիգոր առաջ ծունկ չոքելով աղօթքի կեցաւ . աղօթքով զգաստացուց , անչափ որ սկսան խօսք հասկընալ , իրենց խայտառակութիւնը իմանալ , վրանին լաթ հագնիլ . Թէրն ու մենծերը նոյն ոտքը լիզնալով թողութիւն խնդրեցին ինչ որ ըրերէին ատեն մը իրեն՝ այնչափ տանջանք տալով ։ Այր ոտքի վր կեցընելով անոնք՝ Ճշմարիտ Աստուածը պաշտեցէք ըսաւ , բայց ո՛ւր ձգեցիք որ վկայներուն մարմինը . անոնք չի հասկըցան ամենևին որ ինչ վկայներուն համար կըհարցընէ . ան վկայներուն համար կըհարցընեմ ըսաւ որն գրիգոր , որ դուք քրիստոնէութեան համար սպաննեցիք ։ Նոյն ատենը տեղը ցըցուցին . տեսան որ ինը որ ինը գիշեր անանկ բացը ձգած ըլլալով ան մաքրափայլ կուսանաց մարմինները ամենևին չէին հոտած , շուն մընալ չէր մօտիկցած ։ Քուտ մը իրենց ազնիւ լաթերնին բերին որ պատեն , բայց որն գրիգոր դուք կռապաշտ ըլլալով արժանի չէք ըսաւ որ սանկ սրբերուն նշխարքը ձեր լաթերուն մէջը առնէք . անոր համար իրենց խեղճ լաթերովը պատելով , իրենց բնակած տեղը ժողվեց մարմիննին , ինքնալ գիշերնիկուս աղօթքի հետ եղաւ հոն , աղաչելով այ որ ան որ կուսանաց արիւնը ծծող երկիրը ըրէ , իրենց բարեխօսութիւնը կռապաշտութէ դուրս հանէ , դարձ տայ ։

Մաղուան օրը Թէ՛րնալ ամէն մենծեր-
նալ քուրձ (խարար) հագած՝ մոխրի մէջ
նստած՝ անանկ կուլային կողբային, ո՛րյն
ոտքը լսմալով կաղաչէին, որ իրենց հա-
մար Թողուն խնդրէ ո՛յմէ, ապաշխա-
րուէ Ճամփան սորվեցընէ որ չիկորսը-
վին ։ Մէ՛ն գրիգոր սկսաւ անոնց սորվե-
ցընել Ճշմարիտ հաւատքը ու փրկութե
Ճամփան ․ վաԹսունըհինկ օր ամէն օր
կըքարոզէր իրենց ու դուրսէն եկօղնե-
րուն, որ ամէն գիւղացէն հոն կըԹափե-
ին ․ վաԹսունըհինկ օրնալ պաք բռնել
ու աղօԹք ընել տըվաւ իրենց ։ Մինա-
լէն ետև գիշերը տեսիլք տեսաւ ո՛րն
գրիգոր ․ լոյս մը սատրիկ մէջը քի՛ որ
հրեշտակներու բազմութի՛ հոն ինջաւ,
գետինը զարնելով Թնտացուց, սատանա-
ները փախուց ․ չորս տեղ սին (տիրեկ)
երևցան հրեղէն ու ամպեղէն լուսաւոր
խաչերով ․ ուր որ եկեղեցինեը պիտոր
շինվէին՝ տեղերնին ցըցուց ․ ասոնք ամ-
մէննալ ժողովրդեան պատմելով՝ ան տեղ-
վանքները խաչ տնկեց ։

Նորրոր ամէննալ ժողվըված էին, ծունկ
չոքեցընելով աղօԹքի նստեցուց ան նո-
րահաւատ ժողովուրդը ․ ինքնալ ամէն
սրտէ աղօԹք ընելովը՝ տրդատայ սոսկա-
լի կերպարանքը անանկ շտկեց բժշկեց,
որ մատղաշ տղի մարմին դարձաւ ։ Ի-
սանկալ քանի դիւահար որ կար մէջեր-
նին, քանի հիւանդ կամ անդամալոյծ,

ամճննալ բռնութենէ ։ Նոքը սկսաւ կռատունները փլցընել . աս դիս ան դին քալելով՝ ուր որ կռատուն կըգտնար , շատ տեղ վրանին խաչանկարքելով մը միայն՝ մէկէն կըփլցընէր ինչվան տակը , մէջէր-նէն սատանայնէր կելլային կըփախչէին , պոռալով ճչալով կըսէին , վայ մեզի . յո-րդին մարիամու ամմէն տեղէն մեզ հա-լածեց , հոսալ հիմա գրիգորին ձեռքո-վը կըհալածէ ։ Նոնք տեսնալով լսելով ան կռապաշտ ժողովը՝ աղէկ կիմանային որ խաչին զօրութիը , իրենց կուռքերուն սուտութիը՝ որ առաջ կըպաշտէին ։ Քանի մը օրէն ետև ան կուռքերուն տեղերը ինչվան ճամփայները՝ քո՛ի խաչը տնկը-վեցաւ ։

Ասոր որ ասանկ կռապաշտութիը վերջա-ցաւ , հայոց ազգը քրիստոնէութէ մէջ ա-ղէկ մը հաստատվեցաւ , հրեշտակ մը երևցաւ տրդատ թ՜գրին , պատուիրեց որ՝ գրիգոր լուսաւորիչը քահանայ ձեռ-նադրել տան ո՛վ զի իրենք մկրտէ . լու-սաւորչինալ երևնալով իմացուց որ՝ դէմ չիդնէ . ասանկ է քո՛ի հրամանը ըսավ ։ Նոր վե՜ր տրդատ շատ զօրքով իշխաննէ-րով զայսէրի խրկեց լուսաւորիչը . ուր քե՜նյապետ հայոց ձեռնադրվեցաւ ղե-ւոնդիոս հայրապետէն և ուրիշ եպսնէ-րէն . դառնալու ատենը հետը բերաւ յոհաննու կարապետին և աթանագի-նեայ մասունքները . ընտիր կրօնաւոր-

նէրալ բերաւ, որ շուտ մը Հայոց մէջ-
նալ մտուցին կրօնաւորութ՟իը ։

Դամիան գաւնինի եկեղեցիներ կըշի-
ներ՝ սրբն գրիգոր, մկրտութի կընէր, քհնյ-
ներ կըձեռնադրէր, ինչվան որ եկավ
բագուան, որ եփրատ կամ մուրատ գե-
տին քովն է ․ ուր որ տրդատ եկած ըլ-
լալով ամմէն բանակովը՝ իրեն մարդե-
րովը՝ լուսաւորչին առջին ելավ ։ Հոն
լուսաւորիչ ամիս մը պաք ու աղօթք ա-
ըրապըրեց նորահաւատ ժողովրդեան ․
առանկ աղեկ պատրաստելէն ետև զի-
րենք՝ ետքը մկրտեց եփրատ գետին մէջ ․
առաջ տրդատ թ՟գրը, աշխէն թագու-
հին, ու խոսրովիդուխտը, ետքը ամմէն
իշխաններն ու ժ՟ղը ։ Ըծալ ան ատե-
նը զանազան հրաշքներով կըցըցընէր իր
գթութ՟իը անոնց վ՟ր ․ մկրտուելու ատեն-
նին գետին ջուրը վաղելէն դադրեցաւ
ետ դարձաւ ․ մէկ լուսաւոր սիւն մը ջու-
րին վ՟ր կեցաւ ․ գլուխը խաչ մը երևցաւ
անանկ լուսաւոր՝ որ արևուն լոյսը կը-
գոցեր, աս բաներս տեսնալով՝ աւելի կը
հաստատուէին քրիստոնէութ՟ե մէջ ան նոր
դարձած ժողովուրդը ։ Հետևեալ օր-
նալ պատարագ ընելով՝ սրբն գրիգոր՝ ամ-
մէնունալ սբ հաղորդութ՟ի տըվավ ․ օխտն
որ հոն կենալով՝ մնացած ժողովրդեան
բազմութ՟ինալ մկրտեց իրեն քահանայնե-
րուն հետ մէկ տեղ ։

Ընկեց ետքը սրբն գրիգոր պտըտելով

ամէն քաղքըները, գեղերը եկեղեցիները կըշիներ, քահանայներ կըդներ, գլխաւոր տեղերը եպ̃ներ կըաս̃մներ. ամէն օր խրատ տալով՝ սորվեցընելով՝ քարոզելով կանցընէր. Թ̃րին ապսպրեց դպրատուններ բանալ տալով. վ̃պտներ, վարպետներ նստեցուց. ամէն գիւղէն տղաքներ ժողվել տալով ան դպրատուններուն մէջ՝ մ̃նանց քուրմերուն տղաքները. ան սորված կրթըված տղաքներէն քհ̃յներ ձեռնադրեց, եպ̃ներ շատցուց, անանկ որ իր ատենը բոլոր Հայաստանին մէջ չորս հարիւր եպ̃սարանէն աւելի եղան ։

Անանկ ամէն բանը աղէկ մը շտկելէն ետև Ս̃րն Գրիգոր, իր հօգւոյն վրայ աւելի հոգ ունենալով առանձնութ̃ համբաւ առած ըլլալով ատեն ատեն աներեւոյթ կըլլար, անապատները լեռները կերթար, մինակ հոն կըձգնէր. խստութելով անդադար աղօթքի ու կարդալու հետ ըլլալով. հայաստան աշխարհին հօվը իր զաւկին արիստակէսի էր յանձնած, որ եպս ձեռնադրեր էր. արքունեաց կամ սերային հոգնալ զալըս եպիսկոպոսին ։

Ու որովհետև ան ատեն եղավ կոստանդիանոսին քրիստոնեայ ըլլալը՝ լուսաւորիչ որդաա Թ̃րին հետ մէկ տեղ շատ իշխաններով հռոմ գնաց. կոստանդիանոսի ու 'իրն սեղբեստրոսի հետ տեսնը-

վերցաւ, շատ իշխանութիւներ անկից ա-
ռաւ։ Դառնալէն ետեւ երբոր Նիկիոյ՛ն
ժողովը կանչեցին, լուսաւորիչ փառքէ
փախչելով ինքը չգնաց. իր տեղը արիս-
տակէսը խրկեց, որ երբոր դարձաւ, ժո-
ղովքին կանոնները հետը բերաւ, լու-
սաւորիչնալ քանի մը կանոն աւելցուց
յարմար իր ժողվքեան։

Ասկից ետքը յամին իբր 331. բոլորովին
քաշուեցաւ, սեպուհ լեռը ելաւ հոն ճգ-
նելու. հոն եղաւ իրեն մահը որ մարդ
չիմացաւ. այլ ատեն անցնելէն ետեւ օխ-
տը հովիւ մեռած գտան անիկայ, դէպ
արեւելք նստած, ձեռքը խաչանման վեր
վերցուցած, գաւազան մը ծնկանը վր̅
կոթընած, քովնալ՛նք սեղան սկիհով։

Ասոնք չորս դին քարեր շարելով գոցե-
ցին, իբր թէ մէկ գմբէթ մը շինեցին
վրան. շատ ատեն անցնելէն ետեւ լու-
սաւորիչ երեւցաւ գառնիկ ճգնաւորին,
պատուիրեց որ՝ անկէց առնէ իր մարմինը
թորդան գեղը տանի. հոն տանելէն
ետեւ շատ հրաշքներ եղան։ Բայց ետքը
աս դիս ան դին բաժնըւեցան ան ս̃ նշ-
խարքները, ինչվան ստամպօլ, ուսկից
կուսանքներ փախչելու ատեննին՝ հե-
տերնին առին տարին նաբօլի, ուր ինչ-
վան հիմա կեցած է կուսանաց վանքի
մէջ։ Ասոր աղէկ խրատները գիրք-
մընալ թողուց, որ Յաճախապատում
կըսուի։

Դիոկղետիանոս կայսեր ատենը մէկ տեղ մը ժողվըված կընստէին քրիստոնեայ կուսանքները Հռոմ քաղքին մէջ. Ինչվան իրեքհարիւր հոգիի չափ կային. ջ՞նյներաւ ունէին իրենց վէր. բայց ամենքնաւ խիստ ծածուկ՝ հալածանքի վախէն ։ Աս աղջիկներուն գլուխ կամ հոգեոր մայր էր եղած Գայիանէ որ կայսերական տունէ էր. մէջերնին մէկ աղջիկ մը կար Հռիփսիմէ անունով կայսեր տունէն, որ պզտիկուց Գայիանեայ ձեռքն էր մեծցած ։

Հռիփսիմէն երբոր տարիքը առաւ աղէկ կըրթութ̃ մեծցաւ Գայիանեայ ձեռքովը, եղաւ մէկ ընտիր անձ մը. այնչափ էր վառւած սիրովը քո̃ի՝ որ ինքզինք ընտրեց միշտ կուսութ̃ ան տեղը մնալ, ա̃ծածնայ ծառայել ։ Գայիանէն տեսնալով Հռիփսիմեայ աստնկ առաքինասիրութիւնը՝ խիստ կուրախանար. աղօթք ընելով ա̃ծածնայ նուիրելով կուխտէր որ իրեն աղախինը ըլլայ, քո̃ի նուիրէ իրեն կուսութիւնը. ան ատենը Հռիփսիմեայ վիզը կախեց ան խաչափայտը՝ որ վանքին մէջ կըպահվէր. Աս խաչին կտորը յակոբոս եղբայր տ̃ն բուն քո̃ի խաչափայտէն կտրերէր պատրոնիկէ թագուհին համար, որ իրենց ազգականը ըլլալով՝ կը-

դեայ կայսեր կնիկ էր եղած, բայց քրիս-
տոնեայ ։

Նոյնից եւս որբուհին Հռիփսիմէ առաւել վառվեցաւ ա̃ծամօրն երկնի սիրովը . աւելի առաջացաւ հոգեւոր կեանքի մէջ, առաքինութիւք զարդարվելով մէկալնոնցմէ աւելի . որոնք ամէննալ Ճգնաւորի պէս կապրէին . միայն ընդեղէն (զահրէ) ուտելով, խոշոր հասար զգեստ հագնելով, միշտ աղօթքի ու կարդալու հետ ըլլալով կանցընէին կեանքերնին . մնացած ատենը ձեռագործ բանելով ապրուստնին կըգտնային ։

Երբոր ատոնք աստնկ հանգիստ հոգեւոր կեանք կանցընէին, սատանան որ ատանկներուն խիստ կընախանձի, մէկ փորձանք մը հանեց՝ որ ամէննալ ցիր ու ցան ըլլալ ։ Դիոկղետիանոս կայսեր միտքը ընկաւ իրեն նոր կնիկ առնել ուրիշ կնիկներուն վրէ որ արդէն ունէր, ան պատճառով աս դին ան դին մարդ գնաց գեղեցիկ աղջիկներ գտնալ, պատկերնին քաշել, որ հաւնածը առնէ ։ Ասոնք լսելով աս տեղիս համար թէ շատ աղջիկներ կան ժողվըված Թ̃գրական ցեղէ, հոսալ եկան բռնութ̃ մտան . երբոր Հռիփսիմեայ աղվորութիը տեսան՝ շատ զարմացան . շուտ մը պատկերը քաշելով Թ̃գրին տարին ։ Դիոկղետիանոս Թ̃գրը խիստ հաւնելով՝ օր դրաւ հարսնիքը ընելու . ամէն մէնծերուն մարդ գնաց հարս-

նիքին կանչելու ։

Աս լսելով հասկըցան ան ս̃բ. կուսանքը որ սատանայէն փորձուին է, ա̃յ ապաւինեցան աղօթք ընելով. աւելի սրբուհին գայիանէ ու իրեն սանը սրբուհին հռիփսիմէ, երկուքնալ լալով ողբալով կաղաչէին զա̃ծ որ ս̃բ. ա̃ծածնայ բարեխօսու̃թը ճամփայ մը ցուցընէ, աս փորձանքէն իրենք խալըսցընէ, կուսութե̃ մարգըրիտը չիկորսնցընէ ։ Աղօթքին պտուղը աս եղաւ որ՝ ա̃ծ ողորմելով մեր աշխարքին, ասոնց ձեռքով լուսաւորել ուզելով, մըտվընին ձգեց ամմէնը մէկէն իրենց քահանայներովը ելլալ հեռու երկիր մը երթալ ։ Ասանկով եօթանասուն հոգիէն աւելի հագուստնին յանկարծ փոխելով ճամբայ ելան. ա̃յ յաջողելովը պատրաստ նաւեր գտնալով տիբերիս գետին մէջէն ծովը ելլալով իսքէնտէրիէ գացին. անկէց ե̃մ անցան ուխտատեղերը քալելու ։

Երբոր գեթսեմանի հասան ուր է ս̃բ. ա̃ծածնայ գերեզմանը, գայիանէ գերեզմանին վր̃ ձգելով հռիփսիմէն, զօրաւոր աղօթքով արցունք թափելով իրեն յանձնեց, որ պահէ, օտարին ձեռքը չիմատնէ, կուսութե̃ գանձը չիկորսնցընէ ։ Ասանկ ամմէննալ լալով աղօթքի հետ կըլլային ամսի մը չափ. որոնց ձայնը լսելով ս̃բ. ա̃ծածին, տեսիլքի մէջ երեւցաւ իրենց. ապսպրեց որ հայաստան եր-

թան · բայց առաջ ուրֆա երթան, անձեռագործ դաստառակը տեսնան, ետքը իրեն պատկերին երթան որ Հայաստան էր, ինչվան որ ըսավ ձեր կեանքը լմնցընէք նահատակուք :

Աս ձայնս առին, ետեւ ուրֆա գացին, հոն սբ դաստառակը տեսնալով այնչափ ուրախացան որ՝ ոմանք չէին ուզեր անկէց դուրս ելլալ · նորէն տեսիլք երեցաւ իրենց · անոր վր՝ ո՛րը հոն մնաց, ո՛րը ուրիշ դի գնաց ինչվան սեպուհ լեռը, ո՛րնալ կիւրճիսթան գնաց : Բայց սըրբուհի գայիանէն ու հռիփսիմէն ուրիշներուն հետ մէկ տեղ խլաթ եկան որ հայաստանին մէջն է · անկէց մոկաց գաւառը, ուր մեծ հրաշք ըրաւ ած · իրենց հետ եղող քհնյները սբ խաչով հալածեցին սատանայները կռատունին մէջէն · բայց հոն իմացվելով՝ գաղտուկ ելան սողոփի լեռը փախան որ բերկրի գաւառին մէջն է · հոն աչքի ցաւի հանդիպելով՝ աղօթքով երկու աղբիւր բղխել տըվին, անոնց ջրովը առողջութն գտան : Անկէց եկան հայոց ձոր ըսված տեղը · քանի՛ բորոտներ որ հոն հալածված կային, քհնյները սբ խաչին զօրութեամբ բժշկեցին · իրենցմէ քանի մը հոգի հոն եւ ուրիշ տեղվանք ձամփան մնացին · ինչվան որ եկան անձեւացեաց գաւառը · ուր քանի մը քրիստոնեայ գտան · անոնք հասկըցուցին ածածնայ պատկերին տեղը, որ հոգւոց

վանք ըսվեցաւ . ուխտերնին ընելէն ետև Ճամիան երկու սև վիշապ աղօթքով ու զօրութեամբ խաչին սպաննեցին, որ երկըրցիք կըպաշտէին . ան տեսնալով դարձան քրիստոնեայ եղան : Նորօր վարագ եկան, կռապաշտները ետևնէն հասան, անոնքաւ վախէն աս դիս ան դին պահվեցան հոն մնացին . Սբ. խաչնաւ քարերու մէջ պահեցին :

Բայց Հռիփսիմէն, Գայիանէն, ուրիշներաւ մէկ տեղ երսուներհինկ հոգիի չափ ա͞յ ապսպըրելովը վաղարշապատ քաղաքը եկան, որ Հայոց Թ͞գրին փայթախտն էր : Իրենք կըզարմանային որ՝ քանի՞ հեղ ա͞ծածինէն խնդրեցին զիրենք կռապաշտներուն ձեռքէն խալըսցընել, ա͞ծածինաւ անչափ աւելի զիրենք կռապաշտից մէջ կըխրկեր . ետքէն իմացան որ՝ ա͞ծ կուզեր իրենց ձեռքով մեծ գործք մը ընել . մէկ մեծ աշխարհ մը պիտոր վաստըկեր, իրենքաւ նահատակվելով մեծ փառքի պիտոր հասնէին :

Վաղարշապատէն դուրս եգիներ խավող կոխելու տեղեր կային՝ հոն բնակեցան եկող կուսանքը, ու իրենց հետ եղող իրեք քահանայք . մէջերնէն մէկը պօնՃուխ գիտեր չինել, ան ծախելով կապրէին : Բայց հոնաւ չիկրցան հանգիստ նստիլ . դիոկղետիանոս լսելով որ Հռիփսիմէն փախուցեր էին, հոն մնացած կուսանքներուն գլխաւորները մեռցընելտը-

վավ · անոնց մէջն էր զոյն կայսը · եաք-
նալ հասկընալով որ փախչողները հայաս-
տան եկեր են · տրդատ թ՟գրին թուղթ
ու մարդ խրկեց, որ փնտըռէ գտնայ
հռիփսիմէն, կամ իրեն խրկէ, կամ թէ
որ ուզէ՝ ինքը առնէ :

Երբոր գտան տրդատ թ՟գրին հասկըցու-
ցին հռիփսիմեայ աննման գեղեցկու-
թի՟ը՝ որ չիպատմըվիր կըսէին, ուզեց ի-
րեն առնել · ոսկեզօծ թահտըրավաններ,
ազնիւ հագուստներ խրկեց հռիփսիմէն
զարդարել, իրեն բերել որ հարսնիքը ը-
նեն · վազօղ վազօղի կըլլային աւետիս
տալու հռիփսիմեայ որ թագուհի պի-
տոր ըլլար :

Երբոր ս՟բն գայիանէ տեսաւ աս մեն-
ծուի՟ները, մէկէն ելաւ հռիփսիմեայ քո-
վը եկաւ, որդեակ ըսաւ չըլլայ թէ աս
փառքը փարթամութի՟ը քեզ խաբեն,
միտքդ բեր որ դուն ասկէց աւելի մե-
ծուի՟ ունէիր հռոմ, անոնք ամէննալ
քու ձեռքդ էին, դուն ինքիրմէդ ձգե-
ցիր, աս աղքատ կեանքը յանձն առիր
որ ք՟սի հարս ըլլաս, ան դիի աշխարհքը
ս՟բց հետ թագուհի ըլլաս · անանկենէ
միշտ ք՟ս աչքիդ առջիդ ունեցիր, աս
մտքին վ՟ր քեզ տեսնամ ամուր կեցիր ·
աս խօսքերով երկան յորդորակ մը զօր-
ցեց :

Արբուհին հռիփսիմէ աւելի ուժ առ-
նելով աս խօսքերէս, բարձր ձանով սկը-

սաւ երկինքը կանչել, անանկ մը օգնու-
թիւը խնդրել. իր աչքին թեպետ ոչինչ
էին ամէն աշխարհքիս փառքը, բայց գի-
տէր որ առանց մը շնորհաց բան մը չէր
կրնար ընել. անոր կապուինէր, յանձն-
սպասաւոր չէր ըլլար, ինչպէս որ յա-
տուկ է ամէն մըց. մենք յայտնի կը-
տեսնար որ իրեն մերժելովը ետքէն տան-
ջանք ունէր քաշելու :

Նորը որ թգ̃րէն եկօղ իշխանները մեն-
ծերը կարտորցընէին կուսանքները, որ
իրենց բերած հազուստովը հռիփսիմէն
հագվեցընեն զարդարեն, ու̃ղ զի շուտով
առնեն տանին թգ̃րին, անոնք մէկ բե-
րան կըհասկըցընէին ան կռապաշտնե-
րուն հռիփսիմեայ ու իրենց կեանքը,
ինչպէս ամէննալ կուսութ̃ի ուխտերէին
Ճշմարտին մը. չէին կրնար փոխել տար
իրենց միտքը, ոչ փառք պատիւ և ոչ
տանջանք: Նա զուրցելնինի մէկ ահռելի
ձայն մընալ երկինքէն գոռաց ըսելով. մի
վախնաք սիրելիք իմ, մենք դո̃ւն հռիփ-
սիմէ. սիրտերնիդ ամուր բռնեցէք, ես
ձեզի հետ եմ. ամէն տեղ ձեզ պահե-
ցի, հոսալ կըպահեմ. դուք իմ անունս
հոս պիտոր փառաւորէք, եսալ իմ հօրս
հետ ձեզի տեղ պիտոր պատրաստեմ ար-
քայութես մէջ :

Նա ձայնը ք̃ի բերնէն եկաւ, կուսանք-
ները զօրացուց, կռապաշտները վախ-
ցուց. անանկ որ շփոթելով իրենքալ ի-

րենց ձիւերնալ իրար զիրար կոխկրտելին, կրօպանելին: Նոքը ելան եկան թ̃ղթին պատմեցին. կուսանքներուն ըսածներնալ որ գիր անցուցերէին, թ̃ղթին առջին կարդացին. ըսածին պէս սրդողելով հրամմեց տրդատ. անիկայ չուզեց փառաւորութ̃ գալ, դուք բռնութ̃ բերէք ըսաւ:

Երբոր ասոնք բաղմութ̃ եկան մտան կուսանքներուն տեղը, հռիփսիմէն դուրս քաշեցին մէջերնէն. թէ ինչ վախ քաշեցին ամմէն կուսանքը, ինչ սրտադող, երկան կըլլայ պատմելը. հռիփսիմէն որով հետև չէր ուզեր երթալ, տեղ տեղ քաշկռտելով տեղ տեղ վերցընելով անանկ բերին թ̃ղթին խուցը ձգեցին: Ան երանելին Ճամփան ուրիշ բան չէր ըսէր որ, Տ̃ր Օ̃ օգնեա ինձ. իսկ խուցին մէջը երբոր մինակ կեցած էր, ձեռվըները դէպ 'ի երկինքը տարածելով ամմէն սըրտով աղօթքի կեցաւ. մէկիկ մէկիկ յիշեցընելով ա̃յ ինչ մեծ մեծ հրաշքներ ըրերէր, հիմաալ կըխնդրեր որ հրաշքով պահէ զինքը բռնաւորին ձեռքէն, եղած հրաշքներուն մէջը յիշեց ան ալ որ, ինչպէս նաբուգոդոնոսորը անանոյ կերպարան փոխել տըվերեր ա̃ծ, ինչպէս շուշանը ազատերեր. դու նոյն տ̃րն ես կըսէր, կրնաս հիմա խալ ազատել, ո̃չ զի սրբութ̃ մեռնիմ քու անուանդ համար:

Ու ըսելնին՝ մէյմընալ տրդատ նէրս մտաւ. դուրս եղողները ամմէննալ հարանիքի երգ սկսան երգել, ուրախութի ընել. բայց ա՟ծ որ հռիփսիմեայ աղօթքին նայեցաւ ընունեց, անանկ մէկ զօրութի մը տըվավ իրեն, որ չիթողուց տրդատայ իրեն մօտիկնալ. իրեք ժամէն սկսեալ ինչվան տասը ժամ կռուելով դղվելով վերջապէս տրդատ չիկրցաւ անոր ուժ հասցընել՝ ան տրդատը՝ որուն ուժը աշխարհ զարմացուցերէր.

Տրդատ յոգնելով կատղելով՝ գայիանէն հոն կանչել տըվավ որ՝ հռիփսիմէն խրատէ, տրդատայ կամքը կատարել տայ. Բայց գայիանէն ներհակ խրատ տըվավ. լսողները բարկանալով բերանը անչափ զարկին քարերով որ ակռայները թափեցան, անիկայ մտիկ չընելով նորէն խրատ կուտար կըյորդորեր որ՝ ամուր կենայ, յիշեցընելով իրեն ինչպէս քսի էր հարս եղած. ա՟ծածնայ յանձնըված. քիչ մը համբերէ կըսէր, որդեակ իմ, հիմա կըտեսնաս ք՟ս որուն անչափ կըփափագէիր. անիկայ քեզի զօրութի կուտայ, ինչպէս որ այսօր քուկին ականջովդ լսեցիր.

Ու խօսքերս խուցին դուռնէն կըսէր գայիանէն, երբոր տրդատ թ՟րը նորէն կըկռուէր հռիփսիմեայ հետ, իրիկվան տասը ժամէն սկսեալ ինչվան գիշերը. Ու անանկ սաստիկ կռուելէն յոգնեցաւ թագաւորը, վրայի կապան պատռտեցաւ,

գլխի դրած Թագը մէկ դի գլտորեցաւ. իսկ սրբուհին հռիփսիմէ հոգւոյն նոյ զօրութ̃ը յաղթօղ ըլլալով խուցին դուռը բացաւ, ժողովուրդը ձղքելով քաղքէն դուրս ելաւ, իր ընկերներուն քովը եկաւ. ծունկ չոքելով շնորհակալուն ըրաւ ա̃յ, նորէն շնորհք ու զօրութ̃ խընդրեց:

Մ̃է հռիփսիմէն իր ընկերներով սաստիկ երկան աղօթք ընելնին՝ գիշերանց դահիճներ եկան, տանջանք չիմնաց որ չիտան հռիփսիմեայ, առաջ ձեռվըները ետեւը կապելով լեզուն կտրեցին, որ ինքիրմէ բացաւ բերանը. ետքը ձեռվըները ոտվըները չորս ցիցերու կապելով, երել սկսան մարմինը. փորուն մ̃ը սուր քարեր լեցընելով՝ դուրս Թափել տըվին, աչվըները փորեցին, չորս դին կտըրտեցին: Ա̃ որ Թ̃րին հրամանը ոտքի տակ կառնէ, սաստիկ կըկորսըվի ըսին. չգիտէին որ ճշմարիտ քրիստոնեայ մը սիրտն ք̃ի վառեալ ինչպէս էր աս երանելիս, որչափ աւելի չարչարվի իրեն մարմինը՝ այնչափ աւելի կուրախանայ իր սիրտը, մեծ շնորհք կըսեպէ իրեն: Մնացած կուսանքը իրեն ընկերները լալով վրան եկան, ուզեցին երանելւոյն մարմինը Թաղել, անոնքալ հոն տեղս Թուրով գլխընին զարկին որ երսունվերկու հոգի էին. մէջերնէն մէկը միայն չէր եկած հոն, հիւանդ ըլլալով իրենց առջի տեղը

պառկած մնացեր էր . առաւ իր տեղը գըր-
խառնեցին ։ Որչափ անմեղ արիւն թափե-
լուն համար ցաւելուն տեղը՝ արդար
հոգեփոխեալ մահը լսելով՝ անոր համար
միայն կըցաւէր կուլար , թէ ինչպէս քրիս-
տոնեայնէրը պատճառ եղան որ՝ անանկ
գեղեցկուհին կորսնցընել տըվին ։

Վանք որ սրբուհին գայիանէ իր երկու-
ընկերներովը սէրայնին մէջը գացեր պա-
հերէին քաղաքի տեղ . վաղուան օրը գահ-
ճապետը հրաման ուզեց անոնցմէ մեռ-
ցընելու . արդար կարծելով որ հոգե-
փոխեալ համար կըղուըցէ . անանկէնէ
ողջ է եղեր քաւ , մի որ միաքը փոխել
տայ , մեծ իշխանուհի կըհամոզընեմ . բայց
եարը խրաւը համոզելով . նորէն գետնի
վըրնաած անանկ կուլար . շուտ մը տան-
ջանքով մեռցընել կըհրամմէր գայիա-
նէն , վրէժ առնել ուզելով իրմէ . ան
եղաւ պատճառն որ կըսէր՝ իրեն գէշ
խրատներովը կորսնցընել տըվավ անանկ
ագվորուհին ։

Նչանք հրաման առնելով գահիճները ,
երեքնալ չորս գիացեն չորս ցիցերու մէ
կապեցին . մորթերնին (տէրինին) քեր-
թեցին , լեզունին ետեւ գիացեն դուրս
հանեցին . փորերնուն վրայ սուր քարեր
ծգելով դուրս թափել տըվին , տեսան որ
ողջ մնացերեն՝ թրով գլխնին կտրեցին
յամին 301 ։ Սրանց արիւնը ծծելով
կուսապաշտուէ մէջ մնացած գետնին հո-

ղը՝ գիտես թէ մէկ նոր զօրուն մը ա-
ռաւ, այ գունդը շարժել տուաւ մեր աշ-
խըրքին վրայ, որ վերէն տեսնալով աս-
չափ անմեղ կուսանաց արիւնովը պըշտըրկ-
ւած, ասանկ սբց մարմիններուն գերեզ-
մանն եղած, ողորմեցաւ դուրս հանել
տուաւ լուսաւորիչը խոր վիրապէն· սբն
գրիգոր ասոնց արիւնը թափվելէն ետև
սկսաւ պտուղ ընել։ Անոր համար մեր
եկեղեցին յատուկ ջերմեռանդութք մը
կըտօնէ աս սբ կուսանաց յիշատակը։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



# ՑՈՒՑԱԿ


Աբբայ մարկոս . . . 365
Ադրիանոս . . . 49
Աթանաս . . . 239
Անտիօքա . . . 49
Անտօն աբբայ . . . 221
Բարսեղ . . . 215
Գայիանէ . . . 398
Գէորգ . . . 106
Գրիգոր ա̄ծաբան, որ և Նազիանզացի . 313
Գրիգոր Լուսաւորիչ 383
Գրիգոր Նիւսացի . 320
Գրիգոր սքանչելագործ . . . . 322
Դիոմեդէս բժիշկ . 347
Դորոս. տես Թէոդորոս . . . . 189
Եպիփան Կիպրացի . 339
Երմողէս . . . . 286
Եւգինէ . . . . 31
Եւստաթէոս . . . 1
Եւպրաքսէ . . . 202
Եւփիմէ . . . . 233
Եփեսոսի մանկունք. տես Եօթն մանկունք . . . .
Եօթն մանկունք Եփեսոսի . . . . 17
Թեկղի . . . . 166
Թէոդորոս . . . 189
Թէոդորոս ստրատելատ . . . . 196
Իգնատիոս . . . 309
Կատարինէ . . . 275
Կիւրեղ Աղեքսանդրացի . . . . . 361
Կիւրեղ Եր̄մացի . . 279
Կղեմէս հռոմայ հայրապետ . . . 120
Հռիփսիմէ . . . 398
Մարգարիտա տես Մարինէ . .
Մարինէ . . . 300
Յակոբ Մծբնայ հայրապետ . . . 177
Յոհաննէս կամաւոր աղքատ . . . . 147
Յոհան ոսկեբերան . 124
Յուլիանէ . . . 362
Նէկատարինէ . տես Կատարինէ . .
Նիկողայոս . . . 160
Շուշան . . . . 85
Ոնոփրիոս . . . 293
Ոսկեբերան. տես Յոհան . . . .
Պանտալէոն . . . 286
Պեղագիա. տե՛ս Պեղէգիա . . .
Պեղէգիա . . . 379
Սանդուխտ . . . 69
Սարգիս . . . . 252
Սիմէոն սիւնակեաց . 262
Վառվառէ . . . 138
Տիրոնոս. տես Թէոդորոս . . . .
Փեբրոնէ . . . 86
Քրիստինէ . . . 331